ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՏԱՎԱՍԴ ԿՈՒՅՈՒՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՎԱՆՔԸ

ԵՊՀ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 381

Տպագրության է երաշխավորվել
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի և
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Խմբագիրներ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր **Հր. Ռ. Սիմոնյան**
պ. գ. թ., դոցենտ **Հ. Բ. Գրիգորյան**

Եղիազարյան Կ. Ա.
Ե 381 **Սարգիս Կուկունյանի արշավանքը:** Կ. Ա. Եղիազարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 180 էջ:

Մենագրությունում վերլուծվում և գիտականորեն լուսաբանվում է Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքը հայ ազգային-ազատագրական պայքարի համապատկերում, այդ թվում՝ ազատագրական պայքարի դերը Սարգիս Կուկունյանի՝ որպես ազատագրական պայքարի առաջամարտիկի ձևավորման գործում, Ս. Կուկունյանի գլխավորած արշավանքի նախապատրաստությունը, արշավանքը և դրա ձախողումը, ինչպես նաև խմբի դատավարությունը, աքսորն ու հետաքսորյան շրջանի իրադարձությունները:

Մենագրությունը նախատեսված է բուհերի մասնագիտական ֆակուլտետներում դասավանդելու, պատմաբանների, ինչպես նաև գիտական լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2087-8

© ԵՊՀ հրատ., 2016
© Կ. Եղիազարյան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՌԼԻՆԻ
ՎԵՀԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

1. Ազատագրական պայքարի նախադրյալները: Հայկական հարցի միջազգայնացումը և ազգային-ազատագրական շարժման վերելքը 23
2. Հայ ազգային-ազատագրական շարժման դերը Սարգիս Կուկունյանի՝ որպես ազատագրական պայքարի առաջամարտիկի ձևավորման գործում 50

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՁԱԽՈՂՈՒՄԸ

1. Արշավանքի նախապատրաստությունը 68
2. Սարգիս Կուկունյանի արշավանքը և դրա ձախողումը 97

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՔՍՈՐ:
ՀԵՏԱՔՍՈՐՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դատավարություն և աքսոր 119
2. Հետաքսորյան շրջանի իրադարձությունները 143

ՎԵՐՋԱԲԱՆ 159
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 162
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 169

ԵՐԲ ԱԼԵԿՈՓ ԾՈՎՈՒ ՎՐԱՅ
ԻՄ ՄԱԿՈՅԿԸ ԽՈՐՏԱԿՈՒԻ,
ԵՍ ՓՐՓՐԱԴԷԶ ԱԼԵԱՅ ՄԷՋԸ
ԴԵՌ ԻՄ ՅՈՅՍԸ ՉԵՄ ԿՏՐՒ։

ԲՈԼՈՐ ՈՒԺՈՎՍ ԵՍ ՀԱՄԱՐՁԱԿ
ԲԱԶՈՒԿՆԵՐԸՍ ԿԸ ՇԱՐԺԵՄ,
ԱԼԻՔՆԵՐԸ ՊԱՏԱՌԵԼՈՎ
ԴԷՊԻ ԱՓՈՒՆՔԸ ԿԸ ԹՌՉԵՄ։

ԵՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՆՈՒՆ
ԱՔՍՈՐՄԱՆ ՄԷՋ ԻՆԿԱԾ ԵՄ,
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՅՆ ՀԱՄԱՐ
ԿԵԱՆՔՍ ՈՒ ՀՈԳԻՍ ԶՈՀԱԾ ԵՄ։



Գիրքը նվիրվում է ծնողներիս՝
Մարգարիտա Դավիթի Ալեքսանյանի
և Ալբերտ Մանուկի Եղիազարյանի
պայծառ հիշատակին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում 19-րդ դարի վերջին տասնամյակի իրադարձությունները, որոնք իրենց դրոշմն են թողել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի և բարոյահոգեբանական կերպարի վրա՝ էական ազդեցություն ունենալով նրա պատմության հետագա ընթացքի վրա: Դարավերջի ազգային, քաղաքական և հոգևոր զարթոնքը փոխեց հայ ժողովրդի ճակատագիրը: 1890-ական թվականներին, երբ սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն գործողության մեջ դրեց հայերի բնաջնջման ծրագիրը, հայ ազատագրական շարժումը ձեռք բերեց նոր որակ՝ որդեգրելով զինված պայքարի մարտավարությունը: Հայ ժողովրդի գոյապայքարի պատմության մեջ սկզբնավորվեց զինված պայքարի փուլը, որը նպատակ ուներ զինված ապստամբության միջոցով արևմտահայությանն ազատագրել օսմանյան բռնակալությունից: Հայ ժողովրդի զինված պայքարին անցնելը օրինաչափ էր և մեծապես պայմանավորված օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարի ազդեցությամբ: Այդ դժնդակ տարիներին հայ ժողովուրդը ցույց տվեց փորձություններին և թուրքական յաթաղանին դիմակայելու իր կամքն ու տոկունությունը:

19-րդ դարի վերջին ժամանակահատվածը հույսի ու հուսահատության, ակնկալիքների ու սպասումների, ազատագրության սեփական ուղիների որոնումների, ինչպես նաև ողբերգությունների, զոհողությունների ու դառը հիասթափությունների բարդ և հակասական շրջան էր հայության համար: Ամենևին պատահական չէ, որ հիշյալ ժամանակաշրջանի շատ խնդիրներ եղել և մնում են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում:

19-րդ դարի վերջին տասնամյակում արևմտահայության ազատագրության համար սկիզբ առած քաղաքական շարժման վառ ար-

տահայտություններից մեկը Սարգիս Կուկունյանի արշավանքն էր: «Հայկական հեղափոխության» պատմության մեջ Կուկունյանի արշավանքը զենքի միջոցով հայ ժողովրդին պաշտպանելու առաջին փորձերից մեկն էր: Այդ հանդուգն փորձն արդյունքն էր 1880-ական թվականների այն մարտաշունչ ազգային խանդավառության, որը նկատելի էր հատկապես Կովկասի հայության և ռուսական համալսարաններում կրթություն ստացող հայ ուսանողության շրջանում: Արդեն իսկ գործում էին հեղափոխական միություններ՝ Մոսկվայում՝ «Հայրենասերների միությունը», իսկ Թիֆլիսում՝ «Երիտասարդ Հայաստանը», որոնք թռուցիկներով և ինքնազարգացման խմբերով ապագա ազատագրական շարժման նախապատրաստողը հանդիսացան: Նրանց քարոզչությունը լայն արձագանք գտավ հատկապես երիտասարդության շրջանում: Դրա արդյունքում սկիզբ առած «Դեպի Երկիր» շարժումը նպատակ ուներ սահմանից այն կողմ հեղափոխական գործունեություն ծավալելու և օգնության հասնելու արևմտահայ եղբայրներին: Այդ գաղափարներով տարված գործիչներից էր Սարգիս Կուկունյանը:

19-րդ դարի վերջին տասնամյակների Հայոց պատմությունը երկար ժամանակ համակողմանի ուսումնասիրված չէր և հիմնականում ներկայացված էր խորհրդային ու սփյուռքահայ իրարամերժ մոտեցումներով: Խորհրդային տարիներին այդ շրջանի մի շարք հիմնախնդիրներ հասկանալի պատճառներով ենթակա չէին խոր ուսումնասիրության կամ էլ ներկայացվել են խորհրդային հասարակարգի հրամայականներին համապատասխան: Նման հիմնախնդիրներից էին հայ ազգային-ազատագրական շարժումը, հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունը և մի շարք այլ հարցեր: Այսօր անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության պայմաններում հայ ժողովրդի պատմության այդ հիմնախնդիրները նորովի և թարմ մեկնաբանությունների կարիք ունեն: Պատմաբանները հնարավորություն ունեն նախկին սխալները բացառելու, բացթողումները լրացնելու ճանապարհով հասնել հայ ազգային-ազատագրական շարժման շատ ասպեկտների անկողմնակալ լուսաբանմանն ու գիտական արժևորմանը:

Աշխատությունը նվիրված է հայ պատմագիտության կողմից ա-

ռանձին ուսումնասիրության նյութ չդարձած մի խնդրի՝ Սարգիս Կուկունյանի արշավանքին: Այն ներկայացրել ենք հայ ազգային-ազատագրական պայքարի հենքի վրա՝ որպես ընդհանուր շղթայի մի կարևոր դրվագ: Հրապարակի վրա եղած աշխատություններում լոկ մասնակիորեն շոշափվել է խնդրո առարկան, որը, սակայն, հեռու է ամբողջական ու համակողմանի քննությունից: Այս առումով սույն ուսումնասիրությունն առաջին փորձն է լուսաբանելու Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքի ամբողջական պատմությունը: Մեր առջև նպատակ ենք դրել արխիվային փաստաթղթերի, տպագիր վավերագրերի, բազմաբնույթ հուշագրությունների, ժամանակի և ուշ շրջանի պարբերականներում առկա փաստական հարուստ նյութի, գիտական ժողովածուներում հրապարակված հոդվածների, պատմագիտական արժեքավոր աշխատությունների համակողմանի ուսումնասիրությամբ բացահայտել ու ամբողջական ձևով ներկայացնել Սարգիս Կուկունյան անհատին և նրա գլխավորած արշավանքը: Արժևորելով Սարգիս Կուկունյանի արշավանքը՝ պետք է բնորոշել, որ այն իր բնույթով ու էությամբ ազգային շարժում էր, ազգի երիտասարդ, գիտակից ու հայրենասեր մասի համախմբված պայքար, որի անմիջական նպատակն ազատագրական պայքարին համազգային բնույթ հաղորդելն էր:

Աշխատանքը շարադրվել է աղբյուրագիտական հարուստ հենքի վրա:

Մեր կողմից օգտագործված աղբյուրները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) արխիվային փաստաթղթեր, բ) հրատարակված սկզբնաղբյուրներ՝ տարաբնույթ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, իրադարձությունների կենտրոնում կանգնած գործիչների ու ժամանակակիցների հուշագրություններ, գ) ժամանակաշրջանը լուսաբանող պարբերական մամուլ:

Հրապարակի վրա եղած նյութը լրացվել ու հարստացվել է հիմնախնդրի վերաբերյալ առկա հարուստ ու արժեքավոր արխիվային վավերագրերով՝ Թիֆլիսի դատական պալատի նիստերի արձանագրություններով, Երևանի շրջանային դատարանի դատավճռով, որոնք կազմում են մեր ուսումնասիրության աղբյուրագիտական հենքի առաջին շերտը: Մանրակրկիտ ուսումնասիրվել է Հայաստա-

նի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ)՝ Հայ հեղափոխական դաշնակցության փաստաթղթերն ամփոփող 1457 ֆոնդը[1]: Արժեքավոր ու բազմազան նյութեր է պարունակում նաև Հայաստանի ազգային արխիվի 402 ֆոնդը[2]: Ամբողջությամբ ուսումնասիրվել են Սարգիս Կուկունյանի արշավանքի մասնակից Ասքանազի ձեռագիր հուշագրությունը և Թիֆլիսի դատական պալատի նիստերի արձանագրությունները ու ամբաստանագիրը: Մեզ արժեքավոր նյութ է տվել Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի արխիվում (այսուհետև՝ ԳԱԹ) գտնվող Բագրատ Նավասարդյանի հարուստ ֆոնդը[3]: Ուշագրավ է հատկապես այդ ֆոնդում պահվող Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադիր-ղեկավար Խաչատուր Կերեկցյանի (Կարեկցյան) եղբոր՝ Տիգրան Կարեկցյանի կողմից գրի առնված կենսագրական ձեռագիր հուշագրությունը: Այն արժեքավոր տեղեկատվություն է պարունակում Ս. Կուկունյանի արշավանքի նախապատրաստական շրջանի, Սարգիս Կուկունյան-Հակոբ Սարկավագ հարաբերությունների, նրանց միջև առկա տարաձայնությունների և Սարկավագի սպանության շարժառիթների մասին:

ՀՅԴ ձևավորման, դրան նախորդող ու հաջորդող շրջանների դեպքերի ու իրադարձությունների մասին ժամանակակիցների հիշողությունները, ՀՅԴ նշանավոր մի շարք գործիչների առաջին տասնամյակի նամակներն ու գրությունները հանրագումարի են բերվել մնայուն արժեք ներկայացնող «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան»[4] փաստաթղթերի երկհատոր ժողովածուում: Այդ ստվարածավալ հատորներում ամփոփված ՀՅԴ պատմության սկզբնաղբյուրներն ամբողջացնելու գործում դրվատանքի է արժանի Սիմոն Վրացյանի քրտնաջան աշխատանքը: Մեր կողմից ուսումնասիրվող հիմնահարցի լուսաբանման համար հատկապես կարևոր են այդ ժողովածուում և ավելի վաղ «Հայրենիք» ամսագրի էջերում որպես վերջի-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թթ. 11-19, 28, 91-92, 94, 99-101, 103-110, 123-125, 131, գ. 11, թ. 51:

[2] Տե՛ս նույն տեղում, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 2-345, գ. 27, թ. 2-187:

[3] Տե՛ս ԳԱԹ, Բագրատ Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թթ. 43-52, 55, 61:

[4] Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յավելված «Հայրենիք» ամսագրի, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեանի, Պոսթըն, հ. 1, 1934, հ. 2, 1938:

նիս հավելված լույս տեսած՝ Ծերունու (Ստեփան Ստեփանյան) և Արամայիսի (Արամայիս Տեր-Դանիելյան) հուշերը, ինչպես նաև ՀՅԴ հիմնադիր գործիչներ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի, Ռոստոմի (Ստեփան Զորյան) ու այլոց կողմից գրված բազմաթիվ նամակները:

Իր կարևորությամբ առանձնանում է փաստաթղթերի, ՀՅԴ ընդհանուր ու ռայոնական ժողովների որոշումների, բանաձևերի, նամակների և սկզբնաղբյուրային մեծ արժեք ներկայացնող նյութերի հանրագումար հանդիսացող քառահատոր «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»[5] ծանրակշիռ ժողովածուն:

Ժամանակակից գործիչների ու ականատեսների հաղորդած տեղեկություններն ամփոփված են հուշագրություններում, մենագրություններում, տարաբնույթ ժողովածուներում: Ս. Կուկունյանի արշավանքին մասնակցած և Սախալին տաժանակիր աշխատանքի աքսորված Ստեփան Ստեփանյանը (Հարությունյան, Ծերունի, հետագայում ստացավ «Բալաջան» մականունը), արշավանքից շատ տարիներ անց մանրամասնորեն գրի է առել իր հուշերը[6]:

Դեպքերի թարմ տպավորություններով է գրված Արամայիսի (Արամայիս Տեր-Դանիելյան) հուշագրությունը[7]: Արամայիսը չի մասնակցել Ս. Կուկունյանի արշավանքին, սակայն 1906 թ. վերջերին և 1907 թ. սկզբին գրի է առել Ս. Կուկունյանի հուշերը, երբ վերջինս նոր էր վերադարձել Սախալինից: Սկզբնաղբյուրային մեծ արժեք ունեն Ս. Կուկունյանի զինակից Արամայիս Ազնավուրյանի հուշերը[8]:

Հովսեփ Մովսիսյանը մեկն էր Սարգիս Կուկունյանի արշավա-

---

[5] Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր...), խմբ. Հ. Տասնապետեանի, Պէյրութ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, հ. Ա, բ. տպ., 1984, հ. Բ, բ. տպ., 1985:

[6] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 10-81:

[7] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 5-25: Տե՛ս նաև Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), «Հայրենիք» ամսագիր, 1937, N 2, էջ 72-92:

[8] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, մաս 3-րդ, 1936, N 11, էջ 115-122, մաս 4-րդ, 1937, N 4, էջ 144-149, մաս 5-րդ, 1937, N 5, էջ 135-141, մաս 6-րդ, 1937, N 6, էջ 150-157, մաս 7-րդ, 1937, N 8, էջ 133-141:

խմբի վերապրողներից: Նրա հուշերն արժեքավոր են այն առումով, որ Հ. Մովսիսյանը գործուն մասնակցություն է ունեցել Կուկունյանի արշավախմբին սկզբից մինչև նրա նկատմամբ հաշվեհարդարը, իսկ աքսորավայրում միշտ եղել է Եփրեմի (նշանավոր Եփրեմ Տեր-Դավթյան) կողքին՝ ականատեսը լինելով վերջինիս ապրումներին: Հովսեփ Մովսիսյանի հուշերը[9] մեծ չափով զերծ են մնացել ժամանակագրական, տեղագրական, անվանական ու փաստական սխալներից, քանի որ սախալինյան աքսորից փախչելուց անմիջապես հետո՝ 1895 թ., դեպքերի թարմ տպավորությամբ նա մանրամասնորեն գրառել է իր ողջ տեսածն ու լսածը:

Արժեքավոր վկայություններ են պահպանվել Լևոն Սարգսյանի[10] և Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանի[11] հուշերում: Մ. Շաթիրյանը արշավախմբի կազմակերպական շրջանում գործուն մասնակցություն է ունեցել որպես ՀՅԴ ժամանակավոր վարչության ներկայացուցիչ: Նրա հուշերը գրի է առել Ն. Հանգոյցը (Նիկոլ Աղբալյան):

Մեսրոպ Վարդանյանը, որն անձամբ մասնակցել է Ս. Կուկունյանի արշավանքին և նախապես ակտիվ աշխատանքներ տարել ի նպաստ խմբի կազմավորման, 1900 թվականին գրի է առել իր հուշերը[12]:

Առանձնակի կարևորություն ունեն Սարգիս Կուկունյանի կողմից 1885-1886 թվականներին գրված նամակները, որոնք հիմնականում վերաբերում են նրա ուսման հարցերին, ուսանողական տարիներին ունեցած հույզերին ու ապրումներին, ամփոփված են «Ձիթենի» ժողովածուում[13]:

---

[9] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), գրի առաւ Ա. Ամուրեան, տե՛ս «Հայրենիք» ամսագիր 1933, N 2, էջ 70-85, 1934, N 1, էջ 116-125, N 2, էջ 100-110, N 3, էջ 121-134, N 4, էջ 79-88, N 5, էջ 57-68, N 6, էջ 108-122, N 7, էջ 128-138, N 8, էջ 98-108, N 10, էջ 116-127, N 11, էջ 106-127, N 12, էջ 107-119, 1935, N 3, էջ 91-102:

[10] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, Սարգսյան Լևոն, Հուշեր 1889-1892 թվականներից:

[11] Մ. Շ.-ի յուշերը (Մարտին Շաթիրյան), Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առաւ Ն. Հանգոյց, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 27-39 և N 6, էջ 50-66:

[12] Մեսրոպ Վարդանեանի յուշերը: Քառասնամեակ Հ. Յ. Դաշնակցութեան: Կուկունեանի արշաւանքի մասին, տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1930, N 5, էջ 132-135, N 6-7, էջ 168-173:

[13] Անանուն Դ., Սարգիս Կուկունեանի հինաւուրց նամակները, «Ձիթենի» գրական ժողովածու հայ գրականագէտների, Թիֆլիս, 1915:

Ուշագրավ են Սարգիս Կուկունյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող տպագիր հիշողությունները, կենսագրականները, ժամանակակիցների վկայությունները: Այդ առումով հետաքրքիր ու բազմազան նյութեր են պարունակում Հայաստանի պատմության պետական թանգարանում (այսուհետև՝ ՀՊՊԹ) պահվող վավերագրերն ու փաստաթղթերը: Այստեղ մեր կողմից ուսումնասիրվել է վավերագրերի ֆոնդում ընդգրկված Դավիթ Անանունի արխիվը: Դավիթ Անանունի[14] Սարգիս Կուկունյանի կյանքին ու հասարակական գործունեությանը նվիրված հուշագրությունում ներկայացված են Պետերբուրգի համալսարանի հայ ուսանողական ընկերության ձևավորումը, վերջինիս ծավալած գործունեությունը, պարզաբանված են Սարգիս Կուկունյանի ձեռնարկած արշավանքի հետ կապված որոշ հարցեր: Դ. Անանունն անդրադարձել է նաև արշավանքին հաջորդած դեպքերին, Ս. Կուկունյանի աքսորին և հետագա տարիների իրադարձություններին:

Աղբյուրագիտական որոշակի արժեք ունեն Սարգիս Կուկունյանի[15], Մալխասի (Արտաշես Հովսեփյան)[16], Աբրահամ Գյուլխանդանյանի (Ռուբեն Սևյան)[17], Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովանյան)[18] և Ս. Կուկունյանի արշավանքին անդրադարձ կատարած գործիչների՝ հնչակյան Ռուբեն Խան-Ազատի[19], արմենական Արտակ Դարբինյանի[20], Եղիշե քահանա Գեղամյանցի[21] և այլոց հուշերը: Ուշագրավ հրապարակումներ են զետեղված ՀՅԴ Բյուրոյի ջանքերով Սփյուռ-

---

[14] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832:

[15] Տե՛ս Կուկունեան Ս., Վերջին օրերս Սախալինում, Բաքու, 1910:

[16] Տե՛ս Մալխաս, Ապրումներ, հ. Ա, բ. տպ., Պէյրութ, 1956:

[17] Տե՛ս Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 6, էջ 59-81, N 7, էջ 110-121: Տե՛ս նաև՝ Գիւլխանդանեան Ա, Կուկունեանի արշաւանքի մասնակցողները, «Հայրենիք» ամսագիր, 1941, N 8, էջ 156-166:

[18] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան դիւանէն Սեւ-Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ», 1929, N 12, էջ 274-279, 1930, N 1, էջ 16-20, N 3, էջ 81-88:

[19] Տե՛ս Խան-Ազատ Ռուբեն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 112-130, 1928, N 3, էջ 114-128:

[20] Տե՛ս Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890 էն 1940, բ. տպ., Երեւան, 2003:

[21] Տե՛ս Գեղամեանց Եղիշէ Ա.-Ք., Ռուս բիւրօկրատիան եւ հայերը (մտորումներ), երկրորդ տպագրութիւն, Բագու, 1917:

քում հրատարակված հոբելյանական տարբեր ժողովածուներում[22]:

Հետազոտվող հիմնախնդրի տարբեր ծալքերի լուսաբանման վերաբերյալ արժեքավոր վերլուծություններ, գնահատականներ ու եզրահանգումներ են ամփոփված ՀՅԴ նշանավոր գործիչների, ինչպես նաև քաղաքական այլ ուղղություններ ներկայացնող ժամանակակիցների հուշերում: Դրանց շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են Շերամ Ղազարյանի[23], Ռուբենի[24] կողմից գրված հուշագրությունները: Այնուհանդերձ, հուշագրություններն արժեքավոր փաստեր ու վկայություններ ընդգրկելով հանդերձ՝ լիարժեք վստահելի սկզբնաղբյուրներ չեն: Դեպքերին հաջորդած տասնամյակներում գրի առնված հուշերը, բնականաբար, մոռացության հետևանքով պարունակում են փաստական և ժամանակագրական վրիպումներ ու սխալներ, երբեմն նաև չափազանցություններ: Առկա են արշավանքի հետ կապված մի շարք անճշտություններ: Բայց, այսքանով հանդերձ, հուշագիրների խոսքը հագեցած է հուզական լիցքով, հայրենասիրական ջերմ պաթոսով, հանգամանք, որն արդեն իսկ մնայուն է դարձնում հուշագրի խոսքը: Հետևաբար, արշավանքի մասնակիցների հուշագրություններն արժևորելով հանդերձ, դրանցից օգտվել ենք խիստ զգուշորեն:

Հետաքրքիր փաստեր են ներկայացնում Սիմոն Զավարյանի, Ռոստոմի (Ստեփան Զորյան) հիշողությունները, նամակներն ու զանազան այլ փաստաթղթեր, նրանց մասին վկայություններ ու հիշողություններ ամփոփող մեծարժեք ժողովածուները[25]:

Ինչպես Սարգիս Կուկունյանի, այնպես էլ Եփրեմ Դավթյանի՝ որպես Կուկունյանի արշավանքի մասնակցի մասին արժեքավոր աղբ-

---

[22] Տե՛ս Վաթսունամեակ (1890-1950), կազմեց Ս. Վրացեան, հրատ. Հ.Յ.Դ. Ամերի. Կեդր. Կոմիտէի, Պոսթըն, 1950: Տե՛ս նաև Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, 1950: Տե՛ս նաև՝ Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք) նուիրուած Հ.Յ.Դ. 100 ամեակին, հ. Ա, «Յեղափոխական գրադարան», թիւ 8, Աթէնք, 1990:

[23] Տե՛ս Կարնոյ առաջին դէպքը, Շէրամ Ղազարեանի յուշերը, Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 3-10:

[24] Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990:

[25] Տե՛ս Սիմոն Զավարեան, մահուան եօթանասունամեակին առթիւ, խմբ. Հ. Տասնապետեանի, հ. Ա, Պէյրութ, 1983, հ. Բ, Պէյրութ, 1992: Ռոստոմ, Մահուան վաթսունամեակին առթիվ, խմբ. Հ. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, 1979:

յուր է «Սգապսակ Եփրեմին» խորագիրը կրող հուշեր, մահախոսականներ ու կարծիքներ ընդգրկող փոքրածավալ ժողովածուն[26]:

Հետազոտության աղբյուրագիտական երրորդ շերտը կազմում են ժամանակի պարբերական մամուլից քաղված նյութերը, ինչպես նաև ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ արշավանքից տասնամյակներ անց մամուլի տարբեր օրգաններում (հատկապես կուսակցությունների պաշտոնաթերթերում) լույս տեսած ազդերն ու արշավանքի հոբելյանական տարելիցներին վերաբերող հոդվածներն ու հրապարակումները:

Հայ ազգային-ազատագրական պայքարի մասնակիցների հուշագրությունները հավաքելու ու ամբողջացնելու, շարունակական շարքով տպագրելու և ընթերցողին այդ փրկված բեկորները հասանելի դարձնելու գործում մեծ է Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրի դերը: Մեծապես օգտվել ենք «Հայրենիք»-ի, «Դրոշակ»-ի, «Ազատամարտ»-ի, «Մշակ»-ի, «Վեմ»-ի, «Արմենիա»-ի էջերում դեպքերից անմիջապես հետո կամ հետագայում տպագրված ծավալուն հաղորդումներից ու տեղեկատվություններից: Դրանք հիմնականում արշավանքի անմիջական մասնակիցների կողմից որպես արձագանք տպագրված հուշագրություններ, ժամանակակիցների հայրենասիրական-հրապարակախոսական բնույթի նյութեր են:

Հիմնախնդրի վերաբերյալ սփյուռքում ստեղծվել է պատմագիտական որոշակի ժառանգություն: Այն զերծ չէ կուսակցական, կողմնապահ մեկնաբանություններից ու գնահատականներից: Դրանք հիմնականում պարունակում են հրապարակախոսական, տեղեկատվական, փաստագրական բնույթի նյութեր: Նշված հրապարակումներից հիշատակելի են «Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով)» գիրքը[27], Ա. Նորյանի (Արսեն Միքայելյան) ՀՅԴ գործունեությանը նվիրված շարադրանքը[28]: Հիմնախնդրի ուսումնասիրման համար հետաքրքիր վերլուծություններ, դիտարկումներ և հարցադրումներ են պարունակում սփյուռքահայ հեղի-

---

[26] Տե՛ս Սգապսակ Եփրեմին, Կ. Պոլիս, 1912:

[27] Տե՛ս Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), Վիեննա, 1894:

[28] Տե՛ս Նորեան Ա., Դրւագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից, Ա. տասնամեակ, Բոստոն, 1917:

նակ Գ. Լազյանի աշխատությունները[29]: Ներկայացնելով ՀՅԴ-ի պատմությունը՝ Գ. Լազյանն ազատագրական պայքարի խորապատկերում անդրադառնում է Սարգիս Կուկունյանի արշավանքին:

Մնայուն արժեք ունեցող ուսումնասիրություն է Միքայել Վարանդյանի ՀՅԴ պատմության երկհատոր ամփոփ աշխատությունը[30]: Դրանում Ս. Կուկունյանի Պետերբուրգում ուսանելու տարիները, նրա մասնակցությունը բուլղար հեղափոխականների կյանքին նվիրված հայերեն գրքույկների հրատարակմանը, արշավանքի ձախողումն ու Ս. Կուկունյանի աքսորը դեպի Սախալին խիստ ակնարկային են ներկայացված: Այնուամենայնիվ, Մ. Վարանդյանի աշխատությունները[31] կարևոր են հատկապես պարունակած փաստական նյութի առումով:

Հիմնախնդրին իր «Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան» աշխատության Բ հատորում անդրադարձել է Լ. Չորմիսյանը[32]: Կուկունյանի արշավանքի ընթացքի ու ձախողման վերաբերյալ իր հարցադրումները, հետաքրքիր վերլուծություններն ու գնահատականները տալով՝ Լ. Չորմիսյանը գալիս է հետևյալ եզրահանգմանը. ***«Կուկունեանի արշաւախումբի ծեռնարկը, լոկ ցուցադրական բնոյթ մը միայն ունենալուն հակառակ, լայն արձագանք ունեցաւ հայկական բոլոր շրջանակներուն մէջ: Առաջին արտայայտութիւնն էր, զինուած խումբեր կազմելու եւ դուրսէն Թուրքիոյ սահմանը անցնելով թուրք իշխանութեան եւ քուրտ ցեղախումբերու դէմ կռուելու նպատակով*** (ընդգծումը մերն է - Կ. Ե.): Այս մէթոտը պիտի որդեգրուէր յետագային կուսակցութիւններու կողմէ գործունէութեան իբրեւ ամենէն կարեւոր եւ ազդու միջոցը»[33]:

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր փաս-

---

[29] Տե՛ս Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ), Գահիրէ, 1945: Նաև՝ Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949:

[30] Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հ. 1, Պարիզ, 1932, տե՛ս նաև Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992:

[31] Տե՛ս Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւն, հ. Ա, հրատ. Ժնեւ, 1913:

[32] Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, 1878-1908, Պէյրութ, 1974:

[33] Չորմիսեան Լ., նշվ. աշխ., էջ 289:

տեր են ներկայացնում Կարո Սասունու[34], Վալադ Վալադյանի (Մկրտիչ Վանցյան)[35] ուսումնասիրությունները:

ՀՅԴ կուսակցության պատմությանը նվիրված իր աշխատության մեջ Հրաչ Տասնապետյանն անդրադարձել է մեզ հետաքրքրող հիմնախնդրին, ներկայացրել ՀՅԴ «Կենտրոնի»՝ Կուկունյանին տարհամոզելու փորձերը, Արևմտյան Հայաստան մաս-մաս ու աննկատ անցնելու, ապա 1891 թ. գարնանը վերախմբավորվելու և ապստամբական շարժում ձեռնարկելու ուղղությամբ ՀՅԴ կողմից արված առաջարկները: Այնուհետև, գնահատելով Սարգիս Կուկունյանի արշավանքը, Հր. Տասնապետյանն այն համարել է ***«հայ հեղափոխական շարժման սկզբնական ռոմանտիզմի տիպական արտահայտություն»***[36] (ընդգծումը մերն է - Կ. Ե.):

Սարգիս և Միսակ Բդեյաններն իրենց աշխատության մեջ[37] Տարոնի պատմությունը ներկայացնելուն զուգընթաց անդրադարձել են նաև Ս. Կուկունյանի արշավանքին: Նրանք քննության են ենթարկել սահմանն անցնել-չանցնելու վերաբերյալ Սարկավագի և Կուկունյանի միջև եղած տարաձայնությունները, լուսաբանել արշավանքի նախապատրաստական շրջանի, ընթացքի ու ձախողման հետ կապված տարաբնույթ հարցեր:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության և հայ ազգային-ազատագրական շարժման լուսաբանման տեսանկյունից գիտական որոշակի արժեք է ներկայացնում Լ. Նալբանդյանի աշխատությունը[38]:

---

[34] Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Հրատարակութիւն Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան կեդրոնական վարչութեան, Պէյրութ, 1956, նաև՝ Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառոտ ակնարկ քառասունամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», 1930, N 11-12, էջ 327-333:

[35] Տե՛ս Վալադեան Վ., Սարգիս Կուկունեանի արշաւանքը, «Հայրենիք» ամսագիր, 1957, N 9, էջ 1-9, N 10, էջ 23-32, N 11, էջ 38-48, N 12, էջ 57-68: Նաև՝ Սեւքարեցի Սաքոն, «Հայրենիք» ամսագիր, 1959, N 2, էջ 1-12, N 3, էջ 10-19, N 4, էջ 49-61, N 5, էջ 55-64: Նաև՝ Քեռին, «Հայրենիք» ամսագիր, 1959, N 11, էջ 24-35, N 12, էջ 52-63:

[36] Տե՛ս Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 25:

[37] Բդէեան Ս. եւ Մ., Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962:

[38] Տե՛ս Nalbandian Louise, The Armenian revolutionary movement. The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century, University of California Press, Berkeley and Los Angeles, 1963.

Եթե դժվարին պայմաններում սփյուռքահայ պատմաբանները շոշափելի աշխատանք կատարեցին հայ ազգային-ազատագրական պայքարի լուսաբանման, բազմաթիվ հիմնախնդիրներ բարձրացնելու ու մոռացությունից փրկելու ուղղությամբ, ապա 1920-1950-ական թվականների կեսերի խորհրդային պատմագրությունը ծուռ հայելու մեջ ներկայացրեց ազատագրական պայքարի հիմնախնդիրները՝ հաճախ հայհոյանք ու ցեխ նետելով հայ քաղաքական կուսակցությունների հասցեին: Դատապարտելով 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական շարժումը՝ խորհրդահայ որոշ պատմաբաններ այն համարել են հայ քաղաքական կուսակցությունների կողմից դրսից ներմուծված և արհեստականորեն հրահրված հետադիմական, բուրժուազգայնական արկածախնդրություն, ուշադրության ոչ արժանի մի երևույթ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության հարցերին անդրադարձել են խորհրդահայ մի շարք ուսումնասիրողներ: Առաջիններից մեկը մեծանուն պատմաբան Լեոն էր (Առաքել Բաբախանյան): Բազմավաստակ պատմաբանի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»[39] երկհատոր աշխատությունը, «Անցյալից»[40] հուշագրությունը պարունակում են արժեքավոր փաստական նյութ և փաստերի վերլուծության յուրահատուկ մոտեցում: Ճիշտ չգնահատելով հայ ազատագրական շարժման գաղափարաբանությունը՝ նա արևմտահայերի ազատագրական շարժումը համարում է ողբերգություն, իսկ այն ոգեշնչողներին՝ արկածախնդիրներ: Տուրք տալով ժամանակի պատմագիտության մի շարք սխալ մոտեցումների՝ նախկին դաշնակցական, հետագայում լիբերալ-բուրժուական պատմահայեցողության դիրքերում կանգնած պատմաբանը սխալ դիրքերից է մեկնաբանել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առանձին հարցեր:

Մասնավորապես, Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքին Լեոյի տված գնահատականը հետևյալն է. «Այդ մի երեխայական արկածախնդրութիւն էր, որի մանրամասնութիւններն այսօր այնքան

---

[39] Տե՛ս Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Պարիզ, 1935:

[40] Տե՛ս Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ. Հայոց հարցը. Հեղափոխական Դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. Հեղափոխություն, Թիֆլիս, 1925:

անհաւատալի են թւում, այնքան միամիտ, մանկական են: Այդ տղայամտութիւնը դեռ գուցէ ներելի համարւի նորութեան եւ փորձառութեան բացակայութեան պատճառով: ***Բայց այդ զավեշտական արշաւանքի մէջ աչքի է խփում մի առանձնայատկութիւն, որ ցոյց էր տալիս, թէ հայդուկային աշխարհայացքը մինչեւ որ աստիճան էր հասցնում ազգայնական կատաղի ատելութիւնը»***[41] (ընդգծումը մերն է - Կ. Ե.), տեսակետ, որին հնարավոր չէ համաձայնել:

Հայ քաղաքական կուսակցությունների՝ 19-րդ դարավերջի գործունեության քննադատություն է պարունակում նախկին դաշնակցական, ապա սպեցիֆիկ Դավիթ Անանունի (Դավիթ Տեր-Դանիելյան) աշխատությունը[42]: Հեղինակի կարծիքով՝ Բանկ Օտտոմանի գրավումը, Խանասորի արշավանքը և ՀՅԴ «հեղափոխական» գործունեությունը, այդ թվում՝ Սարգիս Կուկունյանի արշավանքը, կրում էին ցուցական բնույթ և հեռու էին կազմակերպված շարժում լինելուց:

Հիմնահարցի համեմատաբար օբյեկտիվ լուսաբանման համար քիչ թե շատ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին միայն 1950-1980-ական թվականներին: Շարժման պատմության վերհանման ուղղությամբ աշխատանքներ ծավալեցին և արժեքավոր մենագրություններ ստեղծեցին Մ. Ներսիսյանը[43], Վ. Պարսամյանը[44], ավելի ուշ՝ Գ. Ղարիբջանյանը[45], Ռ. Հովհաննիսյանը[46], Ա. Համբարյանը[47]: Խորհրդահայ մեծավաստակ պատմաբանները պատմագիտության բնագավառում իրենց արժեքավոր ու մնայուն խոսքն ասացին՝ հիմ-

---

[41] Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, էջ 115:

[42] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. 2, էջմիածին, 1922:

[43] Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:

[44] Տե՛ս Պարսամյան Վ. Ա., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:

[45] Տե՛ս Ղարիբջանյան Գ. Բ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1986:

[46] Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Երևան, 1965:

[47] Տե՛ս Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965:

նավորելով օսմանյան բռնատիրության դեմ մղված ազգային-ազատագրական շարժման պատմականորեն օրինաչափ ու առաջադիմական բնույթը:

Մեզ հետաքրքրող հիմնախնդրի տարբեր ասպեկտներին վերաբերող հարուստ նյութեր են պարունակում Հ. Սիմոնյանի[48], Կ. Թառոյանի[49], Հ. Ինճիկյանի[50], Ջ. Կիրակոսյանի[51] մեծարժեք աշխատությունները: Հիշյալ հեղինակների մենագրություններում շարադրված ու գնահատված է սուլթանական ռեժիմի և ազգային ճնշման դեմ 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների արևմտահայության պայքարը: Ջ. Կիրակոսյանի աշխատության մեջ անդրադարձ կա նաև Սարգիս Կուկունյանի կյանքին ու գործունեությանը:

Հայ պատմագրությունը 1990-ական թվականներին թևակոխել է զարգացման մի նոր շրջան, երբ Հայաստանի պատմությունը հնարավոր դարձավ լուսաբանելու նորովի, իսկ հասարակական-քաղաքական բարենպաստ պայմանները հնարավորություն ստեղծեցին շատ ու շատ հիմնախնդիրներ համակողմանի հետազոտության ենթարկելու: Նորահայտ բազմաթիվ աղբյուրագիտական նյութերը, մատչելի դարձած արխիվային վավերագրերն ու փաստաթղթերը խթանեցին բազմաթիվ հիմնախնդիրների անաչառ լուսաբանմանը՝ հենվելով փաստական հարուստ նյութի վերլուծության վրա: Այդ տեսանկյունից աչքի են ընկնում Հրաչիկ Սիմոնյանի[52], Ազատ Համբարյանի[53] և այլոց հետխորհրդային շրջանում հրատարակած ուսումնասիրությունները: Հայ ազգային ազատագրական պայքարի, ՀՅԴ գործունեության և այլ հիմնախնդիրների վերլուծության համակողմանի ուսումնասիրություն է կատարված Հր. Սիմոնյանի «Անդրանի-

---

[48] Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986: Նաև տե՛ս նույնի, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

[49] Տե՛ս Թառոյան Կ. Ջ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Երևան, 1980:

[50] Տե՛ս Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984:

[51] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980:

[52] Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Երևան, 1996:

[53] Տե՛ս Համբարյան Ա. Ս., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:

կի ժամանակը» մեծարժեք մենագրությունում: Հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանելով ժամանակի պատմական իրադարձությունների լայն համապատկերի վրա, թեև իր հիմնական խնդիրը չհամարելով հայ ազգային-ազատագրական պայքարի տարբեր փուլերի ուսումնասիրումը՝ հեղինակն ուսումնասիրության մեջ ուրվագծել է նաև Սարգիս Կուկունյանի արշավախմբի դեպի Երկիր անցումը: Հր. Սիմոնյանի՝ վերջին տարիներին լույս տեսած «Ազատագրական պայքարի ուղիներում»[54] աշխատության առաջին գրքում հեղինակը ներկայացնում է ՀՅԴ գործունեության բարդ ու հարուստ ժամանակաշրջանը: Թեև վերջինիս առանցքում գլխավորապես ընկած են հետագա տարիների իրադարձությունները, սակայն Կովկասի հայ երիտասարդության շրջանում «Դեպի Երկիր» կազմակերպված շարժումը ներկայացնելիս հեղինակն անդրադարձել է նաև Սարգիս Կուկունյանի արշավանքին:

ՀՅԴ ծնունդը, ձևավորումը, կուսակցության գաղափարախոսությունը, ՀՅԴ հիմնադիր ժողովները, ինչպես նաև ՀՅԴ կուսակցության և Սարգիս Կուկունյանի միջև առկա տարաձայնություններն իրենց արտացոլումն են գտել Գ. Խուդինյանի մեծարժեք մենագրությունում[55]: Բացի այս մենագրությունից՝ Սարգիս Կուկունյանի կյանքին ու գործունեությանը Գ. Խուդինյանն անդրադարձել է նաև «Սարգիս Կուկունյան» արժեքավոր հոդվածում[56]:

Հայ ազգային-ազատագրական պայքարի բազմակողմանի քննությանն են նվիրված, հարուստ ու բազմազան փաստեր ու վավերագրեր են ներառում հետխորհրդային շրջանի երիտասարդ սերնդի պատմաբաններ Հ. Գրիգորյանի[57], Ա. Ներսիսյանի[58], Հ. Գե-

---

[54] Տե՛ս Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք I, Երևան, 2003:

[55] Տե՛ս Խուդինյան Գ. Ս., Հ. Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006:

[56] Տե՛ս Խուդինյան Գ. Ս., Սարգիս Կուկունյան, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1989, N 11, էջ 24-35:

[57] Տե՛ս Գրիգորյան Հ. Բ., Հայոց ազատամարտի զինման ու ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Երևան, 2004:

[58] Տե՛ս Ներսիսյան Ա. Ա., Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Երևան, 1999: Նաև՝ նույնի, Ընդհանուր ապստամբության կազմակերպման հար-

վորգյանի[59] աշխատություններն ու հոդվածները:

Կարծում ենք՝ Սարգիս Կուկունյանի գործունեության վերլուծությունն ու արժևորումը, նրա հայրենասիրությունն ու արևմտահայ եղբայրներին օգնության հասնելու տենչը կարող են ներկա և ապագա սերունդներին կողմնորոշել արդյունավետ ազգանվեր գործունեության:

ցը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ ազատագրական պայքարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, թիվ 2, էջ 109-120:

[59] Տե՛ս Գևորգյան Հ. Մ., Էջեր հայոց ազատամարտի, Երևան, 2005: Նաև՝ նույնի, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

1. Ազատագրական պայքարի նախադրյալները: Հայկական հարցի միջազգայնացումը և ազգային-ազատագրական շարժման վերելքը

19-րդ դարի առաջին տասնամյակներին անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ՝ Արևելյան Հայաստանն անցում կատարեց իր պատմության որակապես նոր շրջան: Ռուսական պետության կազմում արևելահայությունը հնարավորություն ստացավ առաջադիմելու՝ ընդգրկվելով համառուսական տնտեսական կյանքի զարգացման ոլորտ՝ դրսևորելու իր ունակություններն առևտրի ու արդյունաբերության, կրթության և մշակույթի ոլորտներում: Մինչդեռ արևմտահայությունը շարունակում էր մնալ թուրքական ծանր լծի տակ՝ կրելով անլուր հալածանքներ ու ենթարկվելով թուրք հարստահարողների բռնություններին ու կեղեքումներին: Ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը, Ռուսաստանի կողմից Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական մի փոքր տարածքի (Կարսի մարզ) նվաճումը և, վերջապես, Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում ու Բեռլինի միջազգային վեհաժողովում ծեծվող Հայկական հարցը կարծես թե առաջին անգամ խորտակեցին պետականությունից զրկված Հայաստանի երկու հատվածների միջև դարերի ընթացքում ձևավորված պատնեշը: Հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Բեռլինի վեհաժողովից հետո իբրև մտայնություն հասունանում է Արևմտյան Հայաստանը զենքի ուժով ազատագրելու գաղափարը, հայությանը նպատակաուղղելով դեպի ազատագրական զինյալ պայքար՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա: Այդ գաղափարների ազդեցությամբ արևելահայ և արևմտահայ իրականության մեջ կազմակերպվեցին գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ, հրապարակ եկան

հայ քաղաքական կուսակցությունները: Այս ամենի հետևանքով օսմանյան տիրապետության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց որակական ավելի բարձր փուլ: Այդ փուլի բնորոշ կողմերից էր հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի և արևմտահայերի քաղաքական համախմբվածությունն ազգային գերխնդրի (Արևմտյան Հայաստանի ազատագրման) լուծման շուրջ:

Արևմտահայության դժվարին պայքարին ի սկզբանե եղբայրական օգնության ձեռք մեկնեց արևելահայությունը՝ դրամական ու նյութական աջակցությամբ, իր անձնուրաց անհատների ու ֆիդայական (հայդուկային) խմբերի մասնակցությամբ:

19-րդ դարի 80-ական թթ. Արևմտյան Հայաստանում առաջին հայդուկների հանդես գալուց հետո արևելահայ երիտասարդության շրջանում սկսվեց ինքնաբուխ շարժում՝ արևմտահայ արյունակիցներին աջակից լինելու համար: Ֆիդային թուրքական բռնակալության դեմ պայքարող մարտիկ էր, ժողովրդական վրիժառու, որը պատրաստ էր իր կյանքը նվիրաբերել ժողովրդի ազատագրության գործին: «Հայդուգը բնական արտահայտությունն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված և յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի,- գրում է Ռաֆֆին,- հայդուգը ստրուկի բողոքն է իշխողի բարբարոսության դեմ... Հայդուգը հասարակ ավազակից որոշվում է գլխավորապես նրանով, որ նա ոչ թե հափշտակության ագահությունից դրդված, կամ հանգամանքներից ստիպված է գործադրում իր արյունահեղ արհեստը,- այլ նրա սրտի հետ կապված է խորին ազգային զգացմունք և ազատության բաղձանք: Հայդուգի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից, որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին, և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը: Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տիրանի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից - ահա դրանք են նրա ցանկությունները, սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ»[60]: Հայդուկն իր

[60] Ռաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան), Երկերի ժողովածու, հ. 9, Հայդուգներ, Երևան, 1958, էջ 323:

անձի մեջ մարմնավորում էր արիության, վեհանձնության, անկոտրում կամքի վառ հատկանիշները: Հայդուկային խմբերի ձևավորման յուրահատուկ կողմերից մեկը դրանց համալրման զուտ կամավորական սկզբունքն էր: Կազմակերպչական առումով հայկական զինախմբերին բնորոշ էին խիստ կարգապահությունը և անառարկելի ենթակայությունը հրամանատարին: Հատկապես ազատամարտի առաջին շրջանում միշտ չէ, որ այդ հատկանիշների կողքին առկա էին նաև բավարար փորձառությունն ու ռազմական արվեստին տիրապետելու գործոնը: Բայց դրանք բացեր էին, որոնք, որպես կանոն, բնորոշ էին յուրաքանչյուր նորաստեղծ մարտական ուժի, առավել ևս, եթե այն ստեղծվում էր գրեթե զրոյական մակարդակից: Ազգային-ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց այդ բացերն աստիճանաբար հաղթահարվում էին:

Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի վերջերին շարունակում էր մնալ հետամնաց երկիր: Այն ռազմաֆեոդալական տիպիկ բռնապետություն էր, որի գլուխ կանգնած էր սուլթանը, ում կամքն ամեն ինչ էր: Օսմանյան վարչակարգը կայսրության ժողովուրդներին ենթարկում էր սոցիալ-տնտեսական ու ազգային ճնշումների, իսկ քրիստոնյա փոքրամասնություններին՝ նաև կրոնական հալածանքների: Թուրքական սուլթանները, վարելով հայատյաց ու հայաջինջ քաղաքականություն, 19-րդ դարի երկրորդ կեսին մի քանի անգամ փոփոխեցին Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը՝ նպատակ ունենալով հայկական նահանգներում ստեղծել մահմեդականների բացարձակ մեծամասնություն:

Օսմանյան կայսրությունը Ղուրանի սկզբունքների վրա հիմնված կրոնական, ռազմական պետություն էր: Իսլամը մահմեդական տիրապետող դասակարգերի համար դարձավ ամենահարմար հենարանը՝ իրենց շուրջը համախմբելու սեփական շահագործվող ու տգետ մասսաններին, նրանց համոզելով, թե իսլամից դուրս մնացածները համարվում են գյավուր (քյաֆիր), և իսլամը երբեք չի կարող հաշտվել ու բարեկամանալ նրանց հետ: «Կրոնը դադարելով ներքին համոզմունք լինելուց, ոմանց համար դարձել է արտոնությունների և առանձնաշնորհումների, իսկ մյուսների համար՝ քաղաքացիական անիրավահավասարության աղբյուր: Կայսրությունը

բաժանված է երկու անհիրավահավասար և միմյանց նկատմամբ թշնամական դասակարգերի՝ մուսուլմանների և քրիստոնյաների»[61]: Թուրք կառավարողները բնավ էլ չէին ցանկանում մուսուլմանների ու քրիստոնյաների միջև խորացված հակասությունները հարթել, քանի որ հավասարության մասին ոչ մահմեդականների պահանջը կնշանակեր կրոնի անջատում քաղաքականությունից: Հետևաբար, թուրք վերնախավը չէր հանդուրժում մուսուլմանների հետ նույն պայմաններում պահել ոչ մուսուլման ժողովուրդներին:

Առանձնապես ծանր էր օսմանյան լծի տակ հեծող մոտ երեք միլիոն հայերի վիճակը, որոնց տնտեսական ու քաղաքական դրությունը գնալով վատթարանում էր: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1876 թ. տվյալներով Օսմանյան կայսրության մեջ հաշվվում էր մոտ երեք միլիոն հայ, որից 400.000-ը բնակվում էր Կոստանդնուպոլսում և Բալկաններում, 600.000-ը՝ Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670.000-ը՝ Փոքր Հայքում և Կեսարիայի շրջանում, իսկ 1.330000-ը՝ Մեծ Հայքում[62]: Դա նշանակում էր, որ հայությունը մեծապես ապրում էր Փոքր և Մեծ Հայքում: Պատկերը հետևյալն էր՝ Վանում, Թիմարում, Հայոց ձորում, Արճակում ընդհանուր առմամբ արևմտահայությունը կազմում էր բնակչության մոտ 74%-ը, Արճեշում՝ 64%, Մոկսում՝ 63, Ալջավազում՝ 60, Բուլանուխում՝ 67, Մուշում՝ 62, Գավաշում՝ 55, Կարճկանում՝ 55, Շատախում (Նորդուզի հետ)՝ 50 տոկոս: Այսինքն՝ վերոնշյալ տարածքներում բացարձակ մեծամասնությունը կազմում էր արևմտահայությունը[63]:

Հետագա տարիներին Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության հետևանքով 1890-ական թվականներին հայերի թիվը նվազեց: Արևմտահայերի մի մասը ստիպված եղավ դավանափոխվել կամ բռնել արտագաղթի ճանապարհը: Այդուհանդերձ, 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում հայերը շարունակում էին կազմել հարաբերական մեծամասնություն, իսկ առանձին շրջաններում՝ բնակչության մեծ մասը:

---

[61] Տե՛ս Голобородько И. И. (И. Южанин), Старая и новая Турция, М., 1913, էջ 11:
[62] Տե՛ս Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Կ. Պոլիս, 1878, էջ 30:
[63] Записки Кавказского отдела Императорского русского географического общества, книга XVIII, ,,Приложение”, Тифлис, 1886, с. 18-19.

Արևմտյան Հայաստանում, հայերից բացի, ապրում էին նաև քրդեր, թուրքեր, հույներ, ասորիներ, պարսիկներ, չեչեններ, չերքեզներ (վերջիններս Արևմտյան Հայաստան էին ներթափանցել Ղրիմի (Արևելյան) պատերազմից հետո): Հարաբերական մեծամասնություն կազմող հայերից հետո իրենց թվաքանակով երկրորդը քրդերն էին, երրորդը՝ թուրքերը, իսկ ասորիները, պարսիկները, չեչենները և մյուսները փոքրաթիվ էին: Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունն ապրում էր գյուղերում, իսկ քաղաքային բնակչությունը փոքրաթիվ էր (բնակչության մոտ 10 տոկոսն էին ապրում քաղաքներում): Ուստի արևմտահայ ազատագրական շարժման հիմնական ուժը գյուղացիությունն էր: Հայերը զբաղվում էին առևտրով ու արհեստագործությամբ, իսկ թուրքերը՝ պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ, կապալառությամբ ու վաշխառությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, որոշ չափով՝ արհեստներով ու առևտրով: Այնուհանդերձ, հայերը Թուրքիայի առևտրական կյանքում առաջատար դիրք ունեին: Մեծ էր նրանց դերն ինչպես կայսրության առևտրական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքում, վարչական գործերում, գիտության, մշակույթի և արվեստի բնագավառներում: Ի. Ի. Գոլոբորոդկոն գրում է. «Թուրքիայի քաղաքներում առանց հայերի չէին կարող հարմարվել գիտության, տեխնիկայի, արվեստի ու արհեստի ոչ մի քիչ թե շատ լուրջ ճյուղ»[64]: Կայսրության թուրք բնակչությունն իր հիմնական մասով չէր մասնակցում առևտրաարդյունաբերական գործունեությանը: Թուրքական հասարակության վերին և միջին խավերը սերնդեսերունդ արհամարելի բան էին համարում ստեղծագործ աշխատանքը, մասնավորապես արհեստներով և առևտրով զբաղվելը: Արհեստներով զբաղվելն արժանավայել չհամարելով՝ այն բաժին էր թողնված բացառապես «գյավուրներին»՝ քրիստոնյա հպատակներին: Ռայան պարտավոր էր մշակել հողը, զբաղվել արհեստներով ու առևտրով և մյուս «սև աշխատանքներով», ժամանակին և պահանջված չափով մուծել պետական ու մնացած բազմաթիվ տուրքերն ու հարկերը, ստրկական հպատակությամբ տանել թուրքերի քմահաճույքները:

---

[64] Տե՛ս Голобородько И. И., նշվ. աշխ., էջ 221:

Սոցիալ-դասակարգային և ազգային ճնշումներն Արևմտյան Հայաստանում ընդունել էին այլանդակ ու ամոթալի ձևեր: Սուլթանների ու փաշաների անսանձ կամայականությունները սահման չունեին: Անսահման էին նաև հայ ժողովրդի նկատմամբ գործադրած անիրավություններն ու նրա կրած տառապանքները: Հայերը՝ որպես իրավազուրկ «գյավուրներ», մշտապես գտնվում էին ջարդերի ու կոտորածի սպառնալիքի տակ: Ամենուրեք սպանություններ, խժդժություններ, առևանգումներ, ավերում, հրդեհ, թալան... Այդ ամենի հետևանքով գյուղացիական տնտեսությունները քայքայվում էին, ժողովրդական զանգվածներն ընկնում թշվառ դրության մեջ:

Հայությունն օսմանյան տիրապետության տակ զրկված էր կյանքի ու գույքի ապահովությունից: Դատարաններում չէին ընդունվում քրիստոնյաների վկայությունները: Մահմեդականներին թույլատրվում էր զենք կրել, իսկ հայերին՝ ոչ: Մահմեդականները զորակոչվում էին զինվորական ծառայության, իսկ քրիստոնյաները՝ ոչ, որպեսզի զենքից օգտվել չկարողանային: Անգամ ինքնապաշտպանության դեպքում հայը մահմեդականի վրա զենք բարձրացնելու իրավունք չուներ, ուստի մահմեդականները նրա հետ վարվում էին այնպես, ինչպես կցանկանային: Ինքնապաշտպանության նպատակով զենք օգտագործելու դեպքում ռայան դիտվում էր որպես խռովարար, պետական հանցագործ:

Հայերի վրա ավելի մեծ տուրքեր էին դրվում, քան թուրքերի ու մյուս մահմեդականների: Ցանկացած ժամանակ թուրք պաշտոնյաները բռնագրավում էին հպատակ քրիստոնյաների ունեցվածքը: Ի. Ի. Գոլոբորոդկոն գրում է. «Թուրքերին հարստահարում էին փադիշահն ու նրա կուսակալները, բայց թուրքերի անձը, սեփականությունն ու կյանքը անձեռնմխելի էին բոլոր կողմնակի ոտնձգություններից..., իսկ հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք, ովքեր դրա համար բավականին ուժ ունեին»[65]:

Օսմանյան կայսրությունը զգալի միջոցներ էր տրամադրում բանակի և ռազմածովային նավատորմի կարիքներին: Պետության հսկայական տարածքի վրա գտնվող ռազմական ամրությունների ու բերդերի, թուրքական ռազմական միավորումների պահպանման

[65] Տե՛ս Голобородько И. И., նշվ.աշխ., էջ 123:

ծախսերն իրենց ահռելի ծանրությամբ ընկած էին կայսրության հպատակների վրա: «Հիվանդ մարդու» տրոհման, բաժան-բաժան արվելու հեռանկարը, սարսափի մատնելով սուլթաններին և թուրք կառավարողներին, պատճառ էր դառնում, որպեսզի միջոցներ չխնայվեն բանակի մեծացման ու վերազինման համար: Իսկ դա պահանջում էր նորանոր վիթխարի գումարներ: Դրանք չգտնելով սեփական գանձարանում՝ կառավարությունը դիմում էր արտաքին նոր պարտքերի ու փոխառությունների՝ ավելի ուժեղացնելով իր կախվածությունը եվրոպական պետություններից[66]:

Օսմանյան դաժան տիրապետության դեմ ազատագրական պայքարի դրոշ պարզեցին ճնշված ժողովուրդները: 1875-1876 թթ. ապստամբություն բռնկվեց բալկանյան մի շարք երկրներում: Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքը պատճառ դարձավ 1875-1878 թթ. Մերձավորարևելյան ճգնաժամին, որի գագաթնակետը հանդիսացավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ռուսական ձգտումները՝ նվաճելու Սև ծովը, Բոսֆորն ու Դարդանելը, քողարկվում էին «Թուրքիայի մուսուլմանների լծից քրիստոնյաների ազատագրման պայքարի» կարգախոսով[67]:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերի տարած հաղթանակների շնորհիվ Բալկանյան մի շարք ժողովուրդներ վերջնականապես ազատագրվեցին օսմանյան դարավոր լծից և անկախություն ստացան: Ռուս-թուրքական պատերազմը, բալկանյան ժողովուրդների ազատագրական հաջող պայքարը նոր թափ հաղորդեցին հայ ազգային-ազատագրական շարժմանը: Հայերի գիտակցության մեջ գնալով խորանում էր այն համոզումը, որ թուրքական դաժան լծից կարելի է ազատագրվել միայն ռուսական զենքի ուժով: Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակը մեկը մյուսից հետևից գրավեց Բայազետը՝ ապրիլի 17 (29)-ին, մայիսի 5 (17)-ին՝ Արդահանը, նոյեմբերի 6 (18)-ի գիշերը՝ Կարսը, Ալաշկերտի հովիտը:

---

[66] Տե՛ս Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, էջ 11:

[67] Տե՛ս Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, պրակ V, Թուրքիա, Երևան, 1970, էջ 106:

Ռուսաստանի և պարտված Թուրքիայի միջև 1878 թ. փետրվարի 19-ին Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո ծովափնյա ավանում հաշտության պայմանագիր կնքվեց: Ըստ այդ պայմանագրի՝ անկախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան: Ռուսաստանը հետ էր ստանում Բեսարաբիայի հարավային մասը՝ Մերձդանուբյան շրջանները, Արևմտյան Հայաստանի տարածքից՝ Կարսը, Արդահանը, Ալաշկերտը, Բայազետը: Ռուսաստանին էր անցնում նաև Բաթումը: Ռուսաստանի պահանջով պայմանագրի մեջ մտցվեց 16-րդ հոդվածը, որի շնորհիվ Հայկական հարցն առաջին անգամ միջազգային դիվանագիտության ասպարեզ մտավ: Համաձայն 16-րդ հոդվածի՝ Բ. Դուռը պարտավորվում էր անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից[68]: Հոդվածի առավելությունն այն էր, որ Ռուսաստանը հանդես էր գալիս իբրև հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր: Պայմանագրի 18-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքների միացումը Ռուսաստանին հայերին ազգային համախմբության, տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորություն էր տալիս: Ցավալին սակայն այն էր, որ «բարվոքումների ու բարենորոգումների անորոշ խոստումն առաջին իսկ քայլից հայ գործիչներն ըմբռնեցին այն մտքով, թէ Հայաստանը այդ յոդուածով պիտի ստանայ ինքնավարութիւն»[69]: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումներն իրականացնելու համար (որոնց վերահսկելու էր Ռուսաստանը) ռուսական բանակն այդ ընթացքում մնալու էր Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում: Այդ պայմանագրով Հայկական հարցը ձևակերպվեց որպես Արևելյան, այսինքն՝ Օսմանյան կայսրության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մաս և դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Այստեղ բառ անգամ չկար Հայաստանի ինքնավարության, կոնկրետ անելիքների մասին: Հոդվածը մշակած ռուս դիվանագետ

---

[68] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. պրոֆեսոր Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 92:

[69] Լէօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 59:

Ն. Իգնատևին չէր հետաքրքրում հայ ժողովրդի ազատագրության հարցը, այդ հոդվածը Ռուսաստանին հարկավոր էր ժամանակ առ ժամանակ Բարձր Դռան վրա ճնշում գործադրելու համար:

Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Բալկաններում և Փոքր Ասիայում հակասում էր եվրոպական տերությունների, մասնավորապես Ավստրո-Հունգարիայի ու Մեծ Բրիտանիայի շահերին: Նրանք պահանջեցին պայմանագրի բոլոր կետերը վերանայել եվրոպական վեհաժողովում: Տերությունների համատեղ գործողությունները հանգեցրին ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի արդյունքում կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Բեռլինի դաշնագրով փոխարինելուն:

1878 թ. հունիսի 1(13)-ին սկսված Բեռլինի վեհաժողովն ավարտվեց հուլիսի 1(13)-ին ստորագրված պայմանագրով: Պայմանագրի համաձայն՝ Չեռնոգորիան, Սերբիան ու Ռումինիան ճանաչվում էին անկախ: Ռուսաստանին էին մնում Կարսը, Արդահանը և Բաթումը, Թուրքիային էին վերադարձվում Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը: Չնայած հայկական պատվիրակության գործադրած ջանքերին (Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ)՝ վեհաժողովն ընդունեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական խմբագրումը՝ 61-րդ հոդված թվագրմամբ: Դրանում ասվում էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[70]: Սա նշանակում էր հայերին հետաքրքրող խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից և հանձնել եվրոպական տերությունների տնօրինությանը:

Բեռլինի վեհաժողովը չարդարացրեց հայ ժողովրդի հույսերը: Հայկական հարցն Օսմանյան կայսրության ներքին խնդրից՝ ռուսա-

[70] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. պրոֆեսոր Ջ. Ս. Կիրակոսյան, էջ 128:

կան զենքի հաղթանակի շնորհիվ լուծելու հնարավորությունից, վերածվում էր միջազգային հարցի, որի համար պատասխանատվություն էին ստանձնում և երաշխիքներ տալիս Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները:

Այսպիսով, Հայկական հարցը չլուծվեց, դեռ ավելին, եթե Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով առաջին անգամ միջազգային հարաբերությունների մեջ Հայաստանը պաշտոնապես ճանաչվում էր որպես նվաճված երկիր, ապա 61-րդ հոդվածով այն վերածվում է «հայաբնակ մարզերի»: Համաձայն պայմանագրի՝ ռուսական զորքերը դուրս էին գալիս գրաված այն տարածքներից, որոնք վեհաժողովի որոշմամբ անցնում էին Թուրքիային: Արևմտյան Հայաստանում բարեփոխումները պետք է կատարեր թուրքական կառավարությունը, հետևաբար հասկանալի էր ու բնական, որ իրական բարեփոխումների մասին խոսք լինել չէր կարող[71]: Այսպիսով, Հայկական հարցը փոխադրվեց միջազգային քաղաքականության ոլորտ և վերածվեց միջազգային հարաբերությունների առուծախի հարցի, դարձավ միջազգային դիվանագիտության չարչրկվող հիմնախնդիրներից մեկը:

Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում նախատեսված բարեփոխումները չիրականացան: Բեռլին մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանն եվրոպական պետությունների դռները բախելուց հետո վերադառնալով Կ. Պոլիս հայտարարեց. «Կոնգրէսի դռան վրա գրուած էր՝ իրաւունքն ալ ուժուինն է, քաղաքագիտութիւն գթութիւն չունի, իրաւունքն ալ սուրին ծայրին է... Հայաստանցիներ, այսույետեւ սիրեցէ՛ք երկաթը, ձեր փրկութիւնն երկաթով կլինէ, այն պատուական երկաթով, որ Զեյթունէ լեռներեն կելնէ»[72]:

Բեռլինի վեհաժողովի որոշումներն առաջադեմ հայերի շրջանակներում հույսեր արթնացրին մեծ տերությունների միջամտությամբ հայկական ազգային պետություն ստեղծելու վերաբերյալ: Արևմտահայ քաղաքական մտքի կարծիքով՝ քաղաքական միջամտությունը կայանալու էր նրանում, որ հետևելով Թուրքիայի տիրա-

---

[71] Տե՛ս Խուրշուդյան Լ. Ա., Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 19:
[72] «Մշակ», Թիֆլիս,1878, N 159:

պետության տակ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի օրինակին, իրենց ազատագրության հույսը պետք է դնեին եվրոպացիների միջամտության և օգնության վրա, ինչը սխալ էր: «Եթե չլիներ մեր չարաբաստիկ միջամտությունը,- գրում է Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջը,- ապա հայերի մեծամասնությունը 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով անցած կլիներ ռուսական դրոշի պաշտպանության տակ»[73]:

Բեռլինի վեհաժողովի որոշումները սաստկացրին Աբդուլ Համիդի հակահայկական գործունեությունը: Վեհաժողովն ազատություն տվեց սուլթանի ձեռքերին: Օսմանյան կայսրությունը սկսեց ավելի ամուր կառչել ասիական նահանգներից՝ աշխատելով թույլ չտալ այստեղ Նոր Բուլղարիայի ստեղծումը: Այդ խնդրի լուծման համար թուրք կառավարողները գործողության մեջ դրեցին վարչական, ժողովրդագրական, հարկային և այլ միջոցառումների մի համակարգ՝ նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի հայաթափումը: Թուրքական կառավարության նպատակը դարձավ գաղտնի ու բացահայտ միջոցներով բնաջնջել արևմտահայությանը, որով ինքնըստինքյան վճռված կլիներ Հայկական հարցը: Սուլթանը հանգեց այն հետևության, որ անհրաժեշտ է «լուծում» տալ այնքան անհանգըստություններ պատճառած Հայկական հարցին: Այդ նպատակով էլ նա ոչ միայն չիրագործեց Բեռլինում ստանձնած պարտավորությունները, այլև իր ծրագրի կատարումն արագացնելու նպատակով ազատ գործելու ասպարեզներ բացեց վայրագ բարբարոսների համար: Սուլթան Համիդ Բ-ն անգամ արգելեց «Հայաստան» անվան հիշատակումը:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին քառորդում, մի կողմից Օսմանյան կայսրության ներքին ճգնաժամի, մյուս կողմից, Մերձավոր Արևելքում տերությունների գաղութատիրական քաղաքականության հետևանքով թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, հատկապես հայերի համար սկսվեց ազգային ճնշումների, հալածանքների ու բռնությունների մի նոր շրջան: 19-րդ դարի 80-90-ական թվականներին, հատկապես Հայկական հարցի ար-

[73] Джордж Ллойд, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

ծարծման ու ազատագրական պայքարի վերելքի շրջանում, սուլթանական իշխանություններն ավելի ուժեղացրին հպատակ ժողովուրդների նկատմամբ ճնշումներն ու հալածանքները՝ ձեռնամուխ լինելով քրիստոնյա զանգվածների կոտորածների ծրագրմանը և իրագործմանը:

Սուլթան Աբդուլ Համիդը պարբերական կոտորածների ու անտանելի հալածանքների միջոցով սկսեց նվազեցնել հայերի թիվը կայսրությունում: Ֆրանսիացի դիվանագետ Ժյուլ Կամբոնն այդ մասին գրում է. «Դիարբեքիրում, Էրզրումում, Սվազում, Տրապիզոնում և նույնիսկ Կ. Պոլսում տեղական քրիստոնյաներն ապրում էին մշտական սարսափի մեջ... Կայսրության ամբողջ տարածքով մեկ մոլեռանդ հրոսակախմբերը հարձակվում էին հայ բնակչության վրա, սպանում, թալանում, գողանում կանանց և վաճառում շուկայում՝ որպես ստրկուհիներ: Իսկ թուրքական ոստիկանության միջամտությունը կատարվում էր այնպիսի ձևերով, որ հարց էր ծագում. արդյո՞ք այդ մարդասպաններն ու կառավարությունը չէին գործում միասնական և արդյո՞ք համաձայնության չէին եկել լիովին ոչնչացնել հայ ազգը»[74]:

Հայերի հանդեպ գործադրած դաժանություններն ու վայրենի կամայականությունները սպասված արդյունքը չտվեցին: Արևմտահայության համար սկսվեց ազգային-քաղաքական զարթոնքի, ազգասիրության և հայրենասիրության ուժգին պոռթկումի և եռուզեռի մի ժամանակաշրջան: Ինքնագիտակցության, ազգային ուժերի համախմբման, ազգային ինքնաճանաչման գործընթացն որակական թռիչք ապրեց: Կ. Պոլիսը դարձել էր հայ ազգային զարթոնքի ու հայրենասիրության հնոց: Հայկական թերթերի հիմնական թեման Հայաստանում կատարվող իրադարձություններն էին:

Բեռլինի վեհաժողովը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ազատագրական պայքարի պատմության մեջ: Դիվանագիտական, Մեծ տերություններին խնդրելու ճանապարհով միջազգային դիվանագիտության ասպարեզ մտած Հայկական հարցը լուծելու քաղաքականությունն իրեն չարդարացրեց: Հիասթափված և հուսախաբված Արևմուտքից՝ հայ հասարակական-քաղաքական միտքը

[74] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981, էջ 232:

հույսը կապում էր միայն սեփական ուժերի, սեփական ժողովրդի զինված պայքարի հետ: Առաջին պլան մղվեց սեփական ուժերով կռիվ տալու, սուլթանի հայատյաց քաղաքականությանը կռվի ձեռնոց նետելու գաղափարը: Հուսախաբված հայությունը պետք է մշակեր Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի նոր մարտավարություն: Հայ ազատագրական միտքը Բեռլինի կոնգրեսից հետո, առաջնորդվելով Խրիմյան Հայրիկի «Երկաթե շերեփի» գաղափարով, հանգեց Հայկական հարցը զենքի ուժով լուծելու գաղափարին: Թուրքական բռնակալության լծից արևմտահայերի ազատագրության նպատակով հայ գրողներից ու հասարակական գործիչներից շատերը հայերին կոչ էին անում բալկանյան ժողովուրդների օրինակով ոտքի կանգնել, թոթափել օսմանյան լուծը:

Եվ եթե Բեռլինի վեհաժողովին հաջորդած առաջին տասնամյակում աբդուլհամիդյան վարչակարգը որդեգրել էր Հայկական հարցը հայաթափումով լուծելու մարտավարություն, ապա 1890-ական թթ. կեսերից, ցանկանալով կանխել ծավալվող հայ ազատագրական շարժումը, ձեռնարկեց Հայկական հարցի լուծման ավելի գործնական ու արմատական միջոց, այն է՝ հայության ֆիզիկական բնաջնջումը:

Աբդուլ Համիդը, երկրի մահմեդական վերնախավը, կառավարողները նոր ուժով շարունակեցին բորբոքել թուրքերի, քրդերի և չերքեզների ատելությունը հայերի նկատմամբ: Հայ ժողովրդի նկատմամբ գործադրվող բռնությունների շարքում 19-րդ դարի վերջերին ավելացավ ևս մեկը. օսմանյան լուծը թոթափած Բուլղարիայից և Թուրքիային նախկինում ենթակա այլ տարածքներից մուսուլման բնակչությունը (մուհաջիրները) զանգվածաբար գաղթում և բնակություն էր հաստատում Ասիական Թուրքիայում: Նրանց հոսքը սուլթանն ուղղեց Արևմտյան Հայաստան: Մուհաջիրները զանգվածաբար բնակություն էին հաստատում հայկական նահանգներում՝ տիրանալով հայ գյուղացիների ունեցվածքին և լավագույն հողերին[75]: 1880-ական թվականներից Արևմտյան Հայաստանում մշտական բնակություն են հաստատել նաև տասնյակ հազարավոր ռու-

[75] Տե՛ս Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 68:

սաստանյան մահմեդականներ: Միայն երեք տարվա ընթացքում (1879-1882 թթ.) Արևմտյան Հայաստանում բնակություն հաստատեցին ավելի քան 78 հազար թուրքեր[76]:

Արևմտահայության վիճակն ավելի էր ծանրացնում քրդական գործոնը: Ձինված քրդերը, վայելելով սուլթանի բարեհաճ վերաբերմունքը, շարունակում էին զանգվածաբար ներթափանցել Արևմտյան Հայաստան: Նրանք իշխանությունների ձեռքին հարմար գործիք էին վերջիններիս հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու համար:

Ամենուրեք քուրդ ցեղապետերն ու աղաները գրավում էին հայերի հողերն ու գյուղերը: Հողազուրկ դարձած հայ գյուղացիներն անգամ ամենափոքր դիմադրության դեպքում կարող էին կյանքով հատուցել: Որոշ տեղերում նրանք կատարելապես ստրկացվում էին: Բազմաթիվ հայեր այդ ամենի հետևանքով ստիպված թողնում էին Արևմտյան Հայաստանը: Նրանց զանգվածային գաղթի հետևանքով 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանի մի մասը դարձել էր քրդաբնակ: Ազատագրական պայքարի առանցքային գործիչներից մեկը՝ Հրայրը (Արմենակ Ղազարյան), դիպուկ է բնորոշել Օսմանյան կայսրությունում տիրող կացությունն ու արևմտահայ ժողովրդի բարոյահոգեբանական վիճակը. «Տեղական ժողուուրդը տնտեսապէս և ֆիզիկապէս արդեն հասել էր իր վերջին աստիճանին: Ծեծ, անլուր հալածանք, բանտարկութիւն, ավար, կողոպուտ արդէն սովորական են դառել, հայ տարրը տնքում էր այս բոլորի տակ, ամենայն հնազանդութեամբ տանում այս բոլորը...»[77]:

Արևմտյան Հայաստանի հայ բնակչության մեջ ուժեղանում է ձգտումը դեպի ազատություն, դեպի պայքարը հանուն պատվի և մարդկային տարրական իրավունքների: Ի պատասխան իշխանությունների դաժան ճնշումների՝ հայերը, որտեղ հնարավոր էր, դիմում էին ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի, որը, ինչպես հայտնի է, եղել և մնում է ամեն մի ճնշված ժողովրդի անկապտելի իրավունքը: Թուրքական բռնապետության դեմ հայերի ելույթ-

---

[76] Տե՛ս Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 33:

[77] Աւետեան Մ., Հայ ազգային-ազատագրական յիսնամեայ (1870-1920). Հուշամատեան և զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 129:

ներն առաջին հերթին պատասխան էին այն սանձարձակ կեղեքման ու ահավոր խոշտանգումների, որոնց դարեր ի վեր ենթակա էին իրենք և կայսրության քրիստոնյա մյուս ժողովուրդները: Ահաբեկման, կեղծիքի, կաշառքի և այլևայլ միջոցներով սուլթան Համիդը կարողացավ հպատակ ազգերի միջև թշնամանք սերմանել՝ սեպ խրել հայերի ու քրդերի, ասորիների ու քրդերի միջև՝ կայսրության ազգային փոքրամասնություններին հանելով միմյանց դեմ[78]: Հպատակ ժողովուրդների նկատմամբ գործադրված այդ քաղաքականությունը պատմության մեջ հայտնի է աբդուլհամիդյան «զուլումի» քաղաքականություն անունով և նախևառաջ ուղղված էր քրիստոնյաների, մասնավորապես հայերի դեմ[79]: Իրականացվող քաղաքական ծրագրի հիմնական առանցքը պանիսլամիզմն էր, որի նպատակն էր Թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրներն ու տարածքները՝ միաժամանակ ուժեղացնելով ոչ թուրք ժողովուրդների հալածանքն ու ազգային-ազատագրական շարժումների ճնշումը:

Փտած պետական կարգով իր գոյությունը քարշ տվող Օսմանյան տերությունը, որն իրավամբ «հիվանդ մարդ» անունն էր ստացել, 19-րդ դարի կեսերին ապացուցել էր ճնշված ժողովուրդների, ինչպես նաև նվաճված երկրների վրա իր տիրապետությունը պահպանելու անկարողությունը: Ճնշված ազգերի ազատագրական ոգորումները սուլթանական անարգ և սպանիչ լուծը թոթափելու համար 19-րդ դարի 80-ական թվականների վերջերից վերածվել էին ազգային-ազատագրական պայքարի: Արևմտահայության ազատագրության հարցը դարձել էր հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական առանցքը: Ի վերջո, ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի վեհաժողովից հետո տեղի ունեցավ գաղափարական շրջադարձ: Եթե մինչ այդ ազատագրության հասնելու ապավեն էր ընտրվում այս կամ այն մեծ տերությունը, ապա այժմ հանդես եկավ նոր՝ սեփական ուժերով բաղձալի նպատակին հասնելու գաղափարը: Սեփական ուժերի թերագնահատման շրջանը կարծես մնացել էր

---

[78] Տե՛ս Джалиле Д., Из истории общественно-политической жизни курдов в конце XIX начале XX вв., СПб., 1997, էջ 80:

[79] Տե՛ս Մկրտչյան L., Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը, Երևան, 1995, էջ 18:

ետևում, հայ ժողովուրդը ոտք էր դնում ազատագրական պայքարի նոր ժամանակաշրջան:

Արևմտահայության կյանքում սկսվեց նաև ներքին կազմակերպման շրջանը: Երես թեքելով եվրոպական դիվանագիտությունից՝ արևմտահայությունը պատրաստվում էր սեփական ուժերով հասնել իր ազատագրությանը: Ավարտուն վիճակի էր հասնում ազատագրական խմբակների ու կազմակերպությունների ձևավորման գործընթացը: Ազատագրական խմբակները ստեղծվում էին ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Ռուսաստանում, Թիֆլիսում: Առաջին ազատագրական խմբակը՝ «Բարենպատակ ընկերություն»-ը, ստեղծվել է Ալեքսանդրապոլում (1869 թ.): Այնուհետև ստեղծվում են մի շարք խմբակներ ու կազմակերպություններ՝ «Միություն ի փրկություն» (Վան, 1872 թ.), «Հայրենիքի սիրո գրասենյակ» (Ղարաքիլիսա, 1874 թ.), «Սև խաչ» (Վան, 1878 թ.), «Պաշտպան հայրենյաց» (Կարին, 1881 թ.), «Հայրենասերների միություն» (Մոսկվա, 1882 թ.), «Հայրենասիրական խմբակ» (Թիֆլիս, 1882 թ.), «Հայասեր-ազգասեր» (Երևան, 1882 թ.) և այլն: Այս խմբակներն ու կազմակերպությունները պայքարում էին հայ ժողովրդի ազատագրության համար, սակայն ի վիճակի չէին ստանձնելու և ղեկավարելու (նրանց գործունեությունը ցարական իշխանությունների կողմից հետապնդվում էր և արգելվում) զինված պայքարի փուլ մտած հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: Հայ ժողովրդի պատմության այս բախտորոշ շրջանում ծնունդ են առնում հայ առաջին քաղաքական կուսակցությունները՝ Արմենական կուսակցություն (Վան, 1885 թ.), Հնչակյան կուսակցություն (Ժնև, 1887 թ.), Հայ հեղափոխական դաշնակցություն (Թիֆլիս, 1890 թ.), որոնց ղեկավարությամբ հայությունը թևակոխեց իր գոյամարտի կազմակերպված, զինված պայքարի փուլը՝ հայկական հեղափոխության ժամանակաշրջանը: Ինչպես յուրաքանչյուր ճնշված ժողովրդի պայքարն ընդդեմ բռնատիրության, այնպես էլ հայ ժողովրդի մաքառումն ընդդեմ սուլթանական բռնապետության արդարացի էր և ուներ առաջադիմական բնույթ: Հայկական հեղափոխությունն ազգային-ազատագրական էր իր էությամբ և պատասխանն էր սուլթանական ցեղասպանության քաղաքականության, որը սկսել էր ի-

ռականացվել 19-րդ դարի վերջին քառորդում:

Հայ ազգային-ազատագրական պայքարը մինչև հեղափոխական պայքարի վերածվելն անցել է զարգացման մի քանի փուլեր: Այն սկսվեց հայրենիքից դուրս գործող անհատ մտավորականների որոշակի խմբակների գործունեությամբ և իր զարգացումն ստացավ բուն հայրենիքում: Ազգային սահմանադրության համար մղվող պայքարը դարձավ այն խանձարուրը, որից ձևավորվեց ազատագրական պայքարը: 1860-1870-ական թթ. արևմտահայության համար նշանավորվեց իբրև լուսավորյալ սերնդի դեպի ժողովուրդ գնալու, նրան ազատագրական պայքարի ոգով դաստիարակելու ժամանակաշրջան:

Այսպիսով, հայ ազատագրական պայքարն ընթանում էր փուլային հերթականությամբ՝ 1) ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորում և լուսավորյալ սերնդի կազմավորում, 2) այդ գաղափարախոսության դեպի Երկիր տեղափոխում, 3) բուն երկրում ազատագրական խմբակների ձևավորում և քաղաքական կուսակցությունների հանդես գալը:

Աբդուլհամիդյան զուլումի քաղաքականությունը և հայերի բնաջնջման թուրքական ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված առաջին քայլերը հայությանը ստիպեցին, դեռևս չնախապատրաստված, դիմել պայքարի բարձր ձևին՝ զինյալ պայքարին, որը պետք է լուծեր հայ ժողովրդի գոյապահպանման խնդիրը: Այն, ըստ էության, պարտադրված էր սուլթանական կառավարության կողմից, որը ձգտում էր հայ ժողովրդի ամբողջական բնաջնջմանը: Այլ խոսքով, ի տարբերություն մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի, 1) հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ուներ ինքնապաշտպանական բնույթ, 2) իրենց պատմական հայրենիքում հայերն ապրում էին մահմեդական ժողովուրդների, հատկապես քրդերի հետ շերտընդմեջ, նրանց ընդհանուր թվի համեմատ առանձին վայրերում մտահոգիչ վիճակ էր ստեղծվել: Դա խիստ դժվարացնում և համարյա անհնարին էր դարձնում միասնական պայքարի կազմակերպումը, 3) հայությունը մասնատված էր Օսմանյան կայսրության, Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, և դա խիստ դժվարեցնում էր ազատագրական պայքարի կազմակերպումը, 4) ե-

թե բալկանյան ժողովուրդները կռվում էին կողք-կողքի և աջակցում էին միմյանց, ապա հայությունը մեկուսացած էր, չուներ ո՛չ դաշնակից և ո՛չ էլ հովանավոր պետություն, ինչն առկա էր բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի պարագայում:

Ե՛վ Ռուսաստանը, և՛ եվրոպական տերություններն ոչ միայն չէին աջակցում Հայոց ազատամարտին, այլև այն վտանգավոր էին համարում իրենց համար: Այս հարցում 1880-ական թվականների վերջերից հատկապես ոչ հայանպաստ դիրքորոշում էր որդեգրել Ռուսական կայսրությունը, քանի որ այն մտավախություն ուներ, որ Հայաստանում ազատագրական շարժման ծավալումն ի վերջո կընդգրկի նաև կովկասահայությանը:

Ստեղծված պայմաններում հայ ժողովուրդն ուներ երեք ընտրանք՝ լիովին հարմարվել ստեղծված իրավիճակին, հեռանալ հայրենիքից, ազատության համար դիմել զենքի: Հայ ժողովրդի կենսունակ մասը, հատկապես երիտասարդությունը, նախընտրեց ազգային-ազատագրական զինյալ պայքարը:

Երբ Օսմանյան կայսրությունն սկսեց վայրէջք ապրել և նվաճված ժողովուրդները դուրս եկան ազգային-ազատագրական պայքարի, թուրքերը, խիստ անհանգստացած, սկսեցին ուղիներ որոնել կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու համար: Նրանք նպատակ էին դրել իրենց կողմից գրաված հայերի պատմական հայրենիքը դարձնել թուրքական՝ առանց հայերի: Միասնական թուրքական պետություն, միասնական օսմանյան հայրենիք, միասնական թուրք ժողովուրդ, կայսրության ոչ թուրք ժողովուրդների ձուլում. սա էր օսմանյան բռնադատիչների նպատակը[80]:

Գիտակցելով, որ միայնակ չեն կարող հասնել հաջողության, արևմտահայերը գործնական օգնության էին սպասում կովկասահայերից՝ նրանցից խնդրելով զենք ինքնապաշտպանության համար: Եվ կովկասահայերը չհապաղեցին: Անձնազոհության աննախադեպ օրինակներ էր տալիս երիտասարդությունը: Կազմում էին հայդուկային ջոկատներ, որոնք թափանցում էին Հայաստան, իրենց հետ բերելով նաև ոգևորություն: Կովկասահայ գրողների ու մտավորականության որոշ ներկայացուցիչներ, գնալով Արևմտյան Հայաստան,

[80] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, էջ 31-32:

տեսնում էին իրենց ազգակիցների թշվառ վիճակը և վերադառնալով՝ խոսքով ու գրչով ընթերցողին պատմում էին նրանց դառը ճակատագրի, թուրքական դաժան լծի տակ նրանց անեզր տառապանքների մասին:

1890 թ. ամռանն Արևմտահայաստանում վիճակը ծայրաստիճան լարված էր: Նրա տարբեր վայրերից բողոքների, ցույցերի և մասնավոր ընդհարումների լուրեր էին գալիս, որոնց արձագանքները փոթորկում էին կովկասահայ երիտասարդությանը: Շուտով խոսքը վերածվեց գործի: Կարճ ժամանակահատվածում մեկը մյուսին հաջորդելով տեղի ունեցան Էրզրումի ընդհարումը, Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան) կազմակերպած հայդուկային արշավանքը և Գում-Գափուի ցույցը: Օրվա հրամայական էր դարձել շուտափույթ օգնության հասնելու խնդիրը: Էրզրումի՝ 1890 թ. հունիսի արյունոտ անդրանիկ ցույցը ցնցող տպավորություն ունեցավ ժամանակի հայ երիտասարդության վրա, նաև իր անդրադարձն ունեցավ բոլոր հայաշատ կենտրոններում:

1890 թ. մայիսի 19 (31)-ին Փարիզում վախճանվում է մեծ բարերար Մկրտիչ Սանասարյանը[81]: Բոթաբեր հեռագիրն ստանալուն պես Կարինի Սանասարյան վարժարանի ղեկավարությունը դադարեցնում է դասերը և սուգ հայտարարում ուսումնական հաստատությունում: «Եկեղեցում կատարուեց հրապարակային հոգեհանգիստ, որից յետոյ մի ամբողջ շաբաթ Կարնոյ ժողովուրդը գալիս էր դպրոց ի յարգանս հանգուցյալի մխիթարելու տեսչութիւնը, որ ամբողջ օր սգոյ սենեակումն էր անցկացնում»,- կարդում ենք դեպքերի ականատես Շերամ Ղազարյանի հուշերում[82]:

Կարնեցիների այդ տարօրինակ շարժումը գրավել էր քաղաքի թուրք բնակչության ուշադրությունը, ինչը կասկած էր հարուցել, որ «... շարժման տակ ինչ-որ գաղտնի բան կայ թաքցրած: Այդ օրերում քաղաքում, ինչ որ անյայտ աղբիւրից, երկու տոմսակներ երեւան եկան, մէկը կուսակալի դրան մօտ, միւսը մի այլ փաշայի ուղղուած: Այդ տոմսակների պարունակութիւնը պատճառ եղաւ, որ Սանասա-

[81] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 166:
[82] Շէրամ Ղազարեանի յուշերը, Կարնոյ առաջին դէպքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 4:

ռեանի սուգը վերջանալուց յետոյ խուզարկութիւն տեղի ունենայ եւ սրան յաջորդէ Կարնոյ առաջին կոտորածը»[83]: Երկու տոմսակների բովանդակությունն էլ գրեթե նույնն էր, իբրև թե Սանասարյան վարժարանն ուներ արհեստանոց, որտեղ եղած գործիքների նմանը Թուրքիայի ոչ մի զինագործարանում չի հանդիպում, և Սանասարյանի արհեստանոցում պատրաստվում են հրացաններ, նույնիսկ ձուլվում թեթևաշարժ թնդանոթներ, որոնք իբրև ուսումնարանի տակ փորված ներքնուղիով թաքցվում են եկեղեցու ստորգետնյա սենյակներում: Խուզարկության են ենթարկվում Կարինի Սանասարյան վարժարանը և եկեղեցին, ինչը լցնում է ժողովրդի համբերության բաժակը: Խուզարկության հաջորդ օրը կարնեցիները տարերայնորեն հավաքվում են եկեղեցու բակում և փորձում հասկանալ կատարվածը: Ժողովրդական հուզումների պայմաններում «Պաշտպան հայրենյաց»-ի հիմնադիր Խաչատուր Կերեկցյանն ու նրա համախոհները հավաքվում են խորհրդի և գալիս այն եզրահանգման, որ «...հարկավոր է ժողովրդին վարժեցնել ցոյցեր անելու, եւ առիթից պէտք է օգտուել...»[84]:

Քաղաքը եռուզեռի մեջ էր: Ահա, թե ինչպես է նկարագրում ստեղծված իրավիճակը Շերամ Ղազարյանը. «Մի-երկու օր հայերի բոլոր խանութներն եւ արհեստանոցները փակուած մնացին: Քահանաներին արգիլուեցաւ ժամասացութիւն անել: Զանգակները հնչելէ դադրեցան: Հինգշաբթի երեկոյից սկսած մինչեւ շաբաթ կէսօրից յետոյ հայ ժողովուրդը իշխում էր: ... Կուսակալը մարդ է ուղարկում Առաջնորդարան՝ հանգստացնելու ժողովրդին եւ յորդորելու, որ բանան եկեղեցին եւ հանգիստ հեռանան իրենց տները, բայց ժողովուրդը մնում էր անյողդողդ: «Ժամը պղծուած է, կրկնում էին անընդհատ, մեր աղօթքը ընդունելի չի լինի, մինչեւ որ չսրբագործենք. կամ պէտք է քանդել՝ նոր ժամ շինել, կամ պէտք է նորից օծել. կամ պէտք է մեր արիւնովը մաքրել»»[85]:

Հունիսի 7(19)-ի երեկոյան, կրկին հավաքվելով խորհրդի, Խաչատուր Կերեկցյանն ու նրա ընկերները որոշում են ամեն ինչ անել

---

[83] Նույն տեղում:
[84] Նույն տեղում, էջ 7:
[85] Նույն տեղում:

ցույցի խաղաղ բնույթը պահպանելու համար և զենք գործադրել միայն ինքնապաշտպանության նպատակով: Հունիսի 8(20)-ին ժողովուրդն ավելի է բորբոքվում: Նրան գրգռել էր կուսակալի՝ ցրվելու, խանութները բացելու և ժամասացությունը վերականգնելու կտրուկ հրամանը[86]: Դարձյալ խոսքը տանք Շերամ Ղազարյանին. «...Զորքի հրամանատարը վերջին ազդարարութիւն է անում Առաջնորդարանին՝ մինչեւ երեք ժամ բանալ եկեղեցին, սովորական ձևով, զանգակներ զարնել, ժամասացութիւն կատարել, որից յետոյ ժողովուրդը հանգիստ ու խաղաղ պէտք է ցրուին իր տները՝ միւս օրը չգումարուելու պայմանով: Եթէ այս պահանջը չկատարուի, հրամանատարը սպառնում է բռնի ոյժ ի գործ դնել»[87]:

Ժողովուրդը մնում է անդրդվելի, մերժում կատարել զինվորական պետի հրամանը և պահանջում, որ զինվորները դուրս գան եկեղեցու բակից: ««Գէրակցեաններին» («Կերեկցյաններ»- Կ. Ե.) մի փոքրիկ խումբ գրգռում էր ժողովրդին եւ յորդորում՝ լինել անվախ ու չհրաժարվել պահանջներից»,- վկայում է հուշագիրը[88]:

Այդժամ թուրքական զինվորական վաշտը, երկու շարք կազմած մտնելով ժողովրդի բազմության մեջ, փորձում են ցրել նրանց: «Զինուորները ազատ տեղ բանալու եւ բազմութիւնը վախեցնելու համար, յանկարծ, հանեցին սուինները եւ շարժեցին ամբոխի վրայ: Մի պահ տիրեց խուճապ. բազմութիւնը ալեկոծուեց, յետ ու առաջ ընկաւ եւ հոսանքը ալիքանման ծածանումներով հասաւ մինչեւ գերեզմանատան մեծ դուռը»,- հիշում է Շերամ Ղազարյանը[89]: Այդ պահին Խաչատուր Կերեկցյանի եղբայր Տիգրան Կերեկցյանը, հանելով ատրճանակը, կրակ է բացում ժողովրդին սվինահարող զինվորների վրա: Տիգրան Կերեկցյանի օրինակին հետևում է Հարություն Փաստրմաճյանը. «Ճիշտ այն րոպէին, որ Գէրակցեան Տիգրանի ատրճանակն էր դատարկւում,- շարունակում է Շերամ Ղազարյանը,- մի ատրճանակ էլ պայթեց առաջնորդարանի դրանը. Փաստրմաճեան Յարութիւն էֆէնտին վերեւից ներքեւ գալով՝ կանգնում է սան-

---

[86] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 168:
[87] Շէրամ Ղազարեանի յուշերը, Կարնոյ առաջին դէպքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 7:
[88] Նույն տեղում, էջ 8:
[89] Նույն տեղում:

դուխների վրայ եւ զօրագնդի պետին հրամայում է եկեղեցու բակից հանել եւ դուրսը կանգնեցնել զինուորներին, հակառակ պարագային ամբողջ պատասխանատուութիւնը կընկնի նրա վրայ: Երկրորդ անգամ տրաքում է Գէրակցեան Տիգրանի ատրճանակը: Պայթում է եւ Փոլիս Մուրատի ատրճանակը ուղղված ճիշտ Փաստրմաճեան Յարութիւնի սրտին, բայց գնդակը նպատակից վրիպելով՝ կպչում է մշեցի Ժամկոչ Վարդանին»[90]:

Այդ կրակոցներին զորքը պատասխանում է օդում արձակած համազարկերով, որից հետո սկսեց անխնա կողոպտել ու սպանել սարսափահար փախչող անզեն ու անպաշտպան հայերին: Կոտորածը տևում է երեք ժամ՝ 9-ից մինչև 12-ը: «Թրքական ժամը 12-ին նորից հնչեց զինուորական շեփորը. պատուիրում էր, որ մինչեւ ժամը 12 ամէն ոք մտնէ իր տունը եւ փողոցում չերեւայ, հակառակ պարագային, կառավարութիւնը պատասխանատու չէ հետեւանքների համար: Երեք ժամ տեւող կոտորածները ցոյց տուին, որ հայերի մօտ զէնք չկար. մի քանի երիտասարդներ հազիւ մի-մի ատրճանակ ունէին՝ աննշան քանակութեամբ փամփուշտներով:

Եկեղեցու բակից դուրս հանուած բազմութիւնը ընկաւ մի կողմից կանոնաւոր զօրքերի զէնքերի տակ, միւս կողմից ենթարկուեց դաշոյններով զինուած խուժանի ձեռքը»,- այսպես է ավարտվում այդ դեպքի վերաբերյալ Շերամ Ղազարյանի պատմությունը[91]:

Կարնո դեպքը հայ-թուրքական ընդհարման կատարված փաստ էր: Այն հայ գործիչներին մղեց միավորելու ազատագրական շարժման տարբեր կենտրոնները: Խաչատուր Կերեկցյանն ու նրա համախոհներն որոշում են Կարինում գտնվող Հակոբ Սարկավագին անմիջապես ուղարկել Կովկաս, որպեսզի նա ստուգի իրենց ունեցած տեղեկությունները Բաթումում, Սարիղամիշում ու Կաղզվանում զենքի մեծ պաշարների և զինված խմբերի առկայության մասին[92]:

Անդրկովկասի հայ երիտասարդության համախմբման գործընթացի հետագա արագացումը պայմանավորված էր ոչ միայն 1890 թ. հունիսի 6-8 (18-20)-ին Էրզրումում հայերի և թուրքական զորքերի

---

[90] Նույն տեղում, էջ 9:
[91] Նույն տեղում:
[92] Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 42:

միջև տեղի ունեցած ընդհարումով, այլև ռուս-թուրքական սահմանագլխին՝ Կաղզվանի հատվածում Հունոյի (Հարություն Տեր-Մարտիրոսյան, Հարություն աղա) հայդուկային խմբի գործողություններով: Վերջինս իր ֆիդայիների խմբով Կարսի մարզում ծավալած գործունեությամբ արդեն առասպելական հերոսի անուն էր վաստակել: Հունոյի խմբի անդամներից մեկը՝ ալաշկերտցի Արամայիս Ազնավուրյանը իր հուշերում Կաղզվանից Հունոյի խմբի շարժելու ժամանակ է արձանագրում 1890 թ. ապրիլ ամիսը[93]: Խմբի թվաքանակի մասին եղած տեղեկությունները տատանվում են 15-20-ի սահմաններում: «Յունիսի մէջ Ալաշկերտից Կաղզաան է գալիս Յարութիւն աղան,- գրում է Ա. Նորյանը,- նա եղել էր Բաթում, Թիֆլիս եւ Բագու եւ տեսակցել էր տեղի յեղափոխականների հետ: Նրա նպատակն էր հայկական խմբեր կազմել Կաղզաանում, որոնց թիւը 400-ի պիտի հասնէր, եւ ապա բոլորը միասին պիտի սահմանն անցնէին՝ կռուելու քյուրդերի դէմ եւ պաշտպանելու հայերին:

Յարութիւն աղան շուտով 12 հոգով անցնում է Մատուռ լեռը, ուր նրան միանում է խնուսցի Քաջ Արամը՝ իր ընկերներով: Դրանք բոլորն էլ հետեւում էին մի ընդհանուր ծրագրի եւ աշխատում էին զինուած, կազմակերպւած խմբեր առաջ բերել, որը եւ մեծ խանդավառութիւն է ստեղծում»[94]:

Մատռաբերդում մի քանի ընդհարումներ ունենալով քրդերի հետ, սպանելով հետախուզական նպատակով խմբին մոտեցած թուրքերին՝ Հունոյի խումբը պաշարվում է հակառակորդի կողմից: Մեկօրյա հրացանաձգությունից հետո խմբի անդամները կարողանում են ճեղքել պաշարման օղակը և մի կերպ փրկվելով ռուս սահմանապահների ձեռքն ընկնելուց՝ թաքնվում Կաղզվանում:

Հունոյի կերպարը ժողովրդի մեջ առասպելի էր վերածվել: «Յունօյի նման մէկը աշխարհ չէ եկել եւ չպիտի գայ: Յունօն, երբ երեսը կը դարձնէր դէպի էրզրում եւ կը գոռար, վալին իր տեղը կը դողար եւ Սթամպուլի թախտը կը ցնցեր: Յունօն, երբ երեսը կը դարձներ Կարս եւ Պաթում եւ կը գոռար, կուպեռնաթոռները (նահանգապետերը - Կ. Ե.) կը սոսկային եւ ձէնը կը հասնէր մինչեւ Պետերբուրգ: Յու-

[93] Տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1936, N 10, էջ 82:
[94] Նորեան Ա., Դրւագներ Հ.Յ.Դ. գործունէութիւնից, էջ 84:

նօն ուրիշ մարդ էր»[95],- վկայակոչում է Հովհաննես Յուսուֆյանը (Մելիք): Վերջինիս վկայությամբ՝ Հունոյի հրամանատարության ներքո Եփրեմը Կարսի մարզում մասնակցում է մի շարք մարտական գործողությունների, ապա որպես տեղանքին ծանոթ վալադ (ուղեկցող) անցնում Սասուն և իր դրսևորած խելամտության ու ցուցաբերած մարտական հատկանիշների շնորհիվ դառնում հայդուկապետ Հունոյի ամենասիրելի զինակիցը[96]:

Հայոց ազատամարտի սկզբնական շրջանում գործող հեղափոխական կազմակերպություններից առավել եռանդունն ու ներկայացուցչականը Հնչակյան կուսակցությունն էր: Էրզրումի 1890 թ. դեպքերին հաջորդեց հնչակյանների կազմակերպած Գում-Գափուի՝ 1890 թ. հուլիսի 15-ի ցույցը Կ. Պոլսում: Վերջինիս կազմակերպիչն էր հնչակյան կուսակցության Կ.Պոլսի Վարիչ մարմինը՝ վանեցի Հարություն Ճանկուլյանի (Կայծիկ) գլխավորությամբ: Դա եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը իրագործել տալու ձախող փորձ էր, որը թուրքական կառավարությունն օգտագործեց արևմտահայերի հալածանքներն ուժեղացնելու ու ջարդեր կազմակերպելու համար:

Ս. Կուկունյանի զինակից Ստեփան Ստեփանյանը հետագայում իր հուշերում գրում է. «...Էրզրումում եղած կոտորածը, Ալաշկերտի եւ Մշոյ դաշտի հրդեհները, Մուսաբէգի կուսակիցների ձեռքով կատարուած փոխվրէժը անպաշտպան հայ գիւղացիների գլխին եւ ուրիշ հազար ու մի մէկը միւսից սարսափելի լուրեր, որոնք լեցրին մեր համբերութեան բաժակը: Այլեւս կարելի չէր համբերել. հարկաւոր էր մի բան անել: Հարկաւոր էր համախմբուել եւ գնալ վրէժ լուծել անօրէններից մեր տարաբախտ եղբայրների համար»[97]:

Տարօրինակ և անբնական կլիներ, որ այսպիսի դժոխային պայմաններում ապրող ժողովուրդն իր միջից չտար ըմբոստ տարրեր: Հնարավոր չէր լռել և անվերջ տնքալ բռնության մեջ, զրկված լինել մարդկային ամենատարրական իրավունքներից, իրեն օտար զգալ

---

[95] Սգապսակ Եփրեմին, էջ 15:
[96] Տե՛ս նույն տեղում:
[97] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 30:

սեփական երկրում՝ իրենը չհամարելով ոչ միայն սեփական վաստակն ու գույքը, նաև սեփական կյանքը: Եվ տարբեր տեղերից ըմբոստացման, ցասման, նույնիսկ վրեժի խոսքեր են լսվում թե՛ անհատներից, թե՛ խմբերից:

Մի քանի դար պետականությունից զրկված հայ ժողովուրդը չէր կարող իր ազատագրության համար անմիջապես կռվի դաշտ հանել բազմաքանակ զինված ուժեր: Նրա ազատագրական պայքարը չէր ենթադրում մեծամասշտաբ ճակատամարտեր: Ստեղծված պայմաններում նա միայն ունակ էր մղել պարտիզանական կամ խմբային կռիվներ: Հետևաբար, հայ ժողովրդի ազատագրական պայքարը բխել է նրա նկատմամբ գործադրված բռնություններից: Դա պայքար էր գոյատևման համար: Այդ պայքարի առաջին դրոշակակիրներից էր Սարգիս Կուկունյանը: Եթե Մկրտիչ Խրիմյանի կողմից առաջադրված «երկաթե շերեփի» գաղափարը կանխորոշեց հայ ազատագրական պայքարի զինված փուլ մտնելը, ապա Ռաֆֆու, Ռ. Պատկանյանի և այլոց հայրենասիրական ստեղծագործությունները կռվի դաշտ մղեցին ժամանակի հայրենանվեր երիտասարդության մի հզոր փաղանգ՝ Սարգիս Կուկունյան, Արաբո (Առաքել Մխիթարյան), Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Հովսեփ Արղության (Իշխան), Աղբյուր Սերոբ (Սերոբ Վարդանյան), Գևորգ Չավուշ (Գևորգ Ադամյան), Սևքարեցի Սաքո (Սարգիս Ծովանյան), Խանասորի Վարդան (Սարգիս Մեհրաբյան), Անդրանիկ Օզանյան, Հրայր Դժոխք (Արմենակ Ղազարյան), Սեբաստացի Մուրադ (Մուրադ Խրիմյան), Քեռի (Արշակ Գաֆաֆյան), Եփրեմ Տեր-Դավթյան և ուրիշներ:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը մտավ զինված պայքարի փուլ: Այն հաջողության որևէ շանս ունե՞ր: Ոմանք այդ հարցին դրական պատասխան էին տալիս՝ վկայակոչելով բալկանյան երկրների օրինակը: Բայց բալկանյան երկրների աշխարհագրական դիրքը նպաստավոր էր՝ անջատված էին Ասիայից, այնտեղ իշխող էր ազգային հարաբերական միատարրությունը: Մինչդեռ, վիճակն այլ էր Արևմտահայաստանում, ուր հայության համար հարևան քուրդ ու թուրք տարրերը բացարձակ չարիք էին: Բալկանյան ժողովուրդները նաև միմյանց օգնում էին ազգային-ազատագրական պայքարի ընթացքում, նրանց սատարում էր նաև Ռուսաստանը:

Հայոց ղեկավար ուժերը մտածե՞լ էին զինվելու համար ժողովրդին ժամանակ տալու, զենքի, հանդերձանքի, նյութական միջոցների ձեռքբերման, ազգային համախմբման մասին, երբ կանգնել էին ազատագրելու հայրենիքը: Այս հարցադրմանը կարելի է տալ տարողունակ պատասխան, բայց բավարարվենք՝ արձանագրելով հետևյալը. ազգային պետության բացակայության, այլ պետության տարածքում կանոնավոր զինուժի ստեղծման անհնարինության պատճառով հայ զինվորությունը չէր կարող կազմակերպական առումով մեխանիկորեն ընդօրինակել նախորդ դարերի հայ ռազմական արվեստի ու բանակաշինության ավանդույթները: Մյուս կողմից, Արևմտյան Հայաստանի յուրահատուկ պայմաններն իրենց խիստ որոշակի լուծումներն էին թելադրում: Կանոնավոր զորամիավորումների փոխարեն, որոնց ստեղծումն անհնար էր, Հայոց ազատամարտը սկզբնական շրջանում հանդես եկավ զինախմբերի տեսքով: Սկզբնապես՝ մինչև 1890-ական թվականների վերջը, Երկրում գերակշռում էին նախ տարերայնորեն ձևավորված, ապա քաղաքական կուսակցությունների կողմից այնտեղ ուղարկված հայդուկային-պարտիզանական խմբերը:

Ամփոփենք: Սուլթանական բռնապետության դեմ սկսված հայդուկային շարժման հիմնական նախադրյալները հայ ժողովրդի անտանելի պայմաններն էին, ազգային արժանապատվության ոտնահարումը, հայերին բնաջնջելու թուրքական իշխանությունների ձգտումը: Կացությունը սպառնալից բնույթ էր ստանում, ինչը և ստիպում էր հայերին մտածելու ինքնապաշտպանության մասին: Արևմտահայության թշվառ վիճակը ստիպեց ժողովրդին զենք վերցնել ու պայքարել հանուն իր կյանքի, պատվի և ոտնահարված իրավունքների: Հայ ազգային-ազատագրական պայքարի գլուխ կանգնած ազգային կուսակցություններն արևմտահայերի փրկությունը սկզբում տեսնում էին նրանց ընդհանուր ապստամբության մեջ: Ընդսմին չէին բացառում զինված պայքարի այլ միջոցներ ևս, արշավանքներ, ցույցեր, ահաբեկչություն, պարտիզանական կռիվներ և այլն: Նրանց կարծիքով՝ Երկրի տարածքում տեղի ունեցող հայկական ասպատակային շարժումներն իրենց վրա կիրավիրեն եվրոպական տերությունների ուշադրությունը, կստիպեն նրանց միջամտելու

Օսմանյան կայսրության ներքին գործերին և լուծելու Հայկական հարցը: Հարկ ենք համարում այստեղ որոշակիացնել մեկ խնդիր: Պատմագիտական գրականության մեջ հաճախ շփոթություն կա *զինատար խումբ, հայդուկային խումբ, մարտական խումբ* և *արշավախումբ* հասկացությունների հարցում: Նկատվում է դրանք նույնացնելու միտում: Մինչդեռ դրանցից յուրաքանչյուրը, այդ թվում՝ նաև արշավախմբերը, նմանություններով հանդերձ, զինյալ պայքարի տարբեր ձևեր են: Որպես պայքարի առանձին ձև՝ արշավախումբն ունի բնութագրիչ հետևյալ գծերը:

1) Այն պետք է պարտադիր կազմակերպվեր տվյալ պետությանը սահմանակից որևէ պետության տարածքից: Արևմտահայության պարագայում, բնականաբար, հենակետի դեր կարող էին խաղալ Պարսկաստանը և Ռուսական կայսրության Կարսի մարզի ու Երևանի նահանգի տարածքները: 2) Անցնելով սահմանը՝ արշավախումբը պետք է լուծեր մարտական որոշակի խնդիր: Հետևաբար, նրա սահմանն անցնելը չէր կարող մինչև վերջ աննկատ մնալ թշնամու համար, որի հետ բախումն անխուսափելի էր: Մինչդեռ զինատար ու հայդուկային խմբերի համար, որպես կանոն, գերադասելի էր մինչև վերջ աննկատ մնալը:

Որպես զինյալ պայքարի առանձին ձև՝ արշավախմբերը հայ իրականության մեջ օգտագործվել են բալկանյան ժողովուրդների, առաջին հերթին՝ բուլղարների մղած պայքարի ազդեցությամբ: Արշավախմբերի մասնակիցները հիմնականում երիտասարդ հայրենասերներ էին, ովքեր լիովին գիտակցում էին իրենց գործողությունների նշանակությունը և վտանգավորությունը:

Այսպիսով, արևմտահայությանը թուրքական բռնակալության դարավոր շղթաներից ազատագրելու ձգտումները դարձան համազգային գաղափար: Այդ գաղափարը տարածվելով բովանդակ Կովկասում՝ իր արձագանքներն է գտնում նաև Պետերբուրգի և Մոսկվայի հեղափոխական տրամադրություններով խանդավառված ուսանող-երիտասարդության շրջանում: Հայաբնակ բազմաթիվ վայրերում, մասնավորապես Կովկասի կենտրոններում, Մոսկվայի ու Պետերբուրգի հայ մտավորականության և ուսանողության շրջանում ծնունդ առած հեղափոխական կազմակերպությունները: Իրենց գոր-

ծունեության հիմնական նպատակը համարելով արևմտահայերի ազատագրության գործը՝ անձնվեր ջանքեր էին գործադրում կյանքի կոչելու Հայ դատի արդարացի լուծումը պայմանավորող ուղիներն ու միջոցները:

2. Հայ ազգային-ազատագրական շարժման դերը Սարգիս Կուկունյանի՝ որպես ազատագրական պայքարի առաջամարտիկի ձևավորման գործում

Ձինված խմբերի անցումը Երկիր կոչված էր ոտքի հանելու ժողովրդին, նրան մղելու ազատագրական կռվի: Այդ գործին լծվեց ժամանակի ազնիվ ու նվիրված երիտասարդներից մեկը՝ Սարգիս Կուկունյանը:

Սարգիս Մովսեսի Կուկունյանը ծնվել է 1863 թ. հունվարի 23-ին[98], Նուխի գավառի Նիժ գյուղում, չքավոր ուդինի ընտանիքում: Ելիզավետպոլի նահանգի Նուխի[99] գավառը պատմական Աղվանքի մի մասն էր, որի տարածքները ներկայումս ներառված են Ադրբեջանի Հանրապետության Վարդաշենի և Կուտկաշենի շրջանների մեջ: Այստեղ բազմալեզու ցեղերի հետ միասին վաղնջական ժամանակներից բնակվել են նաև հայեր: Նուխի և Արեշ գավառները գտնվում են Մեծ Կովկասի լեռնաշղթայի հարավահայաց լանջերին՝ տարածվելով ընդհուպ մինչև Կուր գետը, ընդգրկելով Արջկան և Կոկիսոն (Գյոքսու) գետակների ավազանը: Այդ երկու գավառների միջով ձգվում է Բոզ Դաղ լեռնաշղթան:

16-18-րդ դարերում երկրամասը գտնվել է Անդրկովկաս ներխուժած օսմանցիների և Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ: 18-րդ դարի առաջին քառորդում, ինչպես Կուրի ձախափնյա

---

[98] «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» ժողովածուում, Արամայիսի (Տեր-Դանիլեան) հուշերում նշված է 1866 թ.: Տե՛ս Դիւան ..., հ. 2, էջ 5: Տե՛ս նաև Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), յաւելուած «Հայրենիք» ամսագրի, 1937, թիվ 2, էջ 73:

[99] Նուխի տեղանունն անցյալում հայտնի էր Շաքե-Շաքի անվանումներով: 1846 թ. ռուսական իշխանությունները Շաքին պաշտոնապես վերանվանել են Նուխի, իսկ 1968 թ. ադրբեջանական իշխանությունները Նուխին կրկին վերանվանել են Շաքե:

շրջանների մի շարք հայաբնակ բնակավայրեր, այնպես էլ Նուխիի հայկական գյուղերը թուրքերի, տեղի մահմեդականների ու լեզգիների կողմից ենթարկվեցին ասպատակությունների, իսկ բնակչությունը՝ կրոնական հալածանքների[100]: Գյուղերի հայաթափումն ուղեկցվում էր հայկական եկեղեցիների ավերումով: Ճիշտ է, շատ հայեր բռնությամբ ենթարկվեցին կրոնափոխության և դարձան թրքախոս, բայց այդ ամենից հետո էլ հայոց եկեղեցու նկատմամբ չկորցրեցին իրենց հավատը: Նման ճակատագրի արժանացան նաև երկրամասի տարածքում ապրող ուդիները, որոնց նկատմամբ նույնպես կիրառվեց բռնի մահմեդականացման քաղաքականություն: Ուղղափառ քրիստոնյա ուդիներն ապրել և այժմ էլ ապրում են Ադրբեջանի Վարդաշեն շրջկենտրոնում և Կուտկաշենի շրջանի Նիժ գյուղում: Նիժը անցյալում գավառի նշանավոր հայաբնակ գյուղերից էր, ուր մեծամասնություն են կազմել ուդիները: Դեռևս 18-րդ դարի 20-ական թվականներին Շաքիից մինչև Կուտկաշեն ընդգրկող գոտու տեղաբնիկ բնակչության հիմնական մասն ուներ ուդիական ինքնագիտակցություն, խոսում էին ուդիներեն և դավանում քրիստոնեություն: Ողջ 18-րդ դարի ընթացքում նշված գոտում ընթացել է բռնի մահմեդականացման ու թրքալեզվացման քաղաքականություն, ինչը, ի վերջո, հանգեցրել է հինավուրց ժողովրդի պահպանված հատվածի մեծ մասի ապազգայնացմանը:

19-րդ դարի սկզբներին Նիժն ուներ 500 տուն բնակչություն: 1890-ական թվականներին այն արդեն գյուղաքաղաք էր և ուներ շուրջ 800 տուն (5008 մարդ) բնակչություն[101]: Նիժը բաղկացած էր 4 թաղամասերից, որոնք էլ իրենց հերթին բաժանված են եղել ավելի փոքր մասերի[102]: Գավառի ուդիները դավանաբանական առումով բաժանված էին Անդրկովկասի 2 քրիստոնյա ժողովուրդների եկեղեցիների միջև: Նրանց մեծ մասը՝ Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ էին, հայացված ուդիներ, հայկական ազգային ինքնագի-

---

[100] Տե՛ս Ստեփանյան Գ., Նուխի եւ Արեշ գավառների հայերի պատմական անցյալից, «Իրան-Նամէ» իրանագիտական հանդես, Երեւան, 1997, թիւ 4-5-6, էջ 28:

[101] Տե՛ս Բարխուտարեանց Մակար եպս., Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երևան, 1999, էջ 245:

[102] Առավել մանրամասն տե՛ս Կարապետյան Սամվել, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Գիրք 1-ին, Երևան, 1997, էջ 41:

տակցությամբ, մյուսները՝ վրացական: 19-րդ դարում նրանց համապատասխանաբար կոչում էին «հայ ուդիններ» և «վրաց ուդիններ»: Վերջիններս հայ առաքելականների նման պատկանել են ուդինական ցեղին: «Նուխու գավառում ուղղափառ ուդիները հայտնի էին «գյուրջի», այսինքն՝ վրացի անվամբ, խոսում էին ուդիերեն և ամեն ինչով նման լինելով հայ լուսավորչականներին, նրանց հետ ապրում էին խառը՝ առանձին թաղամաս չկազմելով: Ուդիներն էլ հայերին անվանել են «քշտոն» կամ «էրմենի» ձևերով»[103]:

Այսպիսի միջավայրում էր ծնվել ու դաստիարակվել Սարգիս Կուկունյանը: Նա նախնական կրթությունն ստացել է Նիժ գյուղի տերթոդիկյան դպրոցում: Հայկական դպրոցում նա սովորում ու դաստիարակվում է հայկական ազգային գիտակցությամբ: Ըստ հուշագիր Արամայիսի (Արամայիս Տեր-Դանիելյան)՝ Սարգիսը շատ ընդունակ ու աչքաբաց երեխա էր: Դեռ ծխական դպրոցում եղած ժամանակ նա հորինել էր ուդիներեն տառեր, որոնցով նամակագրություն ուներ իր ընկերների հետ: Նրա նպատակն էր Ավետարան-Սաղմոսը վերածել ուդիներենի և այն մատչելի դարձնել ուդիներեն խոսողներին:

Ծխական դպրոցն ավարտելուց հետո Սարգիսը ցանկություն է հայտնում սովորել էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Նուխիի դպրոցների թեմական տեսուչ Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանի[104] աջակցությամբ և ժամանակի կաթողիկոս Գևորգ Դ-ի կարգադրությամբ Սարգիս Կուկունյանն ընդունվում է (հավանաբար 1878 թ.[105]) էջմիածնի Գևորգյան ճեմարան իբրև գիշերօթիկի սան: Ընդունակ, ուշիմ և աչքաբաց Սարգսին չվիճակվեց ավարտել ճեմարանական դասընթացը: 1883 թ. տեղի ունեցած աշակերտական հուզումների պատճառով կարգ ու կանոնին չենթարկվելու և ըմբոստության

---

[103] Խառատյան Հ., Ուդիների էթնօ եւ դաւանական ինքնապատկանելութեան որոշ հարցեր (ԺԹ.- Ի. դդ.), տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդէս»,Պէյրութ, 2000, էջ 185:

[104] Վահան վարդապետ Տեր-Գրիգորյանը «Մշակ»-ի կասպիական թղթակիցն էր, որը 19-րդ դարի 70-ական թվականների վերջերին Նուխի գավառի դպրոցների թեմական տեսուչն էր և աշխատում էր հայոց լեզուն ու ազգային դիմագիծը վերականգնել թրքախոս հայերի մեջ:

[105] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 2:

համար ճեմարանից հեռացվեցին շուրջ 80 աշակերտներ, որոնց թվում էր նաև 6-րդ դասարանցի Սարգիսը: Նա այն ժամանակ դեռևս կրում էր Ավետիսյան ազգանունը[106]:

Ճեմարանից հեռացվելուց հետո Սարգիսը փորձում է ընդունվել Երևանի ուսուցչական սեմինարիա, բայց չի հաջողվում: Հորեղբոր աջակցությամբ նա տեղափոխվում է Թիֆլիս, մտնում զինվորական դպրոց, բայց այստեղ նույնպես երկար չի մնում: Փորձում է ընդունվել Ներսիսյան դպրոց, որի ղեկավարությունն էջմիածնի կողմից արդեն տեղեկացված էր, որ Սարգիսն արտաքսված է Գևորգյան ճեմարանից: Այդժամ նա դիմում է խորամանկության. խնդրագիր է ներկայացնում Կուկունյան ազգանունով և ընդունվում Ներսիսյան դպրոց: Մի քանի ամիս անց կեղծիքը բացվում է, և Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը Կուկունյանից բացատրություն է պահանջում: Իր վարմունքը նա արդարացնում է ուսման անհագ տենչով: Միջամտում է հայտնի հասարակական գործիչ, «Փորձ»-ի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը: Բաքվի Մարդասիրական ընկերության նշանակած ամսեկան 10 ռուբլի նպաստով՝ Կուկունյանը շարունակում է իր ուսումնառությունը դպրոցում, որն ավարտում է 1884 թվականին: Ավարտական վկայականում գերազանց գնահատական կար միայն հայոց պատմությունից[107]: Նույն՝ 1884 թվականին Սարգիս Կուկունյանը մեկնում է Բաքու և զբաղվում մասնավոր դասեր տալով: Բայց, Կուկունյանը չի գոհանում Ներսիսյան դպրոցում ստացած գիտելիքներով: Նա ցանկություն ուներ մեկնել Պետերբուրգ և ուսանել ուսուցչական ինստիտուտում: Այդ մտադրությունն իրագործելու համար նյութական միջոցներ էին հարկավոր, և Կուկունյանը դարձյալ բախում է «Մարդասիրական ընկերության» դուռը՝ բարերարներ Մելիք-Հայկազյանից ու Սանասարյանից խնդրելով նպաստ՝ ուսումը շարունակելու համար: «Նիւթապէս օգնելով ինձ Ներսիսեան դպրոցում,- իր դիմումում նշում էր նա,- քաջալերեցիք, ուստի կրկին վստահանում եմ որդիական համարձակութեամբ Ձեր ուշադրութիւնները ինձ վրայ դարձնել, և աղերսել այս

[106] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 6:
[107] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, թիվ 832, թ. 2:

խոնարհ խնդրովս, որ կրկին նիւթապէս օժանդակել ինձ շարունակել ուսումս Պետերբուրգի ուսուցչական դպրոցում ապագայում իմ սուրբ նպատակս իրագործելու համար: Այս նպատակը՝ որ սուրբ է ինձ համար, բազմիցս սուրբ է և մոտ Ձեր ազգային սիրով վառուած սրտերի համար, որոնք բարուքութեան ըղծով են միայն տածում»[108]:

Ձստանալով անհրաժեշտ չափով օգնություն՝ Ս. Կուկունյանը գրում է ևս մի քանի նամակներ: Դրանցից վերջինում նա ընկերության գանձապահ Գրիգոր Դիդարյանին հայտնում էր, որ իրեն հատկացված չնչին գումարը հնարավորություն չի տալիս մտնելու «ուսուցչական վարժարան»[109]:

Բաքվի «Մարդասիրական ընկերությունը», երիտասարդ Կուկունյանի մեջ տեսնելով ապագա մանկավարժին հատուկ տվյալներ, ի վերջո, ընդառաջում է նրան և հնարավորություն տալիս մեկնելու Պետերբուրգ ուսումնական ասպարեզում կատարելագործվելու՝ ուղարկելով 60 ռուբլի ճանապարհածախս: Ընկերությունը Ս. Կուկունյանին առաջարկում է, որ նա Պետերբուրգում մանկավարժական կրթություն ստանա ուսուցչական ինստիտուտում, կրթությունը լրացնելուց հետո վերադառնա Կովկաս և աշխատի որպես ուսուցիչ: Առաջարկն ընդունելուց հետո Կուկունյանն ուղևորվում է Բաքու: Այստեղ նրան ջերմ աջակցություն է ցույց տալիս բժիշկ Արտեմյանը՝ եկեղեցու մոտ հատկացնելով մի սենյակ, ուր ապրում և մասնավոր դասեր էր տալիս սկսնակ ուսուցիչը, մինչև «Մարդասիրական ընկերության» հունվարին գումարված ժողովը որոշում է նրան ամսական 15-ական ռուբլի նպաստ տրամադրել՝ Պետերբուրգում ուսանելու համար: Ուսումնատենչ երիտասարդը մեկնում է Պետերբուրգ, ուր հասնում է 1886 թ. մայիսի 23-ին:

«Մարդասիրականի» նշանակած գումարը բավարար չէր հոգալու ուսուցչական ինստիտուտի պահանջած ծախսերը, քանի որ վերջինս գիշերօթիկ հաստատություն էր (1886-1888 թթ. ընթացքում նա ստացել է ընդամենը 415 ռուբլի թոշակ)[110]: Ս. Կուկունյանը ստիպ-

---

[108] Անանուն Դ., Սարգիս Կուկունեանի հինաւուրց նամակները, տե՛ս «Ձիթենի» գրական ժողովածու հայ գրականագէտների, էջ 239:
[109] Տե՛ս նույն տեղում, էջ 243:
[110] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 4:

ված էր դառնալ համալսարանի ազատ ունկնդիր և ուսանող ընկերների օժանդակությամբ ու ստացած չնչին թոշակով մի կերպ ապրել Պետերբուրգում: Չարդարացնելով իր մեկենասների հույսերը՝ Սարգիս Կուկունյանն ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որտեղ 2 ամիս սովորելուց հետո տեղափոխվում է նույն համալսարանի արևելյան լեզուների բաժին՝ որպես ազատ ունկնդիր: Հուսախաբված «Մարդասիրական ընկերությունը», այս մասին իմանալով, Կուկունյանին զրկում է իր նշանակած թոշակից: Վերջինս դրանից չհուսահատվելով՝ անձնական աշխատանքով և ուսանող ընկերների օժանդակությամբ մի կերպ հայթայթում է իր ապրուստը: Նրա բախտից էր, որ այդ ժամանակ Պետերբուգում գոյություն ուներ հայ ազգասեր ուսանողների խմբակ, որը և իր հովանավորության տակ առավ չքավոր հայրենասերին:

Կենսախինդ, բուռն խառնվածք և կայուն բնավորություն ունեցող Ս. Կուկունյանը Պետերբուրգում անմիջապես հայտնվում է ազատամիտ երիտասարդության միջավայրում, խանդավառությամբ հափշտակվում հեղափոխական տրամադրություններով, որոնք նրա միտքն ու հոգին համակել էին դեռևս Թիֆլիսում ուսանելու տարիներին:

Պետերբուրգի հայ ուսանողությունն աննախընթաց գաղափարական վերելք էր ապրում՝ ժողովներ, վիճաբանություններ, հայրենասիրական գրքույկների հրատարակություններ: Այդ ժամանակ հայ ուսանողությունը գլխավորապես կենտրոնացված էր Մոսկվայում և Պետերբուրգում: Պետերբուրգի ուսանողությունն ավելի ազգային-քաղաքական ուղղություն ուներ, քան Մոսկվայի «Հայրենասերների միությունը»: «Այնտեղ արդէն սկսուել էր թէ՛ լեգալ գործունէութիւն, թե՛ ագիտացիա Հայաստանի ազատագրութեան օգտին,- հիշում է Մարտին Շաթիրյանը,- Հրատարակում էին մանր գրքոյկներ Բալկանների ապստամբական կեանքից, պատրաստւում էին երիտասարդութիւնը Թիւրքա-Հայաստան անցնելու: Այդ մտայնութեան արդիւնք էր Կուկունեանը, որ Պետերբուրգի ուսանող էր»[111]:

Պետերբուրգի ուսանողության շարքերում կային մեծաթիվ լեհ

[111] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 27:

ուսանողներ և որոշ թվով բուլղարներ, որոնց ժողովներին ևս հաճախում էր Ս. Կուկունյանը: Ազնիվ նվիրումով, անփորձ և ռոմանտիկ գաղափարներով տարված Սարգիս Կուկունյանը հնարավորություն է ունենում մոտիկից ծանոթանալու լեհ և բուլղար ժողովուրդների ազատագրական շարժումներին:

«Չհաշուած Կուկունեանին՝ Պետրոգրադի (պետք է լինի Պետերբուրգի - Կ. Ե.) ուսանողութեան մէջ ամէնից աւելի ազդեցիկ էին Արշակ Պարոնեան, Ստեփ. Թաղիանոսեան, բժ. Թադէոս Զաքարեան եւ Կոստանդին Խատիսեան, որ ամէնից ցայտուն դէմքն էր նրանց շարքում: Այս չորսը Պետրոգրադի ուսանողութեան ղեկավարներն ու ոգին էին: Յովհ. Քաջազնունին, որ նոյնպէս Պետրոգրադի ուսանող էր, աւելի նուիրուած էր գրական-գեղարուեստական խնդիրների եւ ազգային-քաղաքական կեանքով չէր հետաքրքրուում»[112],- վկայակոչում է Մարտին Շաթիրյանը: Խումբը Պետերբուրգի ուսանողության շարժիչ ուժն ու ոգին էր. ուսանողություն, որը հայրենասիրական բեղուն գործունեություն էր ծավալել Հայկական հարցը ժողովրդին հասու դարձնելու համար: Նրանք նաև ջանքեր էին գործադրում Մոսկվայում սովորող իրենց հայրենակիցների հետ կապեր հաստատելու և ընդլայնելու ուղղությամբ: Մոսկվայի հայ ուսանողների «ժողովն» այդ շրջանում կազմալուծվել էր և տրոհվել երկու մասի՝ «լազարիստների», այսինքն՝ Լազարյան ճեմարանն ավարտածների և «կովկասցիների»: «Ժողովից» բացի՝ կային ուրիշ երկու խմբակներ: Դրանցից մեկը նպատակ էր դրել ուսումնասիրելու հայրենի երկիրն ու այնտեղ բնակվող ժողովրդին և այդ պատճառով էլ «Երկրականներ» անունն էին կրում, իսկ մյուսը զբաղվում էր իր անդամների ինքնազարգացման խնդիրներով:

«Երկրականները» Մոսկվայից արձագանքեցին և անմասն չմնացին ուսանողական համագումար հրավիրելու կոչին, որով հանդես էին եկել Պետերբուրգի հայ ուսանողները: Վերջիններիս պատվիրակները մեկնեցին Մոսկվա՝ մասնակցելու 1889 թ. գումարված համագումարին: Պետերբուրգի հայ ուսանողության ներկայացուցիչները (Արշակ Պարոնյան, Ստեփան Թաղիանոսյան, Թադևոս Զաքարյան և Կոստանդին Խատիսյան) հանդես եկան անմիջապես

[112] Նույն տեղում:

պայքար սկսելու առաջարկով, մինչդեռ Մոսկվայի «Երկրականների» խմբակը գտնում էր, որ նախ պետք է ուսումնասիրել ապագա գործունեության թատերաբեմը և հետո միայն գործի անցնել[113]:

Արձանագրենք, որ ազգասիրական ոգևորությունը միայն Պետերբուրգում չէր տարածվել: Նույն մտայնությամբ ու գաղափարներով էր ապրում նաև Մոսկվայի հայ ուսանողությունը, որը նույնպես կազմակերպվում և պատրաստվում էր ապագա գործունեության համար: «Պետրովկա»-ն՝ գյուղատնտեսական բարձրագույն դպրոցը, դարձել էր հեղափոխական գաղափարների մշակման ու ձևավորման դարբնոց: Առաջատար գծում հայ ուսանողությունն էր, որի մտասևեռման միակ առարկան արևմտահայության ազատագրության գաղափարն էր: Հայ երիտասարդությունը տոգորված էր այդ խնդրով, որով, առանց խտրության, ապրում ու շնչում էին քաղաքի հայության բոլոր խավերը: Ըստ որում, եթե Պետերբուրգի ուսանողությունը կողմնակից էր լեգալ և անմիջական գործունեության՝ քարոզչություն, համախմբում, մարտական խմբերի կազմում, ապա Մոսկվայի ուսանողությունը կարծում էր, որ Արևմտահայաստանի և ընդհանրապես Հայոց խնդիրը դեռ բավականաչափ ուսումնասիրված ու պարզված չեն, ուստի նախ ժամանակ է պետք ուսումնասիրելու, ապա՝ գործունեության ծրագիր մշակելու համար[114]:

Հեղափոխական խմբակներից դուրս Սարգիս Կուկունյանը ոտքով-գլխով մխրճվում է Պետերբուրգի հայ ուսանողության կյանքի մեջ: Վերջինս այդ տարիներին գաղափարական կենդանի խմորումների մեջ էր՝ ինքնազարգացում, ազգային դաստիարակություն, արևմտահայոց ճակատագիր, հեղափոխական ծրագրեր՝ հարցեր, որոնք պաշարել էին բոլորի մտքերը: Ս. Կուկունյանը շուտով դառնում է Պետերբուրգի հայ ուսանողության կենտրոնական դեմքերից մեկը, խանդավառությամբ հափշտակվում հեղափոխական տրա-

---

[113] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 132: Տե՛ս նաև Մանուկյան Բ., Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների դերը հայ մտավորականության պատրաստման գործում (19-րդ դարի երկրորդ կես), սեղմագիր, Երևան, 1997, էջ 15-17:

[114] Տե՛ս Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 28, նաև՝ Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 2, էջ 77:

մադրություններով և ուսումից առավել շատ ժամանակ տրամադրում հեղափոխական գործերին: Նրա ջանքերով կազմվում է ուսանողական գրադարան, հիմնվում ուսանողների փոխադարձ օգնության ընկերություն-դրամարկղ, որի օգտին հավաքված 3000 ռուբլի հասույթն ավելի է ամրացնում Պետերբուրգի հայ ուսանողության ներքին կապը: Կուկունյանի մտահղացումը՝ հայերեն չիմացող ուսանողներին հայերեն սովորեցնելը՝ իրողություն է դառնում: Նա հայերեն դասեր է անցկացնում իրենց մայրենիին անհաղորդ ուսանողության հետ, նրանց շրջանում տարածում ազգային-ազատագրական գաղափարներ, կապ հաստատում ոչ ուսանող երիտասարդության, նարոդնիկների, իր սենյակում ապրող լեհ ուսանող Թեոդոր Բերգերի և բուլղար ազատամարտիկների հետ, մասնակցում բուլղար ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված մի շարք գրքույկների թարգմանությանն ու հրատարակությանը («Պուլկար Ավազակապետ», «Ազրայիլ», «Դանչօ» և այլն)[115]: Վերջին գործը ղեկավարում էր Կոստանդին Խատիսյանը (լեռնարդյունաբերության ինժեներ), որի նախաձեռնությամբ կազմակերպված գրական խմբակը կարճ ժամանակում թարգմանում և հայերենով 1888 թ. հրատարակում է բուլղար խմբապետերի ու հայդուկների մասին 7 գրքույկներ, իսկ հաջորդ տարի դրանց ընդհանուր թիվը հասավ 15-ի[116]: Ուսանողների հրատարակությունները լայն ընդունելություն էին գտնում: Դրանք տարածվում էին էժան գնով, իսկ չունևորներին՝ բաժանվում ձրի: Գրքույկների մի մասը տարածվում է Անդրկովկասում, ապա այնտեղից 12 հազար օրինակ՝ գաղտնի տեղափոխվում Թուրքիա, Պարսկաստան և Եվրոպա:

Հայ ժողովրդի արևմտյան հատվածի օրհասական դրության մասին պատկերացումը, որը Սարգիս Կուկունյանի մեջ ձևավորվել ու արմատավորվել էր էջմիածնում ու Թիֆլիսում սովորելու տարիներին, միահյուսվում են բախտակից ժողովուրդների պատմության ու ներկա կացության վերաբերյալ տեղեկությունների հետ: Նա սկսում է հստակորեն պատկերացնել ճնշված ժողովուրդների կացությունը

---

[115] Այդ գրքույկների մասին մանրամասն տե՛ս Ճինգոզյան Կ. Հ., Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից (XIX դար), Երևան, 1966, էջ 88-165:
[116] Տե՛ս «Մշակ», Թիֆլիս,1888, N 37:

և զուգահեռներ անցկացնելով՝ տեսնում է ընդհանուր գծեր ու ակընհայտ տարբերություններ: Այդ ամենը Ս. Կուկունյանին մղեցին արևմտահայ եղբայրներին օգնելու գաղափարին, որը գնալով որոշակիանում է և դառնում օրվա հրամայական: Նա եռանդով պատրաստվում էր ապագա գործունեության՝ պատրաստ զոհաբերելու իր անձը հանուն հայրենիքի ազատագրության: Մտավոր ու հասարակական հետաքրքրություններից զատ Կուկունյանն իր ազատ ժամերին պարապում էր զինավարժությամբ: «Նա մի տարուան չափ զինավարժութեան դասեր առավ իր ընկեր եւ հետագայ գործակից Լիսինեանի եւ Հովհաննիսեանի հետ»[117],- գրում է Արամայիս Տեր-Դանիելյանը: Նրանցից Կ. Լիսինյանը հագուստի վաճառական էր և իր ողջ կարողությունը տրամադրելու էր Ս. Կուկունյանին: Աշխատելով ամեն կերպ պատրաստվել ապագա ազգային-հեղափոխական գործունեութեան համար՝ Կուկունյանն արդեն մտածում էր զենք ու զինամթերք ձեռք բերելու մասին:

Արևմտահայության ծանր դրությունը, դաժան ճնշումներն ու կեղեքումները ալեկոծում էին Ս.Կուկունյանի ազնիվ հոգին: Հստակ պատկերացնելով աղետի առաջ կանգնած ժողովրդի վիճակը՝ նա ոչ միայն տոգորվեց ըմբոստ տրամադրություններով, այլև վճիռ կայացրեց՝ «անցնել տառապանքի երկիր և տեղի ժողովրդին ոտքի կանգնեցնել Թուրքիայի դեմ»[118]: Այդ գաղափարը բուռն կերպով համակել էր երիտասարդ Ս. Կուկունյանին, դարձել նրա մտասևեռման առարկան:

Ս. Կուկունյանի գաղափարները հասունանում էին Ռաֆֆու վեպերի, Ռափայել Պատկանյանի բանաստեղծությունների, Գրիգոր Արծրունու հրապարակախոսական հոդվածների և ելույթների ազդեցությամբ՝ ներշնչելով վառ ու ազնիվ սեր դեպի ազգը և հայրենիքը: Հենց նման գաղափարների ազդեցության տակ էին 1889 թվականին առաջինը Երկիր անցել երեք զինված հայ երիտասարդներ՝ թիֆլիսեցի Վ. Գոլոշյանը, վանեցի Հ. Ագրիպասյանը և Կ. Գուլագսըզյանը: Առաջին երկուսը նահատակվեցին, իսկ երրորդը փախուստի դի-

---

[117] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 2, էջ 77:

[118] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 8:

մեց[119]:

Շուտով Թիֆլիսում կազմվում են հայրենասիրական փոքրիկ խմբեր, որոնք տպագրում էին գաղտնի խմորատիպ թերթեր և թռուցիկներ՝ «Հայրենասերի ձայն», «Մունետիկ»: Թիֆլիսից բացի՝ նման խմբակներ էին ձևավորվել նաև գավառական կենտրոններում, որոնց անդամներին համակել էր Հայաստանի ազատագրության գաղափարը: Բորբոքված ընթերցումներից և խրախուսված հայրենասիրական գործերով՝ երիտասարդությունը, թողած իր զբաղմունքն ու հանգիստ կյանքը, ձգտում էր դեպի Երկիր: Այդ հայրենասիրական զգացումները և գաղափարները, բացի ուսանող-երիտասարդությունից, Պետերբուրգում ուրիշ կողմնակիցներ գտան՝ ի դեմս Կարապետ Ճարակյանի, Արգամ Տեր-Հակոբյանի, գործակատար Ռուբեն Հովհաննիսյանի, պատրաստի հագուստի վաճառական Կոստանդին Լիսինյանի և այլոց: Վերջինս իր ողջ կարողությունը հնչուն փող դարձրեց և տրամադրեց Սարգիս Կուկունյանին:

Մինչ այդ Ս. Կուկունյանը Պետերբուրգում սերտ հարաբերություններ էր հաստատել ժամանակի նշանավոր պետական-հասարակական գործիչ, իր պահպանողական հայացքներով հայտնի Կարապետ Եզյանի հետ, օգնել նրան «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» վավերագրերի ժողովածուն կազմելու գործում: Երբ Ս. Կուկունյանն որոշում է անցնել Տաճկահայաստան, կարևոր է համարում խորհրդակցել Կարապետ Եզյանի հետ և իմանալ նրա կարծիքը: Կ. Եզյանը, որ Հայաստանի անկախության վերականգնման հեռանկարը կապում էր Ռուսաստանի հետ, Կուկունյանին քաջալերելով՝ առաջարկում է. «...մեկնել Պարսկաստան, մտնել պարսից ծառայության մեջ, ստանալ խանի տիտղոս, ապա իր՝ Եզյանի աջակցությամբ հաստատվիլ թուրք-պարսկական սահ-

[119] Առաջինն Երկիր էին անցել Վ. Գոլոշյանն ու Հ. Ագրիպասյանը: Ապա Երկիր էր անցել Ռաֆայել Մովսիսյանը, նախ՝ մենակ, երկրորդ անգամ՝ իր երկու ընկերների հետ: Նա Մուշից մեկնել էր Կ.Պոլիս, մասնակցել Գում-Գափուի ցույցին, այնուհետև անցել սահմանը: Երրորդը Խաչատուրի ղեկավարությամբ («Վարդապետ» մականունով) խոհարարների մի խումբ էր՝ Թիֆլիսից Մուշ մեկնած, որոնք Մուշում անհաջողության հանդիպելով՝ վերադարձել էին Թիֆլիս: Չորրորդ խումբը Մատուռի կռվին մասնակցող Հունոյի ղեկավարությամբ գործող խումբն էր, որին հաջորդել են ևս մի քանի անհաջող փորձեր: Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 59:

մաններուն մօտ և, բավականաչափ ուժ կազմելէ հետո՝ կազմակերպել շարժումներ Վասպուրականի մեջ»[120]: Կ. Եզյանը Կուկունյանին էր հանձնել Պարսկաստանի մի քանի բարձրաստիճան հայազգի պաշտոնյաներին ուղղված հանձնարարական նամակներ՝ հուսալով, որ վերջիններս կարող են օժանդակել երիտասարդ հայրենասերին, քանզի «նա աւելի շուտ ռուսական գաղափարապաշտ յեղափոխական մտաւորականութեան միջավայրում սնուած ու մեծացած մի հայրենասէր երիտասարդ էր, աւելի երազատես գաղափարներով ու իր ներքին աշխարհում յղացած ծրագիրներով էր ապրում, քան իրատես մարդուն հատուկ հեռատեսութեամբ գծում իր կազմուելիք խմբի ռազմա-յեղափոխական անելիքները. մանաւանդ իբրեւ խմբի ղեկավար ամենեւին ծանօթ չէր միջավայրին, պայմաններին, աշխարհագրական դիրքին ու ճանապարհներին, որտեղից պիտի անցնէր իր խմբով եւ ուր պիտի գործել սկսէր»[121],- հետագայում վերհիշում է Ս. Կուկունյանի արշավանքի մասնակից Արամայիս Ազնավուրյանը:

Կուկունյան գործչի առջև դրված ծրագիրը պահանջում էր անդադրում աշխատանք և պայքարի անհամեմատ տևական ժամանակաշրջան: Բայց անմիջապես գործի անցնելը նրա համար դարձել էր օրվա պահանջ: Իր գաղափարների կենսագործման նպատակով 1890 թ. մայիսին Ս. Կուկունյանն իր երկու ընկերների՝ Ռուբեն Հովհաննիսյանի և Կոստանդին Լիսինյանի հետ, վերցնելով որոշ քանակությամբ զենք, Պետերբուրգից մեկնում են Թիֆլիս:

Հունիսի կեսերին հասնելով Թիֆլիս՝ խումբը կանգ է առնում Հավլաբարի կամրջի մոտ գտնվող մի իջևանատանը: «Պետերբուրգէն եկած խումբը գրկաբաց ընդունելութիւն գտաւ «Երիտասարդ Հայաստան»[122] անունով գաղտնի ընկերութեան մոտ, որը նպատակ

---

[120] Սեւեան Ռ., ՀՅԴ առաջին քայլերը և գործիչները, «Հայրենիք», 1937, N 6, էջ 73, ինչպես նաև՝ Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 65:

[121] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 147:

[122] Ս. Կուկունյանի ձեռնարկին մեծ համակրանք և աջակցություն էր ցուցաբերել «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը, որը ստեղծվել էր 1889 թ. ձմռանը՝ Թիֆլիսում, և հիմնականում բաղկացած էր Ռուսաստանի տարբեր քաղաքներում կրթություն ստացած երիտասարդներից: Այն ընդգրկում էր ինչպես առաջադեմ ուսանողությանը, այնպես էլ Անդրկովկասի մասամբ ազգայնական, մասամբ էլ՝ դեռևս

էր դնում միացնել մինչեւ այդ գոյութիւն ունեցող բոլոր յեղափոխական խմբերը՝ Թուրքահայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատագրութեան համար: Այդ կազմակերպութեան կորիզը կազմում էր «Դրօշակ» խումբը, որի մէջ կամ շուրջը համախմբուած էր Թուրքիայի յեղափոխական ընտրանին»[123]: Թիֆլիսում «Երիտասարդ Հայաստանի» անդամներն արդեն գործնական հիմքերի վրա էին դրել Երկիր՝ Արևմտյան Հայաստան թափանցելու խնդրի լուծումը, որի համար կազմակերպչական լուրջ աշխատանքներ էին տարվում: ««Երիտասարդ Հայաստանը»,- գրում է հարցին քաջատեղյակ Գ. Խուդինյանը,- չուներ համակարգված կառույց ու գործելակերպ, գտնվում էր գաղափարական ու կազմակերպական սկզբունքների հստակեցման փուլում: Անկասկած, նա ունեցել է մի նախնական ծրագիր ու կանոնագիր... Այդ փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև զենքի հայթայթման ու զինավարժության գործի պատշաճ կազմակերպումը ցույց էին տալիս, որ «Երիտասարդ Հայաստանը» ավելի մեծ և ուժեղ կազմակերպություն դառնալու ձգտում ուներ, որն անկասկած ժամանակի հրամայականն էր»[124]:

Թիֆլիսում 1890 թ. հուլիսին Կուկունյանը և իր ընկերներն այցելում են Կոջոր ամառանոցում գտնվող «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունուն: Վերջինս ողջունում է Կուկունյանի որոշումը, խորհուրդ տալիս զինված խմբով անցնել Արևմտյան Հայաստան և մի քանի հարձակումներ կազմակերպել Հայ Դատը միջազգային ասպարեզ հանելու նպատակով: Արծրունու խորհրդով Կուկունյանը մշակում է

նարոդնիկական գաղափարների ազդեցության տակ գտնվող հայ երիտասարդությանը: «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության գլխավոր անդամներն էին Հովսեփ Արղությանը, Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանը, Հովհաննես Յուսուֆյանը (Վահանյան, որը «Երիտասարդ Հայաստանի» ամենավառ դեմքերից մեկն էր), Տիգրան Ստեփանյանը, Արշակ Տեր-Թադևոսյանը, որոնք 1890 թ. փետրվարին Մոսկվայում տեղի ունեցած ուսանողական հուզումների պատճառով Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիկայից արտաքսված և հայրենիք աքսորված ուսանողներ էին: Նրանք Թիֆլիսում հարաբերություններ էին հաստատել տարբեր խմբակների ու անհատների, մասնավորապես Ս. Զավարյանի, Ս. Զորյանի (Ռոստոմ), Ա. Դաստակյանի, Ք. Միքայելյանի, ազգայնական Կոստանդին Խատիսյանի և ուրիշների հետ (տե՛ս Լ. Չորմիսեան, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, էջ 286) :

[123] Չորմիսեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 287:

[124] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 131-132:

գործողությունների մի նոր ծրագիր, այն է. «Չգնալ Պարսկաստան, ինչպես Եզեանն էր խորհուրդ տալիս, այլ ուղղակի մի քանի տասնեակ զինուած մարտիկներով անցնել Տաճկահայաստան, այնտեղ յիւրաքանչիւր տասնեակին տալ մի կարող խմբապետ եւ ուղարկել առանձին տեղեր. այդ տասնեակներն էլ իրենց հերթին պետք է ավելացնեին խմբի անդամների թիվը եւ 20-30 հոգի դառնալուց յետոյ, բաժանվեին նոր տասնեակների, եւ այդպէս շարունակ, մինչեւ որ մի շոշափելի ոյժ կազմվեր: Այդպիսով, կազմուած բոլոր խմբակների ցանցի հանգոյցը պէտք է գտնուեր Սարգիս Կուկունեանի ձեռքին, որ պիտի ղեկավարեր կատարվելիք շարժումները»[125]: Դա կնշանակեր ոչ մեծ խմբով անցնել Արևմտյան Հայաստան, խմբի անդամներին ցրել առանձին վայրերում և տարբեր գավառներում ստեղծել ջոկատներ, որոնց ընդհանուր կապն ու ղեկավարությունը պետք է գտնվեր Սարգիս Կուկունյանի ձեռքում: Պահանջվում էր հոգալ այդ մարդկանց հագուստը, սնունդը, զենքը: Այսպիսով, Կ. Եզյանի ծրագիրը օրակարգից դուրս է գալիս:

Թիֆլիսում Ս. Կուկունյանի համար մի յուրատեսակ հավաքատեղի էր դարձել իր գործընկերոջ՝ Կոստանդին Լիսինյանի ազգական, նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի բնակարանը: Գրիգոր Արծրունուց և իր շուրջը համախմբված հավատարիմ գործիչներից զատ, Ս. Կուկունյանը ջերմ հարաբերությունների մեջ էր «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության երկու թևերի հետ, որոնցից յուրաքանչյուրն իր աջակցությունն էր առաջարկում նրան: «Առաջինը՝ արմատական, ձախակողմեան էր, այսինքն՝ այսպէս կոչուած «Իւժնիէ Նոմերա» հիւրանոցի խմբակն էր, որ կազմուած էր գլխաւորապէս երիտասարդ համալսարանական ուսանողներից եւ գաւառներից եկած մտաւորականներից, - գրում է Աբրահամ Գյուլխանդանյանը (Ռ. Սևյան): Նրանք բոլորն էլ եթէ ամբողջապէս ընկերվարականներ չէին, գէթ այդպիսի հակումներ ունէին եւ համակիր էին ռուս նարոդովոլցիների հոսանքին, որոնք պահանջում էին «հող եւ ազատու-

[125] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 11:

թիւն»[126]: «Յուժնիե Նոմերա»-ի խմբակը պահանջում էր, որ ապագա ազատ Հայաստանը ունենա այնպիսի իրավակարգ կամ հասարակարգ, որտեղ հայ աշխատավորությունը՝ գյուղացին ու բանվորը, ազատ լինեն ամեն տեսակի ճնշումներից, այլապես պայքարը շարունակվելու էր դրամատեր և կալվածատեր հայերի դեմ:

Երկրորդ հոսանքը, որ կրում էր «Սեվերնիե Նոմերա» անունը, բաղկացած էր ավելի առաջացած տարիք (տարիքավոր) ունեցող պահպանողական տարրերից, որոնք թեև ընդունում էին հեղափոխական ճանապարհով Հայաստանի ազատագրությունը, սակայն գտնում էին, որ «...ապագայ ազատ Հայաստանի օրենքները պէտք է պաշտպան հանդիսանան հայ դրամատիրութեան, ճիշդ այնպէս, ինչպէս որ այդ գոյութիւն ուներ արեւմտեան Եվրոպայում...»[127]: Այս հիմնական սկզբունքների շուրջ շատ տարաձայնություններ են ունեցել երկու խմբակները, սակայն վեճերը հարթվել էին բոլորի համար ընդունելի մի բանաձևով՝ հեղափոխական ճանապարհով Արևմտահայաստանում հասնել քաղաքական ու տնտեսական ազատության: Այս բանաձևը ձևավորվեց Դաշնակցության հիմնադիր ժողովներում, որն առաջարկեցին Սիմոն Զավարյանը և Քրիստափոր Միքայելյանը, հիմնականում վերջինս, որը կարողացավ մի հայտարարի բերել երկու հակադիր հոսանքները:

Պետերբուրգում Կուկունյանի հետ ուսանած ընկերները («Սեվերնիե նոմերայի» խմբակը) դրամ էին խոստանում, իսկ «Յուժնիե Նոմերայի» (հետագայում՝ «Լոսկուտ») խմբակն արդեն ձեռք էր բերել զենքի որոշ պաշար, որը հոժարակամ դրվում է Սարգիս Կուկունյանի տրամադրության տակ: Վերջինս աշխատում էր վեր կանգնել «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության ներսում գոյություն ունեցող երկու թևերի միջև առկա հակասություններից, օգտվել թե՛ մեկի և թե՛ մյուսի աջակցությունից: «Պետք է ասել, որ Ս. Կուկունեանի ձեռնարկութեան մեծ համակրանք եւ աջակցութիւն են ցոյց տուել Թիֆլիսի այն խմբակը («Յուժնիե Նոմերա» - Կ. Ե.), որի անդամներն էին Ս. Զաւարեանը, Ն. Մատինեանը, Տ. Ստեփանեանը, Կ. Խատի-

[126] Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագիր-կանոնագիրը, Գրեց՝ Ա. Սեւեան, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 3, էջ 91:
[127] Նույն տեղում:

սեանը, Արշ. Թադէոսեանը եւ Վարդ - Պատրիկեանը: Դրանք յանձնում են Կուկունեանին զենքի մի ամբողջ պահեստ»[128],- գրում է «Մուրճ»-ի խմբագիր Լևոն Սարգսյանն իր հուշերում:

Այսպիսով, «Երիտասարդ Հայաստանի» երկու թևերը միավորվեցին նույն գործի շուրջ. մեկը դրամով, մյուսը զենքով օգնեցին Կուկունյանին: «...Նա (Սարգիս Կուկունյանը - Կ. Ե.) շտապում էր եւ գնալու պատրաստութիւն էր տեսնում եւ աշխատում էր որպէսզի երկու կուսակցութիւնները միացնէր, որ այն ժամանակ կային. մի կուսակցութիւնը դրամով էր օգնում, իսկ միւսը ունէր մօտ 30 հրացան: Կուկունեանցը խնդրում էր, որ տան իրենց: Նրանք կպահանջէին որ եկ մէջ հետ կապւիր, որ երկրից մեզ հետ [«Երիտասարդ Հայաստան» կազմակերպութեան] թղթակցես եւ մեր հրահանգներուն հնազանդիս, եւ այն ժամանակ մենք կտանք քեզ զէնքեր եւ մի քանի լաւ քաջ տղէք...»,- կարդում ենք Տիգրան Կերեկցյանի հուշերում[129]: Ուստի պատահական չէ, որ Կուկունյանը, ինչպես վկայում է արշավանքին մասնակցած Հովսեփ Մովսիսյանը (Արգամ Պետրոսյան), իրեն միացած զինակիցներին հաղորդել էր հետևյալը. «Ես որ Թիֆլիս հասայ՝ այստեղ շատ «ֆրակցիաներ» կային, առանձին-առանձին գործող մտաւորականներ, դրանց աշխատում եմ միացնել, քանի որ նպատակներս մէկ է»[130]:

Թիֆլիսում մեծ արձագանք և տարածում է գտնում Սարգիս Կուկունյանի Հայաստան անցնելու լուրը: Ամենուրեք սկսում են դիմումներ, խնդրագրեր հասնել Կուկունյանի հասցեով. դիմողները խնդրում էին իրենց ընդգրկել խմբի մեջ: Ընդհանուր տրամադրությունն ազդում է նաև հայ մեծահարուստների վրա, որոնք իրենց դրամական աջակցությունն են ցույց տալիս Կուկունյանին: «Գրիգոր Արծրունին իր սուղ գրպանից 1000 ռուբլի տրամադրեց, Ծատուր ապէրը՝ երկու հազար ռուբլի, սրանցով զէնքեր եմ պատուիրել Գալուստին...»[131],- վերհիշում է Հովսեփ Մովսիսյանը: Մեծահարուստ Ծատուրյանի հրավերքով Կուկունյանը մեկնում է Բաքու: Այստեղ ևս

---

[128] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թ. 106:
[129] ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 49:
[130] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 82:
[131] Նույն տեղում:

նույն ոգին էր տիրում: Ուսանողության շրջանում իշխող եռուզեռն անդրադարձել էր նաև հայ վաճառականների ու պաշտոնյա խավերի վրա: Ս. Կուկունյանի կենսագիր Արամայիս Տեր-Դանիելյանի հուշերում կարդում ենք. «...Ինքը (Ս. Կուկունյանը - Կ. Ե.) գնում է Բաքու, Ծատուրեանի հրաւէրի համաձայն: Ծատուրեանը նրան ընդունում է շատ սիրով, տալիս 5000 ռուբլի չէք, Թիֆլիսում, Մանթաշեանից գանձելի, եւ խոստանում իր ամբողջ կարողութիւնը նուիրել ազգին, եթե Կուկունեանի սկսածը մի շոշափելի գործ դառնայ»[132]: Վերադառնալով Թիֆլիս՝ Ս. Կուկունյանը Ա. Մանթաշյանից ստանում է Ծատուրյանի նվիրած գումարը: Մանթաշյանն իր հերթին Կուկունյանին տալիս է 1500 ռուբլի՝ փոխարենը ձեռք բերելով նրա գրադարանը:

1890 թ. հունիսյան այդ օրերին Թիֆլիսում էր գտնվում անգլիական «Դեյլի Նյուս» թերթի թղթակից Ֆից-Ջերալդը, որը մոտ հարաբերությունների մեջ էր հայկական շրջանակների հետ: Նա եկել էր ուսումնասիրելու վերջիններիս տրամադրությունները և իր թղթակցություններով Եվրոպայի, մասնավորապես Անգլիայի ուշադրությունը հրավիրելու Արևմտյան Հայաստանի վրա[133]: Ֆից-Ջերալդի հետ Սարգիս Կուկունյանը ծանոթություն է հաստատում Գրիգոր Արծրունու միջոցով: Հավանություն տալով Կուկունյանի ծրագրերին Ֆից-Ջերալդը խորհուրդ է տալիս այդ ուղղությամբ աշխատանքներ տանել՝ իր հերթին խոստանալով հոդվածներով Հայ Դատի վրա հրավիրել Եվրոպայի ուշադրությունը:

Այսպիսով, Սարգիս Կուկունյանի սկզբնական ծրագիրը միանգամայն փոխվում է Գրիգոր Արծրունուն և Ֆից-Ջերալդին հանդիպելուց հետո: Կուկունյանի Թիֆլիս մեկնելու փաստը Ա. Գյուլխանդանյանին հիմք է տվել ենթադրելու, որ «Կ. Եզեանի խորհուրդները եւ առաջարկները շատ էլ մօտիկ չէն եղել Կուկունեանի տրամադրութիւններին: Այլապէս նա Պետերբուրգից ճանապարհ չէր ընկնի զէնքերով եւ ընկերներով եւ չէր գար Թիֆլիս, այլ Բագուի վրայով կ՚անցնէր Թէհրան»[134]:

---

[132] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 12:
[133] Տե՛ս Nalbandian Louise, նշվ. աշխ., էջ 158:
[134] Սեւեան Ռ., ՀՅԴ առաջին քայլերը եւ գործիչները, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7, էջ 112:

Գր. Արծրունին և անգլիացի թղթակիցն իրենց խորհուրդներով նպաստեցին Կուկունյանի իրական հակումների ու տրամադրությունների արտահայտմանը: Նրանց խորհուրդների ազդեցությամբ Սարգիս Կուկունյանն ապագա գործունեության համար մշակում է նոր ծրագիր, այն է՝ «մի քանի տասնեակ հոգիով անցնել Երկիր, այնտեղ իւրաքանչիւր տասնեակի տալ մի կարող խմբապետ եւ զանազան վայրեր ուղարկել, իսկ այդ տասնեակները իրենց հերթին պէտք է աճեցնէին խմբի անդամների թիւը եւ նորանոր խմբեր առաջ բերէին, մինչեւ որ մի զգալի ոյժ կը կազմէին: Այդ կազմուած բոլոր խմբերի ցանցի հանգոյցը պէտք է լինէր իր ձեռքում, որ ուղղութիւն պէտք է տար կատարուելիք շարժումին»[135]: Այսպիսով, Կուկունյանի՝ Երկիր անցնելու որոշումը դարձել էր օրվա հրամայական:

[135] Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, էջ 274:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՁԱԽՈՂՈՒՄԸ

1. Արշավանքի նախապատրաստությունը

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարում եղել են գործիչներ, որոնք ձգտում էին ազատագրական պայքարը կամ հեղափոխությունն այնպես կազմակերպել, որպեսզի հնարավորինս ավելի շատ պահպանվեր և չքայքայվեր արևմտահայ տարրը: Նրանք գործել են թե՛ հայ քաղաքական կուսակցությունների սկզբնավորումից առաջ և թե՛ նրանց գործունեության ընթացքում: Նման գործիչների ծրագրերը, ընդհանուր առմամբ, մինչև 20-րդ դարասկիզբը չեն իրականացել՝ հիմնականում այն պատճառով, որ հայ ազատագրական պայքարն ավելի շատ ունեցել է մեծ տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա սևեռելու միտում: Մինչդեռ այս գործիչները ձգտում էին ձեռք բերել արևելահայերի աջակցությունն արևմտահայ ազատագրական պայքարին, գաղտնի զինելով ժողովրդին՝ նրան նախապատրաստել ինքնապաշտպանության կամ պատեհ առիթի դեպքում՝ ընդհանուր ապստամբության, հասնել կայսրության ազգային փոքրամասնությունների, մասնավորապես քրդերի համագործակցությանը՝ ամեն կերպ ջանալով թուրքական իշխանությունների համար հայոց ջարդերի առիթներ չստեղծել[136]: 19-րդ դարի վերջի հայ ազատագրական պայքարում նման գործիչներից էր Հակոբ Սարկավագը[137]:

---

[136] Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 50:

[137] Գալֆա Հակոբ Սարկավագը (Հակոբ Տեր-Ղևոնդյան) ծնվել է Մշո դաշտի Հորըկնոց (Ուրկանոց) գյուղում, 1840 թ.: Սկզբնական կրթությունը գյուղում ստանալուց հետո Հակոբը սովորել է Ս. Կարապետի ժառանգավորաց վարժարանում, ապա Կ. Պոլսի Կալաթասարայի լիցեում, ուր ուսանել է արաբերեն և թուրքերեն լեզուները, ուսումնասիրել Ղուրանը: Տարիներ անց վերադառնում է հայրենի գյուղ, ամուսնանում և իրեն նվիրում դպրոցական գործին՝ դառնալով գյուղի ուսուցիչը: Ուսուց-

Սարգիս Կուկունյանի՝ Թիֆլիսում եղած օրերին այստեղ է հասնում նաև Հակոբ Սարկավագը: Դաշնակցական գործիչ Մարտին Շաթիրյանը նրա մասին գրում է. «Նա այն մարդկանցից մէկն էր, որոնց Խրիմեանը պարբերաբար ուղարկում էր Կովկաս՝ տեղեկութիւն տալու երկրի դրութեան մասին եւ հետաքրքրութիւն շարժելու դէպի հայ ժողովուրդի ծանր վիճակը: Մի կարճահասակ, հաստ, նոսր մօրուքով եւ անհամակրելի մարդ էր, մօտ 45 տարեկան»[138]: Թիֆլիսում Սարկավագը հանդիպում է Գրիգոր Արծրունուն, հավատացնում, թե Երկրում հազարավոր կտրիճ երիտասարդներ զինված սպասում են շարժվելու հրամանի:

չություն է անում նաև իրեն հարազատ «ժառանգավորացում»: Հովհաննես եպիսկոպոսի երաշխավորությամբ Ալաշկերտի Ս. Հովհաննավանքի վարժարանում նույնպես ուսուցչությամբ է զբաղվում, ուր ստանում է Գալֆա (վարժապետ) անունը: (Հակոբ Սարկավագի կյանքի մանրամասները տե՛ս ***Է. Կոստանդյան***, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 140-144): 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Հակոբ Սարկավագը Մշո դաշտում ռուսական կառավարությանն ուղղված հանրագիր է կազմում, բերում Կարին և հանձնում Խ. Կերեքցյանին, որն էլ այն տալիս է ռուսական հյուպատոսին: Պատերազմից հետո մեկնում է Կ. Պոլիս, հավաքում մշեցի պանդուխտներին, բողոքի գրություններ պատրաստում, որի համար բանտարկվում է և ազատվում միայն պատրիարք Ներսես Վարժապետյանի միջամտության շնորհիվ: Այնուհետև, Ներսես պատրիարքը նրան սարկավագ է ձեռնադրում և ուղարկում հայրենիք: Վերադառնալով Տարոն՝ Հակոբ Սարկավագը դարձավ հայ-քրդական մերձեցման առաջին քարոզիչներից մեկը: Նա սկսեց քրդերի և հայերի կողմից բողոքներ գրել տեղական իշխանությունների դեմ, որի համար նորից ձերբակալվեց, բայց կարողացավ ազատվել Բահրի փաշայի միջամտության շնորհիվ, որը Հակոբ Սարկավագի ծննդավայրի՝ Հորըկնոց գյուղի քուրդ բեկերի ազգականն էր (Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 50): Սարկավագը զբաղվել է ակտիվ հասարակական և հայրենանվեր գործունեությամբ: Արդեն 1880-ական թթ. սկզբից նա փորձում էր գաղափարական ու զինման աշխատանքներով կազմակերպել ժողովրդի ինքնապաշտպանությունը և ստեղծել հայ-քրդական համագործակցություն: Շեշտենք, որ նա առաջին խնդիրը երկրորդից չէր զատում՝ հասկանալով, որ քրդերը արևմտահայությանը զինելու հիմնական խոչընդոտներից էին: Ուստի շեյխի շորեր հագած անցնում է Մշո շրջանի քրդական աշիրեթների մեջ՝ իբրև հոգևոր քարոզիչ, ուր հիանալի ընդունելություն է գտնում քուրդ ժողովրդի շրջանում, կրոնական զրույցներ ու հորդորներ կարդում, ապա անվտանգ անցնում Կարին և սրտառուչ ընդունելության արժանանում թուրք հավատացյալների շրջանում: Իբրև շեյխ՝ անցնում է Օլթի, այնտեղից էլ Թիֆլիս, ուր՝ հանդիպում է «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունուն և ազգային հեղափոխական այլ գործիչների: (Տե՛ս Արամայիս Ազնաուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 140):

[138] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 62:

Հակոբ Սարկավագի և Սարգիս Կուկունյանի ծանոթությունը կայացավ Գրիգոր Արծրունու միջոցով: Վերջինս Կուկունյանին խորհուրդ է տալիս Հ. Սարկավագին ընդգրկել իր խմբում որպես Երկիրը ճանաչող ու փորձված խորհրդատուի՝ իբրև թիկնապահ՝ տալով զենք ու ձի[139]: Բնական է, որ երիտասարդ հայրենասերի հոգին պետք է ալեկոծվեր, երբ Սարկավագը Երկրում գոյություն ունեցող ուժերի մասին էր «բարբառում» նրան: Ս. Կուկունյանը, անտեղյակ լինելով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, Երկիրը ճանաչող փորձված խորհրդատուի ու ուղեկցողի կարիք էր զգում, և Սարկավագը նրա համար հայտնություն էր, հատկապես, որ Գ. Արծրունին էր ներկայացրել նրան: Մանավանդ, «Հակոբ Գալֆան (Հակոբ Սարկավագ - Կ. Ե.) կը փափագեր երթալ Պօլիս ու Եվրոպա, եւ փրոփականտ մղել ի նպաստ քյուրտերուն մոտենալու, անոնց միանալու, եւ անհրաժեշտ զէնք հայթայթելու՝ անոնց հետ համագործակցութիւն յառաջ բերելով միացեալ ճակատ ապահովելու, որուն շնորհիվ հնարավորութիւն պիտի ստեղծվեր դիմադրել թիւրքին եւ ավելի յաջող ու ապահով պայմաններ ստեղծել»[140],- գրում են Սարգիս և Միսակ Բդեյան եղբայրները:

Արդյունքը լինում է այն, որ Կուկունյանը սկսում է աշխատել Սարկավագի հետ: Սակայն, վերջինս դեմ է լինում Սարգիս Կուկունյանի ծրագրած արշավանքին՝ գտնելով, որ «...առանց նախապատրաստական աշխատանքների անհնար է բազմամարդ խմբով Թուրքիա անցնել և ակնկալված օգնությունը հասցնել Թուրքիո մեջ ապրող մեր եղբայրներին: Նախապես,- պնդում է Հակոբը,- պետք է կազմակերպել խմբի ճանապարհի վրա ընկնող հայ գյուղերը և հետո միայն մտածել խմբի արշավանքի մասին: Խումբը խոմ թռչուն չէ, որ սահմանը անցնի իր ուզած տեղից»[141]: Սարկավագի հարցադրումները չէին կարող Կուկունյանին հետ կանգնեցնել արևմտահայ եղբայրներին օգնելու ցանկությունից, որը, սկզբում հանդես գալով խիստ աղոտ ձևով, աստիճանաբար որոշակիացել ու ձեռք էր բերել հստակ կերպարանք:

---

[139] Տե՛ս Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7, էջ 113:
[140] Բդէեան Ս. եւ Մ., նշվ.աշխ., էջ 76:
[141] Տե՛ս Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., էջ 23-24:

Ս. Ստեփանյանը հիշատակում է մանրամասներ, որոնք հետաքրքրական ու կարևոր են Կուկունյան-Սարկավագ համագործակցությունը դիտարկելու տեսանկյունից, քանի որ սկզբնական շրջանում նրանցից յուրաքանչյուրը գիտակցում էր, որ գործակցությունը փոխադարձաբար ցանկալի և օգտակար էր: «Մի օր, Բաշինջաղեանի հարսանիքին օրը, Մուղնու եկեղեցու բակում, պատահեցի Կուկունեանին,- հիշում է Ս. Ստեփանյանը,- Երկուսս էլ Գէորգեան ճեմարանցի էինք ու հին ընկերներ: Նա ուսանող էր Պետերբուրգում եւ նոր էր եկել Թիֆլիս: Մեր մէջ տեղի ունեցած խօսակցութեան միջոցին ես յայտնեցի, թէ պիտի գնամ Հայաստան եւ պատասխանի եմ սպասում Մուրատից[142]: Կուկունեանը ասաց, թէ ինքն էլ նոյն նպատակն ունի, եւ առաջարկեց միասին գնալ: Մենք համաձայնուեցինք: Խնդիրը հասաւ այնտեղ, որ իմ մօտի զէնքերը Կուկունեանը առաւ: Բաշինջաղեանը հէնց ամուսնութեան օրը գնաց Հանքային ջրեր (Հյուսիսային Կովկասում), իսկ իր բնակարանը դրեց Կուկունեանի տրամադրութեան տակ:

Նոյն օրը գիշերը ես գնացի Կուկունեանի մօտ եւ ծանօթացայ Մուշից եկած Յակոբ Սարկաւագի հետ...

Կուկունեանի մօտ տեսայ եւ Դաղէթցի Աբրահամ Տէր-Անդրէասեանին: Սա մի անտառապահ էր սպաննել իրենց գիւղում եւ Ղաչաղ էր դարձել,- շարունակում է Ս. Ստեփանյանը,- Այնտեղ էին եւ Տէր Գարեգինը, Ղազախեցի Նիկոլը եւ Կուկունեանի հետ Պետերբուրգից եկած Ռուբէնն ու Կոստին: Այդտեղ ինձ համար բացուեց մեր ընելիքը: Մենք պէտք է գնայինք Արեւմտեան Հայաստան, խմբեր կազմէինք, ժողովրդին զինէինք եւ երբ պատրաստ լինէինք, ապստամբէինք Սասունում, Մուշում եւ Վասպուրականում: Մեր պահանջը պէտք է լինէր Բեռլինի 61-րդ յօդուածի գործադրութիւնը...»[143]:

Արևմտահայ եղբայրներին օսմանյան շղթաներից ազատագրելու պայքարին նվիրաբերվելու ձգտումներով խանդավառված մեծ թվով հայորդիներ զինվորագրվում են արշավախմբին: Բնական է, որ Ս. Կուկունյանի խանդավառությունը պետք է մեծ լիներ: Սկսում են

---

[142] Պատասխանը պետք է գար Մուրադ անունով մեկից, որ զանազան տեղերից 15 հոգի հավաքած, գնացել էր Իգդիր:

[143] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 13:

զինվորագրված երիտասարդությանը ոչ մեծ խմբերի բաժանել և գաղտնի ուղարկել սահմանամերձ գավառները:

Արդեն 1890 թ. հունիսի կեսերին Ս. Կուկունյանը Թիֆլիսից դեպի սահմանագլուխ է ճանապարհում 50-60 հրացան՝ սայլերը բեռնելով յուրաքանչյուրը մեկ-երկու տասնյակ հազար փամփուշտներով: Հսկողության համար կարգվում են երկու ուղեկցողներ, որոնցից մեկն իր հետ վերցրել էր լուսանկարչական մի գործիք՝ հնարավորության դեպքում լուսանկարելու համար: Դա արվելու էր, որպեսզի կասկած չհարուցվեր, թե շարժվում են դեպի սահմանամերձ շրջաններ: Ինքը՝ Կուկունյանը, զբաղված էր կազմակերպչական աշխատանքներով[144]:

Ձենքերը ճանապարհելուց հետո թողնելով Թիֆլիսը՝ Կուկունյանն անցնում է Լոռի, Ղազախ, Բորչալու, ապա Շիրակ՝ Ալեքսանդրապոլ և Կարս: Նա որոշել էր այստեղ կենտրոնացնել կամավորներին՝ սահմանն անցնելու համար: Ալեքսանդրապոլի գավառում Կուկունյանի խմբին են զինվորագրվում Սարդար Ավետիսյանը, ղարաբաղցի Աբրահամ Աղամալյանը, բուլանղցի Նատո Շահնազարյանը, վանեցի Վարդանը, ախալցխացի Գրիգոր էքմեճյանը, ղարաբաղցի Սահակ Մինասյանը, կարսեցի դարբին Ստեփանը, մշեցի Ռուբեն Դերձակյանը (Փայլակ), Եփրեմը, Հովսեփը, ղարաբաղցի Զաքարը, ղազախեցի Ռուբեն Հովհաննիսյանը, տրապիզոնցի Դավիթ Չոլախյանը, պոլսեցի Պետրոս Զաքարյանը և այլք: Ինչպես վկայում է Մ. Շաթիրյանը. «Ալէքսանդրապոլցի Սարդարը, որ փախած էր Սիբիրից ամենքից փորձուածն էր եւ համակրելին, մօտ 40 տարեկան: Կուկունեանը նրան մեծ արժեք էր տալիս եւ նրա խորհրդով էր շարժվում: Տեղական կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ նա փախել էր Սիբիրից, բայց չէր համարձակում մօտենալ...»[145]:

Երկու-երեք ամիս Ս. Կուկունյանը պտտվում է Ալեքսանդրապոլի գավառում և Կարսի մարզում՝ խումբը համալրելով ու զինելով. «Երկու ամսուան ընթացքին կրցան խումբը զինել բերդանի, պիբոլի, վինչեսթր և սնեյդըր ձեւի արագաձիգ հրացաններով: Հրացանները,

---

[144] Տե՛ս նույն տեղում, էջ 12-13: Տե՛ս նաև՝ Սարգիս Կուկունեանի արշաւանքը, գրեց՝ Վ. Վալադեան, «Հայրենիք» ամսագիր, 1957, N 10, էջ 23:

[145] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 38:

փամփուշտները և այլ ռազմական ուրիշ առարկաներ, կրցած էին սեփական միջոցներով ապահովել, մասամբ ուրիշներէն նուէր ստացած դրամներով գնել: Փամփուշտները կը գտնուէին Կարսի շրջանը, Սողանլուղի գաւառի (պետք է լինի տեղամասի – Կ. Ե.) Սարըղամիշ և Ալեքսանդրապոլ քաղաքը»[146],- հետագայում պատմում է արշավանքի մասնակից Արամայիս Ազնավուրյանը:

Հայրենասիրությունը համակել էր բոլորին: Ծեր ու երիտասարդ, պատանի ու օրիորդ խանդավառված էին: Ալեքսանդրապոլի և Կարսի շրջանների գյուղերում Կուկունյանն ու իր խմբի անդամները մեծարանքի էին արժանանում հայ բնակչության կողմից: Ժողովուրդը ոչինչ չէր խնայում՝ կազմակերպվում էին դրամի, զենքի, հագուստի նվիրատվություններ, կամավորների հյուրասիրություններ: Կուկունյանի անձի շուրջ առասպելներ ու երգեր էին հյուսվում: «Ամէնքը համոզուած էին,- պատմում է խմբի անդամներից Ստեփան Ստեփանյանը,- որ Հայաստանը շատ շուտով պիտի փրկվի, եւ բոլոր դասակարգերը միացած էին «սուրբ գործի» շուրջը: Գիւղացիները մեծ անպատուութիւն էին համարում, երբ մենք դրամ էինք առաջարկում որեւէ բանի համար: Բնորոշ է, որ կանայք աւելի ոգևորված էին, աւելի ջերմ մասնակցութիւն էին ցոյց տալիս, քան տղամարդիկ: Ի՜նչ հրաշալի տեսարանների ենք ներկայ եղել, ի՜նչ գուրգուրանք, խանդակուութ սէր ու յարգանք տեսել ամէն կողմ...»[147]:

Շատերն էին ուզում խմբի մեջ մտնել և այս կամ այն ձևով մասնակից լինել արշավանքին: Երիտասարդությունը ոգևորված՝ ամեն կողմից տասնյակներով գալիս խնդրում, աղերսում էին Կուկունյանին՝ իրենց ևս ընդունելու խմբի մէջ: Կուկունյանը նպատակ չուներ, այն ժամանակ նույնիսկ անհնար էր մի քանի հարյուր հոգուց բաղկացած խմբով անցնել սահմանը. նրա խմբի անդամների թիվը հարյուրների կիասներ, եթե նա բոլոր դիմողներին ընդուներ խմբի մեջ: Այդ պատճառով նա մերժում էր, թեև չկարողացավ բոլորովին զանց առնել այդ աղերսանքները, մանավանդ, երբ շատերը, նկատելով Կուկունյանի համառությունը, ուղղակի պահանջում էին հանուն

---

[146] «Յեղափոխական ալպոմ», Ազատագրական պայքարի յուշամատեան, Պէյրութ, 1962, N 2, էջ 39:
[147] Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), էջ 7:

«գործի» իրենց էլ ընդունել: Սրանք երիտասարդներ էին, որ պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերելու Հայրենիքի ազատության համար: Իբրև ասվածի ապացույց՝ բերենք Ս. Կուկունյանի զինակից Արամայիս Ազնավուրյանի հետևյալ տողերը. «Նրան (արշավանքին – Կ. Ե.) մասնակցելու էին շտապել սիրայօժար ու անտրտունջ Տաճկահայաստանի, Ռուսահայաստանի ու Պարսկահայութեան բոլոր խոնարհ խաւերի զաւակները: Նրանց ի մի հաւաքողը եւ կապողը ժամանակաշրջանի արթնացած բարձր հայրենասիրութիւնն էր, որ վեպերի ու երազների պէս գերել էր այդ գեղջուկ, համեստ հայրենասէրներին ու մղում էր հայ ազատագրության փշոտ, բայց խորապէս նուիրական ճանապարհը,- ազնիւ, առաքինի, վսեմ ճանապարհ, որի վրայ ցցուած անյաղթահարելի դժուարութիւնները ոչ մենք էինք գիտակցում եւ ոչ էլ, թող ներուի ինձ ասել, մեր խմբապետ Կուկունեանը»[148]:

Խմբի անդամներն ամենևին չէին պատկերացնում, թէ ի՞նչ պետք է անեն, և ի՞նչ է սպասում իրենց սահմանից այն կողմ: Նրանք նաև չէին պատկերացնում գալիք բարդությունները: «...Մի ներքին բուռն հրճուանքով բռնուած՝ հոգւով ու մտքով թռչում էինք մեր տառապած եղբայրների՝ տաճկահայերի նուիրական գիւղերը, դաշտերը, լեռները: Կարծես առաջին անգամ դարերի քնից արթնացած հայ ժողովուրդը իր մարտական հզոր շունչն ու կորովը արտահայտելու ցանկութիւնը մեզ էր վստահել, եւ մենք բնազդօրէն զգում էինք, թէ իրապէս ինչ նուիրական բեռ ենք շալակել մեր նիհար, անկազմակերպ ուսերին»[149],- կարդում ենք Ա. Ազնավուրյանի հուշագրությունում:

Իր հերթին Ստեփան Ստեփանյանն այդ օրերի մասին գրում է. «Գում-Գափուի դէպքից յետոյ, Բաթումի վրայով, եկել էին 15-20 տղաներ եւս, լազի հագուստներով եւ կազմել էին 40 հոգանոց մի խումբ: Կուկունեանը գնաց նրանց տեսնելու Դոլբանտլի գիւղը. նրանք ցանկութիւն էին յայտնել միանալու մեզ: Եվ որովհետև նրանք անզեն էին, Կուկունեանը կարգադրեց, որ ես [Բալաջան] Թիֆլիս երթամ, հրացաններ բերեմ նրանց համար: Ես Թիֆլիս գնա-

[148] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր,1937, N 4, էջ 149:
[149] Նույն տեղում:

ցի փոստի սայլակով»[150]: Կարսի Դոլբանդլու գյուղ փախստական տղաները կարող էին հասնել երեք-չորս շաբաթ անց: Այն ժամանակ դեռևս չկար Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին, և հաղորդակցությունը իրականացվում էր խճուղիներով երթևեկող փոստային սայլերով: Հետևաբար, Բալաջանի ճամփորդությունը մինչև Թիֆլիս առնվազն երկու-երեք օր պիտի տևեր, և զինամթերքը կարող էր տեղ հասնել ամենաուշը սեպտեմբերի կեսերին: Ստ. Ստեփանյանը, շարունակելով իր հուշերը, գրում է հետևյալը. «Թիֆլիսում ես տեսայ Կ. Խատիսեանին Սեւ Տիգրանի հետ: Սրանք էլ սարսափում էին այդպիսի մեծ խմբով «ներս խուժելու» մտքից: Ասացին, դա անմտութիւն է. դա կը նշանակէ գործին ծանօթ չլինել եւ Տաճկաստանում կոտորած առաջ բերել... Ասացին, որ Իշխանը եւ ընկերները վերադարձել են Երկրից եւ նոյնն են պնդում. Երկրում ոչ մի պատրաստութիւն չկայ»[151]:

Խմբի կազմը խայտաբղետ էր՝ ուսանողական նստարանը թողած երիտասարդներ, հացթուխներ, գործակատարներ, հողագործներ, արհեստավորներ, որոնց տարիքը չէր հասնում 30-ի: Մեծ մասը 20-25 տարեկան երիտասարդներ էին, որոնց ճնշող մեծամասնությունն առաջին անգամ էր շփվում զենքի հետ, և ոչ բոլորն էին լիովին գիտակցում այն բարձր նպատակները, որոնց կենսագործման համար համախմբվել էին «Սուրբ գործի» շուրջը: Բայց պարզ էր մի բան. նրանց բոլորին համախմբողը հայրենասիրության, արիության, քաջության և արևմտահայ եղբայրների դարավոր վրեժն առնելու նվիրական զգացումներն էին, որ համակել էին բոլորին, ինչը լռելյայն գիտակցում, զգում ու հասկանում էին նաև խմբի հետ հարաբերվող պարզ շինականները: «Մեզնից կարող եմ ասել, թէ երեք մասը տղերք [անց] փափուկ ապրած տղերք են. ո՛չ բեռ շալակել տեսած են, ո՛չ անօթութիւն, ո՛չ այսպէս երկար ճանապարհ քալած ունէին: Բայց այն սէրը, որ տպաւորուած էր անոնց սրտին մէջ, ոչ թէ այդ նեղութիւններ՝ այլ ամենայն սիրով մեռնիլ ազգի ազատութեան հա-

[150] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 17:
[151] Նույն տեղում:

մար»[152],- հիշում է արշավանքի մասնակից Մեսրոպ Վարդանյանը:

Տարվող աշխատանքների առիթով Կարսում և Ալեքսանդրապոլում հայրենասիրական ցույցեր են կազմակերպվում: Կուկունյանը և նրա խմբի տղաները ջերմ ընդունելության են արժանանում: «Եւ Շիրակն անտարբեր չմնաց: Քիչ է ասել «անտարբեր չմնաց»... դա պարզ չի որոշում, դա չի արտայայտում այն ոգեւորութիւնը, այն կենդանի մասնակցութիւնը, որ ունեցաւ այդ երկրի ժողովուրդը 1890 թ. անցքերի ժամանակ: Այն դէպքերը, այն ցոյցերը, այն վեհանձն անձնուրաց գործերը, որոնց վկայ էին լինում Կուկունեանն և իր խումբը, մի խօսուն ապացոյցն էին ժողովրդի հասունութեան: Դա մի գեղեցիկ տեսարան էր, մի աննման, աննկարագրելի պատկեր»[153],- վկայակոչում է Ռոստոմը:

Կուկունյանը դարձել էր օրվա հերոսը: Նրան նայում էին իբրև ժողովրդի փրկչի և ամեն տեղ դիմավորում ոգևորությամբ, համակրանքով, նվերներով, աղ ու հացով: Ընդհանուր ոգևորությունն ու խանդավառությունը համակել էր նաև կանանց, մայրերին և օրիորդներին, որոնք Ս. Կուկունյանի խմբին զինվորագրվելու ցանկություն էին հայտնում: Եղել էին դեպքեր, երբ մայրերն իրենց որդիներին օրհնանքով հանձնել էին Կուկունյանին: Գյուղերից մեկում, երբ խումբը պատրաստվում էր ճանապարհվելու, ժողովուրդը կազմակերպում է հանդիսավոր հրաժեշտ: Քահանան աղոթում է, ներկաները ողջագուրվում են խմբի անդամների հետ և հաջողություն մաղթում: Արշավանքի մասնակից Ասքանազն իր հուշերում, որոնք գրի է առել Ս.Կուկունյանի զինակից Ա. Փիլիպոսյանը, այսպես է նկարագրում այդ հուզիչ պահը. «Մի խումբ կանայք մատուցին խմբին, հանձինս մէր Ռուբենի մի զմայլելի ասեղնագործ դրօշակ, որի վրայ, 5 աստղերի մէջտեղը, խոշոր տառերով գրուած էր «61» Բերլինի զահրումար յօդուածը- եւ «Մ. Հ.» (Մայր Հայաստան), իսկ միւս երեսին գրուած էր այն ժամանակուան սիրելի նշանախօսքը՝ «վրէժ», «վրէժ», եւ մի մեծ գանկ: Մի խումբ էլ մատղաշ օրիորդներ մետաքսից թելերով, դարձեալ ասեղնագործ դրօշակ էին նուիրել, թեև մի

---

[152] Մեսրոպ Վարդանեանի յուշերը Կուկունեանի արշաւանքի մասին, տե՛ս «Դրօշակ», 1930, N 6-7, էջ 170:
[153] Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), էջ 3:

քիչ փոքր, սակայն ավելի գրավիչ և խորհրդավոր՝ ձիու վերա նըստած ինքը՝ Կուկունեանցը սուրը ձեռքին պարզած արշավում է դեպ Երկիր»[154]: Նույն աղբյուրը նաև տեղեկացնում է, որ Կարսի օրիորդները Կուկունյանի համար պատրաստել էին ոսկեթել ուսադիրներ, որոնց վրա պատկերված էին Մ. Հ.[155] տառերը:

Արամայիս Ազնավուրյանի վկայությամբ՝ գալով Ալեքսանդրապոլ՝ Կուկունյանը գիշերում է Ալմոյանի իջևանատանը: Առավոտյան նրան են ներկայանում Արամայիս Ազնավուրյանը և երկու Արշակները՝ Արշակ Գաֆաֆյանը և ղարաբաղցի Արշակը: Լինելով Հունոյի խմբի զինվորներ՝ նրանք արդեն որոշ ռազմական փորձառություն էին ձեռք բերել. կռվել էին Թեքեբինայի և Մատռաբերդի շրջաններում: «Մատռաբերդի «արշաւանք» կոչուած մարտական ձեռնարկը շատ տխուր վախճան էր ունեցել,- գրում է Վ. Վալադյանը,- Կաղզվանից 1890-ի ապրիլի երկրորդ կէսին, պատրաստութիւններով ու թշնամու դէմ կռուելու ծարաւով ճանապարհուած խումբը վերադարձել էր մի ամիս յետոյ, տարտղնուած ու քայքայուած: Ցրիւ էին եկել խմբի տղաները. եւ գլուխն առնում, հեռանում է Կաղզվանից նաեւ խմբապետը՝ Յարութիւն աղան:

Արշակը՝ էրզրումցին (Արշակ Գաֆաֆյան - Կ. Ե.), այլեւս չերթալով յետ դէպի Կաղզվան, լքում է իր սրճարանը, եւ Ղարաբաղցի Արշակի ու Արամայիս Ազնաւուրեանի հետ միասին, սկսում է թափառել գիւղից գիւղ, խուսափելու համար ոստիկանական հետապնդումներից: Հետապնդողներն այս անգամ ռուսներն էին: Ռուս իշխանութիւնը փնտրտուքի էր ելել, որպէսզի երեւան հանուեն ու ձերբակալուեն այն հայ յեղափոխականները, որոնք Մատռաբերդի շրջանում եւ ռուսապատկան հողի վրայ սպանել էին ռուսահպատակ թուրքեր»[156]:

---

[154] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 27, թ. 24:

[155] «Մ. Հ.» տառերին տրվել են տարբեր իմաստներ: Արշավանքի մասնակից Ստեփան Ստեփանյանի (Բալաջան) կարծիքով՝ դրանք նշանակել են «Մայր Հայաստան», ըստ Մեսրոպ Վարդանյանի՝ «Միութիւն Հայաստանի», ըստ ուրիշների՝ «Միութիւն հայրենասիրաց»: Դատական ամբաստանագրում զույգ գլխատառերը բացատրվել են որպես «Միացյալ Հայաստան»: Այս վերջին բացատրությունը համապատասխանում էր ռուսական կառավարության հակահայ քաղաքական որակումներին:

[156] Վալադեան Վ., Քեռին, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1959, N 12, էջ 52:

Իրենց այդ թափառումների միջոցին տղաները լուր են ստանում, որ Կաղզվանի գավառին սահմանակից Կարսի գավառի հայաբնակ գյուղերում (Քաղըքլար, Արմուտլի, Շադևան և Չուրուկ) կազմվում է հեղափոխականների մի նոր խումբ՝ դեպի Երկիր անցնելու նպատակով: Երեքով շտապում են գնալ և ներկայանալ Սարգիս Կուկունյանին, որը խմբի ղեկավարն ու կազմակերպիչն էր մշեցի Հակոբ Սարկավագի հետ միասին: Զրույցի ժամանակ Ա. Ազնավուրյանը Ս. Կուկունյանին խորհուրդ է տալիս չշտապել, յուրաքանչյուր քայլ կշռադատել, չխաղալ մի ամբողջ ժողովուրդի բախտի հետ և զգուշությամբ մոտենալ Սուրբ Գործին[157]: Մանրամասն նկարագրելով Հունոյի մղած կռիվները՝ Ա. Ազնավուրյանը Ս. Կուկունյանին, որպես զգուշացում, տեղեկացնում է. «Ալաշկերտի գիծը մեր վարած կռիւների եւ ունեցած ընդհարումների պատճառով արդէն վտանգված է, եւ, եթէ Կուկունյանը Տաճկահայաստան պիտի անցնի իր խմբով, ապա պէտք է ընտրե ուրիշ ճանապարհ»[158]:

Չնայած ստացած զգուշացմանը՝ Ս. Կուկունյանը մնում է անդրդվելի: Մերժելով տղաների առաջարկը՝ նա հայտնում է իր որոշումը՝ Երկիր անցնել Ալաշկերտի վրայով: Այդ մասին Ա. Ազնավուրյանը գրում է. «...Նա առարկեց մեզ, որ մենք տակտով չենք շարժուել, զինուորական կարգապահութեամբ չենք ընթացել, որ ինքը վճռել է, անպայման Ալաշկերտով անցնել Երկիր, եւ որ մենք պիտի տեսնենք ու համոզուենք, թէ նա ինչպէ՞ս, աննկատելիօրէն պիտի անցնի Ալաշկերտ: Վերջը յայտնեց, որ մեզ երեքիս էլ ընդունում է իր խմբի մէջ, մանաւանդ ինձ, որ ալաշկերտցի էի եւ տեղի պայմաններին ծանօթ լինելուս համար շատ օգտակար պիտի լինէի իրեն ու իր խմբին»[159]:

Դրանով հանդերձ Կուկունյանն երեքին էլ կարգում է որպես հետևակ զինվորներ, ինչը վշտացնում է Արամայիս Ազնավուրյանին և ղարաբաղցի Արշակին: Մինչդեռ էրզրումցի Արշակի համար միևնույնն էր՝ ձիավոր թե հետևակ լինել խմբի մեջ: Նրա խառնվածքին և բնածին համեստությանն անհարիր ու խորթ էր տրտնջալը:

---

[157] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր,1937, N 4, էջ 147:
[158] Նույն տեղում:
[159] Նույն տեղում:

«Ինձ, էրզրումցի Արշակին եւ Ղարաբաղցի Արշակին, որ հետեւակներ էինք, Կուկունեանի խմբում բանի տեղ չէին դնում և մենք էլ մեզ պահում էինք լուռ եւ առհասարակ զգուշանում էինք արտայայտուել Կուկունեանի մօտ ընկերների, մանաւանդ ծիաւոր խմբի մոտ»[160],- ամփոփում է այդ խնդիրն Արամայիս Ազնավուրյանը:

Ս. Կուկունյանը խմբում ընդգրկված վերոհիշյալ տղաներից յուրաքանչյուրին տրամադրում է 20-ական ռուբլի վարձատրություն՝ պատվիրելով սպասել Ալեքսանդրապոլում և 3 օրից ներկայանալ իրեն: Խոստման համաձայն՝ տղաները նշված օրը ներկայանում են նրան: «Աբրահամը մեր խմբի վրայ երկու հոգի դաղէթցի էլ էր աւելացրել՝ Գէորգին եւ Ալէքին,- գրում է Ա. Ազնավուրյանը,- Կուկունեանն ու Սարկաւագը միասին էին: Վերջինս առաջարկեց մեկնել եւ Ջաջուռում (Ալեքսանդրապոլի մօտ) սպասել, իրենք էլ երեք օրից պիտի հասնէին մեզ: Կուկունեանը դաղէթցի Աբրահամին յանձնեց մեր տասնեւհինգ օրուան ծախքի դրամը, հանձնարարեց անցնենք Աղստաֆա, այնտեղից էլ մեկնենք Ջաջուռ եւ սպասենք իրենց»[161]:

Տղաները 15 օր տաղտկալի սպասողական դրություն ապրելուց հետո խմբով շարժվում են Ալեքսանդրապոլ, բայց քաղաք չեն մտնում, այլ մտադրվում են գնալ Բաշքադըքլար, ապա խմբով այցելել Անի[162]: Դեպի Անի ուղևորությունն իրականացնելուց հետո խումբը ճանապարհվում է Բաշքադըքլար, այնուհետև Սարիղամիշ: Կուկունյանի կարգադրությամբ խումբը շարժվում է դեպի Կարս: Նոր կարգադրությամբ Կարսում հավաքված զինվորները փոխադրվում են մոտակա Բերնա գյուղը: Այստեղ խմբի պահելը գաղտնապահության տեսակետից անհարմար համարելով՝ տղաներին փոխադրում են Բերնայի արևելյան կողմում գտնվող ժայռի այրերը: Բերնայում խումբը մնում է մոտ մեկ շաբաթ, որից հետո ճանապարհվում 2 ուղղություններով: «Ես ու մի շարք զինուորներ 15-20 հոգի անցանք Նորվերան եւ Շադեւան. միւս մասը Սարիղամիշ-Կարակուրդ ճանապարհով անցան ռուսական Բասեն եւ հաստատվեցին Չոլախլու հայ գյուղը,- հիշում է Ա. Ազնավուրյանը- Ես ու ինձ հետ եղած զինուորնե-

[160] Նույն տեղում, N 5, էջ 135:
[161] Նույն տեղում, N 4, էջ 147:
[162] Տե՛ս նույն տեղում:

ը Շադեւան գիւղից անցանք Քեաքլիկ կիրճը, որտեղից մեկնեցինք ու միացանք խմբի միւս մասին Չոլախլու գիւղում: Մեր զէնքերը հետներս չվերցրինք, (փոխադրեցին Տէր Կիւրեղ եւ իր երկու որդիները), որովհետեւ Չոլախլու (Չյուրուկ) հասնելու համար պիտի անցնէինք Կարակուրդով, ուր ռուս սահմանապահ զօրքեր կային եւ հսկում ու հետեւում էին մաքսանենգներին»[163]:

Մի քանի օր անց Ստեփան Ստեփանյանը լուր է տանում խմբի՝ Կարսում ու Սարիղամիշում հավաքված անդամներին, որ գնան Շադևան և այնտեղ սպասեն, քանի որ զենքերը ֆուրգոններով (սայլեր) հասել են Սարիղամիշ: Սարիղամիշից Աբրահամը Ստեփանի հսկողությամբ զենքերը ձիով փոխադրում է Չուրուկ և Եփրեմի[164] ու Հովսեփ Մովսիսյանի հետ դրանք թաղում եկեղեցու խորանում՝ ծածկելով դարմանով, որ չժանգոտի:

Հետագա դեպքերի մասին ուշագրավ են Հովսեփ Մովսիսյանի հուշերը: «Աբրահամն իր հրացանը վերցրեց եւ իր մօտ էր պահում: Հրացանների փոխադրութեանն օգնում էր արմտլեցի Մարգարը՝ եզան սայլով»,- գրում է նա: Չուրուկ էին հասել Կոստանդին Լիսիցյանը, Ռուբենը և տասը ախալցխացիներ: «Բոլորս մէկտեղ մօտ երեսուն հոգի կայինք,-շարունակում է Հովսեփ Մովսիսյանը: Այդ օրերը լուր հասաւ, որ հայերը Մատուռի բերդում քրտերից պաշարուել են, երեք օրուան կռուից յետոյ հայերը փախել են, երեք հոգի մեռել են: Մեզ լուր հասաւ Բաշկեօյից, որ Չուրուկ զօրք է գալու խուզարկութեան, ուստի մենք լաւ կանենք լեռներում թագնուենք:

Ես ու Եփրեմը բարւոք դատեցինք անմիջապէս գիւղից հեռանալ. մեզ հետեւեցին 18 հոգի: Աբրահամը իր երկու դաղէթցիներով եւ ախալցխացիները չեկան:

Մենք գնացինք Ղարափունղար՝ ուսուցիչ Գեղամենց տունը: Առաւօտն էլ սարում թագնուեցինք: Ես գիւղացու հագուստ հագայ եւ

---

[163] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր,1937, N 4, էջ 147:

[164] Հունոյի կռվին մասնակցած և արդեն «տասնապետի» կոչում ստացած Եփրեմը Երկիր մեկնելու ցանկությամբ նույնպես անդամագրվել էր Կուկունյանի արշավախմբին: Եփրեմը (Եփրեմ Դավթյան) ծնվել է 1868 թվականին Գանձակ գավառի Բարսում գյուղում: Բավարարվելով տարրական կրթությամբ՝ հեղափոխական տրամադրություններով խանդավառ 17-ամյա Եփրեմը թողնում է Գանձակը և Նիկոլ Տեր-Արսենյանի, Գրիգորի ընկերակցությամբ ուղևորվում է Թիֆլիս՝ անդամագրվելու Երկիր մեկնող մարտական խմբին:

ծպտուելով՝ գնացի Արմտլու, մի լուր իմանալու: Գիւղ հասնելուն պէս հանդիպեցի մօտ յիսուն ծիաւոր սահմանապահների, որ դէպի Չուրուկ էին արշաւում սրընթաց: Է՛լ չսպասեցի ելքին, վերադարձայ տղաների մօտ, պատմեցի տեսածս»[165]:

Երբ ձիավոր սահմանապահները արշավում են Չուրուկ, նրանց տեղ հասնելուն պես Աբրահամը վերցնում է հրացանը, որ լեռը բարձրանա: Ստրաժնիկները պահանջում են անձնատուր լինել, բայց Աբրահամը չի զիջում: Ձորքը համազարկ է տալիս: Մի գնդակ Աբրահամի փորին է դիպչում և զրկում նրան կյանքից: «Ստրաժնիկները տղերքին բռնում, տանում են Բաշքեայ: Աբրահամի դիակը նետում են մի սայլի մէջ: ...Աբրահամը տասնութ տարեկան էր...»[166],- գրում է Հ. Մովսիսյանը:

Այս դեպքից հետո որոշվում է, որ Եփրեմը, Վիրաբը, Հովսեփ Մովսիսյանը (Արգամ Պետրոսյանը[167]) գնան Սարիղամիշ և շտապեցնեն Ս. Կուկունյանի ու Սարկավագի գալը: «Երեք հոգով Սարիղամիշ հասանք,- հիշում է Հ. Մովսիսյանը,- Կուկունեանն իր խմբով իջել էր Ավետիս Իսահակեանցի հիւրանոցը: Մեզ սիրալիր հանդիպեց Աբրահամը»[168]: Այստեղ արդեն Հակոբ Սարկավագը չկար և նրա փոխարեն Կուկունյանի հետ էր աքսորավայրից փախած Սարդար Ավետիսյանը: Նրանք տղաների հետ միասին ճանապարհվում են Ալեքսանդրապոլ՝ խմբի հավաքագրման և մյուս կազմակերպչական աշխատանքներն ավարտելու:

Չուրուկում տեղի է ունենում զենքերի բաժանումը: «Անմիջապէս գործի անցանք: Եփրեմը, Վիրապը, Աբրահամն ու ես սկսեցինք զէնքերը հանել ու մաքրել: Մեր խումբը շատ խայտաբղէտ էր. ոմանք լազի հագուստներ ունէին, ոմանք չէրքէզի եւ ոմանք քրտի», - հիշում

---

[165] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 84-85:
[166] Նույն տեղում, էջ 85:
[167] Արգամ Պետրոսյանը դավալվեցի էր, ավարտել էր Ներսիսյան դպրոցը: Նա իր պարսկական անցագիրը տվել էր Հովսեփ Մովսիսյանին ու հեռացել: Այդ օրվանից իբրև Արգամ Պետրոսյան հանդես էր գալիս Հովսեփ Մովսիսյանը:
[168] Նույն տեղում:

է Հովսեփ Մովսիսյանը[169]: Զենքի բաժանման աշխատանքը կատարելու համար Սարգիս Կուկունյանը մի հանձնախումբ էր ստեղծել, որի ղեկավարներն էին Ղոլղաթցի Սարիատը (Ալեքսանդրապոլի շրջանից) և Բաշքադըքլարցի Մուկուչը: Խմբի բոլոր անդամները հրացան ստացան: Փամփուշտներն ու փամփշտակալները բաժանվեցին խմբի անդամներին: Զինվորներից շատերը փամփշտակալներ չստացան... Խմբի զինվորներից շատերը ծանոթ չէին զենքին և նրա գործածելու եղանակին: «...Հրացանների մի մասն էլ փչացած էր. փամփուշտները կրակելիս ուռացնում էր, որի պատճառով գիլզիները փողերից դուրս չէին գալիս»[170],- պատմում է Արամայիս Ազնավուրյանը:

1890 թ. օգոստոսյան օրերին, երբ Կուկունյանի ձեռնարկը եռուն ընթացքի մեջ էր, արդեն որոշված էր արշավանքի ծրագիրը, կազմակերպչական վերջին աշխատանքներն էին տարվում, և ուժերը կենտրոնացված էին սահմանագլխին, նույն օրերին Թիֆլիսում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ազատագրումը հեղափոխական կռվի ճանապարհով լուծելու համար ձևավորվեց ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը[171]: Ա. Գյուլխանդանյանն արձանագրում է հետևյալը. «Կուկունեանը Թիֆլիս էր, երբ սկսուեցին Դաշնակցութեան այսպէս կոչուած նախապատրաստական ժողովները եւ հաւանօրէն, նոր տեղեակ էր այդ ժողովների անցուդարձերին, որովհետեւ Պետերբուրգի իր ընկերներից Կ. Խատիսեանը մասնակցում էր այդ ժողովներին եւ կարեւոր գործօն դէմքերից էր»[172]:

Նշենք, որ Կուկունյանի արշավանքի նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին հուլիսին՝ Գում-Գափուի ցույցի լուրն ստանալուց հետո, ՀՅԴ կազմավորումից առաջ և նրանից բոլորովին անկախ: Իսկ երբ ՀՅԴ-ն ստեղծվեց, արդեն կազմված էին հայրենասիրական խմբակներ, Արևմտահայաստանի ազատագրության երազն արդեն համակել էր երիտասարդությանը: Եվ ՀՅ Դաշնակ-

---

[169] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 85:
[170] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 147:
[171] Տե՛ս Պատմագրութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, հ. Ա, էջ 90:
[172] Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7, էջ 117:

ցության սկզբնավորումից քիչ անց Հայաստանի տարբեր հատվածներում և սահմանամերձ շրջաններում գործող հեղափոխական կազմակերպությունների ու մարտախմբերի գերակշռող մասն առաջնորդվում էին հենց այդ կուսակցության հռչակած կարգախոսներով և նրա դրոշի ներքո: Այդ տրամադրությունների դրսևորման առաջին ցուցական արտահայտությունն, ըստ էության, Սարգիս Կուկունյանի արշավանքն էր:

ՀՅ Դաշնակցությունը հրապարակ իջավ 1890 թ. սեպտեմբերի սկզբին «Դրոշակի» թիվ 1 թռուցիկ թերթում լույս տեսած Մանիֆեստով: Փաստաթուղթը տալիս էր «հայոց հարցի» անցած ուղու համառոտ ուրվագիծը, շեշտադրում ստեղծված պահի հրամայականը՝ «...բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ դաշնակցութեան...»[173] խնդիրը:

Դա նաև կոչ էր ուղղված ժողովրդին. «Հայե՜ր. Այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ Թիւրքա-Հայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը, որ դեռ երեկ, շլինքը ծռած, Եւրոպայից օգնութիւն էր աղերսում՝ այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրուած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնի ամէն մի լուրջ հայրենասէրի, այդ բոլոր յեղափոխական ոյժերի միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Համախմբուե՜նք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը»[174]:

Դաշնակցությունը ձգտելու էր միացնել բոլոր ուժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նա մի քաղաքական ուժ էր, որն իր առջև խնդիր էր դնում միավորել Հայրենիքի փրկության և ազատության համար պայքարող բոլոր ուժերին: ՀՅԴ «Մանիֆեստն» ազդարարում էր. «Նպատակ դնելով Թիւրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է

[173] Նիւթեր..., հ. Բ, էջ 9:
[174] Նույն տեղում:

այն կռվի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ընդհանուր ու կազմակերպված ապստամբության միջոցով, ուխտելով մինչեւ վերջին արեան կաթիլ կռուել հայրենիքի ազատութեան համար»[175]:

Ս. Կուկունյանի և նրա ընկերների կողմից կազմակերպվող արշավանքը, բնականաբար, չէր կարող անտեսվել ու անուշադրության մատնվել ՀՅԴ կողմից: «Այդ ժամանակները Կուկունեանի խումբն առանձին կարեւորութիւն ստացաւ իր նպատակով, որ Թիւրքիա անցնելն էր եւ հարստահարիչ քիւրդերին պատժելը: Որոշեցինք ուժ տալ այդ խմբին: Դրանով կարծում էինք, թէ կարող ենք Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել մեր հարցի վրայ եւ իրագործել տալ Բերլինի դաշնագրով իր վրայ առած յանձնառութիւնը»[176],- գրում է Մարտին Շաթիրյանը: 1890 թ. օգոստոսին հրավիրված «Սահմանադիր ժողովը», որին մասնակցում էին տարբեր հոսանքների ներկայացուցիչներ, մտավորականներ ու քաղաքական գործիչներ, որոշեց իր հովանավորության տակ վերցնել այդ գործը, իսկ 1890 թ. սեպտեմբերին աշխատանքի անցած առաջին Վարչությունը կամ «Կենտրոնը» սկսեց ղեկավարել արշավանքի նախապատրաստումը[177]:

Թիֆլիսից Կուկունյանն իր հետ բերել էր կուսակցության վարչության՝ Կարսի կենտրոնին ուղղված նամակը, որով վարչությունը հրահանգում էր զենք հայթայթելու և այն Արևմտյան Հայաստան անցկացնելու հարցում ամեն կերպ օգնել Կուկունյանին: Մեկ այլ նամակով վարչությունն առաջարկում էր հետաձգել Երկիր անցնելու ծրագրի կատարումը, նախապես 5 հոգով գնալ նախատեսված շրջանները, ծանոթանալ տեղական պայմաններին ու հանգամանքներին, նկատի առնել խմբի նկատմամբ ցարական իշխանությունների դրսևորած հետաքրքրությունը և արդեն պարզորոշ նկատվող հակաձեռնարկումները, նոր միայն ձեռնարկել գործողությունը[178]:

Մինչ այդ Սարգիս Կուկունյանն իր խմբի անդամներից Ստեփան

---

[175] Նիւթեր..., հ. Բ, էջ 9:
[176] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 37:
[177] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 6, էջ 150:
[178] Տե՛ս Тунян В., Легенды и были: охранка и Армения в XIX - нач. XX вв., Ереван, 2008, с. 48:

Ստեփանյանին ուղարկել էր Թիֆլիս և նրա միջոցով նամակագրության համար ձեռք բերել Դաշնակցության «Կենտրոնի» ծածկագիրը:

Դեռևս մինչև ՀՅԴ կազմավորումը Սարգիս Կուկունյանի հետ կապ պահպանելու և Ալեքսանդրապոլում ու Կարսում մասնաճյուղեր կազմելու համար ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանն այստեղ էր ուղարկել Մարտին Շաթիրյանին: Վերջինիս հուշերում գրի են առնված հետևյալ տողերը. «Քրիստափորն ինձ ասաւ. - Քանի որ Կուկունեանի գործը Կարս, Ալէքսանդրապոլ եւ Սարիղամիշ է, իսկ մեր խմբակը մարդ չունի այնտեղ, պէտք է գնաս այդ վայրերը, կազմակերպես մեր մասնաճիւղերը եւ ղեկաւարես Կուկունեանի խումբն ուղարկելու գործը - նոր մարդիկ ընդունես, տեղաւորես նրանց գիւղերում եւ այլն: Իսկ մենք այստեղ կը կազմակերպենք ցրիւ ուժերը, որոնք նոյն նպատակին են ծառայում...

Ես պատրաստվում էի Ալէքսանդրոպոլ մեկնելու: Ինձ հետ գալու էին մի քանի մարդ, որ միանալու էին Կուկունեանի խմբին: Դրանց մէջ ամենից աւելի աչքի էր ընկնում վերին աստիճանի գեղեցիկ եւ վայելչակազմ, մօտ 22 տարեկան մի երիտասարդ Դաղէթ գիւղացի, Աբրահամ անունով, որ սպաննել էր մի շրջանապետ (պրիստաւ) եւ «ղաչաղ» էր ընկել: Դրանց թւումն էր Արշակ անունով մի յաղթանդամ եւ տպաւորիչ դիմագծերով քաջ զինուոր, Ղարաբաղցի. դրանց մէջն էր եւ մի խեղճ ու կրակ կարնեցի երիտասարդ Արշակ անունով, որ յետագայում մեր նշանաւոր Քեռին դարձաւ: Կային եւ երկու վանեցիներ՝ Սարկաւագի տղաներից»[179]:

Նորակազմ կուսակցությունը, իր առաջին լուրջ քննությունը համարելով արշավախմբի կազմակերպման հետ կապված աշխատանքը ամեն ինչ անում էր ոչ միայն նրա համալրման, այլև գործունեության անխափան ծրագիր մշակելու համար:

Սկզբնական շրջանում ՀՅԴ հիմնադիր ժողովները ներկայացնող գործիչների ու Ս. Կուկունյանի հարաբերությունները բնականոն հունի մեջ էին, և վերջինս՝ իբրև անմիջապես գործի դիմող մի անհատ, ընդհանուրի ուշադրության ու հարգանքի արժանի մի անձնավո-

[179] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 5, էջ 37:

րություն էր: «Ինքնըստինքեան հասկանալի է, որ նոր ստեղծուած Հ. Յ. Դաշնակցութիւնը շտապում էր օգտուել նրանից եւ առաջարկում է ստանձնել Երկրում գործող իր մարտական խմբերի հրամանատարությունը: Կուկունյանը սիրով հանձն է առնում...»[180],- գրում է Ս. Վրացյանը: «Կենտրոն»-ի աջակցությամբ լրացվում է խմբի կազմը, զենքի պակասը, որոշ քանակությամբ ռազմամթերք ու հրացան է տրամադրվում: Բոլորն էին համոզված, որ Հայաստանը շատ շուտով պիտի փրկվի, և բոլոր դասակարգերը միացած էին «Սուրբ գործ»-ի շուրջը[181]:

Կուկունյանը դժգոհ չէր, որ իր գործն ու նպատակներն ամենքի սեփականությունն էին դարձել, թեև հեղափոխական շարժման այդպիսի մի գործի ապագա հաջողության մեծագույն գրավականը գաղտնապահությունը պետք է լիներ: «Կուկունեանը եթե ըմբռնում էլ էր այս պարագան, սակայն իր ընթացքով եւ խօսելու, խումբը կազմակերպելու եղանակով այս գաղտնապահութիւնն անտեսում էր զարմանալի անփութութեամբ,- մի բան, որ խմբի եղերական ճակատագրի խոշոր պատճառներից մէկն եղաւ»[182],- իր հուշերում գրել է Արամայիս Ազնավուրյանը:

Բայց ընդհանուրին համակած ոգևորությունը շուտով մարեց, երբ տարաձայնություններ սկսվեցին Կուկունյանի և ՀՅԴ Կարսի մասնաճյուղի միջև:

Օգոստոսի վերջերին Կուկունյանը ստանում է մի նամակ՝ «Վարչություն» ստորագրությամբ: Այդ նամակում ծածկագրված էր. «Վարչութիւնը հայտարարում է Կուկունեանին, որ ռուս կառաւարութեանն արդէն յայտնի են նրա բոլոր գործողութիւնները, ուստի խորհուրդ է տալիս Կուկունեանին անմիջապէս անցնել Տաճկահայաստան, միայն ոչ ամբողջ խմբով»[183]:

Ցարական իշխանությունները սկսել էին գործադրել խստություններ, աչքի ընկնող գործիչները հսկողության տակ էին առնված, ուստի հարկավոր էր հնարավորինս զգույշ լինել և գաղտնի պահել խմբի գտնվելու վայրը, որն անտեսվում էր զարմանալի անփութութ-

---

[180] Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, էջ 275:
[181] Տե՛ս նույն տեղում:
[182] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 145:
[183] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 70:

յամբ: Ռուսական իշխանություններն աչալրջորեն հետևում էին արշավախմբի իրականացվող քայլերին և միջոցներ ձեռք առնում դրանք արգելելու: Նրանք Ալեքսանդր 3-րդ կայսեր գահակալությունից հետո փոխել էին իրենց վերաբերմունքը հայերի ու Հայկական հարցի նկատմամբ և չէին ուզում Արևմտյան Հայաստանում ստեղծել «Երկրորդ Բուլղարիա»:

Կովկասի կառավարչապետ Շերեմետևը հայտնել էր Գրիգոր Արծրունուն (երբ վերջինս նրա միջոցով խնդրել էր ռուսական կառավարության պաշտպանությունը), որ «այդ բանը ներկայ վայրկեանիս չի համապատասխանում ռուս կառավարութեան դիտաւորութիւններին»[184]: Նման պայմաններում նորաստեղծ ՀՅ Դաշնակցությունը պետք է հաշվի առներ ռուսական իշխանությունների բացասական վերաբերմունքը: ՀՅԴ Կենտրոնը որոշում է ավելի հիմնավոր ձևով նախապատրաստվել Սարգիս Կուկունյանի արշավանքին, մանավանդ, որ անփորձության պատճառով նրա մասնակիցներն իրենց վրա էին հրավիրել ցարական իշխանությունների ուշադրությունը:

Մինչդեռ արշավանքի կազմակերպիչներն ու ղեկավարներն այն համոզմունքին էին, որ ռուսական կառավարությունը համակիր է արևմտահայերի ազատագրական շարժմանը, Կուկունյանն ու նրա թիկնապահները խուսափում էին իշխանությունների ներկայացուցիչներին հանդիպելուց, քանզի ձերբակալվելու դեպքում պետք է դիմադրեին, որը կխանգարեր իրենց ծրագրերի իրականացմանը: ՀՅԴ-ն իր կազմավորումից անմիջապես հետո Կուկունյանի և Սարկավագի մոտ սուրհանդակ էր ուղարկել հորդորելու և խորհուրդ տալու, որ շտապեն անցնել սահմանը, որովհետև ռուսական կառավարությունը կարող էր ձերբակալել խմբի անդամներին: Բայց սուրհանդակը Թիֆլիս է վերադառնում հուսահատ. Կուկունյանն ասել էր, որ չի շտապում սահմանն անցնել՝ պատճառաբանելով, թե խումբը դեռ վերջնականապես պատրաստ չէ:

Դրանից 10 օր անց ՀՅԴ-ն իր տեսակետն ու վերաբերմունքը կտրուկ փոխում է խնդրի վերաբերյալ: Դաշնակցության Կենտրո-

[184] Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, էջ 275:

նը[185] նպատակահարմար չէր գտնում դեպի Երկիր Կուկունյանի բազմամարդ խմբով արշավանքը: Սկսվում են հակասությունները ՀՅԴ Կենտրոնի և Սարգիս Կուկունյանի միջև:

1890 թ. կեսերին Ս. Կարապետ վանքի «ուխտավորների» անվան տակ Արևմտյան Հայաստան անցած հայ գործիչները՝ Ա. Բարխուդարյանը, Մ. Մարգարյանը, Հ. Արղությանը և մյուսները, իրենց աչքերով էին տեսնում «ավետյաց երկիրը»: Մեկնելով Երևան-Էջմիածին-Իգդիր-Ալաշկերտ-Մանազկերտ-Մուշ երթուղով՝ նրանք վերադարձան Էրզրումի և Հասան-Ղալայի վրայով[186]: Թուրքական իշխանությունների հսկող աչքից խույս տալով՝ «ուխտավորները» կարողացան հանդիպել Ս. Կարապետ վանքի վանահայր, Տարոնի Առաջնորդ Ներսես վարդապետ Խարախանյանի հետ: Վերջինիս օգնությամբ երկարածգելով իրենց «ուխտագնացությունը»՝ նրանք հանդիպում են նաև Տարոնի լեռներում մեծ հռչակ ձեռք բերած հայդուկապետ Արաբոյի հետ[187]: Նրանց հանդիպումները հիմք հանդիսացան որոշ ժամանակ անց՝ օգոստոսին ձևավորված ՀՅԴ կողմից չափավոր գործելակերպ որդեգրելու և Սարգիս Կուկունյանի արշավանքը կասեցնելու փորձերի համար: Այսինքն՝ նորաստեղծ կուսակցությունն որդեգրեց այն մարտավարությունը, որին ուղղորդում էին Տարոնի գործիչները: Վերջիններս խորհուրդ էին տալիս խուսափել բացահայտ գործողություններից ու ապստամբական շարժումներից, որոնք անխուսափելիորեն առաջ կբերեին սարսափելի ջարդեր: «Պետք է երկրի մեջ բազմացնել ինքնապաշտպանական ոյժերը,- ասել էին նրանք,- դրսից հարկաւոր չեն մարդիկ, այլ միայն զէնք եւ միջոցներ»[188]: Տարոնի Առաջնորդն «ուխտավորներին» խնդրել, աղաչել էր հայտնել «Կովկասի գործիչներին»՝ առայժմ հայդուկային խմբեր չուղարկեն, այլ սպասեն հարմար և պատեհ առիթի, որի մասին ինքը՝ առաջնորդը, լուր պիտի ուղարկեր[189]:

---

[185] ՀՅԴ Կենտրոնը կամ Կենտրոնական վարչությունը ժամանակավորապես ստանձնել էր նորակազմ կուսակցության ղեկավարությունը՝ մինչև Ընդհանուր ժողովի գումարումը:
[186] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թ. 99-100:
[187] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 164-165:
[188] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թ. 101:
[189] Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 124:

Տարոնում ստեղծված լարված մթնոլորտը, թուրքերի սպառնալիքները ստիպում են Մարտիրոս Մարգարյանին ու Հովսեփ Արղությանին շտապ վերադառնալ Ալեքսանդրապոլ, հորդորել Սարգիս Կուկունյանին հետաձգել արշավանքը, քանի որ Երկիրը պատրաստ չէ ապստամբության: Անհրաժեշտ էր համարվում հավաքված զենքերն անցկացնել Արևմտյան Հայաստան, ժողովրդին աստիճանաբար զինել և Երկիր մտնել մի քանի հոգով, այն էլ՝ քարոզչության համար: Սակայն նրանց չի հաջողվում մտափոխել Կուկունյանին: «Նամակ նամակի վրայ Թիֆլիսից գրում էին խումբը ցրել եւ սպասել գարնան»[190],- պատմում է Հովսեփ Մովսիսյանը: Բայց երբ Հ. Արղությանը չի կարողանում տարհամոզել Կուկունյանին, նա զայրացած ասում է. «Դէ՛ որ այդպէս է՝ Կուկունեան գնա՛, Աստված քեզ հետ»[191]:

Կուկունյանն իր հերթին փորձում էր համոզել Հ. Արղությանին, որ ստեղծված իրադրության մեջ անհնարին է հետ կանգնել, այլապես խումբը կապստամբի հենց իր դեմ[192]: Նշանակում է անելանելի իրավիճակում էր հայտնվել նաև խմբապետը: Նա ապրում էր, հոգեկան շատ ծանր պահեր: Հայրենասեր, սակայն անփորձ երիտասարդը միանգամայն անսպասելի իրադրության մեջ էր գտնվում: Նա արդեն սկսել էր համոզվել, որ մեծ խմբով Երկիր անցնելը հղի է մեծ կորուստներով, բայց խումբը ցրել չէր կարող:

1890 թ. օգոստոսի 14-ին ռուս սահմանապահների հետ ընդհարման ժամանակ սպանվել էր խմբի անդամ Դաղեթ-Խաչենցի Աբրահամ Տեր-Անդրեասյանը, ծերբակալվել էին նրա համագյուղացի Ալեքսան Մկրտչյանը, ինչպես նաև Ալեքսանդրապոլից ժամանած 5 ախալցխացի երիտասարդներ[193]: Դրան ավելացել էր խմբի բացահայտ գործելու հետևանքով թուրքական իշխանությունների մոտ նկատվող անհանգստությունը: Խմբի գործողություններն աննկատ պահելու նպատակով Թիֆլիսից մի նոր պատվիրակություն է ուղարկվում Ս. Կուկունյանի մոտ՝ այս անգամ նրան համոզելու արձա-

---

[190] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 87:
[191] Նույն տեղում:
[192] Տե՛ս Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 125:
[193] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն…, էջ 202:

կել խմբի անդամներին կամ առայժմ տեղավորել մոտակա գյուղերում՝ սպասելով իրավիճակի փոփոխմանը: Կուկունյանն այդ առաջարկը նույնպես չի ընդունում. դրան դեմ էին նաև խմբի մյուս անդամները: Վերջիններիս համար շատ դժվար էր տուն վերադառնալը: Բացի այդ, նրանցից շատերի անունները հայտնի էին ռուսական կառավարությանը, և նրանք չէին կարող ազատ իրենց գործով զբաղվել[194]:

ՀՅԴ Վարչության և Սարգիս Կուկունյանի խմբի միջև բանակցություններն էլ ավելի սուր կերպարանք են ստանում: Առանձնապես սրվել էին հարաբերությունները Սարգիս Կուկունյանի և Ալեքսանդրապոլ ու Կարս քաղաքների ՀՅԴ կուսակցության առաջին գործիչ Մարտին (Մարտիրոս) Շաթիրյանի միջև:

Թիֆլիսից ստացած հրահանգների համաձայն՝ Մ. Շաթիրյանն աշխատում էր հետաձգել արշավանքը, բայց դրությունը գնալով ավելի էր ծանրանում: Մ. Շաթիրյանը վերհիշում է. «Կարսում մնալ կարենալու համար ես դարձայ ուսուցիչ: Ամէն օր կամ երկու օրը մէկ Կուկունեանը գալիս էր ինձ մօտ միշտ ջղայնացած եւ անհանգիստ: Իր խմբի տղաները ցրուած էին գիւղերում, դժվարանում էին ապրել ու պահուել եւ շարունակ պահանջում էին անցնել սահմանը: Իսկ Թիֆլիսից գրում էին, թէ առայժմ պէտք չէ խումբն ուղարկել: Խմբի համար փոխադրել էին 2000ր., որ պահւում էր ինձ մօտ»[195]:

Դրությունը օրհասական էր: Խմբի կազմության լուրը տարածվում էր, իսկ Կարսի նահանգապետն այն ժամանակ Տոմիչն էր, մի գազան մարդ եւ միաժամանակ սաստիկ հայատեաց,- շարունակում է Մարտին Շաթիրյանը: Զգում էի, որ կամ պէտք է խումբը ցրել կամ ուղարկել (Երկիր - Կ. Ե.), նոյնը պահանջում էր եւ Կուկունեանը, իսկ Թիֆլիսը կարգադրում էր՝ ո՛չ ցրել եւ ո՛չ ուղարկել»[196]: Կուկունյանը Մարտին Շաթիրյանից պահանջում է իրեն հանձնել ՀՅԴ կուսակցության ուղարկած գումարը: Մ. Շաթիրյանն էլ չդիմանալով ճնշմանը, հեռագրում է Թիֆլիս՝ տեղեկացնելով ստեղծված իրավիճակի մասին:

---

[194] Տե՛ս Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), էջ 11:
[195] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 50:
[196] Նույն տեղում:

Սարգիս Կուկունյանին ու Սարկավագին համոզելու և վերջիններիս ու ՀՅԴ Կենտրոնի միջև առաջացած տարաձայնությունները հարթելու նպատակով մի քանի օր անց շտապ կերպով Կուկունյանի մոտ են գալիս նախ Կոստանդին Խատիսյանը, ապա Սիմոն Զավարյանը: Զուր են անցնում նաև այս պնդումներն ու պահանջները: Մ. Շաթիրյանի վկայությամբ՝ «...Խատիսյանը ոչ միայն համոզել չկարողացաւ Կուկունեանին, այլ եւ բերած դրամը տուաւ նրան»[197]: Պատճառն ակնհայտ է. Ս. Կուկունյանը Կ. Խատիսյանին ներկայացրել էր սահմանամերձ շրջանների կացությունը, ժողովրդի մեջ տիրող ոգևորությունը և համոզել, որ խմբում ստեղծված վիճակը նահանջի ոչ մի ճանապարհ չի թողել և որ արշավանքի հետաձգումը կարող էր խոր հիասթափություն առաջացնել հասարակության մեջ:

Սարգիս Կուկունյանի գործողությունների վրա իրենց խորհուրդներով ու ցուցումներով փորձում էին ներազդել Բագրատ Նավասարդյանը, Սև Սանդրոն (Ալեքսանդր Սիմոնյան), Խաչատուր Մալումյանը: «Զգոյշ եղիր, շատ թշնամիներ ունես, բացի երեք բարեկամներից, և այդ բարեկամները ինձ հետ միասին խնդրում ու խորհուրդ են տալիս, ինչքան հնարավոր է շուտ փորձիր անցնել Թուրքիայի սահմանները քո հինգ ընկերների հետ, իսկ մյուսները թող անցնեն Երևանի նահանգ՝ կասկածներից խուսափելու համար»,- հորդորում էր Սև Սանդրոն[198]: Ստեղծված իրավիճակում Բագրատ Նավասարդյանի և Գրիգոր Արծրունու անունից Սև Սանդրոն թախանձագին խնդրում է որքան հնարավոր է շուտ և որքան հնարավոր է փոքր խմբով անցնել Երկիր (քանի որ Թիֆլիսում Սարգիս Կուկունյանը հիմնականում գործել էր Գրիգոր Արծրունու խորհուրդներով, ուստի թվում էր՝ Գրիգոր Արծրունու ծանրակշիռ խոսքի հետ Կուկունյանը հաշվի կնստի):

Ս. Կուկունյանին տարհամոզելու և նրա գործունեությունը ՀՅԴ Կենտրոնի հսկողության տակ պահելու փորձերն ապարդյուն են անցնում:

1890 թ. սեպտեմբերի սկզբներին ՀՅԴ Կենտրոնը Սարգիս Կուկունյանի մոտ է ուղարկում Սիմոն Զավարյանին՝ դարձյալ նույն

---

[197] Նույն տեղում, էջ 51:
[198] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 60:

խնդրով, ինչ խնդրով նրան հանդիպել էր Կ. Խատիսյանը: Ս. Զավարյանն իր հետ տանում է նոր՝ փոխզիջումային ծրագիր, որը շարադրված էր ՀՅԴ կենտրոնական վարչության անդամներից մեկի գրած նամակում: Դրանում ընդհանուր գծերով ներկայացվում էր նոր ծրագիրը, որի մանրամասները Կուկունյանին պետք է բացատրեր Ս. Զավարյանը[199]: Դեմ չլինելով Կուկունյանի՝ Երկիր անցնելու գաղափարին՝ Կենտրոնը փորձում էր կշռադատված ու կազմակերպված բնույթ հաղորդել խմբի գործողություններին: Դրա համար հարկ էր համարվում. «1)շարժվել քարավանային ճանապարհներով, 2) մի մասը պետք է զբաղվի զենք կուտակելով, 3) մյուս մասը պետք է լռությամբ մնա ժողովրդի մեջ: Մենք չենք ցանկանում առանց մյուսներին տեղեկացնելու ակտիվ գործունեություն ծավալել, բացի քարավանի խմբից»[200]:

Բայց Կուկունյանն իր խոսքի տերը մնաց: Ավելին, նա մերժում է ենթարկվել Կենտրոնի հրահանգներին՝ չկամենալով ճանաչել նրա գերակայությունը: Դա նշանակում էր, որ Ս. Զավարյանի գործադրած ջանքերն իրենց նպատակին չէին հասել: Վերջինիս այն զգուշացումը, որ խմբի անկազմակերպ սահմանանցումը կգրգռի քրդերին, կգրավի թուրքական կառավարության ուշադրությունը՝ դրանով իսկ օգուտ տալու փոխարեն, վնասակար հետևանքներ կունենա շարժման հետագա ճակատագրի համար, Ս. Կուկունյանի վրա ազդեցություն չի ունենում. «Թո՛ղ իմ արիւնը ներկի Հայաստանի հողը, իսկ նրանից հետո ինչ ուզում է՝ լինի»[201],- ասել էր խմբապետը:

Արշավանքի հրամանատարի քաղաքական ռոմանտիզմն այսպես է ներկայացրել Արամայիս Ազնավուրյանը. «Միակ հաւանական բացատրութիւնը՝ այդ անփութութեան գտնում եմ ժամանակի մեր հանրային կեանքի մէջ իշխող երազկոտ, չկշռադատուած, անկեղծ ու խորը, բայց անփորձ ու անիրատես հայրենասիրության մեջ»[202]:

Ս. Զավարյանը նույնպես Թիֆլիս վերադարձավ ձեռնունայն,

---

[199] Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն..., էջ 204:
[200] Նույն տեղում, էջ 205:
[201] Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, 1927, N 2, էջ 123:
[202] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 148:

բայց կուսակցության ղեկավարությունը դրանից հետո էլ շարունակում էր նամակներով ու հեռագրերով համոզել Կուկունյանին սահմանը չանցնել և կամ շտապել անցնել օր առաջ:

Խմբի մարտիկներն էլ պահանջում էին օր առաջ սկսել արշավանքը: Շրջակա գյուղերի բնակչությանը համակած բուռն ոգևորությունը նրանց հասցրել էր պարտքի գիտակցման բարձր աստիճանի: Ղեկավարների դանդաղկոտությունը կարող էր արշավախմբի մարտիկներին ոտքի հանել հենց խմբապետի դեմ: Նրանցից ոմանք մտադրվել էին իբրև դանդաղկոտության բուն պատճառ սպանել Կուկունյանին, ապա ամբողջ խմբով անցնել Երկիր: Բայց դա տեղի չի ունենում, քանի որ Կուկունյանն ինքը մտադիր չէր հրաժարվել արշավանքից[203]:

Ստեղծված պայթյունավտանգ իրավիճակից ելք գտնելու համար, ի վերջո, Ս. Կուկունյանն իր զինակիցներից Ջալլադին (Երվանդ Բաբերյան) ուղարկում է մյուռոնօրհնության կապակցությամբ էջմիածին եկած Գրիգոր Արծրունու մոտ՝ նրա հեղինակավոր կարծիքն իմանալու համար: Միանգամայն անտեղյակ լինելով ստեղծված կացությանը՝ Արծրունին դատապարտում է Կուկունյանի դանդաղկոտությունը և պահանջում կա՛մ մանր խմբերով անցնել սահմանը, կա՛մ էլ ցրել մարդկանց: Պարզ է, որ Կուկունյանն ակնկալություններ է ունեցել Արծրունուց և ցանկացել ավելի լավ պատրաստված ու կազմակերպված անցնել Երկիր:

Սահմանն անցնել-չանցնելու վիճահարույց հարցի շուրջ անախորժ տարաձայնություններ են ծագում նաև Կուկունյանի և Սարկավագի միջև: Դրանք վկայությունն էին այն բանի, որ հայ ազգային-ազատագրական զինյալ պայքարն սկզբնավորվում էր դրանում առկա տարբեր ուղղությունների բախումներով: Սարկավագը գործում էր՝ ապավինելով սեփական ուժերին, հույսը դնելով իր ժողովրդի մարտական կորովի վրա, նրան նախապատրաստելով գաղտնի կերպով, խուսափելով ամեն մի ժամանակավրեպ ու փութկոտ ձեռնարկից: Հայ ազգային-ազատագրական պայքարին մասնակից արևելահայ գործիչների պատկերացումները հախուռն էին, փութկոտ ու ռոման-

---

[203] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 85:

տիկ երանգներ էին կրում, այսինքն՝ դրանցում գերակշռող էր զգացմունքայնությունը, ինչը չէր կարող ընդունելի լինել արևմտահայ իրապաշտ գործիչների համար: Ի վերջո, Ս. Կուկունյանի արշավանքը ցույց տվեց, որ հապճեպ և ոչ լավ կազմակերպված ռոմանտիկ շարժումը դատապարտված էր ձախողման:

Կարո Սասունին, անդրադառնալով Սարգիս Կուկունյան-Հակոբ Սարկավագ հակասություններին, գրում է. «Կուկունեան կը հաւատար որ քիւրտը պետք է պատժել, որ քրտի հետ լեզու կարելի չէ գտնել, որ զէնքի ձայնը աւելի համոզիչ է քան աղերսի մեղեդին: Մինչ Գալֆայ Յակոբը, երկրի հարազատ զաւակ, քաջ և հանդուգն, հայրենասէր և իմաստուն, որ ամբողջ Տաճկահայաստանը իր ափին պէս կը ճանչնար, գիտէր տեղագրական բոլոր մանրամասնութիւնները, կը հեռատեսէր այն բարիքները, զորս հայը պիտի կրնար վայելել, եթէ բնիկ քիւրտերու հետ համաձայնութիւն մը գոյանար, համերաշխութիւն ստեղծուէր. ահա այս երկու հակընդդէմ տրամաբանութիւնները իրարու կը բախին... »[204]:

Ինչ վերաբերում է Սարկավագի անձին, Արամայիս Տեր-Դանիելյանի հուշերում կարդում ենք հետևյալ տողերը. «Կուկունեանն առել էր նրան (Հակոբ Սարկավագին - Կ. Ե.), իբրեւ թիկնապահ, զէնք ու ձի էր տրամադրել եւ հետը բերել Ալեքսանդրապոլ: ...Շուտով, սակայն, հայտնի էր դարձել, որ Սարկավագը գաղտնի կերպով սկսել էր ինտրիգներ լարել տղաների մէջ, որ խմբի տաճկահայ մարտիկները զատվին եւ իր ղեկավարութեամբ, յանկարծակի, առնեն սահմանագլխին հավաքած զենքերը եւ անցնեն Տաճկաստան»[205]: Այս ամենը, բնականաբար, չէր վրիպել նաև խմբապետի աչքից, ինչը և գժտեցրել էր նրանց:

Արխիվային մի փաստաթղթում, Տիգրան Կերեկցյանի հուշերում կարդում ենք, որ երբ խումբը հասնում է սահմանագլուխ, Սարկավագը Կուկունյանին հորդորում է, թե «...այսչափ մարդով չի կարելի անցնիլ սահմանը թմբկահարելով, որ պետք է ընտրենք տղերանցից գործին հմուտ եւ գործ տեսնողներ, մի քանի հոգով սուս ու փուս գնանք այնտեղ: Պետք է հանգամանքներուն համաձայն գործինք:

[204] Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 420:
[205] Տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 13:

Մեզ հարկավոր է զենք եւ փող եւ մի քանի գործ տանող տղերք»[206]:

Ս. Կուկունյանը, հակառակվելով Սարկավագին, պահանջում է 80 հոգով արշավել ու անցնել սահմանը՝ ասելով, որ տեղի ազգաբնակչությունը, ուզի-չուզի, կհետևի իրենց: Բայց Հակոբ Սարկավագը, իր ասածը հիմնավորելով, ավելացնում է. «Ազգաբնակչութեան ձեռքը զենք չկայ, մինչեւ անգամ ինքնապաշտպանութեան համար ինչո՞վ պետք է մեզ հետեւի, բահով ու բրիչո՞վ»[207]:

Պարզ է, որ Սարկավագը չէր ուզում Երկիր անցնել, մինչդեռ դա Ս. Կուկունյանի անդիմադրելի ցանկությունն էր: Ռուբեն Խանազատը[208], որը մոտիկից հետևել է դեպքերի ընթացքին, իր հուշերում գրել է հետևյալ տողերը. «Կուկունեանը ոչ անցնում էր սահմանը, ոչ էլ խումբն էր ցրում, եւ օրը օրին մի նոր պատճառ էր լոյս ընկնում նրանց Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջաններում պահելու համար: Մեկ էլ իմացանք, որ Կուկունեանի եւ Սարկավագի միջեւ շատ անախորժ տարաձայնութիւններ են ծագել ոչ միայն սահմանն անցնելու, այլ նաեւ այն հարցի մասին, թե իրենցից ո՞վ պիտի լինի գլխավոր հրամանատարը: Նոր պատվիրակութիւն գնաց Թիֆլիզից՝ նրանց հաշտեցնելու, բայց դարձեալ անհաջողութեան հանդիպեց: Մեկ օր էլ լուր եկավ, որ Կուկունեանը իր խմբից մի հավատարիմ անդամի հետ գնդակահարել է Սարկավագին...»[209]:

Այսպիսով, մարտավարական տարաձայնությունները հանգեցրին Սարկավագի եղերական վախճանին: Առանց խորությամբ հասկանալու ստեղծված իրավիճակը, Սարկավագին համարելով կազմակերպվելիք արշավանքի հակառակորդ՝ Կուկունյանը հանուն «Սուրբ գործի» կարգադրում է մեջտեղից հանել նրան[210]: Ալեքսանդ-

---

[206] ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 51:
[207] Նույն տեղում, թ. 52:
[208] Ռուբեն Խանազատ – Խան-Ազատ (Նշան Կարապետյան)- հասարակական-քաղաքական գործիչ, Հնչակյան կուսակցության հիմնադիրներից:
[209] Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1928, N 3, էջ 123:
[210] Կուկունյանի և Սարկավագի հակասությունները չէին սահմանափակվում միայն քրդերի հանդեպ տարբեր մոտեցումներով կամ սահմանն անցնելու հարցի վերաբերյալ տեսակետների տարբերությամբ: Կար ավելի խոր պատճառ խմբի մի մասը համակիր էր Հակոբ Սարկավագի խմբապետությանը՝ որպես երկիրը լավ ճանաչողի: Կուկունյանն ու իր կողմնակիցներն էլ տաքարյուն էին ու անփորձ, և հակասություն-

ռապոլում Կուկունյանն Աբրահամին պատվիրում է հարմար տեղ հասնելիս՝ «վերջացնել» Սարկավագին: Արշավանքից երկու-երեք շաբաթ առաջ Հակոբ Սարկավագը՝ իբրև «ուխտադրուժ», սպանվում է ղարաբաղցի Աբրահամի (Աբրահամ Աղամալյան) ձեռքով:

Սարգիս և Միսակ Բդեյան եղբայրներն այդ դեպքը ներկայացնում են այսպես. «Գիշեր մը, երբ Սարկաւագը կը գտնուէր Ճալա ըսուած գիւղը, Կարսի շրջանին մէջ, անոնք կեղծ նամակ մը կը պատրաստեն՝ իբրեւ թէ Կարսի մարմնին կողմէ գրուած, որով Սարկավագին կը հրամայուէր երթալ Պաքու եւ իրենց որոշած որոպէին՝ կէս գիշերին կը հասցնեն Սարկաւագին: Սարկաւագը, նամակի պարունակութեան ծանօթանալով, երեք ընկերներով- Աբրահամ, Սարգիս Կուկունեան և Սարդար - միասին ճամբայ կ՚իյնան եւ երբ կը հասնին Պէշքիլիսա ձորը, հոն իր երեք ընկերները վրան կը յարձակին, կը սպանեն եւ մարմինն ալ կը թաղէն քարակոյտի մը տակ, ցարդ անհայտ, ու կը վերադառնան Կաղզվան...»[211]: Տ. Կերեկցյանը հիշում է, որ հետագայում Աբրահամը մի քանի մարդկանց ներկայությամբ պատմել ու լաց է եղել չկշռադատված արարքի համար[212]: Նույն հուշագրի թողած տողերում կարդում ենք, որ Սարկավագին սպանելու շարժառիթն եղել է եսասիրությունը, սին փառքը[213]:

Հուշագիր Հովսեփ Մովսիսյանի կարծիքով՝ Սարկավագն անմեղ էր: Հետագայում Ս. Կուկունյանն էլ, աքսորում եղած տարիներին գիտակցելով իր անխոհեմ արարքը, հայրենիք վերադառնալուց հետո՝ արշավանքի մանրամասները պատմելիս, զղջումի ու ցավի խոսքեր է արտահայտել Սարկավագի մասին խոսելիս[214]: Ս. Կուկունյանի ջղերն այդ օրերին նաև շատ թույլ էին, և Սարկավագի մասին խոսելիս աչքերը թրջվում էին արցունքով. ըստ երևույթին խիղճը հանգիստ չէր:

Հակոբ Սարկավագի որդին՝ Արամը, հոր արժանապատվությունը

ներն հարթելու համար, սպանեցին Հակոբ Սարկավագին՝ նրան խոչընդոտ համարելով:

[211] Բդէեան Ս. եւ Մ., նշվ. աշխ., էջ 76:

[212] Տե՛ս ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, բաժին III, վավ. 9, թ. 52:

[213] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

[214] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 15:

վերականգնելու համար Խրիմյան Հայրիկի թաղման ժամանակ[215] բազմության մեջ նկատելով Կուկունյանին (վերջինս աքսորից արդեն վերադարձել էր), հրավիրում է ընկերական դատի: Սարգիս և Միսաք Բդեյանները վկայում են. «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ Թոփճեանի, Զավարեանի, Հնչակեաններ՝ Աղաեանի և Հայկունիի կողմե կատարուած քննութիւնը կը պարզ է, որ Տարոնացի Սարկաւագը զոհ է գացեր Կուկունեանի անձնասեր եսին: Կուկունեան խոստովանեցավ, որ անմեղ տեղը սպանել է տվել Հակոբ Սարկավագը, որ ինքը անգիտակցաբար յանցանք է կատարել»[216]:

Ինչևէ, Կուկունյանի խումբը սահմանագլխին պատրաստ էր արշավանքի: Դաշնակցության Կարսի կենտրոնը դարձյալ առաջարկում է հետաձգել այն՝ նկատի ունենալով խմբի նկատմամբ ցարական իշխանությունների աճող հետաքրքրությունն ու արդեն պարզորոշ նկատվող ձեռնարկումները: Կա՛մ պետք է ցրվեին, կա՛մ անցնեին սահմանը: Ս. Կուկունյանը հաստատակամորեն վճռում է ի կատար ածել իր առաքելությունը: Չընդունելով արված առաջարկներն ու պահանջները՝ նա որոշում է անցնել սահմանը:

2. Սարգիս Կուկունյանի արշավանքը և դրա ձախողումը

Ընտրությունը կատարված էր: Նախապատրաստական բոլոր միջոցներն ավարտին հասցնելուց հետո՝ աշնանային մի մութ գիշեր՝ 1890 թ. սեպտեմբերի 22-ին, Ս. Կուկունյանը Սիմոն Մանուկյանին գործուղեց Զարաբխանայի սահմանապահ կայան, որպեսզի իմանա, թե որտե՞ղ են կանգնելու գիշերային պահակները: Վերջինս վերադարձավ ուշ երեկոյան՝ հաղորդելով անհրաժեշտ տեղեկություններ:

Անցնելով Կարս՝ Կուկունյանն ազատամարտիկներին բաժանում է մանր խմբերի և տեղավորում հայկական գյուղերում, նախապատրաստում ապագա արշավանքին: Սրտառուչ էին սահմանն անցնելու

[215] Մկրտիչ Խրիմյանը մահացել է 1907 թ. հոկտեմբերի 29-ին, հուղարկավորությունը տեղի է ունեցել 1907 թ. նոյեմբերի 6-ին:
[216] Բդէեան Ս. եւ Մ., նշվ. աշխ., էջ 77:

ժամանակ խմբին գյուղացիների ցույց տված խնամքն ու գուրգուրանքը: Արշավախումբը շարժվեց քահանայի օրհնությամբ և գյուղացիների ցնծագին բարեմաղթանքներով: «Տղաները քայլում էին զոյգ-զոյգ, լուռ ու մունջ: Հետեւից գալիս էին գիւղացիները: Հուզիչ էր տեսարանը: Հանդիպումը եւ բաժանումը գյուղացիների հետ եղավ սրտաշարժ: Կանայք շարունակ լալիս էին, աղոթում եւ բարեմաղթանքներ անում, որ սուրերս կտրուկ լինի, որ յաղթող վերադառնանք...»[217],- պատմում է Ս.Կուկունյանի զինակից Ասքանազը:

Մեսրոպ Վարդանյանի հուշագրությունից տեղեկանում ենք, որ Սարգիս Կուկունյանն ու Սարդար Ավետիսյանն ուսերին կրում էին զինվորական սպայի՝ «հազարապետի» ոսկեթել ուսադիրներ, որոնք նվիրել էին Կարսի օրիորդները[218]: Ամբաստանագրում էլ ասված է, որ Սարդարը կրել է «39-րդ դիվիզիայի սպայի ուսադիրներ»[219]: Կուկունյանը գիտեր շուք տալ իր ձեռնարկին: Հովսեփ Մովսիսյանը պատմում է. «Մեզ յայտնեց նաեւ, որ անգլիական «Թայմզ» թերթի թղթակից Ֆելջարիցը (Ֆից-Ջերալդը - Կ. Ե.) պիտի գար մեր խմբի քաջագործութիւնների մասին անգլիական մամուլում գրելու համար»[220]:

1890 թ. սեպտեմբերի 22-ին մոտ 110 հոգուց բաղկացած (50-ը ձիավոր) խումբը[221] սկսեց իր արշավանքը: Խումբը նախապես բա-

---

[217] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 89:

[218] Տե՛ս Կուկունեանի արշաւանքի մասին: Քառասնամեակ Հ. Յ. Դաշնակցութեան, տե՛ս «Դրօշակ», 1930, N 6-7, էջ 168:

[219] Տե՛ս Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեան խմբի արշաւանքը, Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 35:

[220] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 87:

[221] Կուկունյանի արշավախմբի թվաքանակի վերաբերյալ հուշագրողների մոտ եղած տվյալները տարբեր են: Ջերբակալվելուց հետո՝ հարցաքննության ժամանակ, Ս. Կուկունյանը հայտնում է (ըստ դատական ամբաստանագրի), որ խումբն ունեցել է 100 մարդ, որոնց թվում՝ 20 ձիավոր: Կոստանդին Լիսինյանը խմբի թվական կազմի վերաբերյալ հիշատակում է 70 թիվը, Ռուբեն Հովհաննիսյանն էլ, միևնույն թիվը մատնանշելով ավելացնում է՝ «և 15 ձիավոր»: Արշավանքի մեկ ուրիշ մասնակից՝ Մեսրոպ Վարդանյանը մի փոքր տարբեր թվեր է տվել. «Մենք մնացինք 78, մեզնից 24-ը ձիավոր էր» (տե՛ս «Դրօշակ», 1930, թիվ 5): «Ոմանք խումբը հաշւում էին 120, ոմանք 150 հոգի,- ասում է մյուս մասնակիցը՝ Հովսեփ Մովսիսյանը,- բայց փաստն այն է, որ մենք չհաշուեցինք վերջնականօրէն, թէ քանի՞ հոգի էինք: Մօտ քսան հոգի ձիաւորներ էին: Ձէնքերը ես էի բաժանում: Ընդամենը հարիւր կտոր զէնք էր: Ոմանք եկել էին իրենց զէնքերով, ոմանք էլ վերադարձան զէնք չլինելու պատճառով: ...Մի

ժանված էր տասնյակների, ամեն մի տասնյակի համար նշանակված էին տասնապետեր: Շարժվելու պահին խումբն այսպես դասավորվեց. առջևից գնում էին ուղեկցողները (վալադ): Նրանց հետևում էին մի քանի հեծյալներ: Սրանցից հետո հետևակ զինվորներն էին, իսկ վերջում՝ մնացած հեծյալները: Առաջին հեծյալների մեջ էր նաև խմբի ղեկավարը՝ Սարգիս Կուկունյանը[222]:

Խմբապետի կարգադրությամբ խմբի մի մասը նախապես՝ մինչև սեպտեմբերի 22-ը, փոխադրվել և մոտ մեկ շաբաթ մնացել էր մոտակա Բերնա գյուղի արևելյան այրերում: «Ես ու մի շարք զինուորներ 15-20 հոգի անցանք Հոպվերան եւ Շադեւան, եւ Արմուտլի՝ ապաստան գտնելով Բերնա գյուղի արեւելյան կողմում գտնվող ժայռների այրերում»[223],- վերհիշում է Արամայիս Ազնավուրյանը:

Խմբի մյուս մասը ուղղություն է վերցնում դեպի Շադևան: «Խումբը հասավ Շադեւան սեպտեմբերի 22-ին՝ շաբաթ օր: Գիշերով գնաց թուրքական սահմանագլխի վրայ գտնվող լեռները: Երկուշաբթի օր հասան Թէքե-Բինա սարը»[224]: Փորձելով մոտ ճանապարհով մտնել Երկիր՝ տղաները շարժվում են Կաղզվանի ուղղությամբ: «Եթե մենք մարգարէ լինեինք, մեծ հաջողութիւն կգտնեինք: Այդ գիշեր Ալաշկերտի թուրք-քուրդ զօրք, բոլոր կը փախնին՝ թե հայերին երկաթե դուռ բացված է: Տուներ տեղեր թողնելով՝ Անտապի լեռներ կելնեն, որ այնտեղ քրդեր շատ են, հայեր բոլորովին չկան: 4 ժամ է

հոգի հրէա էլ կար, Մկրտիչ Հաջի Դանէլեան (Ուրմեցի) հայացած, Օրաթագեադիկլար գիւղից մի հայուհու հետ էր ամուսնացած» (Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 4, էջ 88): Հովսեփ Մովսիսյանի հուշերում կարդում ենք նաև հետևյալ մանրամասնությունները. «Արշաւանքի առաջին օրը եւ առաջին կռուից յետոյ, տղաները հասնում են Ֆախր-գեոլ կոչուած վայրի մերձակայքը... Լուսնալուն, հաշուեցինք՝ մնացել էինք վաթսուն հոգի» (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 3, էջ 79): Արամայիս Ազնավուրյանի հուշերում խմբի կազմի վերաբերյալ ասված է հետևյալը. «Խումբը բաղկացած էր 85 հոգուց, որից 20-23-ը ձիաւորներ էին» (տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 147): Մեզ համար ընդունելի է Դատական ամբաստանագրին կից ամբաստանյալների ցուցակը՝ անուն-ազգանուններով և անձնական տվյալներով, ուր նրանց թիվն է 107 (տե՛ս սույն աշխատության հավելված 1՝ էջ 181-188):

[222] Տե՛ս Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 135:

[223] Տե՛ս նույն տեղում, N 4, էջ 146:

[224] Տե՛ս Կուկունեանի խմբի դատավարութիւնը, «Դրօշակ», 1912, N 6, էջ 166:

Ալաշկերտից Անտապի գիւղեր: Շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Թեքե-Բինայի ձոր»[225],- պատմում է Մեսրոպ Վարդանյանը:



Խումբը Շադևան գյուղից անցնելով Քեակլիկ կիրճը՝ լուսաբացին հասնում է Արմուտլի (Տանձուտ): Բնակչությունը ջերմ ընդունելություն է ցույց տալիս և տղաներին տեղավորում տներում, իսկ առավոտյան տեղի երիտասարդների ուղեկցությամբ Սարիղամիշ-Կարակուրդ ճանապարհով խումբն անցնում է ռուսական Բասեն և հաստատվում Չուրուկում (Չյուրյուկ, Չոլախլու), ուր պահված էին զենքերը: Այստեղ տղաները միանում են Բերնա գյուղի արևելյան կողմում ընկած ժայռերի այրերում գտնվող խմբի մյուս մասին: Մեկնելուց առաջ Կուկունյանը խորհրդանշական խոսքով դիմում է խմբին. «Մենք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան. լաւ մտածեցէք.

[225] Մեսրոպ Վարդանեանի յուշերը Կուկունեանի արշաւանքի մասին, տե՛ս «Դրօշակ», 1930, N 6-7, էջ 170:

այնտեղէն վերադարձ չկայ: Մենք կ՚երթանք մեռնելու, որպէսզի ճանապարհ հարթենք գալիք կռուող շարքերուն համար: Թո՛ղ ոչ ոք ձեզմէ յոյս ունենայ, թէ կարող է ողջ մնալ: Ով որ ատկէ կը վհատի, թող այժմէն վերադառնայ...»[226]: Այս խոսքերը չէին ասվում հերոսական քայլ անողի տպավորություն ստեղծելու կամ էլ իր մարտիկների անձնազոհությունն ու նվիրումը չափելու համար: Ս. Կուկունյանի ասածները բարձրացրին տղաների տրամադրությունը, և ոչ մի մարտիկ չլքեց շարքերը:

Չուրուկի լեռներում 2 ցուրտ օրեր անցկացնելուց հետո (լեռներում խմբից ետ էին մնացել 25 հոգի, և խումբը ստիպված էր իջնել Խառ, հետ մնացածներին սպասելու և կամավորներ հավաքելու), այնուհետև խումբը որոշեց շարժվել Չիչակլի (Չիչակլուի-Ծաղկանց) ձորը՝ պատրաստվելով հանգստի: «Կտրելով Քէօմուրլու քրտական գիւղի հարավային բարձունքները՝ ուղղուեցինք դէպի արեւելք, ապա դարձանք դէպի հարաւ եւ մտանք Չիչեկլուի ձորը,- գրում է Ա. Ազնավուրյանը,- գիշերուան ժամի 11-ն էր, ձորի երկու կողմերը բարձրանում էին անմատչելի ու բարձր ժայռեր: Երկու կողմի բարձունքներից բազմաթիւ աղբիւրների ջրերը միանալով կազմում էին մի բաւական ջրառատ գետակ, որ սրընթաց հոսում էր ձորակի միջով»[227]:

Կես ժամ հանգստանալուց հետո խումբը շարունակում է ճանապարհը: Ձորի երկարությունը քսան կիլոմետրից ավելի էր: Մինչև լուսաբաց խումբը հազիվ կարողանում է կտրել ձորը և առավոտյան աղջամուղջին հասնում ու դիրքեր է գրավում Բոզդաղի (Բոզթափայի) բարձունքներին:

Բալաջանը պատմում է հետևյալը. «...Չիչակլու ձորից դուրս գալիս, մեր աջ կողմում, սարի վրայ, նկատեցինք երեք ձիավոր քրդեր, որոնք մեզ տեսնելուն պես ձիերը ետ դարձրին և արշավեցին դեպի մոտակայ քրդական Ախուարկ գյուղը: Մեր ձիաւորները ի զուր հետապնդեցին: Երբ մերոնք հասնում են գիւղին՝ քիւրտ գիւղացիները լեղապատառ դուրս են փախչում գիւղից: Մերոնք մի քանի հա-

---

[226] Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 69:
[227] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 135:

մազարկ տալով՝ վերադառնում են հետները գերի բերելով մի ծեր մարդ: Խեղճը ընկաւ վալադի ձիու ոտքի տակ՝ մտածելով, թէ սա է մեր մեծաւորը, որովհետեւ վալատի ձին ամենից լաւն էր...»[228]: Այնուհետև խումբը շարունակում է ճանապարհը:

Արշավանքի հետագա ընթացքի մասին պատմում է Արամայիս Ազնավուրյանը: Նա վկայում է, որ ամբողջ գիշեր, առանց հանգստանալու, խումբն առաջ էր շարժվել: Մոտ երկու ժամ խումբը փնտրել էր Մատուռի ճանապարհը, որն ուղեկցողներն էլ չգիտեին: Որպեսզի խմբից ետ մնացողներ չլինեն, Կուկունյանը երկու հոգու՝ Սարդարին և Աբրահամին պատվիրել էր, որ այդ լեռնուղիներում գնան խմբի առջևից ու հետևից և հսկեն տղաներին: Երբեմն էլ Կուկունյանն ինքն էր ձին առաջ ու ետ քշում՝ կարգ պահպանելու նպատակով՝ այդ ձևով ճանապարհը շարունակելով մինչև առավոտյան ժամը 6-ը: Երբ Կուկունյանը մի անգամ էլ ձին քշում է խմբի ետևից, հանկարծ խմբի առջևից լսվում են հրացանի կրակոցներ: Մարտիկներն արդեն գտնվում էին բուն Արևմտյան Հայաստանի հողի վրայ, Բասենի ու Ալաշկերտի արանքում: Ի՞նչ հրացանաձգություն էր այդ: Թուրքական կառավարությո՞ւնն էր նրանց ուղարկել, թե՞ դրանք պատահական կրակոցներ էին՝ հայ կամավորների առաջն առնելու համար. պարզ չէր: Բայց, մի բան պարզ էր, որ թուրքական իշխանություններն արդեն տեղյակ էին սահմանի այն կողմում տիրող իրադրության մասին և լրջորեն մտահոգված էին[229]:

Քիչ անց պարզվում է, որ Չիչակլիի կիրճում երևացող զինվորները (15 հոգի), որոնք կրակ էին արձակել խմբի ուղղությամբ, Զարաբխանա կայանի ռուս սահմանապահ կոզակներն էին, որոնք, դուրս գալով հետախուզության, նկատել էին խմբի հետքերը: Պարզվեց նաև, որ հայտնի ավազակ Հասո-աղան էր իր խմբով, որը սարսափի էր մատնել շրջակայքը: Այսպես թե այնպես, կռիվը սկսված էր: Ավազակախումբը ոչնչանում է, իսկ հրոսակապետ Հասոն վիրավոր գերի է ընկնում և բերվում Կուկունյանի մոտ: Վերջինս նրան հարցու-

---

[228] Ծերունի (Ստեփան Ստեփանեան), Կուկունեանի խմբի արշաւանքը, տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 21:

[229] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 16:

փորձ է անում՝ Մատուռ[230] (Մատռաբերդ) կոչվող տեղանքը ճշգրտելու նպատակով: Մատուռը բավական հարմար վայր էր հանգստանալու և պաշտպանվելու համար: Սակայն, Հասոն ոչինչ չի պատասխանում և սպանվում է: Արամայիս Ազնավուրյանի ասած «հայտնի ավազակապետ Հասո-աղան», որի խումբը գլխովին ոչնչացվում է, ու ինքն էլ գերի է ընկնում, եղել է այդ քուրդ ծերունին, որի մասին հիշատակվում է նաև Հովսեփ Մովսիսյանի ու Ստեփան Ստեփանյանի (Բալաջան) պատմության մեջ:

Այդ չնախատեսված ընդհարման պատճառով հայտնի է դառնում խմբի տեղը: Հասոյի որդի Ռզգոն, տեսնելով այդ ընդհարումը, փախել ու տեղեկացրել էր Թոփրակ Կալեի թուրքական իշխանություններին և ռուս սահմանապահներին, որոնք անհրաժեշտ կանխարգելող միջոցներ ձեռնարկեցին խմբի առաջխաղացումը կասեցնելու համար:

Այդ մասին հետևյալն է պատմում արշավանքի մյուս մասնակիցը՝ Հովսեփ Մովսիսյանը. «Մեր արշաւախումբը բռնել էր արքունական ճամբան եւ առաջանում էր անկանոն, խառնիխուռն: Միայն Սարդարն ու Աբրահամն էին, որ արթուն պահակի դեր էին կատարում՝ մերթ սրան ու մերթ նրան արթնացնելով, սթափեցնելով ու խրախուսելով: Մեր էշը, իր բեռը շուռ տալով, փախաւ անհետ: Երկրորդ օրը, կէսօրուան մօտ, խմբի յառաջապահների մէջ մի իրարանցում ընկաւ: Ձիաւորներն շտապեցին դէպքի վայրը: Մենք էլ հասանք:

Բանից երեւաց, որ մի ծեր քիւրտ են բռնել եւ հասնողը իր խանչալն է խրում թշնամու մարմինը: Քրտի ընկերը փախել էր: Ձիաւորները ընկան յետեւից, բայց վերադարձան ձեռնունայն: Երեւացին նաեւ երեք քիւրտ հեծեալներ, որոնց մեր ձիաւորները տեսնելուն պէս յառաջ վարեցին, որ բռնեն, բայց քրտերը փախան վախեցած»[231]:

Խումբը շարունակում է ճանապարհը: «Մենք գտնւում էինք Բոզթափայի տակը, եւ մեր դիրքերը աւելի աննպաստ էին, մանաւանդ

---

[230] Մատուռը կամ Մատռաբերդը գտնվում է Արևմտյան Հայաստանում՝ Էրզրումի նահանգի Բայազետ գավառում՝ Ալաշկերտից հյուսիս:

[231] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 57:

որ քրտերի ժայռոտ դիրքերի մօտ էին գտնուում քրտական մի շարք գիւղեր՝ Ախվարկ, Այշին-Օղլի, Չաթ եւ այլն, որոնց բնակիչները կարճ ժամանակում օգնութեան կարող էին հասնել մեր դէմ կռուող քրդերին»[232],- պատմում է Արամայիս Ազնավուրյանը: Ճանապարհին խումբը հանդիպում է 4 զինված քուրդ ձիավորների: Առջևից գնացող կամավորները, վիրավորելով մեկին, ձիուց վայր են գցում ու սպանում[233]: Այնուհետև, խումբն անակնկալ հանդիպելով քրդական խաժամուժին և թուրք ու քուրդ հրոսակներին, մարտի է բռնվում: Սկսվում է կարճատև հրացանաձգություն: Ժամը 7-ի մոտ Աբրահամն ու Սարդարն առաջարկում են հարձակվել մոտակա երկու քրդական գյուղերի վրա, որոնցից մեկը Հախվերիկն էր: Ձիավոր խումբն առաջ է շարժվում հրացանաձգությամբ: Գյուղերի բնակչությունն որոշում է դիմադրել: Շուտով քրդական Ախվարկ գյուղից խմբի դեմ են դուրս գալիս 20 ձիավորներ: Խմբի մարտիկներին հաջողվում է գերել նրանցից երկուսին: Հանկարծ ետ են նայում և տեսնում, որ աջ կողմից ձգված լեռնալանջերը լցվել են օգնության եկած քուրդ ձիավորներով: Կուկունյանը հրամայում է ետ դառնալ և շուտափույթ հասնել խմբի մյուս մասին, որը հետևակ լինելու պատճառով հարձակման չէր անցնել: Այստեղից խումբը շարժվում է դեպի Բոզ-Դաղ լեռը [234]:

Ճիշտ կողմնորոշվելով՝ Ս. Կուկունյանը խմբով ամրանում է Բոզ-Դաղ լեռան վրա, այլապես նրանք կջախջախվեին հակառակորդի գերակշռող ուժերի կողմից: Բոզ-Դաղ լեռը մոտ էր գտնվում սահմանին. Թոփրակ-Կալեից կես ժամվա ճանապարհի վրա էր: Երբ խումբը հասել էր Բոզ-Դաղի գագաթին, զորքն ու քրդերը՝ մոտ 2000 հոգի, հասնելով ստորոտը, բավական մեծ հեռավորությունից սկսում են կրակ արձակել: Ս. Կուկունյանը խստորեն պատվիրել էր, որ գնդակ չարձակեն, մինչև որ հակառակորդը չմոտենա հրացանի ասպարեզի չափ: Ժամը 9-ին հակառակորդն արդեն 1700 քայլի վրա էր: Հանկարծ խմբի կողմից որոտում են հրացանները: Թշնամու զոհերը տեսնելով, տղաներն ավելի ոգևորված՝ գնդակներ են տեղում իրենց հակառակորդների վրա: Կռիվը տևում է մինչև երեկոյան ժամը 7-8-ը:

---

[232] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 136:
[233] Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 57:
[234] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 27, թ. 83:

Խումբը ոչ մի կորուստ չի տալիս, մինչդեռ թշնամու կորուստը զգալի էր[235]:

Խմբի հրամանատարներից ախալցխացի Ստեփանը թուրքական ուժերի հրամանատարին վախեցնելու և շփոթության մեջ պահելու համար խմբի մարտիկներին բաժանել էր երկու մասի և նրանց գլուխն անցած չորս պտույտ կատարեց սարի շուրջը:

Խմբին որսալու համար Թոփրակ-Կալեից ուղարկում են թուրքական զինվորների կես վաշտ, բայց խումբն արդեն հեռացած է լինում այդ վայրից: Դեպքն իր մանրամասնություններով տեղեկագրվում է ռուսական իշխանության վերին ատյաններում, որոնք հրաման են արձակում հետապնդել և ծերբակալել խմբին:

Կուկունյանի խումբը, որը սպանվածներ չէր տվել, շարժվում է դեպի Մատռաբերդի բարձունքները, որտեղ մի որոշ ժամանակ առաջ եղել էր Հունոն իր խմբով[236]: Խումբը նահանջելով՝ Աղբուլաղի մոտ՝ մի ձորակում, ընկնում է շրջապատման մեջ: Ձորակի երեք կողմից թուրքական ուժեր էին, իսկ չորրորդ կողմում՝ ռուսական սահմանների երկարությամբ, կանգնել էին ռուս սահմանապահները: Երեկոյան թուրքական ուժերը սկսում են հետ քաշվել Ալաշկերտի ուղղությամբ: Կուկունյանը Սարդարի հետ, դրության լրջությունը քննության առնելով, վճռում են կարգադրել, որ նախ ձիավոր խումբը նահանջի, որպեսզի հնարավորություն տա նահանջելու ամբողջ խմբին: Ի վերջո, խումբը (ձիավորներ և հետևակ) նահանջում է դեպի հյուսիս և Փախր լճի կողքով ուղղություն վերցնում դեպի Թեքեբինա:

Ըստ հուշագիր Մեսրոպ Վարդանյանի՝ Թեքեբինայի ձորում Կուկունյանի խմբին պետք է միանային Հունոյի և ալաշկերտցի Նազարեթի խմբերը, որոնք պետք է նախօրոք հասնեին Թեքեբինա: Բայց այդ օգնությունը չստացվեց: Սարգիս Կուկունյանն իր մարտիկներով ստիպված եղավ մնալ Թեքեբինայի ձորում՝ հանգստանալու: Խմբապետը իր չորս կողմը հավաքեց զինվորներին՝ ստուգելու համար նրանց վիճակն ու թիվը: Պարզվեց, որ խումբը մնացել էր առանց վալադների (ուղեկցորդներ), որոնք թողել փախել էին, սննդի պա-

---

[235] Տե՛ս Արամայիս Տէր-Դանիէլեան, Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), «Հայրենիք»,1937, N 2, էջ 82:
[236] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 27, թ. 84:

շարներն էլ սպառվելու վրա էին: «Այդ գիշեր վալադները, Ջալ-լադն[237] ու Ստեփանը, որ ձիաւորներ էին, առաջին փախչողներն ե-ղան: Լուսանալուն հաշուեցինք՝ մնացել էինք վաթսուն հոգի»[238],- գրում է Հովսեփ Մովսիսյանը: Պարզ էր, որ առանց սննդի, ուղեկ-ցորդների և ռազմամթերքի անհնար էր որևէ բան ձեռնարկել: Մեծա-քանակ և լավ զինված հակառակորդի պատնեշն անհնարին էր հաղ-թահարել, ուստի խմբապետը վճռում է կտրել դեպի Կողբ ընկած լեռ-նաշղթան, դուրս գալ ռուսական սահման, մարդկանց տեղավորել գյուղերում, ապա գնալ էջմիածին: Այնտեղ պետք է լինեին Գրիգոր Արծրունին և Ֆից-Ջերալդը: Խորհրդակցելուց հետո որոշվում է մութ գիշերին կտրել պաշարման շղթան, շարժվել Կաղզվանի ուղղութ-յամբ՝ դուրս գալ ռուսական սահմանը, մարդկանց տեղավորել գյու-ղերում, որտեղ նրանք պետք է ձմեռեին: Հետք չթողնելու համար խումբը սպանում է ճանապարհին հանդիպած մի քանի քրդերի:

Շղթան կտրելու ծրագիրը հաջողությամբ պսակվելուց հետո, խումբը ուղղություն է վերցնում նախանշված ճանապարհով: Ճանա-պարհին՝ Գյոլեր կոչվող վայրում, Կուկունյանը ցանկանում է խմբին հանգիստ տալ, բայց հենց այդ պահին Ալաշկերտի կողմից լսվում է հրացանաձգություն: Խումբը պատասխան կրակ է արձակում, որից հետո տիրում է լռություն: Այդ հրացանաձգությունն այն արդյունքն ունեցավ, որ խումբը չկարողացավ հանգստանալ և հոգնած շարու-նակեց ճանապարհը: Արամայիս Տեր-Դանիելյանը վկայակոչում է հետևյալը. «Ժամը 12-ի մօտ, երբ յայտնի չէր թե ուր են գտնուում, ժայռերի արանքում ընկած մի ձորում նորից որոտացին հրացան-ներ: Պարզուեց, որ այդ 10-12 հոգանոց քրդական մի խումբ է, մէկը այն բազմաթիւ խմբերից, որոնք զբաղուում էին հայի ապրանք թալա-նելով: Նրանց բոլորին տղաները բռնեցին, զինաթափ արին եւ

---

[237] Ջալլադ (Երվանդ Բաբերյան) ծնված Ալեքսանդրապոլում: 1890 թ. նա մտնում է «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մեջ, քիչ անց վերոնշյալ կազմակեր-պության միջոցով անցնում է Երկիր՝ հայ ժողովրդի վիճակն ուսումնասիրելու նպա-տակով: Կարսում 1890 թվականին հանդիպում է Սարգիս Կուկունյանին և արշավան-քին մասնակցող ընկերներին, միանում խմբին և մասնակցում Կուկունյանի արշա-վանքին (առավել մանրամասն տե՛ս Հ. Յ. Դ. առաջին գործիչներն ու հերոսները, գրեց՝ Ռ. Սեւեան, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4, էջ 140-141):

[238] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 58:

գնդակահարեցին, միայն մէկը, զինաթափ արուելուց յետոյ, տղաների անուշադրութեան հետեւանքով իր մօտը ատրճանակ էր թողել, յանկարծ, հանեց, կրակեց եւ վայրկենական շփոթութիւնից օգտուելով՝ թռաւ- անհետացաւ խաւարի մէջ»[239]:

Լուսադեմին խումբը հասնում է մի ձոր, ուր որոշում է հանգստանալ: Հոգնածությունը ծայրաստիճան էր: Արաքսի հովտով խումբը շարժվեց դեպի հայկական Խառ և Ղարաբաղ գյուղերը՝ ժամանակավորապես հանգիստ առնելու համար: Հրամանատարի և զորքի անփորձության պատճառով խումբը շեղվում է ճանապարհից: «Առհասարակ, ամէնքս անփորձ մարդիկ էինք, - պատմում է Բալաջանը,- եւ մեր անփորձութեան պէտք է վերագրել նաեւ այն, որ մենք իրար կորցրինք եւ Աղբուլախի ձորը իջնելիս խմբի մի մասը կտրուեց մեզանից եւ գնաց այլ ճանապարհով: Մեր անփորձութեան պէտք է վերագրել նաեւ այն, որ մենք կորցրինք ռազմամթերքով բեռնուած մեր 7 ձին: Այդ անփորձութեամբ կամ, աւելի ճիշտ, չափազանց եռանդով պէտք է բացատրել նաեւ, որ մեզ հետ առել էինք սուիններ, թէեւ մեր հրացանները հեծելազորքի կարճ բերդաններ էին»[240]:

Սարերում ու ձորերում երկար թափառելուց հետո խմբի մի մասը նահանջում և հասնում է Կաղզվանի շրջանի Խառ (Խար) գյուղը: Գյուղի գյուղապետը գյուղացիներին կարգադրել էր չընդունել խմբի անդամներին, ուստի սրանց մի մասը հանգրվանում է Խառի այգիներում՝ հանգստանալու, իսկ մյուս մասը ցրվում է զանազան ուղղություններով: Սրանցից մի քանի հոգի ճանապարհին ձերբակալվում են ռուս սահմանապահների կողմից:

Խառ իջնող խումբը նկատվել էր Կաղզվանի թուրքերի կողմից, որոնք այդ մասին հայտնել էին Կաղզվանի գավառապետ քուրդ Հասան-Աղային: Իր հետ վերցնելով 2 դասակ կոզակներ՝ նա շտապում է «դիմավորել» ռուս-թուրքական սահմանի այն կողմից վերադարձող հայ կամավորներին:

Մինչ Կուկունյանն իր զինակիցներին հանգիստ էր տվել Խառի այգիներում, գավառապետի օգնական Կուգուշևը մեկ գումարտակ

---

[239] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 16:
[240] Տե՛ս նույն տեղում, հ. 1, էջ 31:

զինվորներով՝ հարյուր կոզակ, մեկ հարյուրյակ սահմանապահներ և Դերբենդյան գնդի որսորդական մի խումբ[241] շտապում են դեպքի վայրը՝ փնտրելու «չարագործներին»: Արաքսի ափին՝ Գյումուշ-Քիմբեթի և Կաղզվանի միջև, կոզակների հետ ընդհարման հետևանքով ձերբակալվում են խմբի անդամներ Եփրեմ Դավթյանը, Վիրապ Ղազարյանը, Սահակ Աստուրյանը, Մեհրաբ Դաշտոյանը, Արտեմը: Առաջին երեքին Կուկունյանն ինքն էր ուղարկել լուր բերելու, բայց նրանք, չհասցնելով տեղեկություններ հաղորդել, ձերբակալվում են: Ձերբակալվում է նաև խմբից հետ մնացած Հովհաննես Մարգարյանը: Նա հարցաքննության ընթացքում, անզգուշությամբ թե շփոթվելով, խոստովանում է ամեն ինչ և ցույց տալիս այն վայրը, որտեղ պետք է գտնվեր Կուկունյանն իր խմբով:

Կուգուշևը շտապում է հեռագրել նահանգապետին, թե գտել է խռովարարների հետքը, և իր զորամասով շարժվում է դեպի անփույթ կերպով հանգստացող խումբը, որ առանց պահապաններ նշանակելու խմբվել էր այգու մի կողմում[242]: Կոզակներն Արաքսն անցած ձիերի հետքերով շարժվում են դեպի Խառ գյուղը և ընդհարում է տեղի ունենում ռուս զինվորների ու խմբի անդամների միջև:

Վերջիններս Կուկունյանի գլխավորությամբ իրենց ճանապարհը շեղել էին՝ խուսափելով հետապնդումից և հանգստանում էին խարույկի շուրջ: «Խումբի զինուորները զէնքները թափել էին մի ծառի տակ եւ այստեղ-այնտեղ խումբ-խումբ նստած էին. ոմանք ուտում էին, ոմանք հանգստանում, մի քանիսը քնած էին: Ձինւած էին միայն Սարդարը, Աբրահամը, Մուկուչը և Նատօն: Այս դրութեան մեջ էր Հայոց փոքրիկ «բանակը», երբ նրան շրջապատում են ահագին թիւ կազակներ, որոնք սկսում են հրացան արձակել ուղղակի տղոց դարսած զէնքերի վրայ: Տղերքն սթափվում են: Դարբին Ստեփանը վազում է դեպի զէնքերը՝ հրացան վերցնելու և վիրավորվում է»[243],- կարդում ենք Ասքանազի հուշագրությունում:

Տղաները հանկարծակիի են գալիս: Վերը հիշատակված զորամասերը շրջապատում են Խառ և Ղարաբաղ գյուղերի բարձունքնե-

---

[241] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 122:
[242] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 83:
[243] Նույն տեղում:

ը: Կոզակների խումբը առաջնորդում էին հայ զինվոր Մարտիրոսյանը և գյուղի մուխտար Գրիգոր Ոսկանյանը, որոնք և բանակցություններ են վարում Ս. Կուկունյանի խմբի անդամների հետ՝ առաջարկելով զինաթափվել: Առաջարկը մերժելուց հետո տեղի է ունենում փոխհրաձգություն, վիրավորվում է մեկ կոզակ:

Կապիտան Կուգուշևը մարտիկներին մի ամբողջ օր պահում է շրջապատման օղակի մեջ, մինչև հաջորդ օրը՝ ժամը 12-ին, Կաղզվանից ուղարկվում է օգնական ուժ՝ Դերբենդյան 154-րդ գնդի մի վաշտ և մի ջոկատ էլ Կարսյան սահմանապահ գնդից, որոնց միանում է զինված քրդերի մի խումբ: Սկսվում է ուժգին հրացանաձգություն: Խմբի համար ստեղծվում է անելանելի վիճակ:

Սահմանապահ ռուս զինվորների թշնամական վերաբերմունքը կատարյալ զարմանք է հարուցում: Հայը մտադրություն չուներ կռվելու ռուս զինվորների դեմ: Թուրքական բռնակալության կապանքներից հայրենիքի ազատագրությանը նվիրված հայորդիներից ոչ ոք չէր կարծում, որ ռուսական իշխանությունները կարող էին ամենաբիրտ ձևով և թշնամական վերաբերմունքով խոչընդոտել Օսմանյան կայսրության ճիրաններում գտնվող արևմտահայ եղբայրներին օգնության հասնող մարտիկներին: «Կուկունեանցը հեռուից, այլ և այլ նշաններով, իզուր էր ճիգ թափում կոզակներին և նրանց սպային հասկացնել իւր խմբի ով լինելն,- գրում է Եղիշե Գեղամյանցը,- նրանք, կոզակները, այդ բանը շատ լաւ իմանում էին և...կրակում էին Ղարսի նահանգապետի հրամանաւ, որ Պետերբուրգից առանձին հրահանգ էր ստացել յանկարծակի, և ուղղակի»[244]:

Ռուս զինվորների հարվածներից անակնկալի եկած հայ մարտիկները, հայտնվելով երկու կրակի մեջ, չհասցրին անգամ ինքնապաշտպանվելու փորձ անել և վճռեցին անձնատուր լինել: Ռուս զինվորները սեղմում են օղակը: Ս. Կուկունյանը սպիտակ դրոշակ է բարձրացնում և բարձրաձայն կանչում է ռուսերեն, թե անձնատուր են լինում, հրացան չարձակեն: Զորքը կարծես այդ հրահանգին էր սպասում, սկսում են սոսկալի կրակ տեղալ ամեն կողմից, և կոզակների արձակած առաջին գնդակին զոհ է գնում Ստեփանը, այնուհետև վիրավորվում է Աբրահամը: Կուկունյանն իր զինակիցներին

[244] Գեղամեանց Եղիշե Ա-Ք., նշվ. աշխ., էջ 71:

առաջարկում է իբրև ռուսահպատակներ հանձնվել՝ առանց որևէ դիմադրության, այն համոզմունքով, որ ռուսական կառավարությունն իրենց ոչինչ չի անի, քանի որ իրենց գործողություններն ուղղված են եղել ոչ թե Ռուսաստանի, այլ Թուրքիայի դեմ:

Կռիվը տևում է բավական երկար: Տեսնելով, որ դրությունն օրհասական է, տղաները որոշում են իրենց ձիերը նստած ճեղքել պաշարման շղթան և խույս տալ: Այնուամենայնիվ, նրանց մի մասը փորձում է դիմադրություն ցույց տալ: Ձինված էին մնացել 15-20 հոգի, իսկ մնացածները չկարողացան իրենց հրացաններին տեր կանգնել, որովհետև ռուս զինվորները հրացանների կույտերի վրա էին կրակ բաց արել և թույլ չէին տալիս մոտենան կուտակված զենքերին: Խմբի տղաները պետք է շրջափակման շղթան կտրեին և փախչեին՝ ազատվեին:

Կուկունյանը տղաներին առաջարկում է իրեն թողնել և հնարամտորեն փախուստի դիմել: «Քեռին եւ ղարաբաղցի Արշակը իմ մօտով դէպի Կաղզուան գնացին, ես էլ որ տեսայ փախչող փախչողի է՝ դէպի Ղարաբաղ գիւղի լեռը բարձրացայ: Ինձ միացան խնուսցի Խլղաթը եւ ղարսեցի Մուկուչը: Վերջինս յոգնել էր, չէր կարողանում քայլել, խնդրում էր թողնել իրեն եւ հեռանալ, բայց մենք նրան չթողեցինք»[245],- պատմում է Յովսեփ Մովսիսյանը: Փախուստի դիմեցին երկու Աբրահամները, բաշքադըքլարցի Մուկուչը, որոնք ժամանակին դատվել էին ռուսական դատարանի կողմից, քշվել տաժանակիր աշխատանքի, ուստի խիստ դեմ էին հանձնվելու առաջարկին: Սրանք, հեծած ձիերը, կրակ արձակելով և կտրելով կոզակների պաշարման շղթան, դիմեցին փախուստի: «Նադօն բարձրանում է մերձակայ լեռը եւ անձնատուր չի լինում. կոզակները նրան էլ այդտեղ են խփում: Այդ օրը 1890 թուի սեպտեմբեր ամսի 26-ն էր»[246],- շարունակում է իր պատմությունը Յովսեփ Մովսիսյանը: «Խումբը, ջլատուած ու տարտղնուած, խուճապահար ելք է փնտռում՝ ապահով մի տեղ հասնելու համար: Տղաների մի մասը յաջողել է ճողոպրել. մնացածներն էլ ճիգ են անում խուսափելու ռուս զինուոր-ոստիկանների

---

[245] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 58:
[246] Նույն տեղում:

հետապնդումներից»[247],- վկայակոչում է Վալադ Վալադյանը:

Փախուստի դիմողների օրինակին հետևում են Սարդարը, Արամայիս Ազնավուրյանը և ևս մի քանի հետևակ զինվորներ, որոնք ապաստան են գտնում Չերմալի գյուղում (Կարսի շրջան), որտեղից էլ հաջորդ օրը գաղտնի տեղափոխվում են Կարս: «Ես, Քեռին ու Ղարաբաղցի Արշակը հարկադրուած եղանք Կարսից հեռանալ, որովհետեւ Կարսի նահանգապետը՝ Տոմիչը, կարգադրել էր, որ Կաղզուանի գաւառապետը աշխատի որ թուրքաց Բասենից եւ Ալաշկերտից թուրքեր բերուին, որպէսզի ոստիկանութեան հետապնդումների ժամանակ օժանդակեն եւ ցոյց տան այն տաճկահայերին, որոնք վերոհիշեալ երկու շրջաններից էին, մանաւանդ մատնանշէին նոյն շրջանների Կուկունեանի հետ բռնուած զինուորներին»,- գրում է Արամայիս Ազնավուրյանը[248]:

Արամայիս Ազնավուրյանը Կարսից անցնում է Բաշքադըքլար գյուղը, իսկ Քեռին ու ղարաբաղցի Արշակը խճուղիով տեղափոխվել էին Ալեքսանդրապոլ: Երկու շաբաթ մնալով Բաշքադըքլարում և վայելելով Հովհաննես Մուրադյանի հյուրասիրությունը՝ Ա. Ազնավուրյանն այնտեղից մեկնում է Ալեքսանդրապոլ, ապա Ապարանի վրայով անցնում Վաղարշապատ: Քեռին ու ղարաբաղցի Արշակն Ալեքսանդրապոլից արդեն մեկնել էին Երևան[249]:

Խմբապետը փախուստի չի դիմում, նետվում է մի ձորակի մեջ, սարալանջին մոտակա թաքստոց է գտնում և թաքնվում խուզարկու աչքից: Այստեղ նա մնում է մենակ, ինքնամոռաց վիճակում, մինչև իրեն մոտենում է Ծերունին:

Կուգուշևը, թուրքերին ու քրդերին զենք բաժանելով, պատվիրում է ընկնել դաշտերը և բռնել փախստականներին: Կապիտան Կորգանովը խնդրում է թույլ տալ 100-150 կոզակներով ևս մի պտույտ անել և բռնել խմբի թաքնված անդամներին: Այդ պտույտի ժամանակ էր, որ նրանք անակնկալ կերպով դուրս են գալիս հենց այնտեղ, որտեղ ապաստանել էին Կուկունյանն ու Ծերունին: Ծերու-

---

[247] Վալադեան Վ., Սարգիս Կուկունեանի արշաւանքը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1957, N 12, էջ 57:
[248] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 6, էջ 150:
[249] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 150-152:

նին իսկույն անձնատուր է լինում... Կուկունյանը, այլևս աննպատակ համարելով դիմադրությունը, նույնպես անձնատուր է լինում՝ նախօրոք ապահով տեղում պահելով իր մոտ եղած 150 ռուբլի ոսկեդրամը: Խուզարկության ժամանակ նրա ծոցից հանում են մոտ 300 ռուբլի, դաշյունը (կոթին փորագրված էր «Ռաֆֆի»՝ իբրև նվեր Ռաֆֆու ընտանիքի կողմից) և զանազան թղթեր[250]:

Տեղի ունեցած դեպքերի արդյունքում արշավախմբի 60-70 մարտիկների հաջողվում է փախուստի դիմել: Մարտին Շաթիրյանը կարծում է, որ Կուկունյանն ինքը ևս կարող էր փախչել, բայց դա չի անում այն նպատակով, որ հնարավորություն ունենա դատավարության ժամանակ պաշտպանելու Հայոց դատը[251]: Կուկունյանի այդ քայլի մասին Միքայել Վարանդյանը հետևյալն է գրում. «Կուկունեանը պատուիրեց տղաներուն փախչիլ, իսկ ինքն անձնատուր եղաւ ռուս զինուորական հրամանատարութեան, որուն բացատրեց խումբին նպատակը: Խումբէն 60-70 հոգի յաջողեցան փախուստ տալ ու ազատիլ: Ուզեցին Կուկունեանն ալ փախցնել իրենց հետ, բայց նա մերժեց եւ անձնատուր եղաւ, որպեսզի հնարաւորութիւն ունենայ դատավարութեան ընթացքին պաշտպանելու հայկական դատը...»[252]: Ավելին, նա իր սպիտակ ձին տալիս է ղարաբաղցի Զաքարին, որպեսզի նա կարողանա փախչել:

Աբրահամը հեծած իր ձին, Զաքարն ու Սարդարն էլ հեծած Կուկունյանի ձին փախուստի են դիմում և ազատվում ձերբակալումից: Զաքարը վիրավորվում է հետապնդող կոզակների գնդակից: Վիրավորված ընկերոջն Աբրահամը հասցնում է Ղազարապատ գյուղը՝ թողնելով Վասակի տանը, որը մեծ հոգատարությամբ ու սրտացավությամբ խնամում և առողջացնում է նրան:

Մյուս երեք ընկերները բարձրանալով Արագածի փեշերը՝ ապաստան են գտնում իրենց ծանոթ քրդի տանը, ուր շատ անգամ էր հանգրվանել Սարդարը: Բայց գիշերվա ուշ ժամին տանտերերը սպանում են Մուկուչին և Սարդարին: Այդ պահին արթնանում է Աբ-

---

[250] Տե՛ս Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 20:
[251] Տե՛ս Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 52:
[252] Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 75:

ռահամը, քրդերը նրան վիրավորում են, բայց նա, իրեն չկորցնելով, անմիջապես բարձի տակից հանում է ատրճանակը և երկու քուրդ սպանելով՝ նստում ձին ու փախչում[253]:

Համաձայն Թիֆլիսի դատական ամբաստանագրի տվյալների՝ երկու կողմերից սպանվածների թիվը հետևյալն էր՝ Կուկունյանի խմբից 6 հոգի, որոնց մեջ էին զինվորական ղեկավար Սարդար Ավետիսյանը, խմբի անդամներ Աբրահամ Դաղեթցին, Ստեփան Էրզրումցին, Մկրտիչ Բաշքադըքլարցին, Նատո Բուլանղցին, Հարություն Թեքիրդաղցին: Հակառակ կողմից զոհերի թիվը կազմում էր 1 կոզակ, 10 քուրդ և թուրք: Խմբի անդամների մի մասին ձերբակալելուց հետո իշխանությունները գրավում են 28 բերդան հրացան, 2 վենչեստրի, 2 պիբոլի, 4 շնեյդերի և այլ հրացաններ: Միաժամանակ վերցնում են 11 դաշույն, 2 սուր, 6 սվին, 1 ատրճանակ, 24 յափունջի և 6 պայուսակ՝ փամփուշտներով լիքը[254]:

Ահա այսպիսի վախճան ունեցավ Կուկունյանի գլխավորած երթը դեպի Երկիր, որին արշավանքի մասնակիցներից մեկը՝ Հովսեփ Մովսիսյանը, տվել է «անփառունակ» ածականը: Ցավոք, բնորոշումը ճիշտ է տրված: Հիրավի, Հովսեփ Մովսիսյանի և նրա զինակիցների համար պետք է ծանր լիներ արշավանքի նման վախճանը, որովհետև նրանք խանդավառությամբ հավատացել էին ձեռնարկի կատարյալ հաջողությանը:

Ս. Կուկունյանն ու իր ընկերները նետվում են Կաղզվանի բանտը: «Մութն արդէն ընկած, 26 հուգուն շրջապատած, ահագին զգուշաւորութեամբ, ամբողջ գնդով ու սահմանապահ զորքով, տանում են Կաղզաան: Կուկունեանը չէր իմանում, թէ ընկերներից ովքեր են բռնված, որովհետեւ մութն էր: Իսկ ինքը չորս օրվան անընդհատ կռիւներից վերջին ծայր ջղայնացած, սոված, փշրված ու ջարդված՝ Կաղզաան հասնելուց ուշաթափվում է եւ այլեւս ոչինչ չի զգում: Երբ արթնանում է, տեսնում է իրեն մի սենեակում մենակ, բանտարկուած»,[255]- վերհիշում է Արամայիս Տեր-Դանիելյանը: Բանտում Կու-

---

[253] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 27, թ. 169, ինչպես նաև՝ Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 52:
[254] Տե՛ս Նորեան Ա., Դրագներ Հ. Յ. Դ. գործունէութիւնից, էջ 89:
[255] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 22:

կունյանին մեկուսացնում են առանձին սենյակում, իսկ մյուսներին փակում երկու սենյակներում: Սեպտեմբերի վերջին Կաղզվանից գալիս են Կարսի նահանգապետի օգնական Պետանդերն ու գավառական պաշտոնյաները և Կուկունյանին կանչում քննության: Ս. Կուկունյանը, պատճառաբանելով, թե հիվանդ է և քննության չի կարող ներկայանալ, փորձում է ժամանակ շահել մինչև մտքերը հավաքեր: Հաջորդ օրը կայացած հարցաքննության ժամանակ Պետանդերը փորձում է զանազան խորամանկ հարցերով Կուկունյանի վրա բարդել այն մեղադրանքը, թե հանցավոր մտադրություն են ունեցել ռուսական կառավարության դեմ, և Խառ գյուղի մոտ առաջին հրացանածգություն սկսողն իբրև եղել է հայկական կողմը: Կուկունյանն այդ բոլոր մեղադրանքները համարում է անարդար և Պետանդերին տալիս սպառիչ ու հիմնավորված պատասխաններ:

Խմբի տղաներին բանտում պահում են շուրջ մեկ ամիս: «Կարծում էինք, թե այսօր վաղը մեզ կ՚արձակեն,- ասում է արշավանքի մասնակից Հովսեփ Մովսիսյանը,- շատ միամիտ էինք եւ անփորձ: Մեր անփորձութիւնը հասնում էր յիմարութեան: Միայն մի ոստիկան էր դրուած մեզ հսկելու եւ կամերայից դուրս բերելու համար: Նա էլ ամբողջ օրը նստած տեղը մրափում էր. եւ ոչ մէկիս մտքովը չանցավ փախչել, չնայած այնքա՜ն հեշտ էր փախչելը»[256]: Կուկունյանը նույնպես չէր մտածել փախչելու մասին: Նրանք բոլորը վստահ են եղել, որ իրենք չպիտի պատժվեն ռուսական կառավարության կողմից, քանի որ արշավանքն ուղղված էր Թուրքիայի դեմ:

Կաղզվանի բանտում եղած ժամանակ Կուկունյանը դեռ չէր տվել իր ազնիվ խոսքը և ոչ էլ առիթ էր ունեցել ծանոթանալու փոխգնդապետի հետ: Երբ կալանավորները դեռ այնտեղ էին և պետք է փոխադրվեին Կարս, ուր հասնելը մեկ օրվա ճանապարհ էր և պիտի գնային հետիոտն, Կուկունյանի խուց է մտնում դաղստանցի պահակապետ, փոխգնդապետ Սեիդ Հուսեինը: Նա հայտարարում է, որ ինքն է ստանձնել բանտարկյալների փոխադրության պատասխանատվությունը, բայց լուր է ստացել, որ հայերը պատրաստվում են հարձակվել և ազատել նրանց: Սեիդ Հուսեինը զգուշացնում է, որ

[256] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 58:

նման բան պատահելու դեպքում հետևանքներն աղետաբեր կլինեն: Նա խորհուրդ է տալիս ազդել դրսեցիների վրա, որ նման քայլի չդիմեն, իսկ Կուկունյանն էլ ազնիվ խոսք տա, որ փախչելու փորձ չի կատարի: «Կուկունյանն ազնիվ խօսք է տալիս»[257],- գրում է Արամայիս Տեր-Դանիելյանը: Դաղստանցի պահակապետը բանտարկյալներին Կարս հասցնելուց հետո իր հատուկ շնորհակալությունն է հայտնել Կուկունյանին, որ, փախուստի հնարավորություն ունենալով հանդերձ, ասպետորեն պահել էր իր խոստումը[258]:

Կարսի հայությունը համակրանք և ակնածանք է ցուցաբերում ձերբակալված տղաների նկատմամբ: «Կարսի ժողովուրդը ծարաւի էր տեսնելու «հայ զօրքը»: Այդ տեսաւ ու շոշափեց: Ու թեև այդ «զօրքը» բանտարկուեցաւ եւ աքսորուեցաւ, բայց ժողովուրդը կը սիրեր իր տեսածը եւ կ՚ուզեր ունենալ ավելի անթերի, ավելի կատարելագործուած զինվորական ուժ մը, եւ ունեցաւ»[259], - մատնանշում է Ռուբեն Տեր-Մինասյանը:

Խմբի մասնակիցներից մեկը, որ կարողացել էր ազատվել Խառից և անցնել Կարս, Կարսի հայության կողմից բանտարկյալներին ցուցաբերած ջերմ ընդունելության ականատեսը լինելով, նկարագրում է հետևյալը. «Սարգիս Կուկունեանի Կարս բերած օրը Կարսի հայութիւնը բոլոր խանութները գոցած էր: Ժողովուրդը խռնուած էր ճանապարհին, փողոցներում, տանիքների վրայ: Կառավարութիւն թոյլ չէր տալիս, բայց նրան լսող չկար: Շատերը խումբ-խումբ կ՚երթային Կաղզուանի ճանապարհը, որտեղէն պիտի բերէին բանտարկեալները: Կէսօրէն յետոյ, հեռուէն երեւցան բանտարկեալները: Կուկունեանը կը քալէր առջեւէն: Տղերքը բոլորը շղթայակապ էին, շրջապատուած էին ոստիկաններով, կոզակներով ու հետեւակ զինուորներով: Երբ խումբը մօտեցաւ, ժողովուրդը շատ տրտում ու տխուր էր, բայց տղերքը ուրախ էին: Ու, յանկարծ, բազմութիւնը օդը թնդացուց «կեցցե՛»-ներով եւ այդպէս «կեցցե՛» աղաղակելով՝ հետեւեց մինչեւ բանտ»[260]:

---

[257] Արամայիս (Տէր-Դանիէլեան), Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), տե՛ս Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 23:
[258] Տե՛ս նույն տեղում:
[259] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, էջ 110:
[260] Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան. 1890-1950, էջ 277:

Արշավանքի մեկ այլ մասնակից՝ Արամայիս Ազնավուրյանը, Կուկունյանին Կարս փոխադրելու իրադարձությունն այսպես է նկարագրում. «Ժամի մօտ 12-ն էր, երբ շղթայակապ Կուկունեանն ոստիկանների ու հետևակ զինվորների մի զինուած վաշտով քաղաք մտավ: Ամբողջ Կարսը թափվել էր դուրս եւ խռնվել այն փողոցներում, որոնցով պիտի անցներ Կուկունեանը կենտրոնական բանտ գնալու:

Կուկունեանը երբ մտավ զինվորական ջոկատների եւ ժողովրդի մեջ՝ փողոցների երկու կողմերում կազմած շղթաների մէջ՝ ժողովուրդը լուռ հեկեկում էր: Ոստիկանական ու զինվորական վաշտերը զուսպ էին ու զգաստ: Կուկունեանը, արտաքինով թեեւ հոգնած ու փոշաթաթախ, սակայն առնական ու անվարան ընթացքով քայլում էր հսկող ջոկատի մէջտեղով՝ ձերբակալվածների առաջին շարքում: Նրա ձեռքերին ու ոտքերին ամրացած շղթաները նրա քայլվածքի հետ համաչափորեն աղմկում էին դաժան սառնութեամբ եւ Կուկունեանի ու նրա ընկերների առնական քայլվածքին տալիս էին արտակարգ թափ ու խորհրդավորութիւն: Բանտարկվածների խմբի առջևից հպարտորէն ու հաստատ քայլերով գնում էր շղթայակապ Կուկունեանը: Նրան հետեւում էին նրա զինակից ընկերները, երեքական հոգի շարքերով, իսկ ամբողջ խմբի չորս կողմից սուինները ձեռքներին պատրաստ ուղեկցում ու համաչափ ընթանում էին պահակախմբի անդամները: Այսպես շրջապատված Կուկունեանի խումբը ժողովրդի հեկեկանքների միջով, առաջնորդուեց քաղաքի գլխավոր բանտը՝ Ղարատաղ»[261]: Արշավանքի մասնակից, ձերբակալված, հետո դատարանի առջև կանգնած Յովսեփ Մովսիսյանը տալիս է հետևյալ մանրամասները. «Կարսում, մեզ Կաղզուանի ոստիկանատան բանտարկուածներիս, էլի մի քանի օր առանձին պահեցին, ինչ որ մեզ յոյս էր ներշնչում, թէ մեզ յանցաւոր չեն ճանաչում եւ երեւի շուտով ազատ կարձակեն... Խաբուսիկ յոյսե՜ր: Մի օր, քննութիւնից յետոյ, մեզ առաջնորդեցին Կարսի Ղարատաղի բանտը, ուր եւ տեսանք մեր մնացեալ ընկերներին»[262]:

---

[261] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 139:
[262] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 60:

Մարտին Շաթիրյանի վկայությամբ, Կարսի բնակչությունն այնպիսի խանդավառությամբ ու սիրով էր կապված Ս. Կուկունյանի խմբի հետ, որ երբ նրանց ծերբակալած բերեցին Կարս և բանտարկեցին, ամբողջ քաղաքը սգի մեջ էր: «Բանտարկեալներին շաբաթը մէկ տանում էին բաղնիք,- գրում է նա,- այդ օրերը քաղաքն ստանում էր կէս-տօնական, կէս-սուգի կերպարանք. շատերը խանութները փակում էին: ...Երեխաների փոքրիկ խումբեր կային, որ փողոցի անկիւններում սկսում էին «Մեր Հայրենիք» երգել: Կալանաւորները ձայնակցում էին նրանց, եւ բաղնիք գնալու երթն ստանում էր քաղաքական ցոյցի բնոյթ...»[263]: Ս.Կուկունյանի խմբի մասին լուրերը խոր արձագանք են գտնում ժողովրդի սրտում՝ դառնալով ամենօրյա խոսակցության, ոգևորության ու պաշտամունքի առարկա:

Ժողովրդի հետաքրքրությունը, մանավանդ ցավն ու վշտակցությունը Կուկունյանի խմբի հանդեպ չսահմանափակվեց Կաղզվանով ու Կարսով: Ս. Կուկունյանն ու իր ընկերները խրախուսանքի բազմաթիվ նամակներ էին ստանում, որոնցից մեկում ասվում էր. «Կուկունեանն իր գործերով զարթնեցրեց հայ ազգը խոր քնից... Իւրաքանչիւր ուրախ սեղանի ժամանակ առաջին կենացը հայրենիքին է նվիրված լինում, երկրորդը՝ հայրենիքի նախավկայ Կուկունեանին...: 1890 թուականին ծնունդ է առնում ազգը»[264]:

Այսպիսով, կովկասահայությունը ցնցված էր ռուսական կառավարության անմարդկային վերաբերմունքից: Ամենքի աչքում Կուկունյանն ու իր ընկերներն ազգային նահատակներ էին, նրանց ծեռնարկը ժողովրդական աննախընթաց մեծ ոգևորություն էր առաջ բերել, և, բնականաբար, նրանց ճակատագիրը պիտի հուզեր հայությանը:

Ս. Կուկունյանի խմբի նկատմամբ հետաքրքրությունն ու համակրանքն օրեցօր ուժեղանում էր, գրվում էին բանաստեղծություններ, երգեր՝ նվիրված նրանց անձնազոհ գործերին: Այդ եռանդն ու ոգևորությունն արտակարգ թափ է ստանում և ժողովրդի հայրենասիրության անսպառ աղբյուր դառնում հատկապես երգի շնորհիվ:

---

[263] Մ. Շ.-ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1923, N 6, էջ 51:

[264] Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 5, էջ 141:

Աշուղ Ջիվանին (Սերովբե Լևոնյան) իր քաղցրալեզու ձայնով ամենուրեք փառաբանում է բանտարկված հայրենակիցներին ու նրանց բռնած գործը՝ էլ ավելի խանդավառելով և ժողովրդի մտքի ու հոգու մեջ արթնացնելով մեր նախնյաց քաջությունն ու առաքինությունները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՔՍՈՐ: ՀԵՏԱՔՍՈՐՅԱՆ ԻՐԱՎԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դատավարություն և աքսոր

Սարգիս Կուկունյանի խմբի դատավարությունը Կարնո գաղտնի ընկերության մեծ դատավարությունից հետո (1883 թ.) առաջին խոշոր հայկական քաղաքական դատն էր:

Սարգիս Կուկունյանի արշավանքի գիտական պատմությունը երկար ժամանակ մնացել է անհայտության քողի տակ: Մեր ձեռքի տակ ունենալով Երևանի շրջանային դատարանի կողմից 1891 թ. նոյեմբերի 30-ին կազմած ամբաստանագիրը, Կարսի (1891 թ. նոյեմբերի 7) և Թիֆլիսի դատական պալատների նիստերի արձանագրություններն ու դատավճիռը[265], անցած տասնամյակների հեռավորությունից կաշխատենք ճշգրիտ ու մանրամասնորեն ներկայացնել Ս. Կուկունյանի խմբի դատական քննությունն ու դատը:

Ս. Կուկունյանի խմբի անդամներից 1890 թ. սեպտեմբերի 26-27-ը ձերբակալվածների թիվը 43 էր: Նրանցից դատարանի առաջ կանգնեցին 42-ը, քանի որ 1891 թ. հոկտեմբերի 8-ին՝ դատավարությունից առաջ, Կարսի բանտում թոքախտից մահացել էր ղարաբաղցի Սահակ Մինասյանը:

Խուզարկության ժամանակ Կուկունյանի մոտ գտնվել էին զանազան թղթեր, մարդկանց ու զենքերի ցուցակներ, ծածկագրերով նամակներ, որոնց բանալին արձանագրված էր Կուկունյանի ծոցատետրում: Նրանց մի մասը Կուկունյանը կարողանում է հանձնել Կաղզվանի շրջանի աչքի ընկնող գործիչ բժիշկ Կաճկաճյանին, որը, անշուշտ, ոչնչացրել էր ոստիկանության ձեռքը չընկնելու համար: Բայց ոստիկանության կողմից բռնվել էին չորս նամակներ, որոնք

[265] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 2-335:

դատական քննիչի համար մեղադրական կազմելու նյութ էին ծառայել և կցվել դատական ամբաստանագրին: Ս. Կուկունյանի մոտ գտնված թղթերից պարզ էր դառնում, որ գոյություն ունի ինչ-որ «Գաղտնի ընկերութիւն, իր ներքին կանոնադրութեամբ, իր պայմաններով եւ որ իւրաքանչիւր անդամ պարտաւոր էր կատարել վարչութեան հրահանգները՝ կատարելապէս հնազանդելով»[266]:

Նամակներից անվիճելի էր դառնում, որ ՀՅԴ գործիչներից մեկը, որ կապ ուներ Դաշնակցության Կենտրոնի հետ, դիմել էր Կուկունյանին՝ աշխատելով համոզել, որ նա մտնի Դաշնակցության շարքերը և ենթարկվի վերջինիս հրահանգներին: Նամակի հեղինակն իր մոտ եղած 200 ռուբլուց անձնական պատասխանատվությամբ Կուկունյանին է հանձնում 75 ռուբլի և խոստանում. «Թիֆլիս հասնելուց յետոյ, ուղարկել նրան դրամ ու զէնք, բայց այն պայմանով, որ նա ծանօթանայ ընկերութեան կանոնագրին եւ կարդայ ընկերութեան անդամների պարտականութիւններին վերաբերուող յօդուածները: Ընկերութեան անդամները, քանի նրանք գտնւում են Ռուսաստանում, պետք է ենթարկուեն Վարչութեանը: Հետեւաբար, դու եւս, լինելով գործող անձ, եւ գտնուելով Ռուսաստանում, լիովին ենթարկվում ես Վարչութեան եւ պարտաւոր ես, ինչպէս եւ այդ ընկերութեան իւրաքանչիւր անդամ, կատարել նրա կարգադրութիւնները, այլապէս կը լինի պետութիւն պետութեան մէջ: ... Եթէ ուզում ես օգնութիւն ստանալ ընկերութիւնից,- շարունակում է նամակի հեղինակը, - դրամ, զէնք եւ մարդ- պէտք է կատարելապէս ենթարկուես նրան...»[267]: Վերջում նամակի հեղինակը խնդրում է Կուկունյանից տեղեկացնել, թե արդյո՞ք նա իրեն համարում է այդ ընկերության անդամ, և հույս հայտնում, որ Կուկունյանը չի կամենա գործել ուրիշներից անջատ և կմիանա այն մարդկանց, որոնք համախմբված են «սուրբ գործով»:

Ս. Կուկունյանն անմիջապես նամակ է գրում ՀՅԴ կենտրոնական վարչությանը, թե ուզում է մտնել կուսակցության մեջ և պատրաստակամություն է հայտնում ենթարկվելու վերջինիս հրահանգներին: Այդ նամակը Կուկունյանը հանձնում է Ծերունուն (Ստեփան Ստեփանյան)՝ Թիֆլիս տանելու համար: Վերջինս, վերադառնալով

[266] Նորեան Ա., նշվ. աշխ., էջ 84:
[267] Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 39:

Թիֆլիսից, բերում է Վարչության ծածկագիր նամակը: Դա խուզարկության ժամանակ Կուկունյանից վերցրած երկրորդ նամակն էր՝ գրված պայմանական նշաններով: Կուկունյանի հուշատետրում գտնելով ծածկագիրը՝ քննիչը կարողանում է կարդալ ՀՅԴ Կենտրոնի ուղարկած նամակը, որ կրում էր Վարչություն ստորագրությունը: ՀՅԴ Կենտրոնը Ս. Կուկունյանին հայտնում էր, որ ստացել է պատասխան նամակը և ավելացնում. «Չէինք կասկածում, որ դու, նպատակ ունենալով ընդհանուր Սուրբ գործը, պէտք է համաձայնուէիր գործել համախորհուրդ եւ ընդունէիր այն կանոնագիրը, որին ենթարկւում են Ընկերութեան կազմի մէջ մտնող բոլոր անձնաւորութիւնները: Գալով այն համոզմանը, թէ ամենից առաջ անհրաժեշտ է տաճկահայերին զէնք մատակարարել, Վարչութիւնը լիազօրութիւն է տալիս Կուկունեանին՝ բանակցութեան մէջ մտնել Կարսի մարմնի հետ, յիշեալ նպատակի համար, որպէսզի ըստ կարելւոյն շուտով իրականացուի այդ կենսական պահանջը»[268]:

Այնուհետև, Կենտրոնն այդ և այլ նամակներով հրահանգում էր, որ Կուկունյանը Կարսի ընկերների հետ միատեղ գործեն, օր առաջ աշխատեն զենք մտցնել Երկիր, որի մեծ կարիքն ուներ ժողովուրդը: Այդ նպատակի իրականացման համար պահանջված միջոցները նա պետք է ստանար Կարսի ընկերներից, որոնց նույնպես գրվել և տեղեկացվել էր այդ մասին: ՀՅԴ Կենտրոնը հրահանգում է, որ Կուկունյանը «Կարսի խմբից ստանա յիշեալ նպատակի համար պահանջուած միջոցները եւ այդ խմբի հետ միասին ջոկել իր տրամադրութեան տակ գտնուած մարդկանցից մի «հրոսախումբ», որ ընդունակ լինի զբաղւել այդ գործով, որոնք Երկրում կկարողանան զբաղվել խաղաղ գործունեութեամբ...»[269]: Նրանց հետ էլ Կուկունյանը պետք է մտներ Երկիր:

Նամակներում նաև ասվում էր, որ Երկրում այդ պայմաններում եռանդուն աշխատանքները միանգամայն վնասակար են: Այդ իսկ պատճառով առաջարկվում էր խմբի մնացած անդամներին ցրել, որպեսզի Կարսի մարզում խմբված չմնան: Դաշնակցության կենտրոնի և գործիչների այս պահանջը բացատրվում էր նրանով, որ այդ օրե-

[268] Նույն տեղում:
[269] Նույն տեղում, էջ 40:

րին Երկրից վերադարձած Մարտիրոս Մարգարյանն ու Հովսեփ Արղությանը Մուշում գաղտնի հանդիպում էին ունեցել Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես Խարախանյանի հետ, և, հակառակ Սարկավագի հաղորդած տեղեկությունների, հայտնի էր դարձել, որ Երկրում ոչ մի պատրաստություն չկար, և մեծ խմբով այնտեղ մտնելը վնասակար կարող է լինել:

Բացի նշված նամակներից՝ կար նաև մեկ այլ մտահոգություն. Ս. Կուկունյանի խմբի՝ Կարսի շրջանում լինելը հայտնի էր դարձել Կարսի նահանգապետ Տոմիչին: Վերջինս իրազեկ էր Կուկունյանի խմբի գործունեությանը և հրահանգներ էր սպասում կառավարչապետից, թե ինչպես վարվի Կուկունյանի և նրա խմբի հետ: Կուկունյանը դրան տեղյակ չէր: Մինչդեռ Դաշնակցության Կենտրոնն իրազեկ էր և հարկ էր համարել այդ մասին տեղեկացնել նրան: Այդ առթիվ գրված նամակում ՀՅԴ Կենտրոնը հաղորդում էր, որ Կարսի իշխանությունները տեղյակ են Կուկունյանի գործերի մասին և խորհուրդ է տալիս «որքան կարելի է շուտ իր հինգ պետերբուրգցի ընկերների հետ հեռանալ Թուրքիա: Իսկ միւսները պէտք է անցնեն Երեւանի նահանգը»[270]:

ՀՅԴ Կենտրոնը հաղորդում էր նաև, որ «Թիֆլիս է եկել Շախտախտինսկին (Կարսի զինվորական նահանգապետի գրասենյակի կառավարիչ - Կ. Ե.), զեկուցման համար սպասում է Շերեմետեւին (Կովկասի կառավարչապետ - Կ. Ե.): Ասում է, որ ձեզ բոլորիդ ճանաչում է. գիտէ, թէ ու՛ր էք գտնուում եւ սպասում է իշխանութեան հրամանին ինչպէս վարուելու մասին...»: Նամակի հեղինակը տեղեկացնում էր Կուկունյանին, «որ զէնք այժմ չեն ուղարկելու, որ նա շատ թշնամիներ ունի, բայց եթէ նա գոնէ մի քիչ առաջ մղէ գործը, նրան ցոյց կը տրուի օգնութիւն... ի նկատի ունենալով կառավարութեան կողմից նրան սպառնացող վտանգը՝ մեկնել Թուրքիա, թէկուզ միայն իր Պետերբուրգի ընկերների հետ, իսկ միւսները կարող են Թուրքիա անցնել Իգդիրի վրայով...»[271]: Նամակի վերջում ասվում էր, որ Ս. Կուկունյանը, որպեսզի լռեցնի իր թշնամիներին, «պէտք է շուտով երթայ Թուրքիա. Թիֆլիսում լուրեր են տարածուել, որ Կուկունեան-

[270] Նույն տեղում:
[271] Նույն տեղում:

ցը վախենում է Թուրքիա գնալ, բայց իր վերջին նամակով նա «փակեց բերանը» բոլոր այն անձանց, որոնք կասկածում էին նրա Թուրքիա գնալու մասին»[272]:

Նամակը թվագրված էր 1890 թ. սեպտեմբերի 8-ով: Այն ուղարկված էր Թիֆլիս քաղաքից Կարսի շրջանի Սողանլուղի գավառակի (տեղամասի) Սարիղամիշ ավան և հասցեագրված տեղի առևտրական Կարապետ Իսահակյանին՝ Սարգիս Կուկունյանին հանձնելու համար:

Սարգիս Կուկունյանի մոտ հայտնաբերված չորրորդ նամակը նույնպես կրում էր Վարչություն ստորագրությունը, որով հաղորդվում էր Վարչության վերջին որոշումը Կուկունյանի ու նրա՝ հրամանատարության տակ գտնվող խմբի գործերի մասին: «Աշխատիր ըստ կարելւոյն շուտ» նախադասությունը վերաբերում էր խումբը երկիր ուղարկելուն, այնուհետև շարունակում. «Մարդկանց, որոնց անհնար է անմիջապէս բերել, աշխատիր տեղաւորել զանազան կողմեր, բայց ոչ Կարսի շրջանում եւ ոչ էլ նրանց ծննդավայրում: Գնացող մարդիկ պէտք է բաժանուեն խմբերի եւ գնան կարաւանի ճանապարհով. մարդկանց միւս մասը պէտք է զբաղուի զէնք բաժանելով. երկրորդ մասը պէտք է խաղաղ կերպով մտնէ ժողովրդի մէջ. Վարչութիւնը չի ցանկանում, որ խումբը ակտիւ գործունէութիւն ունենայ, բացի Սերվիսի խմբից...»[273]:

Մեղադրական ակտից հանված նամակների այս փոքրիկ կտորներից պարզ է դառնում, թե Կուկունյանն ինչ նպատակներով էր գտնվում Կարսի մարզում, և թե «Վարչությունը» ինչ վերաբերմունք ուներ դեպի նրա գործը: Հստակ էր մի բան, որ դա ռուսական հողի վրա ձերբակալված, բայց արևմտահայության դատը պաշտպանելու համար կոչված և քաղաքական նպատակներ հետապնդող մի խումբ էր, որը ռուսական կառավարության դեմ ոչինչ չուներ, այլ նպատակաուղղված էր պայքարելու սուլթանական բռնակալության դեմ:

Ս. Կուկունյանը և իր խմբի տղաները ընկել էին ծանր կացության մեջ: Հովսեփ Մովսիսյանի վկայությամբ՝ Կուկունյանը հոգեկան ծանր ապրումների մեջ էր: Ոգևորված, հայրենասեր, բայց միաժա-

---

[272] Տե՛ս նույն տեղում:
[273] Նույն տեղում:

մանակ անփորձ երիտասարդը միանգամայն անասելի պայմանների մեջ էր ընկել՝ խուզարկություններ, քննություններ: «Քննութիւնն ու հետեւաբար բանտարկութիւնը տևում է շատ երկար, երկու տարուան չափ,- գրում է Յովսեփ Մովսիսյանը:- Մի տարի առանձին խցում մնալուց յետոյ, Կուկունյանին յաջողւում է փոխադրուել բանտի ընդհանուր բաժանմունքը, միւս տղաների մօտ: Այստեղ նա անգործ չի նստում. սկսում է պարապել ընկերների հետ, պատմութեան եւ լեզուի դաս տալ...»[274]:

Ռուսական իշխանությունները բոլոր ձերբակալվածներին ավելի քան երկու և կես տարի պահեցին, մինչև անհրաժեշտ քննություններն ու նախաքննությունն ավարտած համարվեցին: 1893 թ. ապրիլի 7-ին Կարսում սկսվում է խմբի ձերբակալված անդամների դատավարությունը, որը տևում է մոտ մեկ ամիս՝ 25 օր: «Ս. Կուկունեանի եւ ընկերների գործը ամսի 7-ին հետաձգուեց փաստաբանների խնդրանօք: Վերջիններս պահանջում էին, որ իրենց ներկայացնեն այս բոլոր նամակները, որոնք գտնուած են Կուկունեանի մօտ եւ որոնք տալիս են դոցա նպատակին բոլորովին ուրիշ գոյն: Մինչեւ մենք չգիտենանք այն ի՞նչ Սուրբ գործ է, որի մասին ակնարկում է «Վարչութեան» նամակը, անկարող ենք ճշտութիւնը ստուգել, այդ բոլոր թղթերը ժանդարմերիայի պահանջմամբ գործից վերցուած են: Դատարանը ընդունեց փաստաբանների խնդիրքը եւ յետաձգեց գործը: Նորից նշանակուած է մայիսի 26-ին, յուսով որ մինչեւ այն ժամանակ հարկաւոր թղթերը կը ստացուին»[275],- կարդում ենք Ռոստոմին ուղղված՝ Ս. Զավարյանի 1893 թ. մայիսի 7-ի, թվակիր նամակում:

Կարսի շրջանային դատարանի վարույթում դատապարտյալների գործը քննելու համար Կարս էր գնացել Երևանի նահանգային դատարանն իր ողջ կազմով: Գործը նախ քննվել էր ժանդարմական վարչության կողմից, որը, դրան տալով քրեական բնույթ, արշավանքի մասնակիցներին առաջադրել էր մեղադրանք, թե նրանք գաղափարական մի նպատակի համար զինված արշավանք են ձեռնարկել

---

[274] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 116:
[275] Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 115:

և ոճիրներ կատարել: Ժանդարմական վարչությունը գործը հանձնել էր Երևանի շրջանային դատական Ատյանի առանձին գործերի քննիչ Բոզարովին, որին ղեկավարում էր դատախազի օգնական Սուրինը: Երևանի շրջանային դատարանը դատական նիստի նախագահ Բոզարովի նախագահությամբ սկսում է դատավարությունը:

Կուկունյանի խմբի ձերբակալվածների պաշտպան փաստաբանն էր Գաբրիել Մնացականյանը: Վերջինս ամբողջ դատավարության ընթացքում չի պաշտպանել մեղադրյալներից ոչ մեկին՝ ասելով. «Ձեր վճիռն արդէն կայացել է. սրանք առերեւույթ ծեւականութիւններ են»[276]: Այսինքն՝ քննությունն ու դատական վճիռը կայացվում են այնպես, ինչպես կառավարությունն էր ցանկանում: Գործը չհամարելով քաղաքական՝ իշխանություններն առաջ են քաշում այն տեսակետը, թե խումբը քրեական հանցանք է գործել, և որպես ավազակային խումբ՝ ազգային վրեժխնդրությունից դրդված սպանություններ է կատարել ու զինված դիմադրություն ցույց տվել իշխանություններին[277]: Պարզ է, որ քննիչներն ու դատավորներն ամեն ջանք գործադրել էին խեղաթյուրելու արշավանքի նպատակը՝ ցանկանալով ցույց տալ, թե շարժումն ուղղված էր նաև Ռուսատանի դեմ:

Դատախազության կողմից կանչվել էին շուրջ 350 վկաներ, մեծ մասը՝ քրդեր և թուրքեր, նույնիսկ Թուրքիայից: «Այնպիսի վկաներ երեւացին, խոսեցին ու վկայեցին, որ մենք չէինք էլ տեսել: Ամեն մեկիս տվել էին 200 էջանոց մեղադրական ակտ»[278],- գրում է Հովսեփ Մովսիսյանը: Վկաների մեծ մասի ցուցմունքները միտումնավոր խեղաթյուրված էին, իսկ մեղադրյալների բողոք-դիմումներն՝ անլսելի: Նման աննպաստ պայմաններում դռնփակ կայանում է Կուկունյանի և իր խմբի տղաների դատավարությունը: Առաջնորդվելով խեղաթյուրված փաստերով և ցուցմունքներով՝ դատախազը գործին տալիս է քրեական բնույթ, և դա հաստատագրվում է դատարանի կողմից: Գործում ներգրավվել էին 107 մեղադրյալներ, որոնցից 27-ին դատարանը մեղադրում էր առավել վտանգավոր հանցագործութ-

---

[276] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 116:
[277] Տե՛ս նույն տեղում:
[278] Նույն տեղում, էջ 117:

յունների մեջ, որոնք քրեորեն հետապնդելի էին[279]:

Մերժելով ցարական իշխանությունների իրենց դեմ հարուցած քրեական մեղադրանքները՝ ամբաստանյալներն իրենց կռվի նպատակի մասին հպարտորեն հայտարարում են. «Մենք գնում էինք Տաճկահայաստան՝ մեր եղբայրների վրէժը նրանց արիւնը ծծող քրդերից եւ տաճիկներից հանելու, մենք ուզում էինք միայն օգնութեան ձեռք կարկառել այդ դարերով տանջուած, խաղաղ ժողովրդին. մենք ռուս կառավարութեան դէմ չէինք: Մեզ զարմացնում, ապշեցնում է ռուս կառավարութեան բռնած այդ պախարակելի դիրքը, ընթացքը»[280]: Պարզաբանելով իրենց Երկիր անցնելու նպատակը, ինչպես նախաքննության ընթացքում, այնպես էլ դատարանում, մեղադրյալի աթոռին նստած հայ կամավորները պահանջում էին, որ իրենց գործին քաղաքական բնույթ տրվի, քանի որ իրենց ձեռնարկը քաղաքական նկատառումներով էր պայմանավորված[281]: Նրանք համոզված էին, որ իրենք ոչ մի հանցանք չեն գործել ռուսական օրենքների և կառավարության հանդեպ:

Հակառակ դրան՝ ցարական դատարանը գործին մոտեցավ միանգամայն այլ տեսանկյունից: Մեկ ամիս տևող դատաքննությունից հետո Երևանի շրջանային դատարանը 1892 թ. մայիսի 5-ին՝ Խրիմյան Հայրիկի կաթողիկոս ընտրվելու օրը[282], կայացնում է անարդար ու դաժան որոշում, համաձայն որի՝ Կուկունյանը և նրա ընկերները որակվում են որպես վրեժխնդրությամբ տոգորված չարագործներ, որոնք միություն էին կազմել՝ թուրք սպանելու նպատակով: Նրանց դատապարտում են տաժանակիր աշխատանքի՝ զրկելով կայքից, գույքից և ազատ մարդուն վայել բոլոր քաղաքացիական իրավունքներից: Վճիռն անհեթեթ էր, և դրան առարկում են թե՛ դատապարտյալները, թե՛ նրանց պաշտպանները: Ինչևէ, դատարանի նախագահ Բոգարովը կարդում է մեղադրական ակտը, ըստ որի, համաձայն Ռուսաստանի քրեական օրենսգրքի 200, 208, 214, 262,

---

[279] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 20:

[280] Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), էջ 27-28:

[281] Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 5, էջ 60:

[282] Մկրտիչ Խրիմյանը կաթողիկոս է ընտրվել 1892 թ. մայիսի 5-ին, օծվել՝ 1893 թ. սեպտեմբերի 25-ին:

269, 1271 և 1459 հոդվածների, Կուկունյանն ու իր ընկերները ներկայացվում են որպես չարագործներ, մարդասպաններ և պետական իշխանություններին դիմադրողներ[283]: Ընդհանուր առմամբ 43 ձերբակալվածների ազատազրկման ժամկետը կազմում էր 422 տարի[284]:

Սարգիս Կուկունյանը մեղադրվում էր Արևմտյան Հայաստանում ապստամբություն բարձրացնելու նպատակով սահմանը զինված ու անլեգալ անցնելու, ինչպես նաև իր գործակիցների հետ ավազակություններ, սպանություններ կատարելու և իշխանություններին դիմադրություն ցույց տալու համար: Դատարանի վճիռը և Ս. Կուկունյանի խմբի ողբերգական վախճանը պարզորոշ ցույց տվեցին այն վերաբերմունքը, որ ուներ և հետագայում տարիներ շարունակ պիտի ունենար ցարական Ռուսաստանը դեպի արևմտահայության ազատագրական շարժումը: «Կուկունեանի խմբի դատավարութիւնով ցարի կառավարութիւնը ցոյց տուաւ, որ նա դաշնակցել է սուլթանական բռնակալութեան հետ եւ իրեն տրամադրելի բոլոր միջոցներով պիտի հետապնդի ու պատժի այն հայերին, որոնք կը յանդգնին անհանգիստ անել Աբդիւլ Համիտեան Թիւրքիան»[285],- գրում է Վարդգես Ահարոնյանը:

Դատավճռին սպասող բազմությունը ցնցվում է անակնկալից: Նրանց հուզված դեմքերն արցունքոտվում են, մինչդեռ դատապարտվածները ժպտում էին արհամարհանքով: Տղաներին ցավ էր պատճառում ոչ թե դատարանի ծանր վճիռը, ոչ թե իրենց վիճակված երկարամյա դաժան բերդարգելումը, այլ գլխավորապես այն հանգամանքը, որ իրենց դատապարտում էին ոչ թե որպես քաղաքական հանցագործների, այլ իբրև հասարակ ավազակների՝ հաշվի չառնելով բազմաթիվ վկայություններն ու խոսուն ապացույցները: Ավելացնենք, որ ցարական սատրապներին գրգռում էր նաև կամավորների ուսադիրներին եղած «Մ. Հ.» տառերը, որոնք դատախազի կողմից մեկնաբանվեցին «Միացյալ Հայաստան» նշանակությամբ:

---

[283] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, գ. 1, ց. 23, թ. 138:
[284] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 8:
[285] Վարդգէս Ահարոնեան, Մօտիկ անցեալից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, N 10, էջ 98:

Եվ դրա հիման վրա դատախազ Սուրինը պնդում էր, որ Կուկունյանը հետապնդում էր Արևելահայաստանի անջատումը Ռուսական կայսրությունից հանուն Միացյալ և Անկախ Հայաստանի, որով գործին տրվում է քաղաքական բնույթ[286]: Մինչդեռ մեղադրյալների բնորոշմամբ Մ. Հ. գլխատառերն ունեին «Միութիւն Հայաստանի» նշանակությունը: «Հայերը միացյալ Հայաստան են երազում»,- շտապեց եզրակացնել կարճամիտ պաշտոնեությունը: Այդ դավաճանական գործին մեղսակից էր համարվում նույնիսկ էջմիածնի միաբանությունը՝ սկսած կաթողիկոսից, և ահա գրագրությունների մի մեծ շարան սկսվեց Երևանի նահանգային դատարանի, Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազների և արդարադատութեան նախարարի միջև: Կուկունյանի խմբին էին վերագրվում Մատռաբերդում Հունոյի խմբի կողմից 10 մահմեդականների սպանության պատասխանատվությունը և ևս ուրիշ 50 քրդերի սպանությունը[287]:

Սարգիս Կուկունյանի մոտից խուզարկության ժամանակ հայտնաբերվել էր մի գրություն, որի հիման վրա պետական մեղադրողը պնդում էր, որ գլխավոր մեղադրյալը պատկանել է ինչ-որ կազմակերպության, և որ հակառակ այդ գաղտնի կազմակերպության տված հրահանգի՝ Կուկունյանը փորձել է անցնել Երկիր: Մինչդեռ հիշյալ գրությունը, ինչպես վերը նշվել է, Թիֆլիսից Կուկունյանին էր ուղարկել ՀՅԴ ղեկավարությունը, որով մեկ անգամ ևս խորհուրդ էր տրվում այդքան մեծ թվով կամավորներով Երկիր չմտնել:

Դատապարտյալների պաշտպան Տեր-Ստեփանյանի խորհրդով շրջանային դատարանի վճիռը տղաները բողոքարկում են Թիֆլիսի դատաստանական պալատին՝ միաժամանակ խնդրելով իրենց տեղափոխել Թիֆլիսի բանտը, եթե ոչ բոլորին, ապա գոնե Սարգիս Կուկունյանին: Սակայն այդ խնդրանքը մերժվում է:

Թիֆլիսի դատաստանական պալատի վարույթում 1893 թ. քննության է ենթարկվում Երևանի շրջանային դատարանի վճիռը: «1893 թ. մայիսի 23-ին կայսերական մեծության հրամանագրով Թիֆլիսի դատական պալատի նիստ է գումարվում հետևյալ կազմով՝ Պալատի նախագահ Ֆրանցով, անդամներ՝ Վերխովսկի, Կարնովիչ,

---

[286] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. Բ, էջ 218-219:
[287] Տե՛ս նույն տեղում:

քարտուղար Ամիրխանով, դատախազ Շարիգինի մասնակցությամբ քննվում է բողոքարկված գործը»[288]: Դատապարտյալների պաշտպանության գործը ստանձնել էին հայտնի փաստաբաններ Տեր-Ստեփանյանը, Օպոչինինը և Եվանգուլյանը: Պալատն անփոփոխ է թողնում վճիռը: Մամուլին կարգադրված էր ոչինչ չհրապարակել, հետևաբար, լռում էր և ոչ մի արձագանք:

Դատաստանական պալատի վճռից հետո, գործը համարելով ավարտված, պատրաստվում են Կուկունյանի խմբի անդամներին փոխադրել Թիֆլիս. «Նոր հագուստ տվեցին, մի վերարկու՝ թիկունքին ռուսերեն K տառով (այսինքն՝ «կատորժնիկ»՝ թիապարտ), երկու ձեռք ճերմակեղեն, մի նոր գդակ: Երկու օրից մենք ընդմիշտ մնաս բարեւ պիտի ասէինք Կարսի բանտին, որ մեզ երեք տարի պահել էր իր երախում՝ միայն երկուսին կուլ տալով՝ Աբրահամին եւ Սահակին»,- վերհիշում է Հովսեփ Մովսիսյանը[289]: Դատապարտյալներին 1893 թ. սեպտեմբերի 20-ին Կարսից շղթայակապ տեղափոխում են Դիլիջան, Աղստաֆա, այնտեղից էլ Թիֆլիս՝ Օրթաճալայի կենտրոնական նահանգային բանտ:

Դատարանի որոշումը դաժան էր և առաջին ծանր հարվածն էր հայ ազատագրական շարժմանը: *Խմբապետ Սարգիս Կուկունյանը (26 տարեկան)* ստացավ 20 տարվա տաժանակիր աշխատանքի պատիժ, որից 7 տարին շղթայակապ, ապա՝ մշտական աքսոր Սախալին կղզում: Խմբի անդամներից 19-ը դատապարտվում են 15 տարվա ազատազրկման. նրանց թվում՝

1. *Ստեփան Հարությունյան (Ծերունի), 22 տարեկան,*
2. *Գրիգոր Աքմաքչյան, 24 տարեկան,*
3. *Մարտիրոս Գալստյան, 28 տարեկան,*
4. *Վարդան Բոզոյան, 30 տարեկան,*
5. *Մկրտիչ Հաճի Դանիելյան, 28 տարեկան,*
6. *Հովսեփ Մովսիսյան, 20 տարեկան,*
7. *Ռուբեն Հովհաննիսյան, 25 տարեկան,*
8. *Կոստանդին Լիսինյան, 25 տարեկան,*

---

[288] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թ. 58:

[289] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 117:

9. Մանուկ Գալստյան, 25 տարեկան,
10. Մուրատ Ղոլմախյան, 25 տարեկան,
11. Ավետիս Մանուկյան, 24 տարեկան,
12. Խլղաթ Մինասյան, 28 տարեկան,
13. Մովսես Աղաբեգյան, 25 տարեկան,
14. Ռուբեն Դերձակյան, 24 տարեկան,
15. Բարդուղիմեոս Քամանչաճյան, 25 տարեկան,
16. Դավիթ Չոլախյան, 24 տարեկան,
17. Հաճի Կարապետ Բալջյան, 25 տարեկան,
18. Մինաս Օզբեգյան, 30 տարեկան,
19. Հովհաննես Մարգարյան, 25 տարեկան:

Ձերբակալվածներից 2 հոգի՝ *Պետրոս Ձաքարյանը (24 տարեկան) և Մեհրաբ Դաշյանը (25 տարեկան)* դատապարտվում են 8-ական տարի տաժանակիր աշխատանքի: Եվս չորս հոգի՝ իբրև անչափահասներ, արժանացան 8-ական տարի տաժանակիր աշխատանքի՝

1. Եփրեմ Դավթյան, 18 տարեկան,
2. Ծառուկ Հովհաննիսյան, 19 տարեկան,
3. Մկրտիչ Մուղդուսյան, 18 տարեկան (մահացել է Թիֆլիսի բանտում՝ թոքախտից),
4. Մամուշ Մխոյան, 19 տարեկան:

Խմբի անդամներից *Արտեմ Խոսրովյանը (21 տարեկան)* դատապարտվում է 3 տարվա ազատազրկման:

Բանտում մինչև դատավարությունը մահացել էին երկուսը՝ Աբրահամ Ավետիսյանը (ղարաբաղցի, 25 տարեկան, 8 տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտված) և Սահակ Մինասյանը (ղարաբաղցի, 25 տարեկան, 15 տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտված): Մնացյալներն ազատ են արձակվում:

«Երբ դատավճիռը լսելուց յետոյ բանտ վերադարձանք՝ նոր միայն զգացինք, որ մենք իսկական բանտարկեալ ենք,- հիշում է Հովսեփ Մովսիսյանը,- Երեք օր հարբածի նման էինք: Երգում, գոռում էինք խենթ ու խելառի պէս՝ չհասկանալով մեր արածը: Յոյն բանտապետը փախչում էր բանտից՝ չլսելու համար մեր ոռնոցը, որովհետեւ չէր ուզում մեզ դիտողութիւն անել...

Երեք օր ետքը եկաւ բանտային վարսավիրը եւ գլուխներիս աջ կողմը ածիլեց՝ թողնելով ձախը: Յաւիտենական աքսորի կամ տաժանքի դատապարտուածների միայն գլխի ձախ կողմն էին ածիլում: Ապա շղթայ զարկեցին մեր ոտներին. գլուխներիս դրին գորշ գոյնի թիապարտի գլխարկ եւ հագցրին նոյն գոյնի հագուստ: Բայց ամենից ավելի ազդում էր շղթան: Նրա շռինդից մարում էր մեր հոգին: Մենք այլեւս «կատորժնիկ»-ներ էինք՝ թիապարտներ»[290]: Երկու օրից տղաները մնաս բարև պիտի ասեին Կարսի բանտին, ուր անցկացրել էին երկար ու ծիգ տարիներ:

ՀՅԴ գործիչները որոշում են կազմակերպել ձերբակալված տղաների փախուստը: Այն իրագործվելու էր ճանապարհին՝ Դիլիջանի ձորից անցնելիս: Այդ գործում կարող էր օգտակար լինել արշավանքի մասնակից Աբրահամը: Նա հանձն առավ իրագործել փախուստի ծրագիրը: Աբրահամը լսել էր, որ Նոր Բայազետի կողմերում ինչ որ ավազակային խումբ է գործում, որում ընդգրկված էին իր վաղեմի ընկերները: Վերջիններիս միջոցով էլ նա փորձում է իրագործել փախուստը: Բայց խմբում եղած մի լրտես ոստիկանությանը տեղեկացնում է ծրագրի մասին: Աբրահամին մատնությամբ 1891 թ. հունիսի 18-ին Նոր Բայազետում ձերբակալում և տեղափոխում են Կարսի բանտ, ձերբակալված տղաներին ցույց տալով՝ փորձում պարզել նրա անձը: Հարցաքննության ժամանակ ձերբակալված կամավորները, առանց բացառության, ձևացնում են, որ չեն ճանաչում Աբրահամին:

Կարսի բանտում դատախազի մոտ քննությանն ուղեկցող երկու պահակներից Աբրահամը փորձում է խույս տալ և դիմել փախուստի, բայց իր մահկանացուն է կնքում Կարսի բանտի պարիսպների տակ՝ բանտապահ ռուս կոզակի արձակած գնդակից:

Մինչև 1894 թ. հունվար ամիսը դատապարտյալները պահվում են Թիֆլիսի կենտրոնական բանտում, որտեղից փոխադրվում են Օրթաճալայի կենտրոնական նահանգային բանտ: «Խումբը մնաց Թիֆլիսի Օրթաճալայի բանդումն մինչ 1894 թուի յուլիսի սկզբները, որից յետոյ ուղարկեցին կրել իրենց պատիժները Մետեխի բանտ՝

[290] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 117:

սպասելով Վճռաբեկ ատյանի որոշմանը»[291],- կարդում ենք Ասքանազի ձեռագիր հուշագրությունում:

Դատապարտյալները բողոք են ներկայացնում Դատաստանական պալատի Վճռաբեկ ատյանին, որպեսզի վերաքննվի գործը: Նրանց բողոքագրի համաձայն՝ Դատաստանական պալատի վճիռը քննության է ենթարկվում Սենատում՝ 1894 թ. հունվարի 28-ին: Գործի պաշտպանությունն այս անգամ ստանձնել էր հայտնի ռուս փաստաբան Միրոնովը, դատավարության ողջ ընթացքին ներկա է եղել արդարադատության նախարար Մուրավյովը: Շատ կետերում համաձայնվելով Միրոնովի հետ, ընդունելով նրա առաջ բերած առարկություններն ու արտասանած ճառը՝ դատախազը, վերաքննելով երկու դռների վճիռները, այնուամենայնիվ, անփոփոխ է թողնում Երևանի շրջանային դատարանի որոշումը, քանզի Սենատի վճիռը կանխորոշված էր:

Ամեն ինչ ավարտված էր: «Կուկունեանը եւ Բալաջանը չուզեցին նոր դիմում անել, ուստի եւ մեզանից վեց ամիս առաջ քշուեցին Սախալին կղզին,- հիշում է Հովսեփ Մովսիսյանը: Մնացեալներս նորէն դիմում գրեցինք Սենատին եւ կայսեր: Բայց ի զուր: Սրանք եւս հաստատեցին դատարանի վճիռը: Այլեւս որեւէ տեղից յոյս չունէինք:

Այդտեղ մեզ ջոկեցին: Յովհաննէս Մարգարեանին, Կարապետ Թէքիրտաղցիին եւ Վիրապին իբրեւ վատառողջների, քշեցին Սիբիր, տաժանակրութեան, Մոսկվայի վրայով: Իսկ մնացեալներս քշեցին Խարկով՝ Սախալին աքսորելու համար»[292]:

Դաշնակցության հայտնի գործիչ Մարը (Միքայել Տեր-Մարտիրոսյան) 1893 թ. այցելում է Թիֆլիսի բանտում շղթայված Կուկունյանի արշավախմբի անդամներին, որոնց այդ օրերին պիտի աքսորեին Սիբիր: «Առաջին անգամ պիտի տեսնէի այն դէմքերը, որոնց մասին այնքան գրուած էր և այնքան կարդացուած այդ միջոցին,- գրում է Մարը,- «Կուկունեանի խումբ» անունը բաւական էր մեր արիւնով լի սրտերը ցնցելու համար: Դուռը բացուեց եւ մենք ներս մտանք բակը, որպէս բանտարկեալների բարեկամներ: Բակի մէջ եւս

---

[291] ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 27, թ. 171:

[292] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 6, էջ 122:

բաւական երկար պէտք էր սպասել, մինչեւ որ ամբողջ խումբը լաւ հսկողութեան տակ պահուած, նկուղներից հանէին եւ մեզ մօտ առաջնորդեին: Շղթաների ծանր շառաջը առաջին անգամն էր հնչում իմ անսովոր ականջին: Ամէն կողմ սուիններ ու հրացաններ:

Մեր ուշադրութիւնը լարուած է դէպի խմբապետը եւ իր երկու օգնականները: Երեքն էլ թարմ տարիքով ու համակրելի արտաքինով: Նրանց շուրջը բռնած են միւս երկրորդական, երրորդական ոյժերը, որոնց գլխի մազերի կէսը ածիլուած էր»[293],- հիշում է Մարը: Նրա հիշողության մեջ առավելապես դրոշմվում է Եփրեմի ինքնավստահ, բայց պարզ ու անպաճոյճ, «...շատ չի տեւել, մենք նորից մեր գործի վրայ կը լինենք» արտահայտությունը[294]:

Դատավճռից հետո, բանտից-բանտ տեղափոխվելով, բանտարկյալները 1895 թ. մարտի 1-ինէտապով[295] շղթայակապ աքսորվում են Սիբիր: Սախալին մեկնողները հավաքվում են Խարկովում՝ այնտեղից Օդեսա տեղափոխվելու համար: «Շատ հավանական է, որ մինչեւ յուլիսի վերջը նոր հոգաբարձութիւնը արդեն մտնի իրաւունքների մեջ: Կուկունեանի ընկերներին ուղարկեցին արդեն այս օրերս, ջոկ-ջոկ չորսին Վոլգայով, մնացածներին Խարկովի ճանապարհով, իսկ Սարգսին առանձին՝ մենակ, բազմաթիվ պահապաններով: Խեղճը հիւանդ է քիչ, այնպես որ նրան կը պահեն մօտ մի ամիս Խարկովում»[296],- 1894 թ. Թիֆլիսից նամակով «Դրոշակ»-ի խմբագրությանը տեղեկացնում է Արշակ Թադևոսյանը:

«Անոնք այլեւս մարդիկ չէին օրէնքի առաջ, անոնք կենդանի մեռածներ էին...»[297],- աքսորյալներին այսպես է բնորոշում Մալխասը:

Աքսորյալներին նախ քշում են Բաթում: Այստեղ բանտում հիվանդանում է Գրիգոր Աքմաչյանը և հիվանդանոց տեղափոխվելով՝ մահանում[298]: Մի քանի օրվա ընթացքում խումբը ստվարանում է նորանոր բանտարկյալներով: Ապա աքսորյալներին նավով, զինվորնե-

---

[293] Սգապսակ Եփրեմին, էջ 14:
[294] Նույն տեղում:
[295]«Էտապ» ասվածը կայան առ կայան ճանապարհ ընկնելն է՝ ոտքով, ուժասպառության աստիճան հոգնելով:
[296] Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 141:
[297] Մալխաս, նշվ. աշխ., հ. Ա, էջ 134:
[298] Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 7, էջ 129:

րի հսկողությամբ, տեղափոխում են Նովոռոսիյսկ, այնտեղից էլ Տագանրոգի բանտը, ուր նրանք մնում են 2 օր: Այստեղ, ըստ հուշագիր Հովսեփ Մովսիսյանի, բանտապետն ու բանտային բոլոր ծառայողները կոզակներ էին, դատապարտյալներին վերաբերվում էին չափազանց մեղմ ու քաղաքավարի, իսկ բանտային պայմաններն անհամեմատ լավ էին, քան մյուս բանտերում: Այստեղից աքսորյալներին քշում են Ռոստովի բանտը, ուր բանտային պայմանները շատ ավելի ծանր և ճնշող էին: «Ամէն ազգի ու տիպի բանտարկեալներ կային այնտեղ՝ հայ, թիւրք, ռուս, վրացի, լեզգի, օսետին, քիւրտ, սարթ եւ այլն եւ այլն,- գրում է Հովսեփ Մովսիսյանը:- Դրանցից շատերը շղթայակապ էին: Այստեղ՝ Ռոստովի բանտում, մեր խումբն ավելի ստուարացրին եւ քշեցին Խարկովի բանտը, ուր պիտի ծմեռեինք, ապա գարնանը մեզ պիտի քշէին Սախալին»[299]:

1894 թ. սեպտեմբերի 13-ի գիշերը Ռոստովից մեկնած գնացքը բանտարկյալներին տեղափոխում է Խարկով: «Խալոդնայա գորա»-ի («Ցուրտ լեռ») վրայ էր շինուած Խարկովի կենտրոնական բանտը, դէպի ուր եւ ուղղուեց բանտարկեալներիս խումբը՝ մութ գիշերով: Առաջ էր շարժւում աքսորականներիս խումբը գիշերային խաւարի միջով որպես մի չարագուշակ, սեւ զանգուած, ուղեկցուած շղթաների համաչափ շռինդով եւ պահակների ծանր կոշիկների դոփիւնով»[300],- հիշում է Հովսեփ Մովսիսյանը:

Բանտարկյալներին տանում էին զույգ-զույգ՝ իրար ետևից. մեկի և մյուսի ձեռքերը միացված մի կարճ շղթայով, իսկ մի երկար շղթա ձգվում էր վերջին զույգի միջից մինչև առաջինը, որի ծայրը կողպեքով փակում էր հրամանատար - սպան ու բանալին իր մօտ պահում: «Իմ ու Եփրեմի ձեռները միշտ միասին էին լինում շղթայած, որովհետեւ մենք անբաժան զոյգ էինք: Ա՜հ, քանի՜ անգամներ աքսորի դաժան ճամբին շղթաներից ծեծուած ու մաշուած մեր ձեռները հանգչել են միմեանց ձեռներին՝ հանգստանալու, եւ քանի՜ անգամներ հերոսական Եփրեմը անիծել է բռնութիւնն ու բռնակալներին»[301],- իր հուշագրության մեջ վերհիշում է Հովսեփ Մովսիսյանը:

---

[299] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 7, էջ 129:
[300] Տե՛ս նույն տեղում:
[301] Նույն տեղում:



Տեղ հասնելուն պես մի զինվոր, արձակելով շղթան, հաշվում էին բանտարկյալներին՝ 65 զույգ՝ 130 հոգի: Մի խոժոռ դեմքով սպա, սեղանի մոտ նստած, մեկ-մեկ կարդալով բանտարկյալների անունները, նայելով թղթերը, ինքնությունն հաստատելուց հետո հրամայում է հագնել նոր ստացած հագուստը՝ կարճ բաճկոն, տաբատ և բանտային գլխարկ... «Մեր հագուստը փոխելուց հետո մեզ կանգնեցրին պատժի տարիների համեմատ: Այստեղ էր, առաջին անգամ, որ Եփրեմին ինձնից զատեցին»[302],- գրում է Հովսեփ Մովսիսյանը:

Բանտային կյանքը նողկալի էր, ստուգումներ, խուզարկություններ, ամենօրյա շղթաներ, տանջանք, տառապանք և այսպես շարունակ: Եվ ահա 1895 թ. փետրվարի 23-ին բանտարկյալներին հայտնում են, որ երեք օրից տեղափոխվելու են Սախալին, ուր համեմատաբար ավելի «ազատ» պիտի լինեին, որովհետև նրանց համար դժոխքն անգամ նախընտրելի էր Խարկովի բանտից:

Որոշված օրը՝ բժշկական քննությունից հետո, նոր հագուստեղեն և ոտնաման է տրամադրվում բանտարկյալներին: Նույն թվականի փետրվարի 26-ին՝ գիշերվա ժամը 9-ին, զույգ-զույգ կանգնեցնելով, շղթաները կապելով՝ լուռ ու անշշուկ քայլքով բանտարկյալներին տանում են երկաթուղու կայարան, ուր պատրաստ կանգնած էին սև վագոնները, որտեղ էլ տեղավորվեցին բանտարկյալները: Երրորդ զանգը հնչելուց հետո, գնացքը սկզբում դանդաղ, ապա արագ սլացքով շարժվում է դեպի Օդեսա, ուր բանտարկյալներին նորից բժշկական քննության են ենթարկում, ապա Մոսկվայից եկած աքսորականների մի մեծ խմբի միացնելով՝ քշում դեպի ծովափ: «Մենք արդէն մտովին «մնաս բարով» էինք ասում մեր աշխարհին եւ հրամանի սպասում՝ նաւ նստելու: Հրամանը չուշացաւ: Եւ ահա 1500 հոգիանոց կալանաւորների թափօրը շարժուեց դեպի նաւը: Դա մարդկային մի հսկայ զանգված էր՝ զրկուած աշխարհից ու կեանքից:

Ծովային զինուորները մեզ հերթով կանգնեցնելուց յետոյ, սկսեցին մէկ առ մէկ նաւը մտցնել, որի ամբարներում նախօրօք մեզ համար տեղ էին պատրաստել՝ երկաթապատ վանդակներով: Մօտ 300 հոգուս մի ամբար լեցրին, որի դռան մօտ կար մի քառակուսի վան-

[302] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), «Հայրենիք» ամսագիր, 1934, N 7, էջ 134:

դակ, ուր կանգնում էր պահակ զինվորը եւ հսկում մեզ: Քիչ յետոյ պահակն հրամայեց լռել, մի մարդու պէս լռեցինք»[303],- կարդում ենք Հովսեփ Մովսիսյանի հուշերում: Այնուհետև բանտարկյալներին զննելուց հետո, քահանայի ու ծովակալի խոսքերից ու մաղթանքից հետո նավը երեք անգամ սուլում ու ճեղքում է ծովի ալիքները: Այստեղից «Յարոսլավլ» նավը, չորս օր անց կտրելով Սև ծովը, մտնելով Մարմարա, Դարդանելի նեղուցը հատելով, խարիսխ է ձգում Պոլսում: Պոլսից հետո նավը խարիսխ է ձգում Պորտ-Սաիդում, անցնելով Սուեզի ջրանցքը, Ադենի, Սինգապուրի, Նագասակիի և Վլադիվաստոկի վրայով տաժանակիրների քարավանը քշվում է անհրապույր Սախալին կղզի, որը հազարավոր մտքի ու սրտի տեր մարդկանց գերեզմանը դարձավ ցարական դաժան ռեժիմի շրջանում:

Ի՞նչ էր Սախալինը: Գրեթե անմարդաբնակ կղզի՝ ծածկված կուսական անտառներով: «Սարսափելի խառնուրդ մըն էր՝ այդ բնածին ոճրագործներու եւ իտէալական բարձր թռիչքներու, անձնուէր զոհաբերութիւններու, ինքնուրաց մարտիրոսութիւններու ընդունակ հերոսներու: Ռուս կայսրութեան ամենաշքեղ պատմութիւնը, որ չի կրնար մոռացուիլ եւ որ փարոս մըն է Ասիայի խաւարին մէջ, հոն, Սիբիրի սառնամանիքներուն մէջ փայլեցան իր անհասելի գեղեցկութեամբ: Շատ շատերը գացին հոն իրենց կեանքովն իսկ քաւելու յանցանքը, որ փառքի պսակ մըն էր իրենց ճակատներուն, եւ հազարաւոր յաջորդներու ճամբան հարթեցին դէպի ազատության պայքարը իրենց տաժանելի մահով, զոր շքեղ անձնուրացումով, յանուն ժողովրդի ազատագրման, յաւիտենական սառնամանիքներու մէջ, կ՚երթային կոփելու գալոց արշալոյսը»[304],- կարդում ենք Մալխասի (Արտաշես Հովսեփյան) հուշերում:

Կղզում բանտարկյալների համար ցարական կառավարությունը հիմնել էր աքսորավայր կայան, որը միաժամանակ կղզու վարչական կենտրոնն էր: Այդ կայանները 3-ն էին. առաջինը՝ Կորսակով, որն ամենամեծն էր, որտեղից անցնելով՝ նավը բանտարկյալներին տեղափոխում էր երկրորդ կայան՝ Ալեքսանդրյան, և երրորդը՝ Տանգի կայան: Ալեքսանդրյան կայանն կենտրոնականն էր՝ իր մեջ ամ-

[303] Նույն տեղում:
[304] Մալխաս, նշվ. աշխ., հ. Ա, էջ 133:

փոփելով զորքն ու բանտերը: Աքսորյալների բախտը վերջնականորեն տնօրինվում էր այս կայանում: Այսպես, 20 տարով տաժանակրության դատապարտվածը չորս տարի շղթայակապ պետք է մնար այս բանտում, իսկ 15 տարի ունեցողը՝ երեք տարի, եթե այս ժամանակամիջոցը չլրացած՝ աշխատանքի են տանում՝ ապա շղթաները չեն արձակում: Ժամանակը լրանալուն պես աքսորյալներին տեղափոխում էին մյուս բանտը, որը կոչվում էր «Վոլ» (նույն Կոմանդա), ուր փոխադրվածն աշխատանքի ժամերից հետո ազատ կարող էր շրջել քաղաքում մինչև երեկո, բայց գիշերը պարտավոր էր ներկա լինել բանտային ստուգմանը, այլապես բացակայողը կհամարվեր «փախած»[305]: Բարեբախտաբար, տղաներից 15 տարի դատապարտվածներին տանում են այն բանտը, որտեղից բաժանում էին աշխատանքի, իսկ 20 տարի դատապարտվածներին թողնում էին հենց այս վերջին կայանում: Սախալին կղզին՝ իբրև աքսորավայր, իսկական դժոխք էր՝ հարկադիր, տաժանակիր աշխատանք՝ մտրակների ու պատիժների, սպառնալիքների ու զրկանքների տակ: Եվ այդ տառապանքի ճիրաններում մարդիկ դառնում էին անզգա և անտարբեր:

1910 թ. Բաքվում լույս է տեսնում Ս. Կուկունյանի փոքրածավալ գրքույկը[306], որը պատմությունն է սախալինյան 16 դժոխային տարիների՝ զարհուրանք ու դժոխք, դաժան աքսորանոց՝ լրիվ կտրված արտաքին աշխարհից, «ուր ընկած դատապարտեալը,- ինչպես գրում է Ս. Կուկունյանը,- նոյնիսկ մարդ չէ, նա միայն տաժանակիր է, մի շնչաւոր էակ, որին իրաւունք է տրւում զգալ, բայց չբողոքել, մտածել, բայց չարտայայտվել. մի էակ, որ իրաւունք ունի աշխատելու քարածուխի հանքերում, գերաններ քաշել, քանի շունչ եւ շարժուելու հնարաւորութիւն ունի. մի իրաւազուրկ դժբախտ, որ ամեն րոպէ կարող է ծեծուիլ ճիպոտներով, շղթաների զարկուիլ, փոքրիկ սայլակների շղթայուիլ, մի խօսքով՝ ամեն տեսակ պատուհասների ենթարկուիլ, սակայն առանց բողոքելու, առանց նոյնիսկ տրտնջալու մասին մտածելու, որովհետեւ բողոքն ու տրտնջալը միայն դառ-

[305] Տե՛ս Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 8, էջ 97:
[306] Կուկունեան Ս., Վերջին օրերս Սախալինում, Բաքու, 1910:

նութիւններն են կրկնապատկում, եռապատկում»[307]:

Հուշագրի վկայությամբ օրվա հարկադիր, տաժանակիր ու ծանր ֆիզիկական աշխատանքը կատարելուց հետո «...իրիկունն ուժասպառ վեր էինք ընկնում, աչքերս անձկութեամբ դէպի հեռուն երեւացող մայրցամաքի ափին գցում եւ, անձնատուր լինելով սպառիչ, դառն խոհերին, ինքնամոռացութեան մատնված՝ քուն մտնում: Առաւօտն արթնանալուց՝ մարդ մի բան ուտելու անդիմադրելի ցանկութիւն է զգում... Բայց որտե՞ղից. իւրաքանչիւր տաժանակրին օրական տալիս են երեք գրուանքայ հաց, որ խոնջալից գործի ժամանակ չի էլ իմացւում, թէ երբ կերանք, ինչպես կերանք: Այդ ի նկատի ունենալով, ոմանք սովորութիւն էին դարձրել իրենց ողորմելի երեք ֆունտից մի կէս ֆունտաչափ կտրել բերնիցը, հետեւեալ օրուայ համար: Միայն գիշերը պահել գրպանում՝ փորձը ցոյց էր տուել, որ չէր կարելի. բոլորը սոված մարդիկ էին, գողանում, ուտում էին: Ուստի քանդում էին հողը կէս արշինաչափ, հացը դնում այնտեղ ու վրան պառկում»[308]: Այս տողերը սախալինյան աննկարագրելի անլուր տանջանքների դժոխքի նկարագրությունն են տալիս, ուր մի առանձին չարությամբ էին հետամտում տաժանակիրներին՝ նրանց ինքնասիրության բեկորները ցեխի մեջ տրորելով, նրանց ծաղր ու ծանակի ենթարկելով, նվաստացնելով: Սակայն դրանք, այնուամենայնիվ, ամբողջական ու լրիվ նկարագրությունը չեն տաժանակիրների սախալինյան սոսկալի օրերի: «Մի քանի երեսում Սախալինը տեղաւորել՝ միամտութիւն է,- գրում է Ս. Կուկունյանը,- ասում ու սոսկում եմ ամբողջ մարմնով, իմ ամբողջ էութեամբ, երբ յիշողութեանս մէջ վերակենդանանում են այն զարհուրելի օրերը: Սախալինեան դժոխքի մասին գաղափար կազմելու համար, հարկաւոր է ապրել այն դժոխքում, զգալ իր կաշուի վրայ բոլոր տանջանքները, թէ չէ, ոչ մի նկարագրութիւն, ոչ մի գրիչ պատկերացնել Սախալինն՝ անկարող է... »[309]:

Այդ դաժան աքսորավայրում Կուկունյանը տառապեց 16 տարի՝ լրիվ կտրված արտաքին աշխարհից: Իր տաժանակրության վերջին

---

[307] Կուկունեան Ս., նշվ. աշխ., էջ 25-26:
[308] Նույն տեղում, էջ 34:
[309] Նույն տեղում, էջ 4:

շրջանում Ս. Կուկունյանը, անշուշտ, համեմատաբար ավելի լավ դրության մեջ էր գտնվում, քան իր մյուս բախտակիցները: Նախ, Սախալինի արևելյան ափերում գտնվող Ալեքսանդրյան կայանում, որտեղ տաժանակիր էր Կուկունյանը, 1898-1899 թթ. բնակություն էին հաստատել ճապոնացիները, որոնք զբաղվում էին ձկնորսությամբ ու մանր առևտրով և գործի բերումով մշտական հանդիպումներ էին ունենում ռուս պաշտոնյաների ու վաճառականների հետ: Սակայն, ռուսերենի չիմացությունը խոչընդոտ էր նրանց գործերին: Ռուս վաճառականները ճապոնացիներին ռուսերեն սովորեցնելու գործը հանձնարարում են Կուկունյանին:

Սախալինյան դժոխային պայմաններում Կուկունյանը պահպանում է իր ոգու կայունությունը: Նա հանձն է առնում ամսական չնչին վարձատրությամբ, այն էլ՝ գլխավորապես մթերքներով, տեղի ճապոնացիներին, ապա նաև աքսորված տաժանակիրների երեխաներին ռուսերեն սովորեցնել: Այդ դասերը հոգեկան բավականություն ու սփոփանք էին պատճառում և մխիթարում Կուկունյանին: «... Նրանք ինձ վրայ բարձրից չէին նայում, դէպի ինձ վերաբերւում են ոչ այնպես, ինչպես սովորաբար Սախալինումն է ընդունված՝ վերաբերուել դէպի կատարէլապես անպաշտպան, թշուառ, իրավազուրկ տաժանակիրը,- գրում է Ս. Կուկունյանը,- ոչ, նրանք ինձ վրա նայում էին, ինչպես իրենց հաւասար մի մարդու, նրանց հետ եղած ժամանակս միայն գտնում էի, որ մարդկային արժանապատուութիւնս յարգւում է, որ ես, տաժանակիր լինելով հանդերձ, մարդ էլ եմ...»[310]:

Կուկունյանը խոստովանել է, որ ճապոնացի աշակերտներն առանձին ուշադրություն էին դարձնում և յուրահատուկ հարգանքով վերաբերվում այն տաժանակիրների նկատմամբ, որոնք Սախալինում իրենց պատիժն էին կրում քաղաքական հանցանքների համար, մանավանդ, եթե նրանք ներկայացուցիչներն էին Ռուսաստանում ապրող մանր ազգությունների[311]: Կուկունյանը ճապոնացիներին պատմում էր թուրքական լծի տակ արևմտահայերի ծանր վիճակի, իր խմբի՝ Արևմտյան Հայաստան անցնելու մասին: Խմբապետին լսում էին խորին ուշադրությամբ և իրենց հետաքրքրող հարցերն

[310] Նույն տեղում, էջ 10:
[311] Նույն տեղում:

ուղղում: «Իմ պատմածների համառօտագրութիւնը նրանք լոյս ընծայեցին ճապոնական թերթերում»[312],- վերհիշում է Սարգիս Կուկունյանը:

Այսպիսով, Կուկունյանի՝ իբրև տաժանակրի դրությունը համեմատաբար փոխվում է դեպի լավը: Նրա դրությունն էլ ավելի մեղմեց կղզու զինվորական նահանգապետ Լյապունովի կողմից կառավարական տպարանում կառավարիչ նշանակելու բարեբախտ դիպվածը: Դեռ ուսանողական տարիներից ծանոթ լինելով տպագրական գործին՝ Կուկունյանը կարճ ժամանակում կանոնավորում է տպարանի վիճակը: Մեկ տարվա աշխատանքը քննելով՝ գեներալ Լյապունովն իր գոհունակությունն է հայտնում Կուկունյանին գործի իմացության և բարեխղճության համար, ինչի արդյունքում տպարանը մի քանի հազար ռուբլու օգուտ էր տվել: Նա կարգադրում է տաժանակիր Կուկունյանին նշանակել ամսեկան 30 ռուբլի աշխատավարձ: «Տաժանակիր եւ 30 ռուբլի ռոճիկ Սախալինում. դա մի հազուագիւտ բախտաւորութիւն է,- գրում է Ս. Կուկունյանը,- բայց այս անգամ ինձ 30 ռուբլին չէր հետաքրքրողը, այլ այն, որ ես դրանով մի քայլ էլ առաջ անցայ իմ մարդկային իրաւունքների մեջ»[313]: Եվ իրոք, համեմատած Սախալինում անցկացրած առաջին տարիների հետ, Կուկունյանի ներկա վիճակը գերադասելի էր:

Ս. Կուկունյանը Սախալինում կարողանում է ճապոներեն սովորել: Բայց սկսված ռուս-ճապոնական պատերազմը փոխում է իրավիճակը: Պատերազմի լուրը տարածվում է կղզու անկյուններում և ծնում զանազան տրամադրություններ, հույզեր ու հույսեր: Ամեն ինչից զրկված, տուն ու ընտանիք կորցրած և տաժանակրության մեջ տառապող մարդիկ ցանկանում էին պատերազմի բերած բոլոր հետևանքներից այնպես օգտվել, որ թեթևացնեն իրենց վիճակը: Ազատվել Սախալինից, միայն թե դուրս գալ դժոխքից, տանջանքների անվերջ օղակից. «թող պատերազմի դաշտում գնդակը ճակատդ փշրէ, թո՛ղ ճապօնացու սուինը կուրծքդ մխուի, կամ թնդանօթի ռումբը քեզ կտոր - կտոր անէ, և դիակդ գիշակեր գազանների կեր դառնայ, միայն թէ մոռանա՛նք շղթաները, չլսենք նրանց զարհուրելի

[312] Նույն տեղում, էջ 12:
[313] Նույն տեղում, էջ 22:

շրխկոցը, ազատուենք մեզ ստորացնող, մեր մարդկային բոլոր արժանաւորութիւնները ցեխի մէջ շաղախող պայմաններից, միայն թէ գէ՛թ մի անգամ էլ տեսնենք մեր քաղցր, կարօտած հայրենիքն ու այնպէս մեռնենք... ահա այս միտքն էր, որ ծագեց կղզու դժոխքում եղողների մէջ»[314]:

Ս. Կուկունյանի անունն էլ գրվեց կամավորների ցուցակում, որոնց թիվը 8000-9000 էր հասնում: Բոլորին զինում են բերդանկաներով ու միացնում տեղական զորքերին, որոնց ընդհանուր հրամանատար է նշանակվում գեներալ-լեյտենանտ Լյապունովը: Իբրև տպարանի կառավարիչ ու կամավոր՝ Ս. Կուկունյանը պետք է գտնվեր գեներալին սպասարկող տպարանում՝ հրամաններ ու հրահանգներ տպագրելու համար: Պատերազմի ժամանակ, երբ ճապոնացիները գրավում են Սախալինը, Ս. Կուկունյանը հրաշքով ազատվում է: Պատահաբար նրան ճանաչում է մի ճապոնացի սպա, որը տարիներ առաջ եղել էր նրա աշակերտը: Սպան համոզում է, որ Կուկունյանը քաղաքական աքսորական է իր ժողովրդի ազատության համար պայքարելու պատճառով: Կուկունյանին առաջարկում են անցնել Ճապոնիա, գնալ Նագասակի և այնտեղի ուսումնարանում աշխատել որպես ռուսաց լեզվի ուսուցիչ: Կուկունյանը հիշում է, որ ճապոնացիների առաջարկին տվել է երկդիմի պատասխան, քանզի «...16 տարիների ընթացքում ես հայրենիքս էի երազել և հոգով, սրտով դէպի այնտեղ ձգտել: Այժմ, կայսերական հրովարտակի համաձայն, ես կամաւոր էի գրուել, մասնակցել կռիւներին, կամաւորների բոլոր պարտականութիւնները, իմ անմիջական իշխանաւորներիս ամեն հրամանները կատարել, այժմ իրաւունք ունէի ազատ համարվելու, իրավունք ունէի բաղձալի հայրենիքս վերադառնալու»[315]:

Այսպիսով, Սախալինից ազատվելու ցանկությունը գերակշռեց Կուկունյանի մյուս բոլոր զգացմունքներին, և 16 տարիներ անցկացնելով սախալինյան աքսորավայրում՝ նրան հնարավորություն էր ընձեռնվում վերադառնալ Հայրենիք, ինչը նրա բաղձալի նպատակն էր: Նրա հետ էին երեխաներն ու կինը: Վերջինս ազգությամբ հայ էր և Կուկունյանի հետ ծանոթացել ու ամուսնացել էր աքսորավայրում՝

[314] Նույն տեղում, էջ 91:
[315] Նույն տեղում, էջ 88:

նրան պարգևելով հինգ[316] երեխաներ[317]:

2. Հետաքսորյան շրջանի իրադարձությունները

Սարգիս Կուկունյանը Սախալինում մնում է մինչև 1906 թ. հունիսը[318]: 1905 թ. նոյեմբերին Սախալին կղզում կենդանի մնացած աքսորյալներին այցելում է գեներալ Վալուևը և տեղեկացնում, որ համաձայն հոկտեմբերի 17-ին ընդունված Բարձրագույն Մանիֆեստի՝ «ժողովրդին տրուել են ամեն տեսակ ազատութիւններ, և կղզին, որի հյուսիսային մասը մնում է ռուսաց ձեռքին, այլևս ոչ թէ աքսորավայր պետք է լինի, այլ մի ազատ նահանգ, ինչպես ռուսական բոլոր նահանգները, նրանց հատկացրած բոլոր օրենքներով»[319]: Փաստորեն, Ս. Կուկունյանն ազատության մեջ գտնվելու երկու հնարավորություն ստացավ՝ Ճապոնիա գնալու առաջարկը և Բարձրագույն Մանիֆեստը: Վերջապես, սախալինյան տաժա-նակրությունից հետո հասնում է այդ բաղձալի պահը. նա ներման է արժանանում և ազատվում տաժանակրությունից: Երկար ու ձիգ տարիների ապրումները Սախալինին հանձնելով՝ Կուկունյանը վերադառնում է հայրենիք՝ կրելով 1 տարի, 7 ու կես ամիս նախնական կալանք և 14 տարի տաժանակիր աշխատանք[320]:

1906 թ. օգոստոսին Սարգիս Կուկունյանը Թիֆլիսում էր: «Հետագային, 16 տարի վերջը, ես նորից տեսա Կուկունեանը, երբ նա ազատվելով ռուսական տաժանակիր բանտից եւ Սախալին կղզիի աքսորից՝ եկավ Կովկաս, սպիտակ մազերով ու մորուքով, բավական գիրցած ու դանդաղաշարժ,- խոհուն ծերունի մը, որ հեռավոր իսկ

---

[316] Սարգիս Կուկունյանն ուներ 5 երեխաներ, 4 տղա՝ Արամ, Արմենակ, Արամայիս, Անուշավան և մեկ դուստր՝ Հայկանուշ:

[317] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 8, էջ 101:

[318] Մանրամասն տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 17: Ինչպես նաև՝ Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 9, 10, 11:

[319] Կուկունեան Ս., նշվ. աշխ., էջ 93:

[320] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 10:

նմանութիւն չունէր այն երիտասարդի հետ, որ տեսած էի առաջին անգամ եւ մասնաւոր սիրով պահած հիշողութեանս մէջ: Միայն աչքերն էին, որ խոր հայացքով կը թափանցէին մարդու հոգիին մէջ»[321],- գրում է Համո Օհանջանյանը:

1906 թ. հոկտեմբերին Սարգիս Կուկունյանը Թիֆլիսից մեկնում է հայրենի գյուղ: Նիժի հասարակությունը գրկաբաց է ընդունում իր տառապյալ զավակին՝ կազմակերպելով փառավոր ընդունելություն: Թե որքան խանդավառությամբ են դիմավորում նիժեցիները Սարգիս Կուկունյանին, երևում է Նիժ գյուղի դպրոցի ուսուցիչ Բալաբեգ Տեր-Ղուկասյանի կողմից «Մշակ» թերթի խմբագրությանն ուղարկված նամակից, որում ասվում է. «...Հոկտեմբերի 28-ին հեռագիր ստանալով, որ Կուկունեանցը 30-ին լինելու է Լեաքի կայարանում, մի քանի ձիաւորներ ուղարկուեց այնտեղ նրան դիմավորելու, երեսնի չափ ձիաւորներ ընդառաջ գնացին մինչեւ Սաւալուն կոչւած գիւղը, իսկ մօտ հարիւր ձիաւորներ ու կառքով գնացողներ, մի քանի ոչխար մորթած սպասեցին Կուկունեանցին Ծիրիկ գիւղի մոտ, ուր հասնելուն պէս մէկը դիմաւորեց նրան իւր տիկնոջ հետ մի կարճ ճառով, իսկ բազմութիւնը, ցնծագին կեցցէ-ներով ընդունեց, յետոյ, հրաւիրեց նրան մի համեստ նախաճաշի, որի ժամանակ երգերին եւ «ուռա»-ներին վերջ չկար: Նախաճաշից յետոյ ահագին բազմութիւնով շրջապատած, թէ ձիաւոր եւ թէ ոտաւոր, երեկոյեան ժամը 5-ին Կուկունեանցը հասաւ իւր հայրենի տունը, որտեղից նա դուրս էր եկել 21 տարի սրանից առաջ...»[322]:

Ս. Կուկունյանը հատկապես ջերմ ընդունելություն է գտնում Նոր Նախիջևանում: Հավաքույթներ են կազմակերպվում Ս. Խաչ վանքում, Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմների մոտ, որտեղ նա բոցաշունչ ելույթով կոչ է անում շարունակել պայքարը:

Կուկունյանին վիճակված չէին հանգիստ կյանքն ու ազատությունը: Նա գյուղում մնում է ընդամենը 2-3 շաբաթ: Այդ ընթացքում նա տեղի բնակչության շրջանում հեղափոխական քարոզչություն է տանում՝ կոչ անելով աշխատավոր խավերին համախմբվել և պայ-

---

[321] «Յուսաբեր», 1940, 7 դեկտեմբերի:

[322] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 10: Տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1915, N 263-264:

քարել վաշխառուների ու կուլակների դեմ: Նրա գործունեությունն ունենում է որոշակի արդյունքներ: Գործելու ասպարեզն այդժամ Նիժում ավելի լայն էր, քան 1890-ական թվականներին. սկսվում է Կուկունյան մարտիկի երկրորդ ողբերգությունը՝ պայքարը ներքին հարստահարիչների դեմ:

Նիժը խոշոր գյուղ էր և ենթարկված էր սոցիալական շերտավորման: Այդ ժամանակ պայքար էր սկսվել գյուղի չքավոր բնակչության և նրանց հարստահարող վաշխառուների միջև: Չքավորներն ու հարստահարվողները, հանձին «Սարգիս-աղի» (Կուկունյանի), իրենց համար պաշտպան գտան: Իրենց շահերը պաշտպանելու խնդրանքով նրանք դիմում են Կուկունյանին: Գյուղացիների ընդվզման պատճառը վաշխառուների կողմից իրենց վրա դրված չափից դուրս բարձր տոկոսներն էին (տարեկան մինչև 70 տոկոս, մինչդեռ ամենաբարձրը համարվում էր 15 տոկոսը): Դրանք չվճարելու դեպքում հարստահարողները խլում էին չքավորների արտերը և այգիները, վերջին ունեցվածքն ու կոպեկները:

Ս. Կուկունյանը պաշտպան է կանգնում գյուղացիների դատին, որի արդյունքում գյուղի վաշխառուներից մեկը՝ Ստեփան անունով, դատի է տրվում: Նա գյուղի կուլակներին սպառնում է գնդակների բաժին դարձնել, եթե չթողնեն այդ զզվելի ու անմարդկային արարքները: Նրա ըմբոստ վերաբերմունքը ոգի ներշնչեց չքավորներին և նրանք, միացած գյուղի աչքաբաց ու սրտացավ մարդկանց, ծավալում են հասարակական պայքար ընդդեմ հարստահարիչների: Դրա արգասիքն էր 1907 թ. սեպտեմբերին Նիժում կազմակերպված «Գյուղացիական միությունը»: Այն ընդգրկում էր 600 մարդ, գործում էր գաղտնի և գործադրում բոյկոտի միջոցը՝ տնտեսական պայքար մղելով կուլակների դեմ[323]:

1908 թ. մարտին Նիժում ստեղծվում է նմանատիպ այլ հասարակական կազմակերպություն, որը Կովկասի «Հայոց բարեգործական ընկերության» մասնաճյուղն էր: Նույն թվականին, երբ ցարական կառավարությունը հալածանքներ է սկսում ՀՅ Դաշնակցության դեմ, հակադաշնակցական համագյուղացիները Կուկունյանի վրա ամ-

[323] Տե՛ս ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 12:

բաստանություններ բարդեցին: Չհանդուրժելով որևէ ժողովրդական կազմակերպություն՝ կուլակները ոչնչացնում են «Գյուղացիական միությունը», ճանաչելով ղեկավարներին՝ դիմում մատնության: 1909 թ. հունվարին Նիժում տեղի են ունենում զանգվածային ձերբակալություններ (ձերբակալվում են 34 հոգի):

Ս. Կուկունյանը, այս դեպքերից քիչ առաջ թողնելով Նիժը (քանի որ տեղական վարչակազմը վճռական միջոցներով կազմալուծում էր նրա գործունեությունը), մեկնել էր Թիֆլիս՝ աշխատանք գտնելու նպատակով: Թիֆլիսի առևտրական նավթարդյունաբերական ընկերությունում ստանալով կառավարիչ-հսկիչի պաշտոն, ըստ նշանակման վայրի, մեկնում է Բաքու և աշխատանքի անցնում հիշյալ ընկերությանը պատկանող Բալախանիի նավթահանքերում:

Բաքվում ևս Կուկունյանը շարունակում է իր հեղափոխական գործունեությունը: Նա անմիջական մասնակցություն չուներ «Գյուղացիական միության» գործերին, բայց, այնուամենայնիվ, իր օգտակար խորհուրդներով ու ցուցումներով օգնում էր ներքին հարստահարիչների դեմ պայքարի տենչով տոգորված մարդկանց:

Ս. Կուկունյանի գործունեությունն աննկատ չի մնում ոստիկանության հսկող աչքից, և նոր ձերբակալությունը սպասել չի տալիս: 1909 թ. փետրվարի 6-ին նա Բաքվում ձերբակալվում է: Նրա անունը մատնիչները սերտորեն կապում էին «Գյուղացիական միության» հետ: Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի կողմից Ելիզավետպոլի նահանգում իր օգնականին ուղղված գրությունում այդ մասին ասվում է հետևյալը. «... 1909 թ. փետրվարի 9-ին Ս. Կուկունեանը ձերբակալվել է եւ ներկայացուել ինձ ենթակայ վարչութեանը պահպանութեան կարգով գրագրութեան համար. որպէս վկաների ցուցմունքով մերկացուած այն բանում, որ 1909 թ. Բաքւից մեկնել է Ելիզաւետպոլի նահանգի Նուխի գաւառի Նիժ գիւղը, որտեղ հասարակութեանը հաւաքել եւ ագիտացիա է տարել՝ իշխանութիւններին չենթարկուել, այլ միանալ «Դաշնակցութիւն» կուսակցութեանը եւ բնակչութիւնից դրամ է հաւաքել նշուած կուսակցութեան համար»[324]:

[324] ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունեան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թ. 12:

Իշխանությունները ներկայացված մեղադրանքներում չկարողացան ապացուցել ձերբակալվածների մասնակցությունը: Ուստի երեք ամիս բանտում պահելուց հետո ձերբակալվածներին ազատ են արձակում: Բայց Ս. Կուկունյանը և ևս հինգ հոգի ստանում են վարչական տարագրության պատիժ՝ 5 տարի ժամանակով (Կովկասի փոխարքայի որոշումը 1910 թ. օգոստոսի 19-ին)[325]:

Կուկունյանին հասցրած այս նոր հարվածի մասին նրա կինը հետևյալ բովանդակությամբ նամակ է գրել Նուխի գավառի հոգևոր առաջնորդին. «Ս. Կուկունեանը մատնուել է 16 անձանց կողմից. առաջին անգամ գիւղ գնալով նա մնացել է 2 շաբաթ, երկրորդ անգամ՝ գիւղ էր տարել իր ընտանիքը եւ մնացել 2 օր: Երրորդ անգամ գիւղ է գնացել ընտանեկան գործերով եւ Կ. Խատիսեանի առաջարկով՝ յորդորել բանալու օրիորդաց դպրոց, հիւանդանոց, դեղատուն եւ գիւղական բանկ, վերջինս այն նպատակով, որ գիւղացիները կարողանան ազատվել վաշխառուներից, այս վերջին այցելութիւնից հետո, պարտապանները մերժում են պարտք վճարել վաշխառուներին. գիւղացիների վրա դրված պարտքի գումարն է 200 հազար ռուբլի եւ վաշխառուները վրեժ են լուծում՝ կառավարութեան ձեռքը հանձնելով Կուկունեանին»[326]:

Փորձանքից փրկված Ս. Կուկունյանը 1909 թ. ապրիլի 17-ին ազատ է արձակվում՝ գաղտնի հսկողության տակ:

1909 թ. վերջերից Բաքվում նա անցնում է մասնավոր ծառայության՝ ընտանիքի համար հոգալու օրվա հացը: Կուկունյանի հանդեպ հալածանքները շարունակվում են: Հալածանքների ու հետապնդումների են արժանանում նաև կառավարության համար անբարեհույս համարվող անձինք՝ հիմնականում ՀՅ Դաշնակցություն կուսակցության անդամները: Անընդհատ հետապնդումները, ձերբակալությունները և կրած տառապանքները Սարգիս Կուկունյանին ստիպում են մտածել Կովկասից հեռանալու մասին: Իսկ անհանգստանալու լուրջ պատճառներ նա, իրոք, ուներ: Ելիզավետպոլի նահանգապետի պաշտոնակատարի կողմից Կովկասի փոխարքայի պաշտոնակատարին ուղարկված գրության մեջ ասվում էր. «Լիովին հա-

[325] Տե՛ս նույն տեղում:
[326] Նույն տեղում, թ. 13:

մածայնվելով ժանդարմական գնդապետ Պաստրիզինի եզրակացութեան հետ՝ Սերգեյ (Սարգիս) Մովսեսի Կուկունեանցի, Ենոք Ավետի Խեշտոեանցի եւ այլոց հասարակական կարգի ու հանգստութեան համար վտանգավորութեան մասին, միջնորդում եմ ձերդ գերազանցութեան առջեւ Կուկունեանցի եւ Խեշտոեանցի, որպես Հայ յեղափոխական «Դաշնակցութիւն» կուսակցութեան Բաքվի Կենտրոնական Կոմիտեի ինտելիգենտ, ակտիվ եւ միանգամայն գիտակից գործիչների, իւրաքանչիւրին երեք տարի ժամանակով, ոստիկանութեան լեգալ հսկողութեան տակ Կովկասեան երկրամասից Կայսրութեան ներքին նահանգները աքսորելու մասին... (23-ը յուլիսի 1910 թ.)»[327]: Դրան հետևում է Կովկասի փոխարքայի գրասենյակի հետևյալ հայտարարությունը. «Կովկասում նորին կայսերական մեծութիւն փոխարքայի գրասենյակի կողմից Նուխի գավառի Նիժ գիւղի բնակիչ Սերգեյ (Սարգիս) Մովսեսի Կուկունեանցին հայտարարւում է, որ Կովկասում նորին կայսերական մեծութիւն փոխարքայի պաշտոնակատարի որոշմամբ նրան արգելված է ապրել Կովկասեան երկրամասի սահմաններում 5 տարի ժամանակով: 7-ը սեպտեմբերի 1910 թ.»[328]:

Ս.Կուկունյանը, սակայն, արժանանում է ավելի դաժան ճակատագրի: Ցարական ոստիկանությունը քրեական նոր գործ է հարուցում նրա դեմ՝ ձերբակալության համար հիմք ընդունելով կեղծ ցուցմունքները: 1910 թ. հոկտեմբերի 15-ին Նիժ գյուղի տանուտեր Խաչի Անտոնովի ցուցումով ձերբակալվում են 8 երիտասարդներ՝ 2 նիժեցի, 6-ը՝ դրսից: Ձերբակալվածների մոտ հայտնաբերվում են ռումբեր ու այլ զենքեր: Առանց պարզելու նրանց ինքնությունը՝ հեղափոխականնե՞ր են, թե՞ դրամաշորթներ, իշխանությունը նրանց հեղափոխականներ ճանաչեց՝ նրանց անձն ու գործը կապելով Կուկունյանի հետ, իբրև վերջինս է նրանց Բաքվից Նիժ ուղարկել՝ վաշխառուներին պատժելու հրահանգով: Խաչի Անտոնովը նաև համոզում է ձերբակալվածներից մի քանիսին կեղծ ցուցմունքներ տալ Սարգիս Կուկունյանի դեմ՝ խոստանալով այդ կերպ նրանց բանտից ազատել: Ճիշտ է, նրանք հետագայում հերքում են իրենց տված

[327] Նույն տեղում, թ. 15:
[328] Տե՛ս նույն տեղում:

կեղծ ցուցմունքները, սակայն դա գործի ընթացքը չի փոխում: Նիժի վաշխառուները Կուկունյանին նորից հանձնում են ցարական ոստիկանության ձեռքը:

1910 թ. հոկտեմբերի 18-ին Բաքվի ոստիկանությունը Կուկունյանին ձերբակալում է: Բնակարանի խուզարկության ժամանակ դատապարտելի ոչինչ չի հայտնաբերվում: Նոյեմբերի 2-ին նրան տեղափոխում են Նուխի և բանտարկում տեղի բանտում: Սարգիս Կուկունյանը մի շարք դիմումներ է ուղարկում դատական մարմիններին՝ իրեն կալանքից ազատելու խնդրանքով: Նույն խնդրանքով դատական մարմիններին է դիմել նաև կինը՝ Ոսկի Զուրաբի Կուկունյանը, բայց բոլոր դիմում-խնդրանքները թողնվում են անհետևանք:

Դատը կայանում է 1911 թ. նոյեմբերի 7-ին Ելիզավետպոլում՝ Թիֆլիսի դատական պալատի արտագնա նիստում[329]: Դատավարության ընթացքում մեղադրյալները հրաժարվում են Կուկունյանի անունը կապել իրենց գործի հետ՝ պնդելով, որ նա ոչ մի կապ չի ունեցել իրենց հետ: Մեղադրվող նիժեցիներից մեկը, որ սկզբում ցուցմունք էր տվել, թե Բաքվի դաշնակցականները և նրանց հետ Ս. Կուկունյանը իրենց հանձնարարել էին սպանել Նիժի վաշխառուներին ու կողոպտել փոստը, հրաժարվում է իր սկզբնական ցուցմունքից, որը կատարել էր տանուտերի սադրանքով, և հաստատում, որ Կուկունյանը ոչ մի կապ չի ունեցել իրենց հետ, և նրա կողմից ոչ մի հանձնարարական չի տրվել: Բայց, անտեսելով դա, ցարական դատարանն իր խիստ ու անգութ վերաբերմունքն արտահայտեց Կուկունյանի նկատմամբ: Դատաստանական պալատը Կուկունյանին նշանակեց 15 տարվա տաժանակիր աշխատանք, իսկ նրա հետ դատապարտվող 8 հոգուց 5-ը ստացան 8 տարվա տաժանակիր աշխատանք, 3-ը՝ 5 տարի 4 ամսվա պատիժ[330]:

Դատապարտյալների կողմից դատավճռի բողոքարկումը Կառավարող Սենատի կողմից մերժվում է քննվել:

Թիֆլիսի դատական պալատի վճռից հետո հին մարտիկը նստած էր Գանձակի (Ելիզավետպոլ) բանտում, որտեղից 1912 թ. փետրվարի 4-ին ՀՅԴ գործիչները կարողացան կազմակերպել նրա

[329] Տե՛ս նույն տեղում, թ. 12:
[330] Տե՛ս նույն տեղում, թ. 13:

փախուստը: Ս. Կուկունյանն իրեն կցված երկու հայդուկների ուղեկցությամբ փորձ է անում անցնել Պարսկաստան: «Ոսկանապատի Կ. Կոմիտէն 1911 թուականի վերջերը յանձնարարեց Բուլղարացի Յարութիւնին եւ Մուշեցի Պուճուր Արտէմին, Գանձակի բանտէն փախցնել Սարգիս Կուկունեանը ու ապահով հասցնել Պարսկաստան,- այդ մասին գրում է Ս. Վրացյանը:

«Բուլղարացի Յարութիւն օր մը առաջ լուր կուտայ Սարգիս Կուկունեանին որ յաջորդ առաւօտ զինք պիտի փախցնեն բանտէն,- շարունակում է Ս. Վրացյանը,- Նոյն ժամուն Յարութիւն եւ Արտէմ պատրաստ էին բանտի մէջ, կ՚իջնեն խոհանոցի մուտքը ու բանտապէտի միջանցքով կ՚ուղղուին հոն. Յարութիւնը ծանօթ էր ամէնուն, ան շուտով խոհարարուհին կուղարկէ շուկայ, որպէսզի կարիքներ գնէ: Սարգիս Կուկունեան բանտի սենեակէն դուրս կ՚ելլէ բաղնիք մտնելու. այդ միջոցին Յարութիւն եւ Արտէմ զինք կառաջնորդեն դէպի խոհանոց, հագուստները փոխելով դուրս կ՚ելլեն դէպի փողոց, ուր կառքը արդէն պատրաստ էր, նստելով կ՚անցնան թրքական թաղը, Նաբիենց տունը, մինչեւ երեկոյ. անկից ալ ծպտուած կ՚անցնին Իրզաղուլիի տունը ուր 15 օր մնալէ ետք, Յարութիւնի եւ Արտէմի հետ ճամբայ կ՚ելլեն դէպի Պարսկաստան, ճանապարհին կ՚անցնին Ղարաբաղ, ապա Նոր Բայազետի գաւառ»[331]:

Սակայն, հաջող փախուստն անհաջող ավարտ է ունենում: Փախուստից 17 օր անց ոտքի ելած ոստիկանությանը հաջողվում է Նոր Բայազետ գավառի Նորադուզ գյուղում գտնել նրանց հետքը և 1912 թ. փետրվարի 21-ին ձերբակալել Կուկունյանին ու նրա երեք ուղեկիցներին[332]: Նույն թվականի փետրվարի 25-ին Սարգիս Կուկունյանը դարձյալ հայտնվում է Գանձակի բանտում: 1913 թ. մարտի 9-ին նա և իր երեք ընկերները նորից Թիֆլիսի դատական պալատի արդարադատությունն էին հայցում: Կուկունյանը ստացել էր առավելագույն պատիժը՝ 15 տարվա տաժանակրություն, փախուստի հանցանքը չէր փոխում նրա պատժի չափը: Շուշեցի Արտեմն ու Հարություն Ղազարյանը (բուլղարացի Հարությունը)՝ դատապարտվում են 4

[331] «Յեղափոխական ալպոմ», Ազատագրական պայքարի յուշամատեան, Պէյրութ, 1962, N 2, էջ 49:
[332] Տե՛ս նույն տեղում:

տարվա ազատազրկման:

Դատավճիռը համարելով կայացած՝ Կուկունյանին Գանձակի բանտից շղթայակապ փոխադրում են Ներքին Ռուսաստանի Օրյոլ քաղաքի ժամանակավոր տաժանակրության բանտը: Սախալին կղզում կրած տառապանքներն այնպես էին քայքայել Կուկունյանի առողջությունը, որ հազիվ մեկ տարի է դիմանում Օրյոլի դաժան բանտային պայմաններին: 1913 թ. նոյեմբերի 26-ին բանտի խոնավ խցում թոքախտից իր մահկանացուն է կնքում Սարգիս Կուկունյանը՝ այդպես էլ չտեսնելով հարազատ ժողովրդի բաղձալի ազատությունը, որի համար մաքառեց ազատության մարտիկը: «Իր դաժան զնդանից գուցէ վաղուց մահ էր աղաղակում անսիրտ բռնակալութեան այդ եզակի զոհը... Կովկասեան թերթերը ծանուցին, որ Կուկունեանը մեռել է Օրիոլի բանտում...»[333], - նրա մահը ծանուցում է «Դրոշակ»-ը: «Ծանր էր խաչդ, դու պիտի մեզի ճամփայ բանայիր Անյայտին մէջ, առաջին արահետը:

Կեանքը անողորմ եղաւ դէպի քեզ, ինչպէս քո սիրած Ազգիդ: Դու եղար անոր մանրանկարը, ո՜վ Մեծ Տառապեալ»[334],- Ս. Կուկունյանի կյանքի անցած ուղին այսպես է գնահատել Գ. Խաժակը (Արծիվյան):

Կուկունյանն ապրեց ընդամենը 50 տարի 10 ամիս: Այդ ժամանակի մեծագույն մասը նրան չպատկանեց: Նրա կյանքից տարիներ կորզեցին ցարական ոստիկանությունն ու դատարանը: Ցարական կառավարության վերաբերմունքը Սարգիս Կուկունյան անհատի նկատմամբ պարզ էր. այդ են վկայում նրա նկատմամբ կիրառված պատիժները՝ վարչական տարագրություն՝ 5 տարի, նախնական ձերբակալություն՝ 2 տարի 9 ամիս, տաժանակիր աշխատանք՝ 35 տարի[335]: Այդ ամենը նա տարավ տոկունությամբ, լռելյայն, գոյատևման համար մղվող դարավոր պայքարին բնորոշ համառությամբ: Նրա կյանքն ինքնամոռաց նվիրում էր, անվերջ տառապանք: Մինչդեռ Կուկունյան հեղափոխական գործչի գաղափարական ձգտումները, հայրենասիրությունը, նրա ազնվությունն ու շիտակությունը չգիտակցվեց և անտեսվեց դատարանի կողմից, «արդարա-

---

[333] «Դրօշակ», 1914, N 1, էջ 14:
[334] «Ազատամարտ», Կ. Պոլիս, 12 հունվարի, 1914, թիվ 2:
[335] ՀՊՊԹ, Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, մմ. 10795, թիվ 832, թ. 5:

դատությունը» հրապարակ չհանեց հասարակության համակրանքն ու սերը վայելող Կուկունյանին՝ որպես հեղափոխականի: Նա ասպարեզ եկավ որպես հեղափոխական, բայց ձերբակալվեց և դատապարտվեց որպես քրեական ոճրագործ:

Դեռ Սիբիրում եղած ժամանակ բանտարկյալներից մի քանիսը աքսորավայրից փախչելու գաղափարը դարձրել էին իրենց մտասևեռումների առարկան: Նրանցից ոմանց դա հաջողվում է: Եփրեմ Դավթյանը, Ստեփան Ստեփանյանը և Հովսեփ Մովսիսյանը կարողանում են փախչել Սախալինից: Եփրեմ Դավթյանը փախչում է 1895 թ. մայիսի 27-ին և 18 ամիս դեգերելուց հետո, 1896 թ. հասնում Պարսկաստան:

Ստեփան Ստեփանյանը (Ծերունի) լուսանկարիչ էր: Իրերի բերումով նրան տրամադրում են հաստ գերաններով կառուցված, տաք ու հանգիստ մի փոքրիկ տնակ, որտեղ նա զբաղվում էր իր արհեստով: Որպես աքսորյալ՝ նա ավելի տանելի պայմաններում էր անցկացնում իր տաժանակիր աշխատանքը: Բայց Ստեփանի ուշքն ու միտքը Սախալինից փախչելն էր: Մի քանի աքսորականների հետ նա ծրագրում է առասպելական փախուստ: Ստեփանի ընկերները, որոնք փայտահատներ էին, նույնպես քաղաքական աքսորականներ, իրենց աշխատանքի ժամանակ, երբ դուրս էին հսկողությունից, հավաքված գերաններով լաստ են պատրաստում, իրենց բաժին հացի մի մասը ժայռի խոռոչներում թաքցնում՝ փախուստի համար: «Վերջապէս լաստը պատրաստ է եւ հացի պաշարը՝ բաւարար: Եւ օր մը, երբ ծովը ազատ կը լինի արդէն սառոյցներէ, լաստը կը ձգեն ծովը, նրանք ալ վրան կը պըպզին, կը բանան ողորմելի առագաստ մը, որ մեծամասնաբար իրենց վարտիքներէն ու շապիկներէն էր կազմուած, ու ճամբայ կիյնան՝ իրենք զիրենք յանձնելով բախտին, որ ընդհանրապէս չի ժպտար խեղճերուն, եւս առաւել աքսորեալներուն»[336], - պատմում է Մալխասը:

Լաստը հասնում է Ճապոնիա՝ դուրս գալիս Իոկոհամա: Այնուհետև Չինաստանի, Ամերիկայի, Պոլսի ու Բաթումի վրայով Ստեփան Ստեփանյանը հասնում է Բաքու: Այստեղ նա ընկերների աջակցությամբ պարսկական անցագիր է ձեռք բերում և 1898 թ. անցնում

[336] Մալխաս, նշվ. աշխ., հ. Ա, էջ 136:

Պարսկաստան:

Արշավանքի մեկ այլ մասնակից՝ Մեհրաբ Դաշյանը կամ Դաշոյանը, 8 տարի տաժանակրության դատապարտված լինելով, Սիբիրի պղնձահանքերում չորս տարիներ տաժանակիր կյանք վարելուց հետո 1899 թ. ամռանը, փախուստի է դիմում և դարձյալ ընկերների աջակցությամբ հասնում Պարսկաստան, ուր և վախճանվում է 1900 թ. մայիսի 3-ին:

Ողբերգական վախճան ունեցավ Կոստանդին Լիսինյանը: Դատարանը նրան դատապարտել էր 15 տարի տաժանակիր աշխատանքի: Արդեն բանտում նրա առողջությունը բավական քայքայված էր, և Սախալին ուղարկելու փոխարեն նրան՝ իբրև ֆիզիկապես թույլ բանտարկյալի, ուղարկել էին Սիբիրի արծաթի հանքերում աշխատելու: Նա անկարող էր երկար մաքառել իր հիվանդության դեմ և 1902 թ. մահացավ Բլագովեշչենսկում, ուր և թաղվեց:

Իսկական ոդիսական էր Եփրեմի առասպելական փախուստը: Սախալին աքսորվելու առաջին իսկ օրվանից Եփրեմ Դավթյանի գլխավոր մտահոգությունն աքսորավայրից փախչելու որևէ ելք գտնելն էր: Սիբիրյան տաժանակիր և սառնաշունչ պայմաններն անկարող եղան ընկճելու հայրենիքի ազատության գաղափարով տոգորված զինվորի ազատաբաղձ ձգտումները: «Եփրեմի համար խիստ տաժանելի էր աքսորականի կաշկանդուած կեանքը,- գրում է Յ. Էլմարը,- անհանգիստ եւ շարժուն, արկածների հակամէտ, անակնկալների հանդէպ զգաստ եւ վճռական Եփրեմը, շատ շուտով որոշում է փախուստի դիմել եւ ազատուել անտանելի կեանքից»[337]:

Աքսորի երկրորդ տարում Եփրեմը փախչում է աքսորավայրից (ի դեպ, Սիբիրից Ս. Կուկունյանի խմբից առաջին փախչողները եղել են Եփրեմն ու Հովսեփ Մովսիսյանը): «Գետափը ճահճոտ էր, խրւում էինք տիղմերի մէջ, միայն թէ տեղ-տեղ փոքրիկ թմբեր կային՝ խոտով ծածկուած, դրանք համեմատաբար աւելի ամուր գետին էին, ուստի եւ մենք աշխատում էինք այդ թմբերի վրայով քայլել, բայց երբեմն սայթաքում էինք, եւ կամ թումբը փխրուն էր լինում եւ նրա վրայ ոտք կոխողը մխրճւում էր տիղմերի մէջ: Մեզնից ոչ ոք ազատ չմնաց այդ

[337] Էլմար Յ., Եփրեմ, Թեհրան, 1964, էջ 201:

փորձանքից, ճարպկութիւնը չփրկեց ոչ մէկիս»[338],- հիշում է Հ. Մովսիսյանը:

Այսպիսի դժվարություններ հաղթահարելով, կիսաքաղցած ու կիսաքուն վիճակում, սնվելով միայն ծովից բռնած ձկնով (եթե հաջողվում էր որսալ) և մասրենիների վարդերից պատրաստված թեյով՝ երկու երկար ու ձիգ ամիսներ Սախալինի անտառներում թափառելուց հետո, պարսկաստանցի Հովհաննեսի և երեք քրեական բանտարկյալների հետ մի լաստ են պատրաստում և հունիսյան մառախլապատ մի առավոտ Օխոտսկի Պրոլիվ գետով իրականացնում իրենց փախուստը: Անկոտրում կամքով օժտված անվեհեր փախստականները դուրս են գալիս Սախալին կղզու հակառակ ափը և մի փոքր հանգիստ առնելուց հետո նավարկելով հասնում Ամուր գետին: Ապա իրենց ոդիսականը շարունակելով՝ հասնում են Վերխնի Ուդինսկ քաղաքը, ուր տեղի ոստիկանության կողմից ձերբակալվում են ու նետվում բանտ[339]: «Հացթուխի մօտ հաց էինք կշռել տալիս, եւ դեռ դրամը չէինք վճարել, որ մի ժանտարմ Եփրեմի օձիքից բռնեց, անցագիր պահանջեց եւ առանց սպասելու «կարաու՛լ» ճչաց: Հասան մի խումբ ոստիկաններ եւ մեզ շղթայի մէջ առած՝ ոստիկանատուն տարին: Այստեղ պահանջեցին մեր անցագիրները. ասացինք, որ գողացել են. բայց չհաւատացին, իհարկէ, եւ մեզ նետեցին «Կուտուզկա»-ն, ոստիկանատան բանտը»,[340]- վերհիշում է Հովսեփ Մովսիսյանը: Բարեբախտաբար հարցաքննության ընթացքում հաջողվում է հավատացնել, որ իրենք թավրիզեցիներ են և մի տեղացի հայի օգնությամբ ձեռք բերելով կեղծ անձնագրեր՝ ազատվում են ձերբակալումից:

Այնուհետև, շոգենավով անցնելով Բայկալ լիճը, փախստականները հասնում են Իրկուտսկ, որտեղ Օրբելյան ազգանունով հայ աքսորական քահանայի միջամտությամբ նահանգապետը ժամանակավոր անցաթուղթ է տալիս մինչև Աստրախան հասնելու համար: Աստրախանի նահանգապետը պետք է տար իսկական անցագիր:

Ստացած անցաթուղթն արդեն վկայում էր ազատ քաղաքացի

---

[338] Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1934, N 11, էջ 106:
[339] Մանրամասն տե՛ս նույն տեղում, 1934, N 10, էջ 116-126 և N 11, էջ 106-127:
[340] Նույն տեղում, 1935, N 3, էջ 94:

լինելու մասին, ուստի շարունակելով ճանապարհը Սիբիրի անծայրածիր հարթավայրերով՝ երեք ընկերները հասնում են Կրասնոյարսկ քաղաք, այնուհետև Սամարա և Վոլգայի վրայով՝ Սարատով: Այստեղ իջևանում են մի գերմանացու տանը, իսկ առավոտյան տոմս վերցնում մինչև Աստրախան, ուր հասնում են երեկոյան: Տեղի նահանգապետից ստանալով իսկական անցագրեր՝ ճանապարհվում են դեպի Բաքու և իրենց ոդիսականը ավարտում 1896 թ. հոկտեմբերի 5-ին՝ հասնելով Թավրիզ[341]: Այսպիսով, ահավոր տանջանքներ կրելով, նրանք կարողանում են հրաշքով փրկվել և ազատվել սիբիրյան դժոխքից:

«Եփրեմն ու ես ամբողջ վեց տարիներ չարչարանքից յետոյ պէտք ունէինք լուրջ հանգստի, որ եւ գտանք իմ հայրենական օջախում: Այնուհետեւ միշտ Եփրեմի հետ մնացինք իբրեւ մտերիմ ու անդաւաճան ընկերներ. մեր ընկերութեան շաղախն այն գաղափարն էր, որի համար մենք անլուր տառապանքներ կրեցինք...»[342],- իրենց շարունակական ընկերությունն այսպես է բնորոշել Հովսեփ Մովսիսյանը:

Եփրեմի վաղեմի ընկերներից Մելիքը, վերհիշելով Թավրիզում կայացած իրենց անսպասելի հանդիպումը, գրում է. «Սախալինէն եկաւ ան՝ մաշուած, հիւանդ, բարոյապէս ու ֆիզիկապէս յոգնած, ցաւ կ՚ըզգար բազուկներուն ու մտքի ոսկորներուն մէջ, հետեւանք՝ շղթաներու ազդեցութեանը եւ Սախալինի սոսկալի ցուրտին»[343]:

Եփրեմի այս անհիրականալի թվացող փախուստը, իրոք, անկոտրում կամքի, սիբիրյան կլիմայական դաժան պայմանների ու ժանդարմական խիստ հսկողության հաղթահարման վառ դրսևորումն են: Ավետիք Իսահակյանի բնորոշմամբ. «Տառապանքը փշրում է թոյլ ոգիները, իսկ մեծ ոգիները կռում կոփում. եւ Եփրեմը՝ տառապանքի բովով անցած, խորտակեց շղթայ ու զնդան, երկաթէ թեւերով ճախրեց, եկաւ, միացաւ գաղափարի այն նոր ընկերներին, որոնք Անդրանիկներից յետոյ ոտք էին դրել Կուկունեանի սկսած հե-

[341] Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 91-102:
[342] Նույն տեղում, էջ 102:
[343] Սգապսակ Եփրեմին, էջ 16:

ռոսական ուղին»[344]: Տաժանակրության ու սախալինյան շղթաների ծանրության առաջացրած վերքերից հանգիստն ու քունը կորցած Եփրեմը, որպես անկեղծ երդման խոսք, իր հին ընկերոջը՝ Մելիքին ասել է հետևյալը. «Ես բռնութիւնը կատէի եւ մինչեւ Սախալին կռուեցայ անոր դէմ, բայց միեւնոյն ժամանակ կը կարողանայի այդ կեանքը տանիլ: Սախալինի կեանքէն յետոյ այլեւս ես չեմ կարող տանիլ: Ես կը կատաղիմ. մարդկութիւնը առողջ ընելու համար անհրաժեշտ է ոչնչացնել բռնութիւնը, անոր հետեւանքներն ու անոր ներկայացուցիչները»[345]: Հաջորդ տարվա գարնանն Եփրեմը մեկնում է Պարսկաստան, որտեղ և սկսվում է նրա փոթորկալից կյանքի նոր շրջանը ՀՅԴ շարքերում: 1897 թ. Հ. Յ. Դաշնակցության դրոշի ներքո նա մասնակցում է Խանասորի արշավանքին: Հետագայում լինելով Պարսկաստանի ազատագրական շարժման առաջնորդը՝ Եփրեմը նետվում է պայքարի հորձանուտ՝ դառնալով շարժման հոգին ու ղեկավարը: Նրա ամբողջ կյանքը կռիվ էր՝ իբրև մաքուր և իսկական հեղափոխական. «Այդ մեծ մարդը պատմութեան մէջ առաջնակարգ հրամանատարներուն շարքը անցած է, եւ Պարսկաստանի պետութեան ու Սահմանադրութեան անփոխարինելի ծառայութիւններ մատուցած է»[346]:

Ինչ վերաբերում է Արգամ Պետրոսյանին, ապա նա մնում է Թավրիզում՝ զբաղվելով իր անձնական գործերով, ուր և մահանում է 1936 թվականին:

«Առաջին կտրիճների,- գրում է Ավետիք Իսահակյանը,- ֆէդայիների այս խումբը, որ շեփորեց ըմբոստութեան կոչը ստրկութեան ձորերում եւ լեռների վրայ, ուր առաջին անգամ մերկացաւ ազատարար եւ վրէժխնդիր սուրը դարերի բռնութեան դէմ»[347]: Պարզ է, որ Ս. Կուկունյանի արշավանքն իր կազմակերպվածությամբ թույլ է եղել, բայց փաստ է, որ եղել է հայ ազատագրական զինյալ պայքարի առաջին քայլերից մեկը, որը կարող էր հաստատուն և ամուր չլինել:

Իսկ ինչի՞ արդյունք էր Կուկունյանի արշավանքը, արդյո՞ք բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի սոսկ նույնութ-

[344] Նույն տեղում, էջ 12:
[345] Նույն տեղում, էջ 16:
[346] Նույն տեղում, էջ 1:
[347] Նույն տեղում, էջ 12:

յուն կամ մեխանիկական կիրառում հայ իրականության մեջ հատկապես արևմտահայության համար իր ունեցած ծանր հետևանքներով (ինչպես պնդում է Լեոն, «արևմտահայերի ազատագրական շարժումը ողբերգություն էր, իսկ նրա ոգեշնչողները՝ արկածախնդիրներ» և ներմուծված էր դրսից), թե՞ օրինաչափ ծնունդը 19-րդ դարի վերջի հայկական միջավայրի, բնական պատասխանն այն բռնությունների, ճնշումների ու հարստահարությունների, որոնց ենթարկվում էր արևմտահայությունն Օսմանյան անարգ լծի տակ: Անվերապահորեն՝ երկրորդը: Ժողովրդի ձգտումների, ազատության ու իղձերի արտահայտման ձև ընտրված արշավանքի ձախողանքը չի նսեմացնում և չի ստվերում այն ղեկավարողի և խմբի տղաների անձն ու գործը: «Մենք դժվարանում ենք ցոյց տալ հայ յեղափոխական դյուցազներգութիւնից մի ուրիշ դէպք,- գրում է Դ. Անանունը,- որ այնքան պրոպագանդայի դեր լինի կատարած, որքան Կուկունեանի անավարտ գործը...»[348]:

Անհաջող անցած ձեռնարկները նույնպես մնում են պատմության մեջ որպես հիշարժան երևույթներ, և նրանք չեն խունանում, քանի որ պահողն ու այդ գաղափարներով ներշնչվողն ու ոգևորվողը ժողովուրդն է: «Խմբի արժեքը,- գրում է Ռուբենը,- պետք չէ որոնել իր մէջը. այլ պէտք է որոնել այն ազդեցութեան մէջ, զոր թողած է ժողովրդի հոգեբանութեան վրայ»[349]: Եվ իրավամբ, Կուկունյանի կատարած գործը ազդանշան ու հրավեր էր և ձեռք բերեց մեծ հնչեղություն: «Սա մի տարերային հոսանք էր, ազնիւ, վեհ, ոգեւորիչ հոսանք, որի առաջն առնել անկարելի էր ոչ մի յորդորանքով, ոչ մի խելացի պատճառաբանութիւններով, ոչ մի սարսափելի ապագայի նկարագրութիւններով»[350],- այսպես է բնութագրել շարժման էությունն ու խորհուրդը դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը:

Ս. Կուկունյանի արշավանքի վեհ ու ազնիվ գաղափարը հօդս չցնդեց: Ինչպես գրում է Աբրահամ Գյուլխանդանյանը (Ռ.Սևյան). «Կուկունեանը իր գործերով հայ ազգը զարթեցրեց լետարգեան քնից, որի մեջ գտնւում էր նա: Այսուհետեւ Կուկունեանը էլ չի պատ-

---

[348] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. Բ, էջ 219:
[349] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, էջ 110:
[350] «Վէմ», Փարիզ, 1935, N 9, էջ 86:

կանում ո՛չ իրեն, ո՛չ էլ իր ծնողներին, այլ կազմում է ամբողջ ազգի սեփականութիւնը. նրա անունը կարձանագրուի հայոց պատմութեան էջերում...»[351]: Նրա խումբը իրավամբ ռահվիրան է բոլոր այն մարտական խմբերի, որ հետո պետք է անցնեին Երկիր:

Սարգիս Կուկունյանն այսօր պատմության մեջ հաղթականության լուսապսակով զարդարված հերոսի պատվանդանին չէ կանգնած, բայց սկզբնական շրջանում անվերապահորեն ներբողվել է Կուկունյան մարտիկի անունն ու գործը, ժողովրդի համակրանքն ու փառաբանումը շատ ավելի վառ է արտահայտված եղել, քան ձեռնարկից տասնամյակներ անց: Ինչևէ, անաչառության և ճշմարտության պահանջը մեկն է՝ արշավանքը լուսաբանելու դերն ու պարտականությունը ստանձնելով՝ ճիշտ գնահատական ու մեկնաբանություն տալ Կուկունյանի անձին ու կատարած գործին:

Սարգիս Կուկունյանի և՛ գործը, և՛ անձը պատմության հարյուրամյա իրադարձությունների ընդհանուր շղթայի մի օղակն են կազմում՝ օղակ, որը մարմնավորում է Կուկունյանի արածն ու կրածը՝ խաչը և տառապանքը: Մնում է հուսալ, որ հայ սերունդները կհիշեն չարչարանքների մեծ վիհը նետված խմբապետին՝ Սարգիս Կուկունյանին, և մոռացության ու անտարբերության մամուռը երբեք չի պատի նրա հեռավոր և անհայտ գերեզմանը: Եվ մանավանդ այսօր, երբ հայ երիտասարդությունը քաղաքականացման նոր հոլովույթ է ապրում, առավել քան երբևէ կուկունյանական ավանդներն ու փայփայած գաղափարները հոգու և խղճի, կեցվածքի ու վարմունքի սրբազան օրինակներ պետք է դառնան: Գաղափարական այդ չափանիշներն են, որ պիտի շարունակեն կազմել ազատագրական անավարտ մեր պայքարի ամրակուռ պատվանդանը և վաղվա մեր հաղթանակի անտարակուսելի գրավականը:

---

[351] Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7, էջ 116:

ՎԵՐՋԱԲԱՆ

Օսմանյան տիրապետության դեմ 19-րդ դարի վերջին տասնամյակներին ծավալված Հայոց ազատամարտը կարևոր տեղ է գրավում մեր ժողովրդի ազատագրական պայքարի դարավոր պատմության մեջ: Այս շրջանի ազատամարտին բնորոշ առանձնահատկությունները պայմանավորված էին ժամանակի սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններով և միջազգային դրությամբ:

Ի պատասխան թուրքական իշխանությունների, շեյխերի և քուրդ աղաների ու բեկերի անօրինակ բռնություններին, հարստահարություններին ու անօրենություններին՝ արևմտահայերն այդ տարիներին դիմում են զենքի՝ իրենց կյանքը, գույքը, արժանապատվությունը պաշտպանելու համար: Ժողովրդական ելույթների հետ մեկտեղ ձևավորվում են գաղտնի խմբակներ և ընկերություններ, ապա քաղաքական կուսակցություններ, որոնք ավելի կազմակերպված հունի մեջ են դնում, ապա որակական ավելի բարձր՝ զինված պայքարի փուլ տեղափոխում հայ ազգային-ազատագրական պայքարը: Վերջինս հանդես եկավ բավական լայն ընդգրկումով, արտահայտվեց տարբեր երանգներով ու ձևերով, ունեցավ մի շարք դրսևորումներ, որոնց թվում՝ ինքնաբուխ պայքար թուրք հարստահարողների դեմ՝ հայդուկային խմբեր, արշավախմբեր, ցույցեր և այլն:

Հայ ազգային-ազատագրական պայքարի համատեքստում Սարգիս Կուկունյանի արշավանքի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս ամրագրել, որ 19-րդ դարի վերջին ծավալված հայ ազգային-ազատագրական պայքարն ուներ համազգային բնույթ՝ իր նպատակներով, իր առջև դրած խնդիրներով և դրանց իրականացման համար պայքարի նետված անձնազոհ երիտասարդ սերնդով: Սարգիս Կուկունյանի արշավանքը ժողովրդի՝ համազգային նպատակի կրողը դարձած գաղափարական ու գիտակից երիտասարդության հռչակած «հայկական հեղափոխության» սկիզբն էր:

Սարգիս Կուկունյանը, ազգությամբ լինելով ուդին, իրեն նվիրեց

Արևմտյան Հայաստանի ազատագրության գործին: Նրա՝ որպես ազգային-ազատագրական պայքարի գործչի ձևավորման գործում մեծ դեր էին խաղացել Թիֆլիսում ուսանելու տարիներին տարածված ազգային հեղափոխական տրամադրությունները, իսկ Պետերբուրգում ուսանելու տարիներին նա հայտնվել էր ազատամիտ երիտասարդության մի միջավայրում, որտեղ դեռևս 1880-ական թվականների վերջերին հնչում էին Երկիր անցնելու կոչեր: Հետևաբար, միջավայրը մեծապես նպաստել էր նրա գաղափարների և հայացքների ձևավորմանը:

Սարգիս Կուկունյանի և նորաստեղծ ՀՅԴ հարաբերությունները սկզբնական շրջանում բնականոն էին: Վերջինս սիրով ստանձնել էր Երկրում գործելու համար պատրաստվող խմբերը հովանավորողի դերը: Բայց շուտով ՀՅԴ-ն այդ հարցի վերաբերյալ փոխում է իր վերաբերմունքը՝ Կուկունյանին առաջարկելով ավելի կշռադատված քայլեր կատարել՝ կա՛մ ցրել խումբը, կա՛մ շուտափույթ անցնել սահմանը: Այնուհանդերձ, Կուկունյանի վրա մեծ ներգործություն է ունեցել Գ. Արծրունու ազդու խոսքը՝ դանդաղկոտության մեղադրանքով: Հենց դա էլ Ս. Կուկունյանին մղել է տարերային և հուսահատ պոռթկումի:

Ս. Կուկունյանի արշավանքը ռազմական տեսանկյունից, անշուշտ, ձախողված էր: Ըմբոստ և ռազմատենչ, բայց պարզունակ, հապճեպ ու ռոմանտիկ այդ պոռթկումը չվերածվեց արշավանքի: Դրանով հանդերձ Ս. Կուկունյանի խմբի տարերային և անկազմակերպ գործողություններն ոգևորիչ ազդեցություն են ունեցել ժամանակակիցների վրա, որոնց գիտակցության մեջ ամրապնդվում էր խոսքից գործի անցնելու և արևմտահայ եղբայրների տառապանքների համար վրեժխնդիր լինելու գաղափարը: Այն առաջին գործնական քայլն էր՝ մեր ժողովրդի երկու հատվածները միավորելու, նրանց մի բռունցք, մի միասնություն դարձնելու ուղղությամբ:

Սարգիս Կուկունյանի արշավանքն ունեցավ այն կարևոր նշանակությունը, որ դրանով սկսվում է երիտասարդ հեղափոխականների մի սերնդի (Եփրեմ, Ստեփան Ստեփանյան, Քեռի և այլք), մասնակցությունը հետագա ազատագրական պայքարին: Արշավանքը լուրջ փորձություն էր նրա մասնակիցների կյանքում, բայց անգամ

տաժանակրության ծանր տարիները նրանցից շատերին ետ չեն պահում իրենց ընտրած ճանապարհից: Ինչպես Ս. Կուկունյանը, այնպես էլ արշավանքի վերը թվարկված մասնակիցները հետագայում դեռևս իրենց խոսքը պետք է ասեին հայ ազատագրական պայքարում:

Ս. Կուկունյանի անունը սերտորեն կապվում է հայկական հեղափոխական կազմակերպված շարժման սկզբնավորման հետ: Միանգամայն իրավացի է Աբրահամ Գյուլխանդանյանը՝ նշելով, որ «Սարգիս Կուկունեանի արշաւանքը հայկական առաջին «Խաչակրաց արշավանքն էր», որ կատարուեցաւ դէպի Երկիր»[352]: Եվ իրոք, Ս. Կուկունյանն ու իր զինակիցներն առաջիններից էին, որոնք հիմք են դնում մի շարժման, որը հետագայում ծավալվում և ավելի է տարածվում՝ առաջնորդվելով «Մահ կամ ազատություն» կարգախոսով:

Ձախողվելով հանդերձ՝ Ս. Կուկունյանի արշավանքը կարևոր դեր է խաղում հատկապես արևելահայ հայդուկային ուժերի համախմբման գործում և դառնում ազգային զարթոնքի խթաններից մեկը:

[352] Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7, էջ 116:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

ա/ Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 2- 335, գ. 27, թ. 2-187:
2. ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 9, թթ. 11-19, 28, 91-94, 99-101, 103-110, 123-125, 131, ց. 2, գ. 11, թ. 51:

բ/ Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ)

3. Դավիթ Անանունի արխիվ, Վավերագրերի ֆոնդ, Սարգիս Կուկունյան (1863-1913), մմ. 10795, վավ. 832, թթ. 1-22, 36-38, 40:

գ/ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (ԳԱԹ)

4. Բագրատ Նավասարդյանի ֆոնդ, բաժին-III, վավ. 9, Կարեկցյան Տիգրան, Խաչատուր-Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, թթ. 43-52, 55, 61:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

ա/ Փաստաթղթերի և նամակների ժողովածուներ, կուսակցական հրատարակություններ

1. Անանուն Դ., Սարգիս Կուկունեանի հինաւուրց նամակները, «Ձիթենի» գրական ժողովածու հայ գրականագէտների, Թիֆլիս, 1915:
2. Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան, յավելված «Հայրենիք» ամսագրի, հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի, խմբ. Սիմոն Վրացեան, Պոսթըն, հ. 1, 1934, հ. 2, 1938:
2. Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Կ.Պոլիս, 1878:
3. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. պրոֆեսոր Ջ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972:
4. Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1890-1950, հրատարակութիւն ՀՅԴ Բիւրոյի, Բոստոն, 1950:

5. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ. Տասնապետեանի, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Պէյրութ, հ. Ա, բ. տպ., 1984, հ. Բ, բ. տպ., 1985:
6. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք) նուիրուած Հ.Յ.Դ. 100 ամեակին, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի, «Յեղափոխական գրադարան» թիւ 8, Աթէնք, հ. Ա, 1990:
7. Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիվ, խմբ. Հ. Տասնապետեանի, Պէյրութ, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1979:
8. Սգապսակ Եփրեմին, Կ. Պոլիս, 1912:
9. Վաթսունամեակ (1890-1950), կազմեց Ս. Վրացեան, հրատարակութիւն ՀՅԴ Ամերիկ. Կեդր. Կոմիտէի, Պոսթըն, 1950:

բ/ Տպագիր հուշագրություններ, ժամանակակիցների վկայություններ և հրապարակումներ

1. Արամայիս Ազնաւուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1936, N 11, 1937, NN 4-8:
2. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. Յուշեր 1890 էն 1940, Բ տպագր., Երեւան, 2003:
3. Գեղամեանց Ե., Ռուս բիւրօկրատիան եւ հայերը (մտորումներ), երկրորդ տպագր., Բագու, 1917:
4. Լեո, Անցյալից: Հուշեր, թղթեր, դատումներ. Հայոց հարցը. Հեղափոխական Դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. Հեղափոխություն, Թիֆլիս, 1925:
5. Խան-Ազատ Ռուբէն, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 2, 1928, թիվ 3:
6. Կուկունեանի խմբի դատավարութիւնը, «Դրօշակ», Փարիզ, 1912, NN 6, 7-8:
7. Կուկունեան Ս., Վերջին օրերս Սախալինում, Բաքու, Ս. Շահբազեանի տպ., 1910:
8. Մ. Շ.-ի յուշերը (Մարտին Շաթիրյան), Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, գրի առավ Ն. Հանգոյց, «Հայրենիք» ամսագիր, 1923, NN 5, 6:
9. Հ. Յ. Դաշնակցութեան դիւանէն Սեւ-Քարեցի Սաքօի ինքնակենսագրութիւնը, «Դրօշակ», 1929, N 12,1930, NN 1, 3:
10. Մալխաս, Ապրումներ, հ. Ա, բ. տպագր., Պէյրութ, մատենաշար «Համազգային», 1956:

11. Մեսրոպ Վարդանեանի յուշերը: Քառասնամեակ Հ.Յ. Դաշնակցութեան: Կուկունեանի արշաւանքի մասին, «Դրօշակ», Փարիզ, 1930, NN 5, 6-7:
12. Յուշեր Կուկունեան արշաւախմբից, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան), գրի առաւ Ա. Ամուրեան, «Հայրենիք» ամսագիր 1933, N 2, 1934, NN 1-8, 10-12, 1935, N 3:
13. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990:
14. Սարգիս Կուկունեան, «Յեղափոխական ալպոմ, Ազատագրական պայքարի յուշամատեան», Պէյրութ, 1962:

3. Մենագրություններ

ա) Հայերեն

1. Աւետեան Մ., Հայ ազգային ազատագրական յիսնամեայ (1870-1920). Յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954:
2. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. 2, Էջմիածին, 1922:
3. Բարխուտարեանց Մակար եպս., Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Գանձասար աստվածաբանական կենտրոն, Երևան, 1999:
4. Բդէեան Ս. եւ Մ., Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրե, 1962:
5. Գրիգորյան Հ. Բ., Հայոց ազատամարտի զինման ու ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Երևան, 2004:
6. Գևորգյան Հ. Մ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006:
7. Գևորգյան Հ. Մ., Էջեր հայոց ազատամարտի, Երևան, 2005:
8. Էլմար Յ., Եփրեմ, Թեհրան, 1964:
9. Թառոյան Կ. Ջ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Երևան, 1980:
10. Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984:
11. Լազեան Գ., Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949:
12. Լազեան Գ., Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ), Հրատարակութիւն Հ.Յ.Դ. երիտ. միութեան, Գահիրէ, 1945:
13. Լէօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Պարիզ, 1935:
14. Լէօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս,1915:

15. Խուդինյան Գ. Ս., Հայ յեղափոխական դաշնակցության ձևավորման գործընթացը, գործունեությունը, գաղափարախոսությունը (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), սեղմագիր, Երևան, 2005:
16. Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006:
17. Խուրշուդյան Լ. Ա., Հայկական հարցը, Երևան, 1995:
18. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Գիրք 1-ին, Երևան, 1997:
19. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980:
20. Կոստանդյան է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005:
21. Կուկունեանի խմբի արշաւանքը (աքսորվածների պատկերով), Վիեննա, 1894:
22. Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965:
23. Համբարյան Ա. Ս., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:
24. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Երևան, 1981:
25. Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Երևան, 1965:
26. Ղարիբջանյան Գ. Բ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1986:
27. Ճինգոզյան Կ. Հ., Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից (XIX դար), Երևան, 1966:
28. Մանուկյան Բ., Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանների դերը հայ մտավորականության պատրաստման գործում (19-րդ դարի երկրորդ կես), սեղմագիր, Երևան, 1997:
29. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», ժողովածու, հ. V, Թուրքիա, Երևան, 1970:
30. Մկրտչյան Լ.Հ., Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը, Երևան, 1995:
31. Ներսիսյան Ա. Ա., Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Երևան, 1999:

32. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնատիրության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955:
33. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002:
34. Նորեան Ա., Դրւագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից, Ա. տասնամեակ, Բօստոն, 1917:
35. Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, 1878-1908, Պէյրութ, 1974:
36. Պարսամյան Վ. Ա., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958:
37. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Հրատարակութիւն Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան կեդրոնական վարչութեան, Պէյրութ, 1956:
38. Սիմոնյան Հ. Ռ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Երևան, գիրք Ա, 1996:
39. Սիմոնյան Հ. Ռ, Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, Երևան, գիրք I, 2003, գիրք II, 2003:
40. Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
41. Սիմոնյան Հր. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:
42. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992:
43. Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւն, հ. Ա, Ժնեւ, 1913:
44. Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, 1988:
45. Ռաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան), Երկերի ժողովածու, հ. 9, Հայդուգներ, Երևան, 1958:

Ռուսերեն

46. Голобородько И. И. (И. Южанин), Старая и новая Турция, Москва, 1913.
47. Джалиле Д., Из истории общественно-политической жизни курдов в конце XIX начале XX вв., СПб., 1997.
48. Джордж Ллойд , Правда о мирных договорах, т. 2, М., 1957.
49. Записки Кавказского отдела Императорского русского географического обшества, книга XVIII, ,,Приложение,, , Тифлис, 1886.
50. Камбон Жюль, Дипломаты, Пер. с франц., под. ред. А. А. Троянского, М., 1946.
51. Лорд Кинрос, Расцвет и упадок Османской империи, М., 1999.
52. Тунян В., Легенды и были: охранка и Армения в XIX - нач. XX вв., Ереван, 2008.

Անգլերեն

53. Nalbandian Louise, The Armenian revolutionary movement. The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century, University of California Press, Berkeley and Los Angeles, 1963.

4. Հոդվածներ

1. Ահարոնեան Վ., Մօտիկ անցեալից, տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, N 10:
2. Առաքելյան Հ. Ս., Եղիշե Առաքյալի պաշտամունքն ուդիների մեջ և Ուտի գավառի հարցի շուրջ, «Լրաբեր» հաս. գիտ. ամսագիր, 1991, N 6:
3. Գիւլխանդանեան Ա., Կուկունեանի արշաւանքի մասնակցողները, «Հայրենիք» ամսագիր, 1941, N 8:
4. Խառատյան Հ., Ուդիների էթնօ եւ դաւանական ինքնապատկանելութեան որոշ հարցեր (ԺԹ.- Ի. դդ.), տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2000:
5. Խուդինյան Գ. Ս., Սարգիս Կուկունյան, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1989, N 11:
6. Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագիր-կանոնագիրը, Գրեց Ա. Սեւեան, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 4:
7. Հ. Յ. Դ. առաջին գործիչներն ու հերոսները, գրեց՝ Ռ. Սեւեան, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 7:

8. Կուկունեան խմբի դատավարութիւնը, «Դրօշակ», 1912, N 7-8:
9. Ներսիսյան Ա. Ա., Ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ ազատագրական պայքարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, N 2:
10. Սասունի Կ., Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառոտ ակնարկ քառասունամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», 1930, N 11-12:
11. Սեւեան Ռ., Հ. Յ. Դաշնակցութեան առաջին քայլերը եւ գործիչները, «Հայրենիք» ամսագիր, 1937, N 6-7:
12. Ստեփանյան Գ., Նուխի եւ Արեշ գավառների հայերի պատմական անցյալից, «Իրան-Նամէ», Երեւան, 1997, թիւ 4-5-6, էջ 28-33:
13. Վալադեան Վ., Սարգիս Կուկունեանի արշաւանքը, «Հայրենիք» ամսագիր, 1957, NN 9-12:
14. Վալադեան Վ., Քեռին, «Հայրենիք» ամսագիր,1959, NN 11-12:

5. Պարբերական մամուլ

ա/ ամսագրեր

1. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, N 2:
2. «Իրան-Նամէ» իրանագիտական հանդես, Երեւան, 1997, թիւ 4-5-6:
3. «Լրաբեր» հասարակական գիտությունների, ամսագիր, 1989, N 11, 1991, N 6:
4. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն 1923, NN 5, 6, 1926, N 10; 1927, N 2; 1928, N 3; 1933, N 2; 1934, NN 1-8, 10-12; 1935, N 3; 1936, N 11; 1937, NN 2-8; 1941, N 8; 1957, NN 9-12; 1959, NN 11-12:
5. «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2000:
6. «Յեղափոխական ալպոմ», Պէյրութ, 1962, N 2:
7. «Վէմ» երկամսեայ հանդէս, Փարիզ,1935, N 9:

բ/ թերթեր

8. «Ազատամարտ», Կ. Պոլիս, (օրաթերթ) 1911, 12-ը հոկտեմբերի; 1912, 3 մարտի; 16 մարտի, 1914, 12 հունվարի:
9. «Դրօշակ», Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ժնև, 1912, NN 6; 7-8; 1914, N 1; Փարիզ, 1929, N 12; 1930, N 1, 3, 5, 6-7, 11-12:
10. «Յուսաբեր», 1930, 15 մարտի, 1940, 7 դեկտեմբերի:
11. «Մշակ», գրական և քաղաքական թերթ, Թիֆլիս, 1878, N 159; 1888, N 37, 1915, N 263-264:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՑՈՒՑԱԿ[353] -ամփոփագիր 107 անձանց, որոնք մասնակցել են Սարգիս Կուկունյանի ազգային շարժմանը[354]:

1. Նահապետով Հովհաննես Հակոբի – 51 տարեկան, զբաղվում է առևտրով, ամուսնացած, ունի 5 երեխա, կրթությունը՝ հայկական
2. Մագդաշև Ալեքսանդր Ավետիսի – 44 տարեկան, առևտրական, ամուսնացած, ունի 5 երեխա, կրթությունը՝ հայկական
3. Հայրապետյան Զաքար Հայրապետի – 45 տարեկան, առևտրական, ազգային դատարանի անդամ, ամուսնացած, ունի 6 երեխա, կրթությունը՝ հայկական
4. Խոսրոև Արտեմ Մինասի – 21 տարեկան, ամուսնացած, կրթությունը՝ հայկական
5. Մարգարյան Հովհաննես Արզումանի – 24 տարեկան, դերձակ, Շուշի քաղաքի բնակիչ, ամուրի
6. Մելիքյան Արտեմ Իսայի – 38 տարեկան, զբաղվում է կաթնամթերքի վաճառքով, ամուսնացած, ունի 4 երեխա, կրթությունը՝ հայկական
7. Կարապետյան Ֆահրադ Սարգսի – 30 տարեկան, ամուսնացած, ունի 1 դուստր, կրթությունը՝ հայկական
8. Արտեմով (նույն ինքը Հարութով կամ Հակոբ Հարությունյան) – 25 տարեկան, գյուղացի, ամուսնացած, ունի 1 դուստր, կրթություն չունի
9. Նալբանդյան Մգո Վարոսով – 35 տարեկան, գյուղացի, այգեպան, ամուսնացած, ունի 3 երեխա, կրթություն չունի
10. Տեր-Պետրոսյան Հովհաննես - 34 տարեկան, գյուղացի, զբաղվում է այգեգործությամբ և միրգ-բանջարեղենի առևտրով, ամուսնացած, ունի 4 երեխա, կրթությունը՝ հայկական
11. Ղազարյան Մեսրոպ Բաղդասարի – 26 տարեկան, ամուրի
12. Բիշարև Հովհաննես Խաչատուրով – 28 տարեկան, առևտրական, ամուսնացած, ունի 2 դուստր, կրթությունը՝ հայկական
13. Բիշարև Նիկոլայ Նիկիտին – 30 տարեկան, ամուսնացած, 1 որդի, կրթությունը՝ հայկական

---

[353] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թթ. 298-335:
[354] Պետք է լինի գլխավորած արշավանքին:

14. Մուրուզով Սերգեյ Ստեպանով – 34 տարեկան, ամուսնացած, ունի 1 որդի, կրթությունը՝ հայկական
15. Բալասանով Խաչատուր Հարությունով – 47 տարեկան, առևտրական, ամուսնացած, ունի 4 երեխա, կրթված
16. Բալասանով Գրիգոր Հարությունով – 30 տարեկան, առևտրական, ամուսնացած, ունի 2 որդի, կրթությունը՝ հայկական
17. Մարգարյանց Մկրտիչ Գևորգով – 38 տարեկան, գյուղացի, ամուսնացած, կրթված
18. Իսահակյանց Կարապետ Ղազարև – 33 տարեկան, ամուրի, կրթված
19. Միրզոյան Մնացական Նագապետով – 24 տարեկան, ամուրի, կրթված
20. Սեիզով Գալուստ Գևորգյան – 25 տարեկան, գյուղացի, ամուրի, կրթված
21. Արտենով (նույն ինքը Հարութով, Հարությունով Մկրտիչ) -35 տարեկան, գյուղացի, հողագործ, կրթություն չունի
22. Սուրբ-Նիշանով, նույն ինքը Կալոև Պետրոս – 39 տարեկան գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 2 որդի, կրթություն չունի
23. Ջանփոլադով Ավետիս Մանուկով – 41 տարեկան, առևտրական, ամուսնացած, ունի 6 երեխա, կրթությունը՝ հայկական
24. Ագջագոլյանց Վարդան Գևորգով – 30 տարեկան, գյուղացի, այգեգործ, ամուսնացած, կրթությունը՝ հայկական
25. Կարապետյանց Հայրապետ Ալեքսանի – 31 տարեկան, գյուղացի, զբաղվում է այգեգործությամբ, ամուսնացած, ունի 2 դուստր, կրթություն չունի
26. Մարգարով Սիմոն Ոսկանով – 35 տարեկան, գյուղացի, զբաղվում է այգեգործությամբ, ամուսնացած, ունի 2 երեխա, կրթություն չունի
27. Սահակյանց Նազար Պողոսյան – 33 տարեկան, գյուղացի, այգեգործ, ամուսնացած, կրթություն չունի
28. Տեր-Առաքելյան Սերգեյ Արկադև – 32 տարեկան, ամուսնացած
29. Տիֆիդջյանց Արսեն Խաչատուրով – 27 տարեկան
30. Բեյ-Մամիկոնյանց Իվան Պետրոսով – 40 տարեկան, բրիգադային բժիշկ, ամուսնացած, ունի 3 երեխա
31. Կաչկաչև Գեորգի Ալեքսանդրի – 41 տարեկան, ավագ բժիշկ, ամուրի
32. Պետրոսով (Ալաշկերտցի) Արշակ Ավետիսով – 20 տարեկան, թուրքահպատակ, ամուրի, կրթությունը հայկական

33. Պետրոսով Գրիգոր – 20 տարեկան, թուրքահպատակ, ամուրի, կրթությունը հայկական
34. Ժամագործյանց Գրիգոր Կարապետով – 32 տարեկան, թուրքահպատակ, զբաղվում է առևտրով, ամուսնացած, ունի 2 երեխա, կրթված
35. Մկրտիչև Ալեկո (Ալեքսեյ) Հովհաննեսով Բաբաև – 22 տարեկան, ամուսնացած, կրթությունը՝ հայկական
36. Գալուստով Կագեմոս Սարգիսով – 24 տարեկան դերձակ, ամուրի, կրթությունը՝ հայկական
37. Ագաբեկով Սահակ – 27 տարեկան, ամուրի, կրթություն չունի
38. Կարապետով Տիգրան Դավիդով – 26 տարեկան, ամուրի, կրթություն չունի
39. Անգալադով (Նազարով) Տիգրան – 31 տարեկան, ամուրի, կրթությունը՝ հայկական
40. Պապիկով (Հակոբով) – 27 տարեկան, կոշկակար, ամուրի
41. Կուկունյան Սարգիս Մովսեսի – 25 տարեկան, կրթություն է ստացել Թիֆլիսի հայկական սեմինարիայում, էջմիածնի ակադեմիայում և Պետերբուրգի համալսարանում, ամուրի (ընդգծումը մերն է - Կ. Ե.)
42. Լիսինով Կոստանդին Եգորով – 25 տարեկան, զբաղվում է առևտրով, կրթված, ամուրի
43. Հովհաննիսյան Ռուբեն Իսահակով – 24 տարեկան, առևտրով է զբաղված, չի ավարտել Թիֆլիսի սեմինարիայի լրիվ դասընթացը, ամուրի
44. Հարությունյանց (Ծերունի) Ստեփան Գևորկով – 25 տարեկան, ֆոտոնկարիչ, ամուրի
45. Մանուկով Ավետիս Վարթերեսյան – 24 տարեկան, գյուղացի, կրթված, ամուրի
46. Գրիգորով Դավիթ Չոլախյան – 25 տարեկան, թուրքահպատակ, սևագործ բանվոր, գրագետ, ամուրի
47. Մուրադ Մխիթարով Կալմուկյանց – 26 տարեկան, գյուղացի, զբաղվում է այգեգործությամբ, քիչ կրթված, ամուրի
48. Ինժյանց Մարտիրոս Գալուստով – 26 տարեկան, զբաղվում է գյուղատնտեսությամբ, ամուսնացած, ունի 3 որդի, անգրագետ
49. Գաբրիելյանց Հովսեփ – 25 տարեկան, դերձակ, կրթությունը՝ հայկական, ամուրի

50. Ակմակչյանց Գրիգոր Հարությունով – 23 տարեկան, զբաղվում է կաթնամթերքի առևտրով, անգրագետ, ամուրի
51. Դաշյանց Վիրաբ (Մեհրաբ) Մարտիրոսով – 27 տարեկան
52. Օգանեսով Գրիգոր – 26 տարեկան, գյուղացի
53. Հակոբով Բարդուղիմեոս – 23 տարեկան, հարկատու դասից, կոշկակար, ամուրի
54. Մելքոնով Մովսես Աղաբեկի – 28 տարեկան, հարկատու դասից, հյուսն, անգրագետ, ամուրի
55. Դավիդյանց Եփրեմ Ասլանբեկի – 25 տարեկան, հարկատու դասից, զբաղվում է լիմոնադի արտադրությամբ, գրագետ, ամուրի
56. Ասիրյանց Իսահակ Մինասի – 26 տարեկան, հարկատու դասից, հյուսն, անգրագետ, ամուրի
57. Հակոբով (Ղարաբաղցի) Աբրահամ – 23 տարեկան, գյուղացի, զբաղվում է հողագործությամբ, ամուրի, անգրագետ
58. Դերձակյան Ռուբեն Հարությունի – 24 տարեկան, թուրքահպատակ, գրագետ , ամուրի
59. Բալջյանց Կարապետ Հակոբի – 28 տարեկան, թուրքահպատակ, անգրագետ, ամուրի
60. Դանիելով Մկրտիչ Հաջի – 23 տարեկան, գյուղացի, հողագործ, մանր առևտրական, ամուսնացած, ունի 1 դուստր, անգրագետ
61. Հազո Տարոնով Սարո-Օգանեզով –18 տարեկան, գյուղացի, հողագործ, առևտրական, ունի 2 երեխա, գրագետ
62. Մաիլով Մամուշ Մխոև – 20 տարեկան, թրքահպատակ, սևագործ բանվոր, անգրագետ, ամուրի
63. Խաչատուրով Մանուկ Գալուստի – 24 տարեկան, թուրքահպատակ, սևագործ բանվոր, ամուսնացած, ունի 2 երեխա, անգրագետ
64. Կարապետով Խալղատ Մինասի – 25 տարեկան, թուրքահպատակ, սևագործ բանվոր, անգրագետ, ամուրի
65. Մելքոնով Մինաս – 26 տարեկան, թրքահպատակ, գրագետ, ամուրի
66. Տիֆիլյանց Վարդան Բոզոյի – 25 տարեկան, հողագործ, ամուսնացած, ունի 2 երեխա, անգրագետ
67. Բալջյանց Գաբրիել Մկրտչի – 27 տարեկան, հարկատու դասից, հողագործ, անգրագետ, ամուսնացած
68. Թոքմաջև Նիկոլայ Հովհաննեսի – 22 տարեկան, ձուլող բանվոր, ամուրի, գրագետ

69. Տեր-Մեսրոպյանց Գրիգոր Հովհաննեսի – 23 տարեկան, թուրքահպատակ, սևագործ բանվոր, անգրագետ, ամուրի
70. Հայկունի Խաչատուր Զախարի – 25 տարեկան, թուրքահպատակ, սևագործ բանվոր, ամուսնացած, անգրագետ
71. Դավիդով Առաքել – 30 տարեկան, թրքահպատակ, անգրագետ, ամուրի
72. Առաքելով Սիմոն Մանուկի – 28 տարեկան, գյուղացի, հյուսն, ամուսնացած, ունի 1 դուստր, գրագետ
73. Առաքելով Էլլո Մանուկի – 45 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 3 երեխա, անգրագետ
74. Միրզոյանց Մարգար Հովհաննեսի – 28 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 4 երեխա, գրագետ
75. Տեր-Ակոպով Պողոս Տեր-Գրիգորով – 43 տարեկան, հոգևորականի որդի, զբաղվում է հողագործությամբ, ամուսնացած է, ունի 6 երեխա, գրագետ է
76. Գրիգորյան Պետրոս Զախարի – 27 տարեկան, թրքահպատակ, գործակատար, ամուրի, գրագետ է
77. Բզնունի Մելիք Ղազարի – 40 տարեկան, պահեստային ենթասպա Ալեքսանդրապոլի միլիցիայում, զբաղվում է առևտրով, ամուսնացած, ունի 3 երեխա, գրագետ է
78. Տեր-Ակոպով Արգամ Տեր-Պետրոսով, նույն ինքը Տեր-Խաչատուրով – 27 տարեկան, հոգևորականի որդի, դեղագործ, ամուրի
79. Շարակյանց Կարապետ Օգատասյանց – 28 տարեկան, գործակատար, ավարտել է քաղաքային ուսումնարանի կուրսը, ամուրի
80. Բզնունի Հարութ Լազարի – վաճառական, ամուսնացած, ունի 4 երեխա, գրագետ է
81. Էլբոնով Նիկոլայ Ֆիլիպի – 36 տարեկան, խանութպան, ամուսնացած է, ունի 1 որդի, գրագետ է
82. Իսահակյանց Կարապետ Իսայի – 45 տարեկան, վաճառականի որդի, զբաղվում է առևտրով, ամուսնացած է, ունի 6 երեխա, գրագետ է
83. Մարկոսով Սարգիս Հայրապետի – 39 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 3 երեխա, անգրագետ է
84. Մուրադով Պաբո – 40 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 4 երեխա, անգրագետ
85. Անտոնով Կարապետ – 26 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 2 երեխա, անգրագետ է

86. Հովհաննեսով Վարդան – 35 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 4 երեխա, գրագետ է
87. Տեր-Սարկիսով Սեմյոն – 39 տարեկան, գյուղացի, ամուսնացած, ունի 2 երեխա
88. Կասպարով Թորոս – 40 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 1 որդի, անգրագետ
89. Սարկիսով Ղազար (Միրզոև) – 30 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 4 երեխա, անգրագետ
90. Օգանեզով Կարապետ Հարությունի – 32 տարեկան, գյուղացի, հողագործ, ունի 2 երեխա, գրագետ
91. Տեր-Մելխիսեդեկով Սարգիս – 32 տարեկան, հողագործ, անասնապահ, ավարտել է քաղաքային ուսումնարանի կուրսը, ամուսնացած, ունի 6 երեխա
92. Տեր-Բաղդասարով Գևորգ – 67 տարեկան, գյուղացի, հողագործ-այգեգործ, ամուսնացած, ունի 6 երեխա, գրագետ
93. Ստեփանով (նույն ինքը Տեփանով) Ավետիս (Ավո) – 37 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 2 երեխա, անգրագետ
94. Էխմալով Մանուկ Սարգսի – 45 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 3 երեխա, անգրագետ
95. Կարապետով Հովսեփ Մադոյի – 30 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 5 երեխա, անգրագետ
96. Գրիգորով Հովհաննես (Օհանես) – 66 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի 4 որդի, անգրագետ
97. Թորոսով Մաքոս Մանուկի – 30 տարեկան, գյուղացի, գյուղական ավագ, ամուսնացած, անգրագետ
98. Ասատուրով Սարգիս – 47 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած է, ունի 5 երեխա, անգրագետ
99. Եղոև Գևորգ – 40 տարեկան, գյուղացի, նախկին ավագ, հողագործ, ամուսնացած, ունի 2 երեխա, անգրագետ
100. Կյանդարով Սերոբ Պետրոսի – 24 տարեկան, գյուղացի, սևագործ բանվոր, ամուրի, գրագետ
101. Մխիթարյանց Նիկոլայ Ավետիսի – 26 տարեկան, գյուղացի, զբաղվում է մանր առևտրով, ամուրի, գրագետ
102. Իսակով Հարություն Հակոբի – 34 տարեկան, գյուղացի, զբաղվում է մանր առևտրով, ամուրի, գրագետ
103. Ավետիսով Սմբատ Սարգսի – 27 տարեկան, գյուղացի, ծխական

դպրոցի նախկին ուսուցիչ, ամուսնացած
104. Պոպոև Կարապետ Մկրտչի – 23 տարեկան, այրի, գրագետ
105. Կարապետով Կարապետ Աղաջանի (Կեր-Կարո) – 50 տարեկան, գյուղացի, հողագործ, ամուսնացած, ունի որդի, անգրագետ
106. Կասպարով Արմենակ Ղազարյան – 28 տարեկան, գյուղացի, չի ավարտել գիմնազիան, ամուսնացած
107. Իսահակյանց Համազասպ Սեմեոնի – 20 տարեկան, հոգևոր դպրոցի ուսուցիչ, ուսումնարանն ավարտած, ամուրի:

ՀԱՎԵԼՎԱԾ 2[355]

Մարզային դատարանի վճռով 43 դատապարտյալներից 16-ը արդարացվել են, իսկ 27-ը մեղավոր են ճանաչվել, որոնցից 26-ը դատապարտվել են տաժանակիր աշխատանքի (աքսորավայր)՝ 8-20 տարի ժամկետով, իսկ 1-ին՝ ուղղիչ բաժանմունք՝ 3 տարի ժամանակով: Երևանի մարզային դատարանի նշված վճիռը հաստատված է Թիֆլիսի դատական պալատի կողմից՝ առանց փոփոխությունների: Դատական Պալատի վճիռը վճռաբեկման, բողոքարկման ներկայացնելու հետևանքով (դատապաշտպանի կողմից և դատախազի բողոքագրի հիման վրա), փոփոխության չի ենթարկվել:

23-ը մայիսի 1892 թ., քաղաք Թիֆլիս

Դատախազ՝ Մեյսներ

[355] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 19:

ՀԱՎԵԼՎԱԾ 3[356]

Ժամանակավոր դիվանատանը

Արդարադատության նախարարությանը կից Հատուկ քրեական գործերի վարույթ.

Որպես հավելում սեպտեմբերի 7-ի իմ հայտարարության (թիվ 448)՝ պատիվ ունեմ տեղյակ պահելու ժամանակավոր դիվանատանը, որ դատական պալատի վճիռը Սարգիս Կուկունյանի և ուրիշների գործով, որոնք մեղադրվում են իշխանությունների դեմ զինված դիմադրություն կազմակերպելու և ուրիշ հանցանքների մեջ, այն ներկայումս ընդունել է օրենքի ուժ: Այն դատապարտյալների վերաբերյալ, որոնց դատավճիռը բողոքարկվել է, քանի որ նշված վճռի դեմ տրվել են գանգատներ ու բողոքներ դատապարտյալների կողմից՝ ուղղված վճռաբեկ ատյանին, ինչպես նաև դատախազի բողոքը, Սենատի կողմից թողնվում են անփոփոխ:

Դատախազ՝ Մեյսներ:

Թիֆլիսի Դատական պալատի դատախազ, 20 հունվարի, 1893 թ.
Վճիռ թիվ 50, քաղաք Թիֆլիս:

[356] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 23, թ. 20:

ՀԱՎԵԼՎԱԾ 4[357]

Վերադարձնելով առաքված գրությունը (թիվ 364)՝ հետաքննությունը Սարգիս Կուկունյանի և մյուսների մեղադրանքով՝ Հայոց ազգային շարժման մասնակցության մեջ, նրան կից առդիրներով, պատիվ ունեմ տեղյակ պահելու Ձեզ, որ ես համաձայն եմ,

Ձեր որոշումներին սույն գործի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի

Դատախազ՝ ստորագրություն

Քարտուղար՝ ստորագրություն:

[357] Տե՛ս նույն տեղում, թ. 22:

ԵՐԳ ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

Երբ ալեկոծ ծովու վրայ
Իմ մակոյկը խորտակուի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսըս չեմ կտրի:

Բոլոր ուժովս եւ համարձակ
Բազուկներըս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափունք կը թռչեմ:

Ահաւասիկ այս կռուի մէջ
Թէ ուժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ տանեն:

Այն ժամանակ գէթ սփոփանք
Ես գտնում եմ նրա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կռիւ տալով մինչեւ վերջ:

Ես Կուկունեան Սարգիս անուն՝
Աքսորման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ:

Ձեռքերս շղթայ, ոտքերս շղթայ,
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքիս սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ...

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 11,25:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016